Եկեղեցու Նախագահների Ուսմունքները

Ջորջ Ալբերտ Սմիթ



ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

ՋՈՐՋ ԱԼԲԵՐՏ ՍՄԻԹ

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Գրքեր *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները* շարքից

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ (առարկայական համարը 36481.201)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Բրիգամ Յանգ (35554)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոն Թեյլոր (35969)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Վիլֆորդ Վուդրուֆ (36315)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ (35744)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Հեբեր Ջ. Գրանթ (35970)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջորջ Ալբերտ Սմիթ (36786)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Դեյվիդ Օ. Մակքեյ (36492)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Հարոլդ Բ. Լի (35892)

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Սպենսեր Վ. Քիմբալ

Այս գրքերը պատվիրելու համար դիմեք ձեր տեղական բաշխման կենտրոն կամ այցելեք store.lds.org ինտերնետային կայքը:

Շնորհակալ կլինենք այս գրքի վերաբերյալ ձեր դիտողությունների ու առաջարկների համար: Ուղարկեք դրանք Curriculum Development, 50 East North Temple Street, Room 2404, Salt Lake City, UT 84150-3220 USA հասցեով:

Կամ ուղարկեք ձեր դիտողություններն ու առաջարկները cur-development@ldschurch.org հասցեով:

Խնդրում ենք նշեք ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը: Չմոռանաք գրել գրքի վերնագիրը: Ապա առաջարկեք ձեր դիտողություններն ու առաջարկները գրքի ուժեղ կողմերի և հնարավոր բարելավումներ պահանջող մասերի վերաբերյալ:

© 2010 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
Անգլերենի հաստատումը. 8/08:
Թարգմանության հաստատումը. 8/08:
«Teachings of Presidents of the Church: George Albert Smith» -ի
թարգմանությունը
Armenian.
36786 201

Բովանդակություն

Վերնագիր Էջ

Ներածություն v
Պատմական ամփոփագիր viii
Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքն ու ծառայությունը xi
1 Ապրել նրանով, ինչին հավատում ենք 1
2 «Սիրիր քո ընկերին քո անձի պէս» 13
3 Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայությունը. 23
4 Մարգարե Ջոզեֆ Սմիթ՝ ճշմարտությունը վերականգնելիս Աստծո գործիք 37
5 Սուրբ Քահանայությունն Աստծո զավակների օրհնության համար 51
6 Հաստատել նրանց, ում Տերն է հաստատում 63
7 Հոգու անմահությունը 75
8 Տաճարային օրհնություններ մեզ համար և մեր նախնիների համար 89
9 Աղոթքով բացեք ձեր հոգին Տիրոջը 103
10 Սուրբ գրություններ՝ ամենաարժեքավոր գրադարանն աշխարհում 115
11 Աստծո կողմից հայտնություն Իր զավակներին 125
12 Ավետարանով կիսվելու ջերմեռանդ ցանկություն. 137
13 Կատարել Ավետարանով կիսվելու մեր մասը 151
14 Ինչպե՞ս արդյունավետ կիսվել Ավետարանով 166
15 Առաջ տանել Տիրոջ աշխատանքը. 179
16 «Մատուցեք ձեր հաղորդություններն Իմ Սուրբ Օրը». 191
17 Հավատքի զորացնող ուժը. 203
18 Կանգնիր սահմանագծի Տիրոջ կողմում. 217
19 Մարմնական և հոգևոր օրհնություններ Իմաստության Խոսքից 229
20 Ֆիզիկական փրկություն մեզ համար և ուրիշների համար . . 241
21 Բարության ուժը 255
22 Երեխաներին մեծացնել լույսի և ճշմարտության մեջ 265
23 «Ձեզանից պահանջվում է ներել». 281
24 Արդար ապրելակերպ վտանգավոր ժամանակներում 291
Ցուցադրական նյութերի ցանկ 302
Ցուցիչ 303

Ներածություն

Առաջին նախագահությունն ու Տասներկու Առաքյալների Քվորումը հիմնադրել են *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները* շարքը՝ օգնելու ձեզ խորացնել վերականգված ավետարանի ձեր ըմբռնումը և վերջին օրերի մարգարեների ուսմունքների միջոցով ավելի շատ մոտենալու Տիրոջը: Քանի որ Եկեղեցին այս շարքին ավելացնում է հատորներ, դուք կարող եք ավետարանական տեղեկատուների հավաքածու ստեղծել ձեր տան համար: Այս շարքի հատորները նախատեսված են օգտագործվելու անհատական ուսումնասիրության և կիրակնօրյա հրահանգավորման համար: Դրանք կարող են նաև օգնել ձեզ պատրաստել այլ դասեր կամ ելույթներ և պատասխանել հարցերի՝ Եկեղեցու վարդապետության վերաբերյալ:

Այս գիրքը նկարագրում է Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները, որը ծառայել է որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու նախագահ 1945 թվականի մայիսի 21-ից մինչև 1951 թվականի ապրիլի 4-ը:

Անհատական ուսումնասիրություն

Երբ դուք ուսումնասիրեք Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները, աղոթքով որոնեք Հոգու ոգեշնչումը: Ամեն գլխի վերջում գտնվող հարցերը կօգնեն ձեզ հասկանալ Նախագահ Սմիթի ուսմունքները և կիրառել դրանք ձեր կյանքում: Երբ ուսումնասիրեք այս ուսմունքները, դուք գուցե ցանկանաք մտածել, թե ինչպես ուսուցանեք դրանք ընտանիքի անդամներին և ընկերներին: Սա կուժեղացնի ձեր հասկացողությունն այն մասին, ինչ դուք կկարդաք:

Ուսուցանել այս գրքից

Դուք կարող եք օգտագործել այս գիրքը սովորեցնելու տանը կամ եկեղեցում: Հետևյալ ուղեգծերը կարող են օգնել ձեզ:

Պատրաստվեք ուսուցանել

Որոնեք Սուրբ Հոգու առաջնորդությունը, երբ պատրաստվեք ուսուցանել: Աղոթքով ուսումնասիրեք գլուխը վստահություն ձեռք բերելու Նախագահ Սմիթի ուսմունքների ձեր հասկացողության մեջ: Դուք կուսուցանեք ավելի մեծ անկեղծությամբ և զորությամբ, երբ նրա խոսքերն անհատապես ներգործեն ձեր վրա (տես ՎԿՈՒ 11.21):

Եթե դուք ուսուցանում եք Մելքիսեդեկյան Քահանայության կամ Սփոփող Միության դաս, դուք չպետք է դնեք մի կողմ այս գիրքը կամ դասը պատրաստեք այլ նյութերից: Աղոթքով ընտրեք գլխից այն ուսմունքները, որոնք դուք զգում եք, որ կլինեն ամենաօգտակարը նրանց համար, ում դուք ուսուցանում եք: Որոշ գլուխներ պարունակում են ավելի շատ նյութեր, քան դուք ի վիճակի կլինեք քննարկել դասաժամի ընթացքում: Բոլոր ուսմունքներն ընդգրկելու փոխարեն, թույլ տվեք, որ լավ քննարկում ծավալվի:

Խրախուսեք մասնակիցներին ուսումնասիրել գլուխը դասից առաջ և գիրքը բերել իրենց հետ: Երբ նրանք անեն այդ, նրանք ավելի լավ նախապատրաստված կլինեն մասնակցելու քննարկմանը և միմյանց խրատելու համար:

Ներկայացրեք գլուխը

Գլուխը ներկայացնելիս և դասի ողջ ընթացքում, փորձեք ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ Հոգին կարող է դիպչել նրանց սրտերին ու մտքերին, ում դուք ուսուցանում եք: Դասը սկսելու համար օգնեք նրանց, ում ուսուցանում եք կենտրոնանալ գլխի ուսմունքների վրա: Այս անելու համար դուք կարող եք.

- Կարդալ և քննարկել գլխի սկզբում գտնվող «Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից» բաժինը:
- Քննարկել գլխից մի նկար կամ սուրբ գրության որևէ հատված:

- Երգել թեմային առնչվող մի օրհներգ:
- Համառոտակի կիսվել թեմայի վերաբերյալ անձնական փորձառությամբ:

Քննարկում ծավալել «Նախազահ Սմիթի Ուսմունքների» մասին

Երբ ուսուցանեք այս գրքից, հրավիրեք ուրիշներին կիսվել իրենց մտքերով, հարցեր տվեք և ուսուցանեք մեկմեկու: Նրանք լավագույնս կսովորեն, երբ ակտիվ մասնակցեն: Սա նաև նրանց անձնական հայտնություն ստանալուն օգնելու լավ ձև է: Քննարկում խրախուսելու համար օգտագործեք գլխի վերջում գտնվող հարցերը: Այս հարցերը հղվում են գլխի տարբեր մասերին ցույց տալու ուսմունքների այն բաժինը, որոնց դրանք վերաբերում են: Դուք կարող եք նաև կազմել ձեր հարցերը, հատկապես նրանց համար, ում դուք ուսուցանում եք: Օրինակ, դուք կարող եք հարցնել մասնակիցներին, թե ինչպես կարող են կիրառել Նախագահ Սմիթի ուսմունքներն իրենց պարտականություններում որպես ծնողներ կամ որպես տնային ուսուցիչներ:

Հետևյալ տարբերակները կարող են ձեզ տալ լրացուցիչ գաղափարներ.

- Խնդրեք մասնակիցներին կիսվել այն ամենով, ինչ նրանք սովորել են գլխի իրենց անհատական ուսումնասիրությունից: Կարող է օգտակար լինել կապվել մի քանի մասնակիցների հետ շաբաթվա ընթացքում և խնդրել, որ նրանք պատրաստված գան կիսվելու այն, ինչ իրենք սովորել են:
- Հանձնարարեք մասնակիցներին կարդալ ընտրված հարցերը գլխի վերջից (կա՛մ անհատապես, կա՛մ էլ փոքրիկ խմբերով): Խնդրեք նրանց որոնել այն ուսմունքները գլխում, որոնք կապված են հարցերի հետ: Ապա հրավիրեք նրանց իրենց մտքերով և ներըմբռնումներով կիսվել խմբի մնացած մասի հետ:
- Գլխից միասին կարդացեք Նախագահ Սմիթի դրույթների մի ընտրանի: Խնդրեք մասնակիցներին կիսվել օրինակներով սուրբ գրություններից և իրենց սեփական փորձառություններից, որոնք ցույց կտան այն, ինչ Նախագահ Սմիթն էր ուսուցանել:

- Խնդրեք մասնակիցներից ընտրել մի բաժին, որը նրանց հետաքրքրում է և լուռ կարդացեք: Հրավիրեք նրանց հավաքվել երկու-երեք մարդկանցից բաղկացած խմբերով, ովքեր ընտրել են նույն բաժինը և քննարկեք, ինչ որ նրանք սովորել են:

Եզրափակեք քննարկումը

Համառոտակի ամփոփեք դասը կամ խնդրեք մեկ կամ երկու մասնակիցների անել այդ: Խրախուսեք նրանց, ում սովորեցնում եք, կիսվել մյուսների հետ ինչ որ նրանք սովորել են Նախագահ Սմիթի ուսմունքներից: Վկայեք այն ուսմունքների մասին, որոնք դուք քննարկել եք: Դուք կարող եք նաև հրավիրել մյուսներին կիսվել իրենց վկայություններով:

Տեղեկություն այս գրքում վկայակոչված աղբյուրների վերաբերյալ

Նախագահ Սմիթի ուսմունքների այս գրքում կան ուղղակի մեջբերումներ տարբեր աղբյուրներից: Այս հատվածները պահպանել են կետադրությունը, ուղղագրությունը, և մեծատառերի օգտագործումը և բնօրինակ աղբյուրների պարբերությունները, եթե չհաշվենք խմբագրական կամ տպագրական փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են ընթեռնելիությունը բարելավելու համար: Այս պատճառով, դուք կարող եք տեքստում նկատել փոքրիկ անհամապատասխանություններ: Օրինակ՝ *ավետարան* բառը փոքրատառով է գրված որոշ մեջբերումներում և մեծատառով այլ դեպքերում:

Նախագահ Սմիթը նաև հաճախ օգտագործել է *տղամարդ, մարդ* կամ *մարդկություն* բառերն ի նկատի ունենալով բոլոր մարդկանց, ինչպես արական այնպես էլ իգական սեռի: Նա հաճախ օգտագործել է *անգլերենի արական և իգական* դերանուններն ի նկատի ունենալով երկու սեռն էլ: Դա ընդունված էր նրա դարաշրջանում: Չնայած այս լեզվական կանոնների և ժամանակակից օգտագործման միջև առկա տարբերություններին, Նախագահ Սմիթի ուսմունքները վերաբերում են ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց:

Պատմական ամփոփագիր

Հետևյալ ժամանակագրությունն ապահովում է համառոտ պատմական հիմք Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքների համար, որոնք ներկայացված են այս գրքում։

1870թ. ապրիլի 4	Ծնվել է Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա Ջոն Հենրի և Սառա Ֆարր Սմիթի ընտանիքում։
1874–75	Նրա հայրը՝ Ջոն Հենրի Սմիթը, ծառայեց միսիա Մեծ Բրիտանիայում։ Ջորջ Ալբերտը չորս տարեկան էր, երբ նա մեկնեց։
1880թ. հոկտեմբերի 27	Ջոն Հենրի Սմիթը ձեռնադրվում է Առաքյալ։
1882–85	Ջոն Հենրի Սմիթը ծառայում է որպես Եվրոպական Միսիայի նախագահ։
1883	Ջորջ Ալբերտ Սմիթը սկսում է աշխատել հագուստի ֆաբրիկայում 13 տարեկանում։
1888	Սկսում է աշխատել երկաթուղային ընկերությունում։ Իր աշխատանքի պատճառով նա մեկընդմիշտ վնասում է աչքերը։
1891թ. սեպտեմբեր-նոյեմբեր	Միսիա է ծառայում հարավային Յուտայում «Երիտասարդ Տղամարդկանց Փոխադարձ Կատարելագործման Ընկերությունում»։
1892թ. մայիսի 25	Ամուսնանում է Լյուսի Էմիլի Վուդրուֆի հետ Մանթի Յուտա Տաճարում

1892–94	Միսիա է ծառայում Միացյալ Նահանգներում, սկսելով այն ուղիղ մի քանի շաբաթ իր ամուսնությունից հետո: Լյուսին միանում է նրան նրա հետ մնալով չորս ամիս միսիայում:
1903թ. հոկտեմբերի 8	Նախագահ Ջոզեֆ Ֆ.Սմիթի կողմից կարգվում է Առաքյալ:
1904	Գրում է իր «անձնական հավատամքը» 11 կատարելատիպերի մի ցուցակ, որոնցով նա պարտավորվում է ապրել (տես այս գրքի էջեր 1-2):
1909–12	Տառապում է լուրջ առողջական խնդիրներից:
1919–21	Նախագահում է Եվրոպական Միսիայում:
1921–35	Ծառայում է «Երիտասարդ Տղամարդկանց Փոխադարձ Կատարելագործման Ընկերությունում» որպես գլխավոր կառավարիչ:
1922	Ընտրվում է Ամերիկայի Հեղափոխության Ազգային Միության փոխնախագահ: Նա ծառայում է այս պաշտոնում մինչև 1925 թվականը, իսկ հետո, կրկին 1944 և 1946 թվականներին:
1930թ. սեպտեմբեր	Օգնում է կազմակերպել Յուտայի «Փայոնիեր ենդ Լենդմարկս» (Ռահվիրաների Երթուղիներ և Նշանակետեր) Ընկերությունը՝ տեղորոշելու և ուղենշելու Եկեղեցու պատմական վայրերը: Նա ընտրվում է որպես կազմակերպության առաջին նախագահ:
1933թ. հուլիսի 27	Դառնում է Յուտայի Կույրերի օգնության միության նախագահ:

1934թ. մայիսի 31	Ստանում է Արծաթյա Ցուլը՝ Ամերիկայի բոյսկաուտների բարձրագույն պարգևը:
1935–36	Ղեկավարում է Մորմոնի Գրքի հրատարակությունը կույրերի բրեյլի համակարգով:
1937թ. նոյեմբերի 5	Լյուսին մահանում է 68 տարեկանում երկարատև հիվանդությունից հետո:
1938թ. հունվար-հուլիս	Այցելում է Եկեղեցու Հարավային Խաղաղօվկիանոսյան միսիաները, ներառյալ կանգ է առնում Հավայան կղզիներում, Սամոայում, Տոնգայում, Թահիթիում, Նոր Զելանդիայում և Ավստրալիայում:
1943թ. հուլիս	Ձեռնադրվում է Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ
1945թ. մայիսի 21	Ձեռնադրվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ:
1945թ. սեպտեմբերի 23	Նվիրագործում է Այդահո Ֆոլզի Այդահո Տաճարը:
1945թ. նոյեմբերի 2	Հանդիպում է Միացյալ Նահանգների Նախագահ Հարրի Ս. Տրումենի հետ՝ քննարկելու Եվրոպա ուղարկվելիք օգնության ջանքերը II Համաշխարհային Պատերազմից հետո:
1946թ. մայիս	Այցելում է Մեքսիկայի Եկեղեցու անդամներին, առաջին Եկեղեցու նախագահն է, որն անում է այդ:Նվիրում է Մորմոնի Գրքի մի օրինակ Մեքսիկայի Նախագահ Մանուել Կամաչոյին:
1947թ. հուլիսի 24	Նվիրագործում է «Սա է այն Տեղը Հուշահամալիրը» և նշում Սոլթ Լեյքի հովիտ ռահվիրաների ժամանման տարեդարձը:

1947	Եկեղեցու անդամակցությունը հասնում է մեկ միլիոնի:
1949թ. սեպտեմբերի 30–հոկտեմբերի 2	Մասնակցում է գերագույն համաժողովի հեռուստատեսությամբ երբևէ ցույց տրված առաջին հեռարձակմանը:
1951թ. ապրիլի 4	Մահանում է Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա իր 81-րդ ծննդյան տարեդարձին:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքն ու ծառայությունը

Մի օր՝ որպես Եկեղեցու Նախագահ իր ծառայության ժամանակ, Ջորջ Ալբերտ Սմիթը ստացավ մի լուսանկար մի գրությամբ, որն ասում էր. «Ես ուղարկում եմ այս նկարը, որովհետև սա լուսանկարչական արտացոլումն է այն մարդու, որը հավատում ենք, որ դուք եք»: Դա չորս երեխաների և նրանց մոր հետ Նախագահ Սմիթի նկարն էր: Այդ իսկ օրը Նախագահ Սմիթը շտապում էր հասնելու գնացքին, երբ այդ մայրը կանգնեցրեց նրան, հուսալով, որ իր երեխաները հնարավորություն կունենային սեղմել Աստծո մարգարեի ձեռքը:Մի դիտորդ որսացել էր պահը և նկարել:

Մակագրությունը շարունակում էր. «Պատճառը, որ մենք այդքան թանկ ենք համարում այս նկարն այն է, որ այդքան զբաղված մարդ լինելով, ինչպիսին դուք եք, չնայած այն փաստին, որ դուք շտապում էիք նստել ձեր մեքենան, իսկ հետո ձեզ սպասող գնացքը, դուք, այնուամենայնիվ, ժամանակ գտաք սեղմել այդ ընտանիքի յուրաքանչյուր երեխայի ձեռքը»:[1]

Բարության այդպիսի քայլեր, ինչպիսին սա է, բնորոշ էր Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքին և ծառայությանը: Լիներ դա որևէ հարևանի սեր և քաջալերանք հասցնել, որը մաքառումների մեջ էր իր հավատքի համար, թե լայնածավալ բարօրության ջանքեր կազմակերպելիս հազարավոր մարդկանց կերակրելու համար, Ջորջ Ալբերտ Սմիթն ապրում էր Փրկչի «Սիրիր քո ընկերին քո անձի պես» պատվիրանով (Մարկոս ԺԲ.31):

Վաղ տարիներ 1870–90

Ջորջ Ալբերտ Սմիթը ծնվել է 1870 թվականի ապրիլի 4-ին, Ջոն Հենրիի և Սառա Ֆարր Սմիթի ընտանիքում, մի համեստ տան մեջ՝ Սոլթ Լեյք Սիթիում: Սմիթի ընտանիքը մեծ ծառայության ժառանգություն ուներ Աստծո արքայությունում: Ջորջ

Մոտավորապես 4 տարեկան հասակում

Ալբերտի հայրը հետագայում ծառայեց Տասներկու Առաքյալների Քվորումում և Առաջին Նախագահությունում: Նրա պապը և անվանակիցը՝ Ջորջ Ա. Սմիթը Մարգարե Ջոզեֆ Սմիթի եղբոր որդին էր և Վերջին Օրերի առաջին Սրբերի ռահվիրաների շարքում էր, ովքեր մտան Սոլթ Լեյքի հովիտը 1847 թվականին, Ջորջ Ա. Սմիթը նաև Առաքյալ էր և Նախագահ Բրիգամ Յանգի խորհրդականը: Ջորջ Ալբերտի մեծ պապը Ջոն Սմիթը ծառայել էր որպես Եկեղեցու Հայրապետ և որպես Սոլթ Լեյք Սիթիում առաջին ցցի նախագահ: Եվ նրա մայրական կողմից պապը՝ Լորին Ֆարրը, Յուտա նահանգի Օգդոն քաղաքի առաջին քաղաքապետն էր և այդ քաղաքի առաջին ցցի նախագահը:

Ջոն Հենրի Սմիթ

Ջորջ Ալբերտ Սմիթը սիրում էր և հիանում իր ծնողներով: Նա երախտապարտ էր իր հորը կարիքավորներին օգնություն հասցնելու մասին իրեն ուսուցանելու համար[2] և նա գովում էր իր մորն այն զոհաբերության համար, որ նա անում էր իր ընտանիքին ավետարանով մեծացնելու համար: «Չնայած մենք շատ աղքատ էինք, – վերհիշում էր նա, – և հայրս գտնվում էր միսիայում, երբ ես հինգ տարեկան էի, ես երբեք չեմ հիշում, որ լսեի մորս բողոքելիս և երբեք չեմ տեսել նրան լաց լինելիս այն պայմանների պատճառով, որոնցում նա գտնվում էր: Նա կարող էր մեկ դոլլարով այնքան երկար ծայրը ծայրին հասցնել, քան երբևէ իմ իմացած որևէ մարդ: . . .

. . . Երբ հայրիկը բացակայում էր տնից գտնվելով միսիայում, մայրիկը զբաղեցնում էր նրա տեղը և նա իսկապես տան գլուխն էր նրա բացակայության ժամանակ: Մենք ասում էինք մեր աղոթքները և օրհնում էինք ուտելիքը և հիվանդության դեպքում նա կանչում էր երեցներին, քանի որ նա մեծ հավատք ուներ ավետարանի արարողությունների հանդեպ: Նա միշտ եղել է ճշգրիտ տասանորդ վճարող և որքանով որ կարողացել եմ պարզել, երբեք նրա գլխում միտք չի ծագել, թե գուցե սխալ է տեղի ունեցել և «Մորմոնիզմը» ճշմարիտ չէ: Նա հավատում է դրան ողջ իր հոգով»:[3]

Հենրի և Սառա Ֆար Սմիթի երեխաները:
Ջորջ Ալբերտ Սմիթը ձախ կողմում է:

Սառա Ֆարր Սմիթ

Ջորջ Ալբերտ Սմիթը հատկապես հիշում էր իր մորը, թե ինչպես էր սովորեցնում նրան աղոթել և վստահել, որ Աստված կպատասխաներ. «Երբ հիշում եմ մորս ազդեցության մասին, երբ փոքրիկ [տղա] էի, ես հուզվում եմ ակնածանքից և արտասվում. . . Հիշում եմ ինչպես երեկ լիներ, նա բռնեց ձեռքս և մենք քայլեցինք վեր մեկ սանդղաբաժին աստիճաններով դեպի երկրորդ հարկ: Այնտեղ ես ծնկի իջա նրա առջև և բռնեցի նրա ձեռքը, մինչ նա ինձ սովորեցնում էր աղոթել: Շնորհակալություն Աստծուն այն մայրերի համար, ովքեր իրենց սրտերում ունեն Ավետարանի ոգին և ցանկություն օրհնելու: Ես կարող եմ կրկնել այդ աղոթքն այժմ և այնքան շատ տարիներ են անցել իմ այն սովորելուց ի վեր: Դա տվեց ինձ համոզվածություն, որ ես ունեմ Երկնային Հայր, և ինձ թույլ տրվեց իմանալ, որ Նա լսում է և պատասխանում աղոթքներին: Երբ ավելի մեծ էի, մենք դեռ ապրում էինք երկհարկանի կառուցվածքով տան մեջ և երբ քամին ուժեղ էր փչում այն այնպես էր ճոճվում, կարծես գլխիվայր ընկնելու էր: Երբեմն ես խիստ

վախենում էի գնալ քնելու: Իմ մահճակալը մի փոքրիկ սենյակում էր և շատ դեպքերում ես դուրս էի մագլցում և իջնում ծնկի և խնդրում իմ Երկնային Հորը հոգ տանել տան մասին, պահպանել այն, որ այն չքանդվեր մասերի, հետո վերադառնում իմ փոքրիկ մահճակալն այնպիսի համոզվածությամբ, որ այն ապահով կպահպանվեր չարից, կարծես բռնած լինեի Հորս ձեռքը»:[4]

Ետ նայելով դեպի իր մանկությունը, Ջորջ Ալբերտ Սմիթն ասել է.

«Ծնողներս ապրում էին շատ համեստ պայմաններում, բայց ես գոհանում եմ իմ Ստեղծողից և շնորհակալություն հայտնում նրան իմ ողջ սրտով՝ ինձ նրանց տուն ուղարկելու համար:

. . . Ես իմացա, երբ դեռ պատանի էի, որ սա Տիրոջ աշխատանքն է: Ես իմացա, որ կային ապրող մարգարեներ երկրի վրա: Ես իմացա, որ Ամենազորի ոգեշնչումն ազդելու էր նրանց վրա, ովքեր ապրում էին վայելելու այն:

. . . Ես շնորհակալ եմ իմ անդրանիկության համար, շնորհակալ եմ ծնողներիս համար, ովքեր ուսուցանեցին ինձ Հիսուս Քրիստոսի ավետարանը և օրինակ հանդիսացան իրենց տանը:[5]

Պատանի Ջորջ Ալբերտը հայտնի էր որպես երջանիկ, կայտառ տղա: Ընկերները գնահատում էին նրա զվարթ էությունը, և նա բավականություն էր ստանում նրանց զվարճացնելուց շրթհարմոնով, բանջոյով և կիթառով և ծիծաղաշարժ երգերի երգացանկով: Սակայն նա նաև ունեցել է փորձառություններ, որոնք օգնել են նրան զարգացնել պատասխանատվության ուժեղ զգացում, որն ուշագրավ էր պատանի հասակում: Երբ նա 12 տարեկան էր, Ջորջ Ալբերտ Սմիթը հաճախում էր Բրիգամ Յանգի Համալսարանը, որտեղ նա ստացավ որոշ խորհուրդ, որը պետք է խորն ազդեցություն ունենար նրա կյանքի վրա: Նա հետագայում վերհիշում էր.

«Բախտս բերել էր, որ ուսուցման մի մասը տրվում էր դոկտոր Կարլ Գ. Մեյսերի կողմից, այդ նշանավոր դաստիարակի, որն առաջին կառուցողն էր մեր Եկեղեցական մեծ համալսարանների. . . Ես շատ բան չեմ կարողանում հիշել այն մասին, թե ինչ էր ասվել տարվա ընթացքում, երբ ես այնտեղ էի եղել, բայց կա մի բան, որը ես գուցե երբեք չմոռանամ: Ես այն կրկնել եմ շատ անգամներ. . . դոկտոր Մեյսերը մի օր կանգնեց և ասաց.

«Դուք ոչ միայն հաշվետու կլինեք այն բաների համար, որոնք դուք անում եք, այլ դուք պատասխանատվության կենթարկվեք այն մտքերի համար, որոնք դուք մտածում եք»:

«Լինելով պատանի, մտքերս վերահսկելու այնքան էլ մեծ սովորույթ չունենալով, ինձ համար լիովին հանելուկ էր, թե ինչ պիտի անեի ես և դա անհանգստացնում էր ինձ: Փաստորեն, այդ գաղափարը մտքիցս այլևս դուրս չեկավ: Դրանից հետո մոտ մեկ շաբաթից կամ տասը օրից հանկարծ ինձ հասկանալի դարձավ, թե նա ինչ նկատի ուներ: Ես կարողացա այդ ժամանակ հասկանալ դրա փիլիսոփայությունը: Հանկարծ ինձ եկավ մեկնաբանությունը նրա, ինչ նա ասել էր. «Դե, իհարկե, դու հաշվետու կլինես քո մտքերի համար, որովհետև, երբ քո մահկանացու կյանքն ավարտվի, այն կլինի քո մտքերի հանրագումարը: Այդ մեկ առաջարկը մեծ օրհնություն եղավ ինձ համար ողջ իմ կյանքում և դա հնարավորություն տվեց ինձ բազմաթիվ առիթներով խուսափել անպատշաճ մտածելուց, որովհետև ես հասկացա, որ երբ կյանքս ավարտվի, ես կլինեմ իմ մտքերի արդյունքը»:[6]

Պատանի Ջորջ Ալբերտը մեծ պատասխանատվություն կրեց տանը 1882 թվականին, երբ նրա հայրը, որը ծառայում էր Տասներկուսի Քվորումում երկու տարի, կանչվեց որպես Եվրոպական Միսիայի Նախագահ: Ջոն Հենրիի բացակայությունը պահանջեց, որ Ջորջ Ալբերտն օգներ ապահովել ընտանիքը: Երբ նա տասներեք տարեկան էր, դիմեց աշխատանքի համար Եկեղեցու սեփականություն հանդիսացող արդյունաբերական ձեռնարկությանը և Սոլթ Լեյք Սիթիի մթերային խանութին, բայց տնօրենն ասաց, որ չէին կարող վարձել որևէ մեկին: Ջորջ Ալբերտը պատասխանեց, որ նա չէր դիմել վճարվելու համար, այլ միայն աշխատելու: Նա ավելացրեց. «Ես գիտեմ, եթե մի բանի պետք լինեմ ես կվճարվեմ»:[7] Նրա դրական վերաբերմունքն արժանացրեց նրան աշխատանքի որպես գործարանի աշխատող շաբաթական 2.50 դոլար աշխատավարձով և նրա աշխատանքային բարձր էթիկան շուտով նրան օգնեց ընկերությունում առաջ գնալ ավելի լավ աշխատանքների:

Երբ 18 տարեկան էր, նա աշխատանք գտավ երկաթուղու հողաչափական ջոկատում: Երբ աշխատում էր այս ջոկատում, անապատային արևի փայլը վնասեց նրա աչքերը: Դա մեկընդմիշտ վնասեց Ջորջ Ալբերտի տեսողությունը, նրա համար

դժվարարացնելով կարդալը և անհարմարություն ստեղծելով ողջ կյանքի ընթացքում:

Միսիոներական ծառայությունն ու ամուսնությունը, 1891–1894

1891 թվականին Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը կանչեց Ջորջ Ալբերտ Սմիթին ծառայելու կարճաժամկետ միսիա Յուտայի հարավային մասում: Նրա հատուկ հանձնարարությունն էր աշխատել այդ տարածքի Եկեղեցու երիտասարդների հետ: Հաջորդ չորս ամիսների ընթացքում նա և նրա ընկերակիցը օգնեցին հիմնադրել երիտասարդական կազմակերպություններ ցցերում և ծխերում, խոսեցին բազմաթիվ ժողովների ժամանակ և քաջալերեցին երիտասարդներին ապրել Եկեղեցու չափանիշներով:

Վերադառնալով իր միսիայից՝ Ջորջ Ալբերտը շարունակեց սիրատածել իր մանկության ընկերուհուն՝ Լյուսի Վուդրուֆին, Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի թոռնուհուն: Նրանք մեծացել էին որպես հարևաններ և Լյուսին նկատել էր բնավորության գծերը, որոնք Ջորջ Ալբերտը զարգացնում էր: Նա իր հիացմունքն էր արտահայտել նրա հանդեպ իր օրագրում. «Այսօր ես գնում եմ քնելու առ Աստված շնորհակալ սրտով. . . և աղոթում եմ, որ նա ինձ ուժ տա ավելի արժանի լինել այն մարդու սիրուն, որին ես անվարան հավատում եմ, որ լավագույն երիտասարդն է, որ երբևէ դրվել է երկրի վրա: Նրա առաքինությունը և բարությունն արցունքներ են առաջացնում իմ աչքերում»:[8]

Լյուսի Էմիլի Վուդրուֆ Սմիթ

Բայց Լյուսին շատ երկրպագուներ ուներ, և նրանցից մի քանիսը շատ հարուստ էին և տալիս էին շռայլ նվերներ: Մյուս կողմից Ջորջ Ալբերտը գրավում էր Լյուսիին Տիրոջ

Միսիոներներ Հարավային Նահանգների Միսիայում: Նոր ամուսնացած Լյուսին (ձախից երրորդը) և (նրա կողքին նստած) Ջորջ Ալբերտ Սմիթը միասին ծառայեցին միսիայի տանը:

հանդեպ իր նվիրվածությամբ: Նա գրել էր Լյուսիին. «Եթե դու հետաքրքրվում ես ամուսնանալ մեկի հետ փողի համար, ապա դա ես չեմ, որովհետև շատ վաղուց ես որոշել եմ, որ չեմ նվիրաբերի ինձ կամ իմ կյանքը կամ իմ ժամանակը փող վաստակելուն, այլ Տիրոջը ծառայելուն և այս աշխարհում Նրա զավակներին օգնելուն»:[9] Լյուսին կատարեց իր ընտրությունը և 1892 թվականի մայիսի 25-ին, նա և Ջորջ Ալբերտն ամուսնացան Յուտայի Մանթի Տաճարում: Ջորջ Ալբերտի հայրը կատարեց ծիսակատարությունը: Այդ օրը Լյուսին իր ամուսնուն մի փոքրիկ մեդալիոն նվիրեց՝ ներսում իր նկարով: Նա պահեց մեդալիոնն իր գրպանի ժամացույցի շղթայի վրա, որտեղ այն կախված էր իր սրտին մոտիկ և կրեց այն գրեթե իր մնացած կյանքի յուրաքանչյուր օրը:[10]

Նորապսակները մեկ ամսից քիչ մնացին միմյանց հետ մինչև Ջորջ Ալբերտ Սմիթը մեկնեց մեկ այլ միսիայի՝ այս մեկը քարոզման հանձնարարություն էր Միացյալ Նահանգների հարավային

մասում: Չնայած նրանք գիտեին, որ նրա մեկնումը մոտալուտ էր՝ կանչը եկել էր նրանց ամուսնությունից երեք շաբաթ առաջ, այնուամենայնիվ բաժանումը դժվար էր: Նրանք երկուսով շատ ուրախացան, երբ չորս ամիս անց, Լյուսին կանչվեց ծառայելու իր ամուսնու կողքին միսիայի գրասենյակում, որտեղ Երեց Սմիթը վերջերս էր նշանակվել ծառայելու որպես միսիայի քարտուղար:

Հարավային Նահանգների Միսիայի նախագահը Ջ. Գորդոն Քիմբալն էր, որը միևնույն ժամանակ ծառայում էր որպես Յոթանասունի անդամ: Երկու անգամ Երեց Սմիթի ծառայության ժամանակաընթացքում, Նախագահ Քիմբալը ստիպված էր թողնել միսիան՝ հոգ տանելու կարևոր հարցերի մասին Սոլթ Լեյք Սիթիում, մեկը Երեց Սմիթի միսիայի քարտուղար դառնալուց ոչ շատ անց և մեկ անգամ կրկին մոտ մեկ տարի հետո: Երկու առիթներով էլ Նախագահ Քիմբալը միսիան առաջնորդելու և միսիայի գործերը կառավարելու վիթխարի պատասխանատվությունը թողեց Երեց Սմիթի վրա, աջակցություն և խորհուրդ ցույց տալով բազմաթիվ նամակների միջոցով: Երեց Սմիթը ծառայեց որպես միսիայի գործող նախագահ մոտավորապես 16 ամիս: Նախագահ Քիմբալին անհանգստացնում էր այդքան երկար ժամանակով բացակայելը, բայց նա վստահում էր երիտասարդ օգնականին: Նա գրեց Երեց Սմիթին մի նամակում. «Կարծում եմ իմ խորաթափանցությունը և կրթվածությունը որքան էլ սահմանափակ լինի, հնարավորություն է տալիս ինձ գնահատել ձեր ազնվությունը և արժանավորությունը, որը հավաստիացնում եմ ձեզ, որ ունեք»:[11] Մի այլ նամակում նա գրել էր. «Թող որ այս մեկ միտքը մնա ամենակարևորը, որ ես գնահատում եմ ձեր աշխատանքները, նվիրվածությունը և հիանալի ոգին»:[12]

Նախագահ Քիմբալը շատ առիթներ էր ունեցել վկա լինելու Երեց Սմիթի նվիրվածությանը և հիանալի ոգուն: Մի առիթով նրանք ճանապարհորդում էին միասին և հրավիրվեցին գիշերն անցկացնել մի փոքրիկ գերանե տնակում: Ջորջ Ալբերտ Սմիթը հետագայում հիշում էր.

Կես գիշերին մոտ մենք արթնացանք դրսից լսվող սոսկալի գոռում գոչյունից: Կեղտոտ խոսքերի տարափը լցրեց մեր ականջները, երբ նստեցինք մեր անկողնում հասկանալու, թե ինչ էր կատարվում: Լուսընկա վառ գիշեր էր և մենք դրսում տեսանք շատ մարդկանց: Նախագահ Քիմբալը ցատկեց ոտքի

և սկսեց հագնվել: Տղամարդիկ հարվածում էին դռանը և կեղտոտ խոսքեր ասում հրամայելով Մորմոններին դուրս գալ, որ նրանք պատրաստվում էին գնդակահարել նրանց: Նախագահ Քիմբալը հարցրեց, թե չէի ուզում վեր կենալ և հագնվել և ես ասացի՝ ոչ, ես մնալու էի անկողնում, որ ես համոզված էի, Տերը մեր մասին հոգ կտաներ: Մի քանի վայրկյանից սենյակը լցվեց կրակոցներով: Հավանաբար, ամբոխը բաժանվել էր չորս մասերի և կրակում էին տան անկյուններին: Մանր բեկորները թռչում էին մեր գլուխների վրայով ամեն ուղղությամբ: Մի երկու րոպե լռություն տիրեց, ապա կրակոցների մի նոր տարափ հեղեղեց սենյակն ավելի շատ բեկորներ թռցնելով: Ես բացարձակապես ոչ մի ահաբեկվածություն չէի զգում: Ես շատ հանգիստ էի տեղումս պառկած, տանելով կյանքիս ամենասոսկալի իրադարձություններից մեկը, բայց ես համոզված էի. . . որ Տերը կպաշտպաներ ինձ և նա արեց դա:

«Հավանաբար, ամբոխը հուսահատվեց և հեռացավ: Հաջորդ առավոտ, երբ մենք բացեցինք դուռն այնտեղ տեսանք ծանր մահակների մի հսկայական դեզ, որոնցով ամբոխը ծեծում էր միսիոներներին հարավում»:[13]

Տարիներ անց Ջորջ Ալբերտ Սմիթը կիսվեց այս փորձառությամբ իր թոռների հետ՝ ուսուցանելով նրանց վստահել Տիրոջը: «Ես ուզում եմ ձեզ վստահեցնել, – ասաց նա, – որ վտանգի ժամերին Տերը հոգ կտանի ձեր մասին, եթե դուք նրան հնարավորություն տաք»:[14]

Ընտանեկան կյանք

Ջորջ Ալբերտ Սմիթն ու Լյուսին արձակվեցին իրենց միսիայից 1894 թվականի հունիսին: Նրանց Սոլթ Լեյք Սիթի վերադառնալուց մի քանի ամիս անց Լյուսին ստացավ օրհնություն իր պապիկից՝ Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆից, որը խոստացավ նրան, որ նա երեխաներ էր ունենալու: 1895 թվականի նոյեմբերի 19-ին նա ունեցավ մի աղջիկ, որին կոչեցին Էմիլի և չորս տարի անց ունեցան ևս մեկ աղջիկ՝ ծնվեց Էդիթը: Նրանց վեջին երեխան՝ Ջորջ Ալբերտ կրտսերը ծնվեց 1905 թվականին:

Ջորջ Ալբերտ Սմիթը սիրառատ հայր էր, պաշտում էր իր երեխաներին: Էդիթը գրել է նրա մասին. «Ինձ համար Հայրս ուներ

բոլոր հատկանիշները, որոնք սիրելի են դարձնում հորը դստեր համար։Նա իրականացրեց հայրության իմ բոլոր սպասումները»։ Հատկապես երեխաների համար տպավորիչ էր, թե ինչպես էր Ջորջ Ալբերտը վերաբերվում իր սիրելի կնոջը։ «Հայրիկի սերը և հարգանքը մայրիկի հանդեպ գեղեցիկ էր», – գրել է Էդիթը։ «Նա երբեք բաց չէր թողնում առիթը ցույց տալու իր գնահատանքը նրա հանդեպ։ Այն ամենը, ինչ նրանք անում էին, անում էին միասին, լավ կազմված ծրագրով և թիմային աշխատանքով։ Նա թանկ էր նրա համար. . . Չնայած մենք բոլորս պաշտում էինք մայրիկիս, կարծում եմ նրա հոգատարությունը և քնքշանքը նրա հանդեպ ավելի սիրելի էին դարձնում նրան մեզ՝ երեխաներիս համար»։[15]

Որպես հայր՝ Ջորջ Ալբերտ Սմիթը փորձեց լրջորեն օգնել իր երեխաներին զգալ այն ուրախությունը, որ ինքն էր զգում ապրելով ավետարանով։ Մի Սուրբ Ծննդյան օր, նվերները բացելուց հետո, նա հարցրեց իր երիտասարդ դուստրերին, թե ինչ էին կարծում այն մասին, որ իրենց խաղալիքներից մի քանիսը տային այն երեխաներին, ովքեր Սուրբ Ծննդյան նվերներ չէին ստացել։ Քանի որ նրանք հենց նոր ստացել էին նոր խաղալիքներ, աղջիկները համաձայնվեցին, որ իրենք տային իրենց հին խաղալիքներից մի քանիսը կարիքավոր երեխաներին։

«Չէի՞ք կամենա տալ նրանց նոր խաղալիքներից մի քանիսը ևս», – մեղմորեն առաջարկեց Ջորջ Ալբերտ Սմիթը։

Նրա դուստրերը տատանվեցին, բայց, ի վերջո, նրանք համաձայնվեցին տալ մեկը կամ երկուսն իրենց խաղալիքներից։ Ապա՝ Ջորջ Ալբերտն աղջիկներին տարավ այն տունը, որը նա իր մտքում ընտրել էր, և նրանք հանձնեցին նվերները։ Փորձառությունն այնքան վեհացնող էր, որ հենց որ դուրս եկան, աղջիկներից մեկն ասաց հուզված ձայնով. «Այժմ եկեք գնանք և տանենք մնացած խաղալիքները նրանց համար»։[16]

Տասներկու Առաքյալների Քվորում 1903–1945

1903 թվականի հոկտեմբերի 6-ին Ջորջ Ալբերտ Սմիթը շատ զբաղված էր աշխատանքային վայրում և չկարողացավ մասնակցել գերագույն համաժողովի նիստերին այդ օրը։ Այն ժամանակ, երբ նա դուրս եկավ գրասենյակից, համաժողովի

Տասներկու Առաքյալների Քվորումը 1921 թվականին: Կանգնած աջից ձախ՝ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ, Ջերմս Ի. Թալմիջ, Սթեֆան Լ. Ռիչարդս, Ռիչարդ Ռ. Լայման, Մելվին Ջ. Բալլարդ և Ջոն Ա. Ուիդսոն: Ձախից աջ նստած են՝ Ռուդգեր Քլանսոն, Ռիդ Սմուտ, Ջորջ Ալբերտ Սմիթ, Ջորջ Ֆ. Ռիչարդս, Օրսոն Ֆ. Ուիթնի և Դեյվիդ Օ. Մակքեյ:

կեսօրյա նիստը գրեթե ավարտվել էր, այնպես որ նա ուղղվեց տուն երեխաներին տոնավաճառ տանելու մտադրությամբ:

Երբ նա տուն հասավ, նա զարմացավ այնտեղ տեսնելով այցելուների մի ամբոխ, որոնցից մեկն առաջ եկավ և նրան ջերմորեն շնորհավորեց:

«Ի՞նչ է նշանակում այս բոլորը», – հարցրեց նա:

«Մի՞թե դուք չգիտեք», – պատասխանեց նա:

«Ես ի՞նչ չգիտեմ»:

«Դե՜հ, որ դուք հաստատվել եք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ», – բացականչեց այցելուն:

«Դա չի կարող ճիշտ լինել», ասաց Ջորջ Ալբերտը: «Պետք է որ սխալ լինի»:

«Ես ինքս եմ լսել», – շարունակեց նա:

«Երևի մեկ այլ Սմիթ է եղել», – ասաց նա: «Ինձ ոչ մի խոսք չի ասվել այդ մասին, և ես չեմ կարող հավատալ, որ դա ճիշտ է»:

Շփոթված այցելուն վերադարձավ Թաբերնաքլ՝ պարզելու, թե ինքն արդյոք սխալվե՞լ էր: Այնտեղ նրան ասացին, որ ինքը ճիշտ էր՝ Ջորջ Ալբերտ Սմիթը Տասներկու Առաքյալների Քվորումի նոր անդամն էր:[17]

Նրա դուստր Էմիլին հետագայում վերհիշում էր Սմիթի տան տեսարանը. «Թվում էր ողջ Թաբերնաքլը հոսում էր մարգագետնի վրայով դեպի մեր տուն, արտասվելով և համբուրելով մայրիկիս: Նրանք բոլորն ասում էին, որ Հայրիկն առաքյալ էր, իսկ մենք մտածում էինք, որ առաքյալ լինելը պետք է որ ամենավատ բանը լիներ, որ կարող էր երբևէ պատահել մարդուն»:

Նույնիսկ տեղեկության հաստատվելուց հետո Ջորջ Ալբերտը որոշեց, որ նա, այնուամենայնիվ, տանելու էր իր դուստրերին տոնավաճառ ինչպես խոստացել էր, «չնայած նա դրան այդքան էլ ուշադրություն չէր դարձնում», – հիշում էր Էմիլին: «Նա ողջ ժամանակն անցկացրեց մեջքով պատին կանգնած խոսելով մարդկանց հետ»:[18]

Երկու օր անց՝ 1903 թվականի հոկտեմբերի 8-ին, Ջորջ Ալբերտ Սմիթը ձեռնադրվեց Առաքյալ Սոլթ Լեյքի Տաճարի վերին սենյակում Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից: Ձեռնադրումից հետո նա հրավիրվեց կիսվել իր զգացումներով ներկա Տասներկուսի Քվորումի անդամների հետ. «Ես թույլ եմ զգում և խորաթափանցության պակաս՝ համեմատած ավելի հասուն տարիների տղամարդկանց հետ, – ասաց նա, – բայց սիրտս ուղիղ է և ես անկեղծորեն ուզում եմ Տիրոջ աշխատանքի առաջընթացը դեպի ապագան. . . Ես ունեմ կենդանի վկայություն այս աշխատանքի աստվածայնության մասին, ես գիտեմ, որ ավետարանը եկել է երկիր Տիրոջ իսկ ղեկավարության և առաջնորդության ներքո, և նրանք ովքեր ընտրվել են նախագահելու, իրականում Նրա ծառաներն էին անցյալում և ներկայում: Ես ցանկանում եմ և աղոթում, որ կարողանամ ապրել մաքուր և խոնարհ, որպեսզի արժանանամ Հոգու հուշումներին և հորդորներին՝ ողջ իմ կյանքի ընթացքում ինձ առաջնորդելու համար»:[19]

Ջորջ Ալբերտ Սմիթը ծառայեց Տասներկուսի Քվորումում մոտավորապես 42 տարի, ներառյալ 2 տարի որպես Քվորումի

Նախագահ: Այս ժամանակաընթացքում նա կատարեց շատ հանձնարարություններ և օրհնեց աշխարհի ժողովուրդներին բազմաթիվ ուղիներով:

Կիսվել ավետարանով և ընկերներ ձեռք բերել Եկեղեցու համար

Երեց Սմիթը մարդկանց հանգստացնելու և թշնամիներին ընկերներ դարձնելու բնական տաղանդ ուներ: Մի տեղական գործարար՝ ոչ Եկեղեցու անդամ, նրա մասին ասել է.«Նա հեշտ մտերմացող մարդ էր: Նա մի մարդ էր, որին ծանոթ լինելը հաճելի էր: Նրա ընկերական ժպիտը, նրա սրտաբուխ ձեռքսեղմումը և նրա ողջույնի ջերմությունը ստիպում էին ներքուստ զգալ, մարդու սրտում նրա ընկերության անկեղծությունը տվյալ անձի և իր ընկերակիցների հանդեպ»:[20]

Այս տաղանդն արժեքավոր էր այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Եկեղեցին ողջ աշխարհում դեռևս հայտնի չէր և կասկածների մեջ էր պահվում շատերի կողմից: Մի անգամ, երբ նա մի հանձնարարություն էր կատարում Արևմտյան Վիրջինիայում, նա իմացավ, որ քաղաքի պաշտոնյաները սպառնացել էին ձերբակալել բոլոր նրանց, ում կբռնեին Մորմոնիզմ քարոզելու մեջ: Երեց Սմիթը հանդիպեց քաղաքի գործավարի Պր. Իգլի հետ, փորձելով փոխել քաղաքականությունը: Նա ավելի ուշ գրեց իր օրագրում. «Երբ ես առաջին անգամ այցելեցի Պր. Իգլին նա շատ կտրուկ էր իր վարվելակերպով և հակիրճ տեղեկացրեց ինձ, որ մեզ չէին հանդուրժելու այդ քաղաքում. . . Ես ասացի նրան, որ հավատացած էի, որ նա սխալ էր տեղեկացված և կցանկանայի նստել նրա հետ և զրույց ունենալ. . . Մենք որոշ ժամանակ անցկացրեցինք՝ քննարկելով Մորմոնիզմը: Նա բավականին փափկեց, նախքան ես կհեռանայի և սեղմեց ձեռքս և տվեց իր այցեքարտը: Ես հեռացա զգալով, որ վերացրել էի ինչ-որ նախապաշարմունք»:[21] Երեք օր անց Երեց Սմիթը մեկ անգամ ևս այցելեց նրան և այս անգամ նա թողեց Մորմոնի Գրքի մի օրինակ նրա մոտ:[22]

Երեց Սմիթը միշտ որոնում էր հնարավորություններ խոսելու մարդկանց հետ Եկեղեցու մասին: Երբ որ նրա հանձնարարությունները պահանջում էին ճանապարհորդել, նա իր հետ վերցնում էր Մորմոնի Գրքի, Եկեղեցու ամսագրերի օրինակներ

և այլ Եկեղեցական գրականություն, որոնք նա հույս ուներ բաժանել: Քանի որ Մորմոնի Գիրքը հզոր վկայություն է բերում Հիսուս Քրիստոսի մասին, Երեց Սմիթը համարում էր այն Սուրբ Ծննդյան հիանալի նվեր և հաճախ էր օրինակներ ուղարկում փոստով այլ հավատքի ընկերներին և նույնիսկ նշանավոր մարդկանց, որոնց նա երբեք չէր տեսել: Մի նամակում, որը կցված էր այդպիսի Սուրբ Ծննդյան նվերին ասվում էր. «Մի քանի օրից Քրիստոնյա աշխարհը կտոնի Փրկչի ծնունդը և այդ ժամանակ մեր ընկերներին հիշելը սովորույթ է: Ուստի ես համոզված եմ, որ դուք կընդունեք ինձանից Մորմոնի Գրքի օրինակը. . . Հավատալով, որ դուք ուրախ կլինեք ունենալ սա ձեր գրադարանում, ես ուղարկում եմ ձեզ այս, որպես Սուրբ Ծննդյան նվեր»:

Նա ստացավ հետևյալ պատասխանը. «Գիրքը տեղ կունենա մեր դարակներում և կկարդացվի [ծայրից ծայր] անկանխակալ խորությամբ: Այն չի կարող ձախողվել հայացքներն ընդլայնելիս և հանդուրժողականության հոգին մեծացնելիս այն բոլորի մեջ, ովքեր լրջորեն կարդում են այն»:[24]

Քաղաքացիական մասնակցություն

Երեց Սմիթը քաջալերում էր Եկեղեցու անդամներին ներգրավվել իրենց համայնքներում և օգտագործել իրենց ազդեցությունը՝ աշխարհում պայմանները բարելավելու համար: Նա ինքը ներգրավված էր մի քանի քաղաքացիական կազմակերպություններում, բացի Գերագույն Իշխանավորի իր պատասխանատու կոչումից: Նա Միջազգային Ռոտարի Կոնգրեսի և Անջուր Հողագործության Կոնգրեսի նախագահ ընտրվեց և վեց անգամ նա ընտրվեց որպես Ամերիկյան Հեղափոխության Որդիներ Ազգային Միության փոխնախագահ: Լինելով օդագնացության համոզված կողմնակից՝ որպես Գերագույն իշխանավորների համար իրենց ճանապարհորդական հանձնարարություններն ավելի արդյունավետ կատարելու միջոց, Երեց Սմիթը ծառայեց Արևմտյան ավիաուղիների տնօրենների վարչությունում: Նա նաև ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս Ամերիկայի պատանիների Սքաուտական կազմակերպությունում և 1934 թվականին պարգևատրվեց արծաթե վայրի ցուլ՝ Սքաուտների բարձրագույն պարգևով: I Համաշխարհային հետպատերազմյան տարիների ընթացքում նա ծառայեց որպես Յուտայի նահանգի «Սփոփանք Հայաստանին և Սիրիային»

արշավի նախագահ և որպես Բնակարանով Ապահովելու Միջազգային Կոնվենցիայի նահանգի ներկայացուցիչ, որի նպատակն էր ապաստան գտնել նրանց համար, ովքեր անտուն էին մնացել պատերազմի հետևանքով:[25]

Նախքան Առաքյալ կանչվելը, Ջորջ Ալբերտ Սմիթն ակտիվ էր քաղաքականության մեջ, լրջորեն քարոզարշավի ելնելով այն գաղափարների և թեկնածուների համար, որոնք նա զգում էր կբարելավեին հասարակությունը: Երբ նա դարձավ Բարձրագույն Իշխանավոր, նրա մասնակցությունը քաղաքականության մեջ նվազեց, բայց նա շարունակում էր պաշտպանել գործերը, որոնց հավատում էր: Օրինակ՝ 1923 թվականին նա օգնեց ծրագիր ներկայացնել Յուտայի Նահանգի օրենսդրական մարմին, որը հանգեցրեց թոքախտով հիվանդների առողջարանի կառուցմանը:[26]

Երեց Սմիթի կարեկցանքն ուրիշների հանդեպ հատկապես ակնհայտ էր Կույրերի Օգնության Միության նախագահի իր ծառայության մեջ, մի պաշտոն, որը նա զբաղեցնում էր 1933-1949 թվականներին: Ինքը ևս որպես տեսողական թուլությունից տառապող, Երեց Սմիթը հատուկ համակրանք էր տածում նրանց հանդեպ, ովքեր կույր էին: Նա ղեկավարեց Մորմոնի Գրքի տպագրությունը կույրերի բրեյլ համակարգով և նա հաստատեց մի ծրագիր մարդկանց օգնելու, ովքեր կույր էին, սովորել կարդալ բրեյլ համակարգով և հարմարվել իրենց տկարության հետ այլ ուղիներով: Նրա ջանքերը սեր առաջացրեցին նրանց հանդեպ, ում նա ծառայում էր: Կույրերի Օգնության Միության անդամներից մեկն արտահայտեց իր երախտագիտությունը մի բանաստեղծության միջոցով, որը նվիրեցին Երեց Սմիթին իր ծննդյան 70-ամյակի առթիվ.

Երբ կյանքն է հարվածում փոթորկոտ ձեռքերով,
Եվ դառն արցունքներ թափում,
Երբ ընկերազուրկ Ձմեռն է սառեցնում հոգիս,
Եվ դատարկ արձագանքներ բերում
Այդ իսկ պահին, հույսով լեցուն
Քայլերս չնայած դողդոջուն և կաղ,
Գտնելու հասկացող մի սիրտ,
Որտեղ վառվում է ընկերական մի կրակ



Երեց Ջորջ Ալբերտ Սմիթը ղեկավարեց կույրերի համակարգով Մորմոնի Գրքի հրատարակումը։

Մի սիրտ, որտեղ մեղմ Իմաստությունն է բնակվում,
Կարեկցող և բարի,
Որի հավատքն առ Աստված և մարդկանց սովորեցրել է
Այդպիսի հավատք կույրերի համար։ . . .

Չնայած նրա քնքուշ սիրառատ դեմքը
Մեզ համար փակ է մեկուսի,
Մենք տեսնում ենք գթառատ իմաստությունը
Նրա հասկացող սրտի,
Մենք զգում ենք խաղաղություն նրա հոգում
Եվ գտնում անդորրը մեր սեփական,
Մենք լսում ենք նրա լուռ աղոթքը, որն ասում է
Մենք չենք քայլում մենակ,
Նրա հավատքը մեր համար կտա մեզ ուժ,
Երբ անտեսանելի ուղիներ անցնենք,
Մեր հոգիները վեհացրած մարդուն
Աստծո հետ ընկերակից տեսնել։[27]

Անձնական հիվանդությունները և այլ փորձություններ

Իր կյանքի մեծ մասը Ջորջ Ալբերտ Սմիթն աչքի չէր ընկնում առանձնապես լավ առողջությամբ: Չնայած նա սիրում էր լողալ, ձիավարություն և այլ ֆիզիկական գործունեություն, նրա մարմինը փխրուն էր և հաճախ թույլ: Բացի աչքի իր խրոնիկական խնդիրներից, Երեց Սմիթը տառապում էր ստամոքսից և մեջքի ցավից, մշտական հոգնածությունից, սրտի հիվանդությունից և բազմաթիվ այլ հիվանդություններից իր կյանքի ընթացքում: Իր բազմաթիվ պարտականություններից լարվածությունն ու ճնշումը նույնպես ազդում էին նրա վրա և առաջինը նա չէր կամենում դանդաղեցնել իր մշտազբաղ տեմպը, որպեսզի պաշտպաներ իր առողջությունը: Դրա հետևանքով նա 1909 թվականից մինչև 1912 թվականը տարավ մի հիվանդություն, որն այնքան ծանր էր, որ նրան պահեց անկողնում և խանգարեց նրան կատարել Տասներկուսի Քվորումում իր պարտականությունները: Դրանք շատ փորձիչ ժամանակներ էին Երեց Սմիթի համար, որը հուսահատորեն ուզում էր վերսկսել իր ծառայությունը: 1911 թվականին իր հոր մահը և գրիպի լուրջ նոպան, որը չարչարեց նրա կնոջը, էլ ավելի դժվարացրեցին Երեց Սմիթի ապաքինումը:

Տարիներ անց նա կիսվեց հետևյալ փորձառությամբ, որը նա ունեցել էր այս ժամանակահատվածի ընթացքում.

«Մի քանի տարի առաջ ես լուրջ հիվանդացա: Փաստորեն, կարծում եմ բոլորը ձեռք էին քաշել ինձանից, բացի իմ կնոջից. . . Ես այնքան թուլացա, որ հազիվ էի շարժվում: Ինձ համար նույնիսկ անկողնում շրջվելը դանդաղ և հոգնեցուցիչ գործ էր:

Մի օր այս պայմաններում ես կորցրեցի իմ շրջապատի զգացողությունը և կարծում էի, որ անցել եմ Մյուս Կողմը: Ես ինձ գտա մեջքով կանգնած դեպի մեծ և գեղեցիկ մի լիճ, իսկ դիմացից մի մեծ անտառ էր ծառերի: Ոչ ոք չէր նշմարվում և լճի վրա նավակ չկար կամ որևէ այլ տեսանելի բան, որը ցույց տար, թե ինչպես էի հասել այնտեղ: Ես հասկացա, կամ թվում է թե հասկացա, որ վերջացրել էի գործս իմ մահկանացու կյանքում և գնացել էի տուն: . . .

Ես սկսեցի հետազոտել և շուտով գտա մի կածան, որն անտառի միջով էր ձգվում և կարծես այնքան էլ շատ չէր

օգտագործվել, և որը գրեթե աննկատ էր խոտի պատճառով: Ես հետևեցի այդ կածանին և մի քիչ քայլելուց հետո՝ բավականին տարածություն անտառի միջով անցնելուց հետո, ես տեսա մի մարդու, որը գալիս էր դեպի ինձ: Ես տեսա, որ նա մի խոշորակազմ մարդ էր, և ես արագացրեցի քայլերս նրան հասնելու համար, որովհետև ճանաչեցի նրան որպես իմ պապիկը՝ [Ջորջ Ա. Սմիթը]: Մահկանացու կյանքում նա կշռում էր մոտ երեք հարյուր ֆունտից ավելի, այնպես որ պատկերացնում եք, թե որքան խոշորակազմ էր նա: Հիշում եմ, թե որքան երջանիկ էի տեսնելով նրան դեպի ինձ գալիս: Ինձ տրվել էր նրա անունը և ես միշտ հպարտանում էի դրանով:

Ջորջ Ա. Սմիթ

«Երբ Պապիկը մի քանի քայլ էլ մոտեցավ ինձ, նա կանգ առավ: Նրա կանգ առնելը հրավեր էր ինձ համար կանգ առնելու: Այնուհետև, ես կկամենայի տղաներն ու աղջիկները և երիտասարդները երբեք չմոռանային սա, նա շատ լրջորեն ինձ նայեց ու ասաց.

«Ես կկամենայի իմանալ, թե ի՞նչ ես արել դու իմ անվան հետ»:

«Ամեն ինչ, որ երբևէ արել էի, անցավ իմ առջևով կարծես, այն մի թռչող նկար էր էկրանին՝ այն ամենը, ինչ արել էի: Այս վառ հետադարձ հայացքն արագորեն եկավ հենց այն պահին, երբ ես կանգնած էի այնտեղ: Ողջ իմ կյանքն անցավ իմ առջևով: Ես ժպտացի նայելով պապիկիս և ասացի.

«Ես երբեք ոչինչ չեմ արել քո անվան հետ, որից դու ամաչես»:

«Նա առաջ եկավ և գրկեց ինձ և երբ նա այդպես արեց, ես կրկին եկա իմ երկրային միջավայրի գիտակցությանը: Բարձս այնպես էր թացացել, կարծես թե ջուր էին լցրել վրան՝ այն թաց էր երախտագիտության արցունքներից, որ կարողացա առանց ամաչելու պատասխանել:

«Ես շատ անգամներ մտածել եմ այս մասին և ուզում եմ ասել ձեզ, որ այդ ժամանակից հետո ես ավելի շատ եմ հոգում այդ անվան մասին: Այսպիսով՝ ես ուզում եմ ասել տղաներին և աղջիկներին, երիտասարդ տղամարդկանց և կանանց, Եկեղեցու երիտասարդությանը և ողջ աշխարհին. Պատվեք ձեր հայրերին և ձեր մայրերին: Պատվեք այն անունները, որ դուք կրում եք»:[28]

Ի վերջո, Երեց Սմիթը սկսեց վերականգնել իր ուժը և նա դուրս եկավ այս փորձությունից ճշմարտության վերաբերյալ երախտագիտության վերանորոգված զգացմամբ: Նա պատմեց Սրբերին հաջորդ գերագույն համաժողովի ժամանակ. «Վերջին տարիներս ես եղել եմ մահվան ստվերի հովտում, այնքան մոտիկ մյուս կողմին, որ ես համոզված եմ, որ [եթե չլիներ] մեր Երկնային Հոր հատուկ օրհնությունը, ես չէի կարող մնալ այստեղ: Բայց երբեք, ոչ մի պահ այն վկայությունը, որ իմ Երկնային Հայրն օրհնել է ինձ, չի մշուշվել: Որքան ավելի էի մոտենում մյուս կողմին, ավելի մեծ էր դառնում իմ համոզվածությունը, որ ավետարանը ճշմարիտ է: Այժմ երբ կյանքս խնայվեց, ուրախությամբ վկայում եմ, որ ավետարանը ճշմարիտ է և ողջ իմ հոգով ես շնորհակալ եմ Երկնային Հորը, որ նա դա բացահայտել է ինձ»:[29]

Տարբեր ֆիզիկական տկարություններ և այլ ձախորդություններ շարունակեցին չարչարել Երեց Սմիթին գալիք տարիներին: Հավանաբար, նրա մեծագույն փորձությունը եկավ 1932–1937 թվականներին, երբ նրա կինը Լյուսին, տառապում էր հոդացավից և ներվացավից: Նա ուժեղ ցավի մեջ էր և գրեթե մինչև 1937 թվականը կարիք ուներ մշտական խնամքի: Ապա 1937 թվականի ապրիլին սրտի նոպան գրեթե վերցրեց նրանից իր կյանքը, թողնելով նրան ավելի թույլ, քան երբևէ:

Չնայած նա մշտապես անհանգստացած էր Լյուսիի համար, Երեց Սմիթը շարունակում էր կատարել իր պարտականությունները լավագույն ձևով ինչ նա կարող էր: 1937 թվականի նոյեմբերի 5-ին նա խոսեց մի ընկերոջ թաղմանը և երբ նա նստեց իր ելույթից հետո, մեկը նրան մի երկտող տվեց, որն ասում էր, որ անմիջապես տուն վերադառնա: Նա հետագայում գրեց իր օրագրում. «Ես անմիջապես հեռացա աղոթատնից, բայց իմ սիրելի կինը ավանդել էր իր վերջին շունչը նախքան իմ տուն հասնելը: Նա հեռանում էր կյանքից մինչ ես խոսում էի թաղմանը: Ես, իհարկե, զրկվեցի նվիրված օգնականից և մենակ կլինեմ առանց նրա»:

Լյուսին և Ջորջ Ալբերտն ամուսնացել էին 45 տարուց մի քիչ ավելի, երբ նա մահացավ: Նա 68 տարեկան էր: Չնայած նա խորապես կարոտում էր իր կնոջը, Երեց Սմիթը գիտեր որ բաժանումը միայն ժամանակավոր էր և այս գիտելիքը նրան ուժ էր տալիս: «Չնայած ընտանիքս շատ վշտացած է, – գրել է

նա, – մենք մխիթարվում ենք մայրիկի հետ վերամիավորման հույսով, եթե հավատարիմ մնանք: Նա եղել է նվիրված, օգնող, հոգատար կին և մայր: Նա եղել է տառապյալ վեց տարի այս կամ այն կերպ և ես համոզված եմ, որ նա երջանիկ է իր մոր և մյուս սիրելիների հետ այնտեղ. . . Տերը շատ բարեգութ է և վերցրել է մահվան ամեն զգացում, որի համար ես չափազանց շնորհակալ եմ»:[30]

Եվրոպական Միսիայի Նախագահ

1919 թվականին Հեբեր Ջ. Գրանթը, որը վերջերս էր հաստատվել Եկեղեցու Նախագահ, կանչեց Երեց Սմիթին նախագահելու Եվրոպական Միսիայի վրա: Գերագույն համաժողովի ժամանակ իր ելույթում հենց իր մեկնումից առաջ Երեց Սմիթն ասաց.

«Ես կցանկանայի ասել ձեզ, իմ եղբայրներ և քույրեր, որ ես պատիվ եմ համարում, ոչ, ավելի քան պատիվ, ես մեծ օրհնություն եմ համարում, որ Տերը բարձրացրել է ինձ թույլ վիճակից, որի մեջ էի կարճ ժամանակ առաջ, վերականգնելով ինձ այնպիսի առողջական վիճակի, որ եղբայրները զգացել են, որ հնարավոր է ինձ համար միսիայի գնալ օտար երկիր: . . .

. . . Հաջորդ չորեքշաբթի ես պատրաստվում եմ գնացք նստել և հետո անցնել օվկիանոսը գնալու այն դաշտը, ուր ես կանչվել եմ: Շնորհակալություն Աստծուն գնալու հնարավորության համար: Ես երախտապարտ եմ, որ այս ճշմարտության իմացությունը մտել է իմ հոգին»:[31]

Այդ ժամանակ Եվրոպան դեռ վերականգվում էր I Համաշխարհային Պատերազմից հետո, որը վերջացել էր մի քանի ամիս առաջ: Պատերազմի պատճառով միսիոներների թիվը Եվրոպայում շատ ցածր էր և Երեց Սմիթի խնդիրներից մեկն էր մեծացնել այդ թիվը: Սակայն ետպատերազմյան Եվրոպայում տնտեսական լարված պայմանները կառավարություններին դարձնում էին դժկամ՝ անհրաժեշտ վիզաներ տալու համար: Գործերն ավելի էր վատացնում այն, որ դեռ գոյություն ուներ մեծ թյուրըմբռնում և նախապաշարմունք Վերջին Օրերի Սրբերի դեմ: Եկեղեցու նկարագիրը բարելավելու համար, Երեց Սմիթը հանդիպեց բազմաթիվ կառավարական պաշտոնյաների և այլ նշանավոր անձանց հետ: Բացատրելով Եվրոպայում և ողջ աշխարհում միսիոներների լինելու նպատակը, նա հաճախ

ասում էր. «Պահեք բոլոր լավ բաները, որ դուք ունեք, պահեք այն բոլորը ինչ Աստված տվել է ձեզ, որը հարստացնում է ձեր կյանքը, իսկ հետո թույլ տվեք մեզ կիսվել ձեզ հետ մի բանով, որը կավելացնի ձեր երջանկությունը և կմեծացնի ձեր բավարարվածությունը»:[32] Ըստ միսիոներներից մեկի, ով ծառայել էր նրա ղեկավարության ներքո «իր վարպետությամբ և բարի ձևով նա շահում էր նրանց գնահատանքն ու ընկերությունը և ձեռք էր բերում զիջումներ միսիոներների վերաբերյալ, որոնց մերժել էին նախկինում»:[33]

1921 թվականի վերջում Երեց Սմիթը հաջողության հասավ Եվրոպայում ծառայող միսիոներների թիվը մեծացնելիս և Վերջին Օրերի Սրբերի մասին որոշ թյուրըմբռնումներ փոխելիս: Նա նաև ձեռք բերեց ընկերներ Եկեղեցու համար և նա կապ էր պահպանում նրանց հետ նամակների միջոցով հետագա շատ տարիների ընթացքում:

Եկեղեցու պատմական վայրերի պահպանումը

Երեց Սմիթը սիրում էր պատմել ուրիշներին Եկեղեցու մասին և դրա պատմության մեծ իրադարձությունների մասին: Իր ծառայության ընթացքում նա շատ բան արեց օգնելով պահպանել այդ պատմությունը՝ ստեղծելով հուշարձաններ և այդ ձևով նշելով այն վայրերը, որոնք հետաքրքրաշարժ էին Եկեղեցու պատմության մեջ: Ինչպես նրա ընկերներից մեկն է գրել. «Նա հավատում էր, որ հրավիրելով երիտասարդ սերնդի ուշադրությունն իրենց նախնիների ձեռքբերումների վրա, նա կարևոր ծառայություն մատուցած կլիներ»:[34]

Որպես երիտասարդ Առաքյալ՝ նա գնաց Պալմիրա, Նյու Յորք և բանակցություններ վարեց Եկեղեցու անունից գնելու Ջոզեֆ Սմիթ ավագի ագարակը: Երբ Նյու Յորքում էր, նա նաև այցելեց մի մարդու, որի անունը Փլինի Մեքստոն էր, որին էր պատկանում Կումորա բլուրը, այն վայրը, որտեղից Ջոզեֆ Սմիթը ձեռք բերեց ոսկե թիթեղները: Պր. Մեքստոնը չէր կամենում վաճառել հողը Եկեղեցուն, բայց նա և Երեց Սմիթը, այնուամենայնիվ, դարձան ընկերներ: Շնորհիվ լավ հարաբերությունների, որ Երեց Սմիթը պահպանեց Պր. Մեքստոնի հետ, Եկեղեցին ի վերջո կարողացավ գնել կալվածքը և հուշարձան կանգնեցնել այնտեղ:

Կումորա Բլրի Հուշարձանը, որտեղ Մորոնի հրեշտակը հանձնեց թիթեղները Ջոզեֆ Սմիթին:

1930 թվականին Եկեղեցու հարյուրամյակի կազմակերպման առթիվ, Երեց Սմիթն օգնեց հիմնադրել Յուտայի «Փայանիեր էնդ Լանդմարքս» Ընկերությունը և ընտրվեց խմբի առաջին նախագահ: Հաջորդ 20 տարիների ընթացքում այս կազմակերպությունը տեղադրեց ավելի քան 100 հուշարձաններ և հուշատախտակներ, դրանցից շատերը՝ ի հիշատակ ռահվիրաների դեպի Սոլթ Լեյք Սիթի կատարած երթուղու: Այս հուշարձանների մեծ մասի նվիրագործումների ժամանակ պաշտոնավարում էր Երեց Սմիթը:[35]

Բացատրելով Եկեղեցու հետաքրքրությունը պատմական վայրերի նկատմամբ, նա գրել է. «Հուշարձաններ կառուցելը եղել է սովորույթ ի հիշատակ անձանց, որպեսզի նրանց հիշատակը պահպանվի: Մեծ իրադարձությունները նույնպես մշտապես հաստատվել են մարդկանց մտքերում հուշարձաններ կառուցելով. . . Եղել են շատ հետաքրքրություն ներկայացնող կետեր, որոնք մոռացվում են և մարդիկ զգում են, որ ցանկալի է, որ

դրանք նշվեն մի հիմնավոր ձևով, որպեսզի նրանք, ովքեր հետևում են, իրենց ուշադրությունը կենտրոնացնեն այդ կարևոր իրադարձությունների վրա»:[36]

Որպես մեկը, ում պապը քայլել էր Յուտա ռահվիրաների հետ, Երեց Սմիթը զգում էր խորը հարգանք այդ առաջին Եկեղեցու անդամների հանդեպ, ովքեր այնքան շատ բան զոհաբերեցին իրենց հավատքի համար: Սփոփող Միության մի ելույթում, նա կիսվեց մի փորձառությամբ, որը նա ունեցել էր, երբ մտքով հետևում էր ձեռնասայլերով ռահվիրաների երթուղուն.

«Մենք հասանք երթուղու այն մասին, որտեղ Մարտին Ձեռնասայլերի ընկերությունն այնքան շատ կյանքեր կորցրեց: Մենք գտանք, որքան կարող էինք հնարավորին չափով մոտիկ այն տեղին, որտեղ նրանք ճամբար էին խփել: Նրանք, ովքեր այդ խմբի ժառանգներն էին, այնտեղ էին՝ օգնելով մեզ հուշատախտակ տեղադրելիս: Ապա մենք եկանք Ռոք Քրիկ, որտեղ մի ժամանակավոր հուշատախտակ էր դրված այնտեղ՝ մեր կողմից մեկ տարի առաջ: Տարվա այդ հատուկ ժամանակաշրջանում ամենուր վայրի ծաղիկներ էին աճում, վայրի հիրիկն առատ էր և խմբի անդամները հավաքեցին այդ ծաղիկների մի փունջ և դրեցին դրանք քնքշորեն գերեզմանաթմբին, որը սարքվել էր մեկ տարի առաջ. . . Այստեղ մեկ գերեզմանում էին թաղվել 15 Եկեղեցու անդամներ, նրանք մահացել էին սովից և բախտի քմահաճույքին թողնված:

Գիտեք լինում են ժամանակներ և վայրեր, երբ թվում է մենք ավելի ենք մոտենում մեր Երկնային Հորը: Երբ նստած էինք ճամբարի խարույկի շուրջը Ռոք Քրիկի այդ փոքրիկ հովտում, որտեղ Վիլլի Ձեռնասայլերի ընկերությունն աղետի ենթարկվեց, մենք, ովքեր ռահվիրաների ժառանգներն էինք, նրանց, ովքեր անցան տափաստաններն ամռան տապին և ձմռան ցրտին, պատմեցինք պատմություններ մեր նախնիների փորձառությունների մասին. . . Դա սքանչելի առիթ էր: Պատմությունը կրկնվում էր հօգուտ մեզ:

. . . Ինձ թվում էր, որ մենք գտնվում էին հենց նրանց ներկայությամբ, ովքեր տվել էին իրենց ամեն ինչը, որպեսզի մենք կարողանայինք ունենալ Ավետարանի օրհնությունները: Մենք կարծես զգում էինք Տիրոջ ներկայությունը:

Երբ մենք հեռացանք, մեր արցունքները թափելուց հետո, քանի որ կասկածում եմ, որ 30-40 հոգուց բաղկացած խմբում կար մի աչք, որ չոր լիներ, այդ փոքրիկ հավաքի հետևանքով առաջացած ազդեցությունը շարժել էր մեր սրտերը և հիանալի քույրերից մեկը բռնեց ձեռքս և ասաց. «Եղբայր Սմիթ, ես պատրաստվում եմ ավելի լավ կին լինել այժմվանից: Այդ կինը. . . լավագույն կանանցից մեկն է, բայց համոզված եմ, որ նա նույնքան հուզված էր, որքան, հավանաբար, մեզանից մեծ մասն էր հուզվել այն փաստից, որ որոշ դեպքերում զգացել էինք, որ չէինք համապատասխանում այն կատարելատիպերին, որոնք պետք է լինեին մեր հոգիներում: Այստեղ թաղված մարդիկ ոչ միայն իրենց կյանքի օրերն էին տվել, այլ տվել էին իրենց հենց կյանքը, որպես այս աշխատանքի աստվածայնության հավատքի ապացույց: . . .

Եթե այս կազմակերպության անդամները [Մփոփող Միությունը] լինեին այնքան հավատարիմ, որքան նրանք էին, ովքեր թաղված են տափաստաններում պառկած, ովքեր Տիրոջ հանդեպ իրենց հավատքի դժվարություններին դիմակայեցին, դուք կավելացնեք ձեր բազում ձեռքբերումներին և սիրառատ Հոր շնորհը կհորդի դեպի ձեզ և նրանց, ովքեր ձերն են»:[37]

Եկեղեցու Նախագահ 1945–51

1945 թվականի մայիսի 15-ին, երբ Երեց Սմիթը գտնվում էր գնացքում Միացյալ Նահանգների արևելյան մասում, Երեց Սմիթին արթնացրեց երկաթուղային մի պաշտոնյա մի ուղերձով. Նախագահ Հեբեր Ջ. Գրանտը, որը Եկեղեցու Նախագահն էր այդ ժամանակ, վախճանվել էր: Երեց Սմիթը փոխեց գնացքները հենց որ կարողացավ և վերադարձավ Սոլթ Լեյք Սիթի: Հենց մի քանի օրից Ջորջ Ալբերտ Սմիթը՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի ավագ անդամ, ձեռնադրվեց որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ութերորդ Նախագահ:

Որպես Եկեղեցու Նախագահ իր առաջին ելույթում, գերագույն համաժողովի ժամանակ, նա ասաց Սրբերին, ովքեր հենց նոր հաստատել էին նրան. «Հետաքրքիր է, թե այստեղ որևէ մեկ ուրիշն արդյոք այնքան թույլ և խոնարհ զգո՞ւմ է, ինչպես այն մարդը, ով կանգնած է ձեր առջև»:[38] Նա արտահայտեց

Նախագահ Սմիթն ու նրա խորհրդականները՝ Ջ. Ռուբեն Քլարկ կրտսեր (ձախից) և Դեյվիդ Օ. Մակքեյը (աջից):

նույնատիպ զգացումներ իր ընտանիքի անդամներին. «Ես չեմ ցանկացել այս պաշտոնը: Ես ինձ համապատասխան չեմ զգում դրան: Բայց այն տրվել է ինձ և ես կզբաղեցնեմ այն իմ ունակության լավագույնով: Ես ուզում եմ, որ դուք բոլորդ իմանաք այդ, ինչ էլ որ դուք անեք եկեղեցում, [տնային] ուսուցումից սկսած մինչև ցցում նախագահելը, եթե դուք անեք դա ձեր կարողության լավագույնով, ձեր պաշտոնը ճիշտ այնքան կարևոր կլինի, որքան իմը»:[39]

Կային շատերը, ովքեր զգում էին, որ Նախագահ Սմիթի տաղանդներն անզուգականորեն հարմար էին այս կոչմանը: Բարձրագույն իշխանավորներից մեկը համառոտակի արտահայտել է այս վստահությունը Նախագահ Սմիթի հաստատվելուց հետո. «Հաճախ է ասվում, որ Տերը բարձրացնում է հատուկ մի մարդու կատարելու հատուկ մի առաքելություն. . . Ես չպետք է ասեմ, թե ինչ հատուկ առաքելություն ունի Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթն իր առջևում: Այնուամենայնիվ, սա ես իսկապես գիտեմ,

որ աշխարհի պատմության այս յուրահատուկ ժամանակաշրջանում, երբեք սերը եղբայրների միջև այնպես սուր անհարժեշտություն չի եղել, ինչպես այն անհրաժեշտ է այսօր: Բացի այդ, ես իսկապես գիտեմ այս, որ չկա մի մարդ իմ ծանոթներից, ով սիրի մարդկության ընտանիքը, հավաքականորեն և անհատականորեն ավելի խորապես, քան Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթն է սիրում»:[40]

II համաշխարհային Պատերազմից հետո կարիքավորներին օգնելը

II Համաշխարհային Պատերազմը ընդամենը մի քանի ամիս էր, ինչ ավարտվել էր, երբ Ջորջ Ալբերտ Սմիթը դարձավ Եկեղեցու Նախագահ: Պատերազմը հազարավոր մարդկանց անտուն և չքավոր թողեց Եվրոպայում և Նախագահ Սմիթն արագ մոբիլիզացրեց Եկեղեցու բարօրության միջոցները՝ օգնություն հասցնելու համար: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հետագայում ասաց այդ ջանքերի մասին. «Ես նրանց հետ էի, ովքեր գիշերն աշխատում էին Բարօրության հրապարակում այստեղ՝ Սոլթ Լեյք Սիթիում, երկաթուղային վագոնները բարձելով ապրանքներ, որոնք փոխադրում էին ուտելիքը մինչև նավահանգիստ, որտեղից այն առաքվում էր ծովի վրայով: Շվեյցարիայի Տաճարի նվիրագործման ժամանակ [1955թ.], երբ Գերմանիայի Սրբերից շատերն էին եկել տաճար, ես լսեցի նրանցից մի քանիսին, ովքեր արցունքներն իրենց այտերի վրայով հոսելով շնորհակալություն հայտնեցին այն ուտելիքի համար, որը փրկել էր նրանց կյանքը»:[41]

Նախագահ Սմիթը գիտեր նաև, որ աշխարհի ժողովուրդների մեջ այդպիսի աղետաբեր պատերազմից հետո առկա էին հոգևոր մեծ կարիքներ: Ի պատասխան նա քայլեր ձեռնարկեց պաշտոնապես ճանաչելու միսիոներն այն երկրներում, որտեղ պատերազմը դադարեցրել էր միսիոներական աշխատանքը և նա քաջալերեց Սրբերին ապրել խաղաղության ավետարանով իրենց անձնական կյանքում: «Այս ժամանակ երախտագիտության լավագույն ապացույցը, – ասաց նա պատերազմի ավարտից ոչ շատ անց, – այն ամենն անելն է, ինչ կարող ենք, այս տխուր աշխարհին երջանկություն բերելու համար, քանզի մենք բոլորս մեր Հոր զավակներն ենք, և մենք բոլորս մեր այստեղ

ապրելու համար այս աշխարհին ավելի երջանիկ վայր դարձնելու պարտականության տակ ենք։

Եկեք հասցնենք բարություն և հոգատարություն բոլորին, ովքեր կարիք ունեն դրան, չմոռանալով նրանց, ովքեր որբացած են և խաղաղության համար ուրախանալու մեր պահին, եկեք չմոռանանք նրանց, ովքեր հանուն խաղաղության գնի տվել են իրենց սիրելիներին։ . . .

Աղոթում եմ, որ մարդիկ դառնան դեպի Աստված և ցույց տան հնազանդություն նրա ուղիներին և դրանով փրկեն աշխարհը հետագա հակասությունից և կործանումից։ Աղոթում եմ, որ խաղաղությունը, որը գալիս է մեր Երկնային Հորից, մնա բոլոր նրանց սրտերում և տներում, ովքեր սգում են»։[42]

Ավետարանով կիսվելու մեծացող հնարավորություններ

Նախագահ Սմիթը շարունակում էր կիսվել ավետարանով ուրիշների հետ ամեն առիթով և այդ առիթները շատանում էին իր նոր պաշտոնի հետ։ 1946 թվականի մայիսին Նախագահ Սմիթը դարձավ Եկեղեցու առաջին Նախագահը, որն այցելեց Մեքսիկայի Սրբերին։ Բացի Եկեղեցու անդամներին հանդիպելուց և մեծ համաժողովի ժամանակ խոսելուց, Նախագահ Սմիթը նաև հանդիպեց մի քանի բարձրաստիճան պաշտոնյաների հետ Մեքսիկայում և խոսեց նրանց հետ վերականգված ավետարանի մասին։ Մեքսիկայի նախագահ Մանուել Կամաչոյի հետ հանդիպման ժամանակ Նախագահ Սմիթն ու նրա ընկերախումբը բացատրեցին. «Մենք եկել ենք ձեզ համար և ձեր ժողովրդի համար հատուկ ուղերձով։ Մենք այստեղ ենք պատմելու ձեզ ձեր նախնիների և Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանի մասին. . . Մենք ունենք մի գիրք, որը. . . պատմում է մի մեծ մարգարեի մասին, որն իր ընտանիքի և ուրիշների հետ, թողեց Երուսաղեմը 600 տարի Քրիստոսից առաջ և եկավ. . . Ամերիկայի այս մեծ երկիրը, որը նրանց համար հայտնի էր որպես «խոստումի երկիր, ընտիր բոլոր երկրներից ավելի»։ Մորմոնի այս Գիրքը պատմում է նաև այս մայրցամաք Հիսուս Քրիստոսի այցելության մասին, և որ նա կազմակերպեց Իր Եկեղեցին և ընտրեց Իր տասներկու Առաքյալներին։

Նախագահ Կամաչոն, որը հարգանք արտահայտեց և հիացմունք Վերջին Օրերի Սրբերի հանդեպ, ովքեր ապրում էին իր

երկրում, շատ հետաքրքրվեց և հարցրեց. «Հնարավոր է արդյոք ինձ համար ստանալ Մորմոնի Գրքի մի օրինակ։ Ես երբեք նախկինում չեմ լսել դրա մասին»։ Այդ ժամանակ Նախագահ Սմիթը ներկայացրեց կաշեկազմ իսպաներեն մի օրինակ, գրքի սկզբում ներառված հատուկ հետաքրքրություն ներկայացնող հատվածներով։ Նախագահ Կամաչոն ասաց. «Ես կկարդամ ամբողջ գիրքը, քանի որ դա մեծ հետաքրքրություն է ներկայացնում ինձ համար և իմ ժողովրդի համար»։[43]

Ռահվիրաների ժամանման հարյուրամյակի տոնակատարությունը

Ջորջ Ալբերտ Սմիթի Եկեղեցու վեցամյա Նախագահ լինելու ընթացքում ամենակարևոր իրադարձություններից մեկը եղավ 1947 թվականին, երբ Եկեղեցին տոնեց Սոլթ Լեյքի հովիտ ռահվիրաների ժամանման հարյուրամյակը։ Նախագահ Սմիթը ղեկավարում էր տոնակատարությունը, որն արժանացավ ազգային ուշադրությանը և նվիրագործման ժամանակ բարձրակետին հասավ «Սա է այն Տեղը Հուշահամալիրի» մոտ՝ Սոլթ Լեյք Սիթիում, այն տեղի մոտ, որտեղ ռահվիրաներն առաջին անգամ հովիտ էին մտել։ 1930 թվականից սկսած Նախագահ Սմիթը զբաղված էր մի հուշարձան ծրագրավորելով՝ ռահվիրաների նվաճումներն ու հավատքը հարգելու համար։ Սակայն նա ուշադիր էր, հավաստիանալով, որ հուշարձանը նաև հարգեր վաղ հետազոտողների, այլ հավատքի միսիոներների և այդ դարաշրջանի Ամերիկյան կարևոր Հնդկացիների առաջնորդներին։

«Սա է այն Տեղը Հուշահամալիրի» նվիրագործման ժամանակ, Ջորջ Ք. Մորիսը՝ այդ ժամանակ Արևելյան Նահանգների Միսիայի նախագահը, նկատեց բարի կամքի ոգի, որը նա վերագրեց Նախագահ Սմիթի ջանքերին. «Նախագահ Սմիթի ներդրումները եղբայրության և հանդուրժողականության համար արտացոլվեց նվիրագործման սպասավորության ժամանակ։. . . Հուշարձանն ինքնին հնարավորին չափով քանդակներում անձնական դիմանկարներով հարգել էր այն տղամարդկանց, ովքեր ստեղծել էին արևմուտքի լեռնամիջյան պատմությունը՝ նախորդելով Մորմոն Ռահվիրաներին, անկախ ռասայից կամ կրոնից։ Երբ նվիրագործման սպասավորման ծրագիրն էր պատրաստվում, Նախագահ Սմիթի ցանկությունն էր, որ բացի նահանգի, երկրամասի և քաղաքի պաշտոնական անձանցից

«Այս է այն Տեղը» հուշահամալիրը, որը կառուցվել է ի հիշատակ Սոլթ Լեյքի հովիտ ռահվիրաների ժառանգման, նվիրագործվել է Նախագահ Սմիթի կողմից 1947 թվականին:

ներկայացվեին բոլոր հիմնական կրոնական խմբերը: Կաթոլիկ քահանա, Բողոքական եպիսկոպոս, Հրեա ռաբբի և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ներկայացուցիչները, որոնք նշանավոր հռետորներ էին: Արևելքից եկած մի հյուր, ծրագրից հետո, կատարեց հետևյալ դիտարկումը. «Այսօր ես ունեցա հոգևոր վերամկրտություն: Այն ինչին ես ականատես եղա, չէր կարող տեղի ունենալ աշխարհի որևէ այլ մասում: Հանդուրժողականության ոգին, որը դրսևորվեց այսօր, հիանալի էր»:[44]

Չնայած 60 ոտնաչափ հուշարձանը տպավորիչ էր, Նախագահ Սմիթը սովորեցրեց, որ ռահվիրաներին պատվելու լավագույն ուղին հավատքի և նվիրվածության նրանց օրինակին հետևելն էր. . . Հուշարձանի նվիրագործող աղոթքում նա ասաց. «Մեր Հայր, որ երկնքում ես. . . մենք կանգնած ենք քո ներկայությամբ այս առավոտ այս խաղաղ բլրալանջին և նայում ենք վիթխարի հուշահամալիրին, որը վեր է խոյացվել ի պատիվ քո

որդիների և դուստրերի և նրանց նվիրվածության. . . Մենք աղոթում ենք, որ մենք կարողանանք օրհնվել այն նույն ոգով, որով բնորոշվում էին այդ հավատարիմները, ովքեր հավատում էին քեզ և քո Սիրելի Որդուն, ովքեր եկան այս հովիտ, որովհետև կամենում էին ապրել այստեղ և երկրպագել քեզ: Մենք աղոթում ենք, որ երկրպագության և երախտագիտության հոգին կարողանա լինել մեր սրտերում»:[45]

Մտորումներ կյանքի մասին 80 տարեկան հասակում

Չնայած նրա մեծ տարիքին, իր նախագահության ժամանակի մեծ մասը Նախագահ Սմիթը կարողանում էր կատարել իր պարտականություններն առանց ֆիզիկական տկարությունների, որոնք սահմանափակում էին նրան անցյալում: 1950 թվականի ապրիլ ամսին մի տպագրված հոդվածում Նախագահ Սմիթը ետ էր նայում իր կյանքին և նշում թե ինչպես էր Աստված հաստատել և օրհնել իրեն.

«Այս ութսուն տարիների ընթացքում ես ճանապարհորդել եմ ավելի քան մեկ միլիոն մղոն աշխարհում հանուն Հիսուս Քրիստոսի ավետարանի: Ես եղել եմ շատ կլիմայական գոտիներում և շատ երկրներում և շատ ազգերի մեջ և իմ մանկությունից մարդիկ բարի են եղել և օգտակար ինձ համար ինչպես Եկեղեցու անդամներն, այնպես էլ ոչ անդամները: Ուր էլ որ գնացել եմ, ես գտել եմ ազնիվ տղամարդկանց և կանանց: . . .

. . . Երբ մտածում եմ, թե որքան թույլ, փխրուն անձնավորություն եմ ես, որ կանչվել եմ այս մեծ Եկեղեցու առաջնորդ, ես գիտակցում եմ, թե որքան շատ կարիք ունեմ օգնության: Երախտագիտորեն ես հասկանում եմ իմ Հոր օգնությունը, որ երկնքում է և խրախուսանքն ու ընկերակցությունն իմ կյանքի ընթացքում շատ լավագույն տղամարդկանց և կանանց հետ, որոնց կարելի է ամենուրեք գտնել աշխարհում, ինչպես տանն այնպես էլ արտասահմանում»:

Նա շարունակեց արտահայտելով սեր մարդկանց հանդեպ, ում ծառայել էր այդքան շատ տարիներ.

«Անկասկած, օրհնյալ բան է հաղորդակցվել այսպիսի մարդկանց հետ և իմ հոգու խորքից ես օգտվում եմ առիթից շնորհակալություն հայտնելու բոլորիդ իմ հանդեպ ձեր բարության համար, և բացի այդ ես ցանկանում եմ ասել ձեզ բոլորիդ. Դուք

երբեք չեք իմանա, թե որքան շատ եմ սիրում ձեզ: Ես խոսքեր չեմ գտնում դա արտահայտելու համար: Եվ ես կամենում եմ զգալ այդ ձևով իմ Երկնային Հոր յուրաքանչյուր որդու և յուրաքանչյուր դստեր հանդեպ»:

«Ես երկար ժամանակ եմ ապրել, եթե համեմատելու լինենք մարդկային արարածների միջին տարիքը և ես երջանիկ կյանք եմ անցկացրել: Չի անցնի շատ տարիներ իրադարձությունների բնական ընթացքով, մինչև մյուս կողմի կանչը կհասնի ինձ: Ես սպասում եմ այդ ժամանակին հաճելի ակնկալիքով: Եվ մահկանացության ութսուն տարիներից հետո ճանապարհորդելով աշխարհի շատ մասերով, հաղորդակցվելով հրաշալի և բարի տղամարդկանց և կանանց հետ, ես վկայում եմ ձեզ, որ ես այսօր ավելի լավ գիտեմ, քան երբևէ նախկինում, որ Աստված ապրում է, որ Հիսուսը Քրիստոսն է, որ Ջոզեֆ Սմիթը Կենդանի Աստծո մարգարեն էր, և որ Եկեղեցին, որ նա կազմավորեց մեր Երկնային Հոր ղեկավարության ներքո՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին. . . գործում է նույն քահանայության զորությամբ և իշխանությամբ, որը շնորհվել էր Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի կողմից Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին: Ես գիտեմ սա այնպես, ինչպես որ գիտեմ, որ ապրում եմ և ես գիտակցում եմ, որ այս վկայությունը ձեզ բերելը շատ լուրջ հարց է, և որ ես հաշվետու եմ լինելու իմ Երկնային Հոր կողմից սրա համար և բոլոր այլ բաների համար, որոնք ես սովորել եմ նրա անունով. . . Սիրով և բարությամբ իմ սրտում բոլորի հանդեպ, ես բերում եմ այս վկայությունը Հիսուս Քրիստոսի, մեր Տիրոջ անունով»:[46]

Մեկ տարի անց, իր 81-րդ ծննդյան տարեդարձին, ապրիլի 4-ին, Ջորջ Ալբերտ Սմիթը խաղաղ հեռացավ կյանքից իր տանը՝ իր մահճակալի կողքին ունենալով իր որդուն և դուստրերին:

Սիրո ծառայության հասարակ գործեր

Ջորջ Ալբերտ Սմիթն իրականացրեց շատ բաներ Եկեղեցում իր 81 տարիների ընթացքում, իր համայնքում և ողջ աշխարհում: Բայց նրանք, ովքեր անձնապես գիտեին նրան, հիշում էին նրան ամենաշատը նրա բազում հասարակ, բարության և սիրո խոնարհ գործերի համար:Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը,

որը պաշտոնավարում էր Նախագահ Սմիթի թաղմանը, ասաց նրա մասին. «Իսկապես նա ազնիվ հոգի էր, ամենաերջանիկն էր, երբ ուրիշներին էր երջանիկ դարձնում»:[47]

Երեց Ջոն Ա. Ուիդսոուն՝ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, հիշում էր մի դեպք, երբ նա փորձում էր լուծել մի ծանրակշիռ, դժվարին հարց.

«Ես նստած էի իմ գրասենյակում բավականին հոգնած օրվա աշխատանքից հետո. . . Ես ուժասպառ էի: Հենց այդ պահին դռան թակոց լսվեց և ներս մտավ Ջորջ Ալբերտ Սմիթը: Նա ասաց. «Ես տուն եմ գնում օրվա աշխատանքից հետո: Մտածեցի քո մասին և այն խնդիրների մասին, որ դու պատրաստվում էիր լուծել: Ես եկա քեզ հանգստացնելու և օրհնելու»:

«Դա Ջորջ Ալբերտ Սմիթի ձևով էր. . . Ես երբեք չեմ մոռանա դա: Մենք խոսեցինք մի քիչ և բաժանվեցինք, նա տուն գնաց: Սիրտս բարձրացած էր: Ես այլևս ուժասպառ չէի զգում ինձ:

Տեսնում եք, սերը. . . պարզապես խոսք չէ կամ ներքին զգացում: Սիրուն արժանի լինելու համար, պետք է այն գործի դնել: Նախագահ Սմիթն այդ դեպքում արեց դա: Նա ինձ տվեց իր իսկ ժամանակը, իր իսկ ուժը»:[48]

Երեց Մեթյու Քոուլին, նույնպես Տասներկուսի Քվորումի անդամ և Նախագահ Սմիթի մոտիկ ընկերը, թաղման արարողության ժամանակ իր հարգանքի տուրքը մատուցեց այս ձևով.

«Յուրաքանչյուրը, ով դժբախտության մեջ էր, յուրաքանչյուրը, ով նեղված էր հիվանդությունից կամ այլ ձախորդությունից, ով գալիս էր Աստծո այս որդու մոտ, վերցնում էր առաքինություն և ուժ նրանից: Նրա ներկայությամբ լինելը նշանակում էր բուժված լինել, եթե ոչ ֆիզիկապես, ապա, անպայման, հոգեպես: . . .

. . . Աստված հրապուրում է բարեպաշտներին և ես համոզված եմ, որ ամենակարճ ճանապարհը, որ Աստծո այս մարդը երբևէ արել է իր բոլոր ճամփորդություններում, այն ճամփորդությունն է, որ նա հենց նոր է սկսել: Աստված սեր է: Ջորջ Ալբերտ Սմիթը սեր է: Նա բարեպաշտ է: Աստված վերցրել է նրան իր մոտ:

. . . Մենք չենք կարող հարգել այսպիսի կյանքը խոսքերով: Դրանք անհամապատասխան են: Կա միայն մեկ ուղի հարգելու նրա առաքինությունը, նրա բնավորության մեղմությունը, սիրո նրա մեծ հատկանիշները և դա մեր գործերի միջոցով է: . . .

Նախագահ Սմիթն իր գրասենյակում:

Եկեք բոլորս լինենք մի քիչ ավելի ներողամիտ, մի քիչ ավելի քնքուշ միմյանց հետ մեր հարաբերություններում, մի քիչ ավելի հոգատար միմյանց հանդեպ, մի քիչ ավելի մեծահոգի միմյանց զգացմունքների հանդեպ»:[49]

Ջորջ Ալբերտ Սմիթի գերեզմանաքարին փորագրված է հետևյալ մակագրությունը: Այն տալիս է սիրո ծառայության նրա կյանքի համապատասխան ամփոփագիր.

«Նա հասկանում էր և տարածում Քրիստոսի ուսմունքները և անսովոր հաջողակ էր դրանք կիրառելիս: Նա բարի էր, համբերատար, իմաստուն, հանդուրժողական և խելամիտ: Նա շրջում էր բարիք անելով: Նա սիրում էր Յուտան և Ամերիկան, բայց դրանով չէր սահմանափակվում: Նա ուներ հավատք, առանց որևէ կասկածի, սիրո կարիք ունեցողների հանդեպ և զորություն սիրո: Իր Եկեղեցու և իր ընտանիքի հանդեպ նա անսահման սեր ուներ և ծառայում էր նրանց խանդավառությամբ: Սակայն նրա սերը սահմանափակ չէր, այն ներառում էր բոլոր մարդկանց, անկախ ռասայից, հավատքից կամ դիրքից:

Դիմելով նրանց և նրանց մասին նա հաճախ էր ասում. «Մենք բոլորս մեր Հոր զավակներն ենք»:

Հղումներ

1. In D. Arthur Haycock, “A Day with the President,” *Improvement Era,* Apr. 1950, 288.
2. See “Pres. Smith’s Leadership Address,” *Deseret News,* Feb. 16, 1946, Church section, 6.
3. “Mothers of Our Leaders,” *Relief Society Magazine,* June 1919, 313–14.
4. “To the Relief Society,” *Relief Society Magazine,* Dec. 1932, 707–8.
5. “After Eighty Years,” *Improvement Era,* Apr. 1950, 263.
6. “Pres. Smith’s Leadership Address,” 1.
7. In Merlo J. Pusey, *Builders of the Kingdom* (1981), 209.
8. Lucy Woodruff’s journal, Feb. 5, 1888, George Albert Smith Family Papers, University of Utah, box 138, book 1.
9. In Emily Stewart Smith, “Some Notes about President George Albert Smith,” May 1948, George Albert Smith Family Papers, University of Utah, box 5, page 3.
10. See Emily Stewart Smith, “Some Notes about President George Albert Smith,” 5.
11. J. Golden Kimball, letter dated Mar. 18, 1893, George Albert Smith Family Papers, University of Utah, box 72, folder 12.
12. J. Golden Kimball, letter dated June 30, 1893, George Albert Smith Family Papers, University of Utah, box 72, folder 15.
13. «Ինչպես պահպանվեց իմ կյանքը», Ջորջ Ալբերտ Սմիթի ընտանեկան փաստաթղթերից, Յուտայի Համալսարան, արկղ 121, ալբոմ 1, էջեր 43-44:
14. “How My Life Was Preserved,” 43.
15. Edith Smith Elliott, “No Wonder We Love Him,” *Relief Society Magazine,* June 1953, 366, 368.
16. See *Builders of the Kingdom,* 240.
17. See *Builders of the Kingdom,* 224–25.
18. Emily Smith Stewart, in “Pres. Smith Mementos At Y.” *Deseret News,* Oct. 14, 1967, Church section, 6–7.
19. George Albert Smith Family Papers, University of Utah, box 100, folder 23, page 11.
20. John F. Fitzpatrick, in Conference Report, Apr. 1951, 172.
21. George Albert Smith’s journal, Oct. 27, 1906, George Albert Smith Family Papers, University of Utah, box 73, book 3, page 70.
22. See George Albert Smith’s journal, Oct. 30, 1906, George Albert Smith Family Papers, University of Utah, box 73, book 3, page 72.
23. See Francis M. Gibbons, *George Albert Smith: Kind and Caring Christian, Prophet of God* (1990), 208–9.
24. In Glenn R. Stubbs, “A Biography of George Albert Smith, 1870 to 1951” (PhD diss., Brigham Young University, 1974), 295.
25. See Bryant S. Hinckley, “Greatness in Men: Superintendent George Albert Smith,” *Improvement Era,* Mar. 1932, 270, 271.
26. See “A Biography of George Albert Smith,” 283.
27. Irene Jones, “The Understanding Heart,” *Improvement Era,* July 1940, 423.
28. “Your Good Name,” *Improvement Era,* Mar. 1947, 139.
29. In Conference Report, Oct. 1921, 42.
30. George Albert Smith’s journal, Nov. 5, 1937, George Albert Smith Family Papers, University of Utah, box 74, book 11, pages 83–84.
31. In Conference Report, June 1919, 42, 44.
32. James Gunn McKay, in “A Biography of George Albert Smith,” 141.
33. James Gunn McKay, in “A Biography of George Albert Smith,” 141.
34. George Q. Morris, “Perpetuating Our Ideals through Markers and Monuments,” *Improvement Era,* Apr. 1950, 284.
35. See “Markers and Monuments,” 284.
36. Letter to Leslie O. Loveridge, Mar. 15, 1937, George Albert Smith Family Papers, University of Utah, box 67, folder 25.
37. “To the Relief Society,” *Relief Society Magazine,* Dec. 1932, 705–6.
38. In Conference Report, Oct. 1945, 18.

39. In *Builders of the Kingdom,* 315–16.
40. Joseph F. Smith, in Conference Report, Oct. 1945, 31–32; Ջոզեֆ Ֆ. Սմիթը Եկեղեցու Հայրապետն էր և Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի՝ Եկեղեցու վեցերորդ Նախագահի թոռը:
41. Gordon B. Hinckley, in Conference Report, Apr. 1992, 75; or *Ensign,* May 1992, 52.
42. "Some Thoughts on War, and Sorrow, and Peace," *Improvement Era,* Sept. 1945, 501.
43. See Arwell L. Pierce, in Conference Report, Apr. 1951, 112–13.
44. "Markers and Monuments," 284–85
45. "Dedicatory Prayer," *Improvement Era,* Sept. 1947, 571.
46. "After Eighty Years," 263–64.
47. David O. McKay, in Conference Report, Apr. 1951, 3.
48. John A. Widtsoe, in Conference Report, Apr. 1951, 99.
49. Matthew Cowley, in Conference Report, Apr. 1951, 168–69.

Ապրել նրանով, ինչին հավատում ենք

Մեր կրոնը պետք է իր արտահայտությունը գտնի մեր ամենօրյա կյանքում:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Երբ 34 տարեկան էր, Ջորջ Ալբերտ Սմիթը կազմեց որոշումների ցուցակ, որը նա կոչեց իր «անձնական հավատամքը», 11 կատարելատիպեր, որոնցով նա պարտավորվեց ապրել:

«Ես ընկեր կլինեմ ընկերազուրկներին և ուրախություն կգտնեմ՝ ծառայելով կարիքավորներին և աղքատներին:

Ես կայցելեմ հիվանդներին և տառապյալներին և նրանց բժշկվելու հավատք կոգեշնչեմ:

Ես կուսուցանեմ ճշմարտությունը, որպեսզի ողջ մարդկությունը հասկացողության գա և օրհնվի:

Ես կորոնեմ՝ գտնելու սխալվածին, որ նրան ետ դարձնեմ արդար և երջանիկ կյանքի:

Ես չեմ ձգտի պարտադրել մարդկանց ապրել իմ կատարելատիպերով, այլ ավելի շուտ կսիրեմ նրանց՝ անելով այն, ինչ ճիշտ է:

Ես կապրեմ ժողովրդի հետ և կօգնեմ նրանց լուծել իրենց խնդիրները, որպեսզի նրանց երկրային կյանքը երջանիկ լինի:

Ես կխուսափեմ բարձր պաշտոններ գովազդելուց և ետ կկանգնեմ անմիտ ընկերներին հաճոյախոսելու մտադրությունից:

Ես գիտակցաբար չեմ վիրավորի որևէ մեկի զգացմունքները, նույնիսկ նրան, ով անիրավություն է արել ինձ, այլ կաշխատեմ նրան բարիք անել և նրան իմ ընկերը դարձնել:

Ես կհաղթահարեմ եսամոլության միտումն ու նախանձը և կուրախանամ Երկնային Հոր բոլոր զավակների հաջողություններով։

Ես չեմ լինի որևէ կենդանի հոգու թշնամին։

Գիտենալով, որ մարդկության Քավիչը տվել է աշխարհին միակ ծրագիրը, որը լիովին կզարգացնի մեզ և մեզ իրապես երջանիկ կդարձնի՝ թե՛ ներկայում, թե՛ ապագայում, ես զգում եմ ոչ միայն պարտականություն, այլ նաև օրհնյալ արտոնություն՝ տարածելու այս ճշմարտությունը»։[1] (Տես առաջարկ 1 էջ 10։)

Նախագահ Սմիթին ճանաչողները հայտարարել են, որ նա իսկապես ապրում էր իր հավատամքով։ Էզրա Թաֆտ Բենսոնը, որը նրա օրոք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, կիսվել է մի փորձառությամբ, որի ժամանակ Նախագահ Սմիթը հավատարիմ էր եղել «հիվանդներին և տառապյալներին այցելելու և նրանց մեջ բժշկվելու հավատքի ցանկություն ոգեշնչելու» իր որոշմանը։

«Ես երբեք չեմ դադարի երախտապարտ լինել այն այցելությունների համար, որոնք նա կատարել էր իմ տուն, երբ ես [հեռու էի] գտնվում ծառայելով որպես խոնարհ միսիոներ. . . Ես հատկապես շնորհակալ եմ այն այցելության համար գիշերային լռության մեջ, երբ մեր փոքրիկը պառկած էր մահվան շեմին։ Առանց որևէ հայտարարության Նախագահ Սմիթը ժամանակ գտավ՝ եկավ այդ տունը և դրեց իր ձեռքերն այդ փոքրիկի գլխին, որին մի քանի ժամ շարունակ գրկած պահում էր նրա մայրը, և նրան լիակատար ապաքինում խոստացավ։ Այդպիսին էր Նախագահ Սմիթը՝ նա միշտ ժամանակ ուներ օգնելու, հատկապես նրանց, ովքեր հիվանդ էին, նրանց, ովքեր ամենաշատն ունեին նրա կարիքը»։[2]

Սպենսեր Վ. Քիմբալը նշել է մեկ այլ դեպք, երբ Նախագահ Սմիթի գործողությունները ցույց են տվել նրա համոզմունքը բարիք անելու «նրան, ով կարող է անիրավություն արած լիներ [իրեն]»։

[Նախագահ Սմիթին] տեղեկացրեցին, որ ինչ-որ մեկը գողացել էր իր ոտքերի ծածկոցը նրա կառքից։ Զայրանալու փոխարեն, նա պատասխանեց. «Կուզենայի իմանալ, ով է եղել, որ կարողանայինք նրան նաև վերմակ տալ, քանի որ նա պետք է որ մրսելիս լիներ, և նաև որոշ ուտելիք, քանի որ պետք է որ քաղցած էլ լիներ»։[3]

Մեկ այլ դիտորդ գրել է Ջորջ Ալբերտ Սմիթի մասին. «Նրա կրոնը վարդապետություն չէ սառը պահեստում: Այն տեսություն չէ: Դա ավելի շատ նշանակություն ունի նրա համար, քան հիացմունքի արժանի գեղեցիկ ծրագիրը:Դա ավելին է, քան կյանքի փիլիսոփայություն: Իր գործնական մտքի շրջադարձերից մեկում կրոնն այն ոգին է, որով մարդն ապրում է, որով նա գործեր է կատարում, լինի դա ընդամենը մի բարի խոսք ասելը թե մի բաժակ սառը ջուր տալը: Նրա կրոնը պետք է արտացոլում գտնի գործերի մեջ: Այն պետք է ներթափանցի ամենօրյա կյանքի մանրամասների մեջ»:[4]

Առաջին Նախագահության նրա խորհրդականներից Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ կրտսերը ամփոփել է Նախագահ Սմիթի անձնական ազնվությունն այս բառերով. «Նա մեկն էր այն հազվադեպ մարդկանցից, որոնց մասին կարող եք ասել՝ նա ապրում էր, ինչպես որ ուսուցանում էր»:[5]

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Ավետարանին մեր հնազանդությունն է, ոչ թե ուղղակի Եկեղեցու անդամակցությունը, որը մեզ որակավորում է կոչվելու Սրբեր:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցու պաշտամունքը նվիրյալ կյանքն է, Նրան արժանի լինելու ցանկությունը, որի պատկերով մենք ստեղծվել ենք, և որը մեզ տվել է ամեն բան. . ..ինչ կարևոր է՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը:[6]

Ինչպիսի հրաշալի բան է զգալ, որ մենք պատկանում ենք մի եկեղեցու, որ բաղկացած է կամ պետք է բաղկացած լինի սրբերից: Բավական չէ, որ մենք ունենանք մեր անուններն արձանագրություններում: Կարևոր է, որ մենք ապրենք կյանքով, որը մեզ իրավունք է տալիս կոչվել Սրբեր, և եթե դուք անեք այդ, դուք երջանիկ կլինեք: . . .

Երբ Նազովրեցի Հիսուսն աշխարհ եկավ և սկսեց քարոզել Արքայության Ավետարանը, կային շատերը, հատկապես իրենց արդար համարող փարիսեցիները, ովքեր մերժեցին Նրա ուղերձը, պնդելով, որ իրենք Աբրահամի հետնորդներն էին և նշեցին, որ իրենց շառավիղն իրենց կփրկի Աստծո Արքայությունում:

«Արդ՝ ամեն ով որ իմ այս խոսքերը լսում է եւ նորանց կատարում, կնմանեցնեմ նորան մի իմաստուն մարդի որ իր տունը շինեց ժայռի վերայ»:

Փրկիչն ասաց նրանց, որ եթե նրանք Աբրահամի զավակներ լինեին, նրանք կանեին Աբրահամի գործերը: [Տես Հովհաննես Ը.33, 39] Ես կցանկանայի ասել Վերջին Օրերի Սրբերին, եթե արժանի լինենք կոչվել Վերջին Օրերի Սրբեր, դա կլինի որովհետև մենք ապրում ենք սրբերի կյանքով և դա է Ավետարանի նպատակը մեզ որակավորել այդ ձևով: Աշխարհն այնպիսի իրավիճակի մեջ է ընկել և հակառակորդի կողմից այնքան երկար ժամանակ խաբվել է և հայտարարել, որ լոկ հավատն Աստծո հանդեպ բավական է, այնպես որ ես երկյուղով եմ լցված:[7] (Տես առաջարկ 2 էջ 10:)

Այսպես կոչված «Մորմոնիզմը» Հիսուս Քրիստոսի Ավետարանն է, հետևաբար այն Աստծո զորությունն է ի փրկություն բոլոր նրանց համար, ովքեր հավատում են և հնազանդվում նրա ուսմունքներին: Այդ նրանք չեն, ովքեր ասում են «Տեր, Տեր», ովքեր վայելում են Նրա հոգու ընկերակցությունը, այլ նրանք ովքեր կատարում են Նրա կամքը [տես Ղուկաս 6.46]:[8]

Կարդալով Մատթեոսի 7-րդ գլուխ և 24 հատվածը՝ ես գտնում եմ հետևյալը.

«Արդ՝ ամեն ով որ իմ այս խոսքերը լսում է եւ նորանց կատարում, կնմանեցնեմ նորան մի իմաստուն մարդի որ իր տունը շինեց ժայռի վերայ։

Եւ անձրեւն էլ եկաւ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին եւ այն տանը զարկեցին, եւ նա չկործանուեցաւ. Որովհետեւ ժայռի վերայ հաստատուած էր։

Եւ ամեն ով որ իմ այս խոսքերը լսում է եւ նորանց չէ կատարում, նա կնմանուի մի անխելք մարդի որ իր տունը շինեց աւազի վերայ.

Եւ անձրեւն էլ եկաւ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին, եւ այն տանը զարկեցին, եւ նա կործանուեցաւ, եւ նորա կործանումը մեծ էր» [Մատթեոս 7.24–27]։

Մեզանից քանի՞սն են, որ իմանալով Հոր կամքը կատարում են այն։ Մեզանից քանի՞սն են, որ օր օրի հիմք են դնում և կառուցում շինություն, որը կհամապատասխանի մեր Վարդապետի շինության արժանապատվությանն ու հասակին։ Այո, մարդն Աստծո խորանն է, այսինքն՝ տաճարները. և ամեն տաճար, որը պղծված է, Աստված կկործանի այն տաճարը» [ՎԿՈ 93.35]։ Նա տվել է մեզ մեր մերձավորներից ավելի բանականություն և իմաստություն։ Վերջին Օրերի Սրբերին տրվել է նախագոյության գիտելիքը, մի գիտելիք, որ մենք այստեղ ենք, որովհետև մենք պահել ենք մեր առաջին վիճակը, և մեզ տրվել է հնարավորություն ձեռք բերելու հավերժական կյանք մեր Երկնային Հոր ներկայության մեջ՝ մեր երկրորդ վիճակը պահելու միջոցով։ Մենք չենք դատվի ինչպես աշխարհի մեր եղբայրներն ու քույրերն են դատվելու, այլ կդատվենք մեր տնօրինության տակ դրված ավելի մեծ հնարավորությունների համաձայն։Մենք կլինենք նրանց շարքում, ովքեր ստացել են Տիրոջ խոսքը, ովքեր լսել են Նրա խոսքերը և եթե մենք անենք դրանք, այն կլինի մեզ համար հավերժական կյանք, բայց եթե մենք ձախողվենք հետևանքը կլինի դատապարտություն։[9]

Եկեք ավելի լավ գործենք, քան երբևէ նախկինում։ Եկեք վերանորոգենք մեր վճռականությունը լինելու իսկական Վերջին Օրերի Սրբեր և ոչ թե ուղղակի ստիպված հավատացյալներ. . .

Ես չգիտեմ որևէ մեկին, որ ի վիճակի չլինի, քիչ ավելի լավ գործել, քան նախկինում, եթե իր մտքում դնի։[10]

Մեր Երկնային Հայրը սպասում է մեզանից պատրաստվել և արժանի ապրել Իր խոստացած օրհնություններին։

Ես բացել եմ Փրկչի ուսուցման վերաբերյալ Սուրբ Մատթեոսի հիշատակարանի քսաներկուերորդ գլուխը և կկարդամ տվյալ առակը.

«Եվ Յիսուսը պատասխանեց եւ դարձեալ խօսեց նորանց հետ առակներով, ասելով.

Երկնքի արքայութիւնը նմանեցաւ մի թագաւոր մարդի, որ իր որդուն հարսանիք արաւ։

Եվ իր ծառաներն ուղարկեց որ հարսանիքի կանչեն հրաւիրուածներին.

Բայց երբոր թագաւորը մտաւ՝ որ բազմականներին մտիկ անէ, այնտեղ մի մարդ տեսաւ՝ հարսանիքի հանդերձ չհագած։

Եւ նորան ասեց. Ընկեր, ի՞նչպէս մտար այստեղ, որ հարսանիքի հանդերձ չունիս. եւ նա պապանձուեցաւ։

Այն ժամանակ թագաւորն ասեց ծառաներին. Դորա ոտները եւ ձեռքերը կապեցէք. Վեր առէք դորան դրսի խաւարը գցեցէք. Այնտեղ կլինի լացը եւ ատամների կրճտելը։

Որովհետեւ շատեր են կանչուած, բայց քիչեր՝ ընտրուած»։ (Տես Մատթեոս ԻԲ.1–3,11–14։) . . .

. . .Սիա մի մարդ, ով հարսանեկան խնջույքի էր եկել և երբ ժամանակը եկավ թագավորը կամ տերը տեսավ, որ նա չուներ հարսանեկան հանդերձ։ Նա, ըստ երևույթին, անտեսել էր դրա կարևորությունը։ Նա ներս էր մտել անպատրաստ, սպասելով մասնակցելու։ Նա եկել էր խնջույքին՝ նրանք բոլորը հրավիրված էին այդ խնջույքին, բայց կարծում եմ, որ նրանք պետք է որ իմանային, որ միայն նրանք կթույլատրվեին, ովքեր պատշաճորեն հանդերձավորված էին, իսկ այդ մարդը զարմացած էր, երբ նրան տրվեց այդ հարցը, թե ինչու էր նա այդտեղ այդ վիճակում։

Աշխարհում կարծես մտածում են, թե կարող են գալ, երբ կկամենան։ Մեր Հոր զավակները չեն հասկանում, որ պետք

է որոշ պատրաստություններ տեսնել։ Հակառակորդն այնպես է խաբել նրանց, որ նրանց ստիպել է հավատալ, որ ոչ մի պատրաստություն էլ պետք չէ, բավական կլինի ցանկացած բան, բայց այս ուղերձում, որը Փրկիչը հաղորդեց առակով իր ընկերակիցներին, մեզ տեղեկացվում է, որ պետք է լինի որոշ նախապատրաստություն և առանց այդ նախապատրաստության ոչ մեկի թույլ չի տրվի ճաշակել մեր Երկնային Հոր ավելի թանկարժեք պարգևներից։ Դա վերաբերում է այս Եկեղեցու անդամներին, որոնք այն զաղափարին են, որ, քանի որ իրենք հրավիրված են և քանի որ իրենց անուններն արձանագրված են նրանց շարքում, ովքեր կանչված են, նրանց համար այլևս ոչինչ չկա անելու. . . Նրանք մոռացել են Տիրոջը և չեն պատրաստվում խնջույքին, որին նա հրավիրել է իրենց։

Մեր Երկնային Հայրն ի նկատի ունի, որ մենք պետք է պատրաստվենք հարսանեկան խնջույքին, այլապես կվտարվենք։ Նա սպասում է մեզանից, որ շարունակենք պաշարել մեր մտքերը ճշմարտությամբ և տարածենք այդ ճշմարտությունը բոլոր իր զավակների մեջ, երբ հնարավորություն տրվի։ Փաստը, որ մեր անունները հայտնվում են Եկեղեցու արձանագրություններում, երաշխիք չէ, որ մենք կգտնենք մեր տեղը սելեստիալ արքայությունում։ Միայն նրանք, ովքեր որպես այդ թագավորությանն արժանի անդամներ են ապրում, տեղ կգտնեն այնտեղ։

Աշխարհում առկա անկանոն և անորոշ վիճակում, եթե երբևէ եղել է ժամանակ, որ մենք պետք է քննեինք՝ պարզելու համար, թե անում ենք այն, ինչ Տերն է ուզում, որ անենք, ապա այսօր է այդ ժամանակը. եթե երբևէ եղել է ժամանակ, որ մենք պետք է համոզվեինք, որ հավերժական կյանքի ուղու վրա ենք, ապա այժմ է այդ ժամանակը։ Մենք չենք կարող անտեսել ներկայիս հնարավորությունները։ Աստված չի ծաղրվի։ Երբ նա մեզ պարգև է առաջարկում, երբ նա մեր հասանելիության սահմաններում օրհնություն է դնում, երբ նա մեզ հրավիրում է ճաշակել խնջույքից և մենք անտեսում ենք այն, մենք կարող ենք համոզված լինել, որ վիշտ պիտի ճաշակենք, որը կհասնի նրանց, ովքեր մերժում են Տիրոջ օրհնությունները, երբ դրանք առաջարկվում են։[11]

Մենք չենք կարող ապրել աշխարհի նման և սպասել ձեռք բերելու մեր օրինական տեղն արքայությունում։ Տերն ասում է մեզ Վարդապետություն և Ուխտերի առաջին բաժնում, ակնարկելով

չարին, որ նա չի կարող նայել մեղքի վրա նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարելով [տես ՎԼՈՒ 1.31]: Սա տհաճ դեղամիջոց է, որովհետև մեզանից ոմանք Եկեղեցում ունեն այն գաղափարը, որ մենք կարող ենք կատակել մեր Տիրոջ Ավետարանի և Հավերժական Կյանքի հիմնադրույթների հետ, և այնուամենայնիվ, ձեռք բերել այն տեղը, որ մենք ուզում ենք: Դա ճշմարիտ չէ: Տերը ողորմած կլինի, բայց նա արդար կլինի, և եթե մենք կամենում ենք ինչ-որ օրհնություն, կա միայն մեկ ճանապարհ, որով կարող ենք ձեռք բերել այն, և դա պատվիրանները պահելն է, որը մեզ կարժանացնի այդ օրհնությանը:[12] (Տես առաջարկ 3 էջ 11:)

Եթե մենք լիովին կատարում ենք մեր պարտականությունը, մեր կյանքը վկայում է ավետարանի հանդեպ մեր հավատքի մասին:

Վերջին տարվա ընթացքում ես հնարավորություն եմ ունեցել հանդիպելու և զրուցելու ավետարանի մասին որոշ մարդկանց հետ, ովքեր ապրում են այս համայնքում [Սոլթ Լեյք Սիթի], ովքեր մեր Եկեղեցու անդամներ չեն: Մի մարդ ապրել է այստեղ քսան տարի, մարդ որի կյանքը վեր է նախատինքից, լավ քաղաքացի, հրաշալի գործարար, որը բարի զգացումներ ունի մեր մարդկանց հանդեպ: Նա ասաց, որ այստեղ ապրել է քսան տարի և եկել էր եզրակացության, որ մենք ճիշտ այնքան լավն ենք, որքան մեր հարևանները, ովքեր ուրիշ եկեղեցու անդամներ են. նա չէր կարողանում տեսնել որևէ տարբերություն մեր միջև:

Ես ուզում եմ ասել ձեզ, իմ եղբայրներ և քույրեր, որ սա հաճոյախոսություն չէ ինձ համար: Եթե Հիսուս Քրիստոսի ավետարանն ինձ չի դարձնում ավելի լավ մարդ, ուրեմն ես չեմ զարգացել ինչպես պետքն է, և եթե մեր հարևանները՝ ոչ այս Եկեղեցուց, տարեց տարի ապրում են մեր մեջ և ոչ մի փաստ չեն տեսնում այն օգուտների, որոնք գալիս են մեր կյանքում Աստծո պատվիրանները պահելուց, ապա Իսրայելում բարեփոխումների կարիք կա: . . .

. . .Դուք կատարո՞ւմ եք ձեր պարտականությունը: Դուք կատարո՞ւմ եք Տիրոջ աշխատանքը, որը նա վստահել է մեր խնամքին: Մենք հասկանո՞ւմ ենք պատասխանատվությունը, որը մեզ վրա է դրված: Թե՞ մենք պարապ լողում ենք հոսանքն ի վար,

«Եթե մենք հասնում ենք բոլոր ուղղություններով բարիք անելով մեր Հոր զավակներին, ապա. . .մենք կցնծանք բարիքով, որ մենք իրականացնում ենք այստեղ»:

գնալով հոսանքի հետ՝ մտածելով, որ այդպես էլ պիտի լինի, որ վերջին օրը մենք կփրկագնվենք:[13]

Մենք կոչվում ենք Աստծո սեփական ժողովուրդ [տես Ա Պետրոս Բ.9] որովհետև, թերևս, մենք խորապես հավատում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանին: . . .

Եթե մեր սեփական լինելը հասնում է այն աստիճանի, որ մենք ապրում ենք Երկնային Հոր բերանից դուրս եկած յուրաքանչյուր խոսքով [տես ՎԿՈՒ 84.44], ապա մենք իսկապես կլինենք օրհնված ժողովուրդ: Մեծամասամբ մենք իսկապես ապրում ենք ըստ այն վկայության, որ մեզ է տրվել մեր Քավչի կողմից և առայժմ մենք օրհնված ժողովուրդ ենք, բայց մենք դեռ ավելի մեծապես օրհնված և բարգավաճ կլինենք, եթե մենք կարողանանք ստիպել մեզ լիարժեք կատարել մեր պարտականությունը:

Աղոթում եմ, որ այն ոգին, որը հնարավորություն կտա մեզ հավատարիմ ծառայել, լինի մեզ հետ, որ բարիք անելու

ցանկությունը կարողանա հաղթահարել գայթակղությունները, որոնք դրված են մեր ճանապարհին, և որ, ուր էլ որ գնանք, ուրիշները, հետևելով մեր բարի գործերին, դրդվեն փառաբանելու մեր Հորը, որը երկնքում է [տես Մատթեոս Ե.16]։[14]

Այժմ եկեք քննենք ինքներս մեզ։ Արդյոք անո՞ւմ ենք այնքան, որքան պետք է անենք։ Եվ եթե ոչ, եկեք ետ դառնանք ավելի լավ գործենք։ Եթե անում ենք ինչպես որ պետք է, եթե մենք հասնում ենք բոլոր ուղղություններով բարիք անելով մեր Հոր զավակներին, ապա մենք մեզ վրա կբերենքն ամենագետ Հոր օրհնությունը և կցնծանք բարիքով, որ մենք իրականացնում ենք այստեղ։ . . .

Եկեք խոնարհ լինենք և աղոթքով լի, ապրելով մեր Երկնային Հորը մոտիկ, և արտահայտենք մեր հավատքը Հիսուս Քրիստոսի Ավետարանի հանդեպ՝ ապրելով համաձայն դրա սկզբունքների։ Եկեք ապացուցենք մեր հավատքն առ Աստված և այն աշխատանքի հանդեպ, որ Նա տվել է երկրագնդին, ճիշտ և հետևողական կյանքով, քանի որ ի վերջո դա ամենազորավոր վկայությունն է, որ մենք կկարողանանք բերել այս աշխատանքի ճշմարտության մասին։[15] (Տես առաջարկություն 4 էջ 11։)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես v–viii էջերը։

1. Երբ աչքի անցկացնեք, Նախագահ Սմիթի հավատամքը (1–2 էջեր), մտածեք մի քանի կատարելատիպերի կամ սկզբունքների մասին, որոնց դուք կկամենայիք հետևել ձեր սեփական կյանքում։ Մտածեք դրանք ձեր անձնական օրագրում գրի առնելու մասին։
2. Կարդացեք 3 -րդ էջի առաջին չորս լրիվ պարբերությունները։ Ի՞նչ է նշանակում լինել Վերջին Օրերի Սուրբ։ Ի՞նչ կարող է անել ծնողը՝ օգնելու իրենց երեխաներին սրբի կյանքով ապրել սովորելու համար։

3. Երբ կարդաք հատվածը, որը սկսվում է 5 էջում, մտածեք թե ինչպես կարող է հարսանեկան խնջույքի առակը վերաբերել ձեր կյանքին (տես նաև Մատթեոս ԻԲ.1–14)։ Օրինակ՝ ի՞նչ եք կարծում, ի՞նչ է ներկայացնում հարսանեկան խնջույքը։ Ո՞ւմ են ներկայացնում հրավիրված հյուրերը։ Խորհեք, թե ինչ կարող եք անել «պատրաստվելու հարսանեկան խնջույքին» (էջ 6)։
4. Կարդացեք ուսմունքների վերջին պարբերությունը (9-րդ էջում) և մտածեք մեկի մասին ում դուք գիտեք, ով ուժեղ վկայություն ունի ավետարանի մասին։ Ինչպե՞ս է այդ մարդու կյանքն ապացուցում նրա վկայության մասին։ Մտածեք թե ի՞նչ կարող եք անել, որը ձեր վկայության արտացոլումը կլինի։

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Մատթեոս Է.16–23, Հակոբոս Ա.22–25, Բ.15–18, Ա Հովհաննես Բ.3–6, Մորոնի 7.3–5, Վարդապետություն և Ուխտեր 41.5

Օգնություն ուսուցչին. «սուրբ գրություններից և վերջին օրերի մարգարեների խոսքերից ուսուցանելիս մեզ օգնելու համար, Եկեղեցին լույս է ընծայել դասագրքեր և այլ նյութեր։ Մեկնաբանությունների կամ այլ տեղեկատվական նյութերի առանձնապես կարիք չկա» (*Teaching, No Greater Call: A Resource Guide for Gospel Teaching* [1999], 52)։

Հղումներ

1. "President George Albert Smith's Creed," *Improvement Era,* Apr. 1950, 262:
2. Ezra Taft Benson, in Conference Report, Apr. 1951, 46.
3. Spencer W. Kimball, *The Miracle of Forgiveness* (1969), 284.
4. Bryant S. Hinckley, "Greatness in Men: Superintendent George Albert Smith," *Improvement Era,* Mar. 1932, 270.
5. Reuben Clark Jr., in Doyle L. Green, "Tributes Paid President George Albert Smith," *Improvement Era,* June 1951, 405.
6. In Conference Report, Apr. 1949, 8.
7. "The Church with Divine Authority," *Deseret News,* Sept. 28, 1946, Church section, 1, 6.
8. In Conference Report, Apr. 1913, 28–29.
9. In Conference Report, Oct. 1906, 47.
10. In Conference Report, Apr. 1941, 27.
11. In Conference Report, Oct. 1930, 66–68.
12. Seventies and stake missionary conference, Oct. 4, 1941, 6.
13. In Conference Report, Oct. 1916, 49.
14. "Some Points of 'Peculiarity,'" *Improvement Era,* Mar. 1949, 137.
15. In Conference Report, Apr. 1914, 13.

«Այնուամենայնիվ ուսուցանում է մեզ զթություն ունենալ բոլորի հանդեպ և սիրել մեր մերձավորներին»։

«Սիրիր քո ընկերին քո անձի պէս»

Հիսուս Քրիստոսի ավետարանի համար ուրիշներին սիրով և կարեկցանքով օգնության հասնելը կարևոր է:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Ջորջ Ալբերտ Սմիթը լավ հայտնի էր ուրիշներին սիրելու իր ունակությամբ: Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը՝ Առաջին Նախագահության նրա խորհրդականներից մեկը, ասել է նրա մասին. «Նրա իսկական անունն էր Սեր. . . Նա իր սերն էր տալիս բոլորին, ում հանդիպում էր: Նա իր սերն էր տալիս բոլորին, ում չէր հանդիպել»:[1]

Նախագահ Սմիթի սերն ուրիշների հանդեպ աճել էր նրա անկեղծ համոզմունքից, որ մենք բոլորս եղբայրներ և քույրեր ենք՝ նույն Երկնային Հոր զավակները: Իր կյանքի ավարտին մոտ նա ասաց Սրբերին.

«Ես չունեմ թշնամի, որի մասին ես գիտենամ և չկա մեկն աշխարհում, որի նկատմամբ ես թշնամություն զգամ: Բոլոր տղամարդիկ և բոլոր կանայք իմ Հոր զավակներն են, և ես ձգտել եմ իմ կյանքում հետևել Քավչի մարդկությանն ուղղված իմաստուն հրահանգին՝ սիրել իմ մերձավորին ինչպես ինձ. . . Դուք երբեք չեք պատկերացնի, թե որքան եմ սիրում ձեզ: Ես չունեմ խոսքեր դա արտահայտելու համար: Եվ ես ուզում եմ զգալ այդ ձևով իմ Երկնային Հոր յուրաքանչյուր որդու և դստեր հանդեպ»:[2]

Նախագահ Սմիթը ցույց էր տալիս իր սերն ուրիշների հանդեպ կարեկցանքի անհամար գործերով: Մի դիտորդ նկատել է. «Նախագահ Սմիթի համար բնորոշ է փոխել իր ճանապարհը՝ գնալով անձնական մխիթարության և օրհնության

հանձնարարություններով, շատերի մոտ, ովքեր հիվանդ են, ովքեր տխուր են, և ովքեր պատճառ ունեն երախտապարտ լինելու նրա զվարթ քաջալերանքի համար: Անսովոր չէ տեսնել նրան գրասենյակային ժամերից առաջ և հետո հիվանդանոցի հիվանդասենյակներով քայլելիս, սենյակ առ սենյակ այցելելով, օրհնելով, խրախուսելով և սիրտ տալով, անսպասելի հայտնվելով այն վայրերում, որտեղ նրա սփոփիչ և հանգստացնող ներկայությունն այնքան երախտագիտորեն ողջունվում էր. . . Նրան բնորոշ էր գնալ այնտեղ, ուր զգում էր, որ կարող էր օգնել և քաջալերել»:[3]

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կիսվեց Նախագահ Սմիթի մասին մի հատուկ օրինակով, երբ նա իր ճանապարհից դուրս էր գալիս ինչ-որ մեկին սեր ցույց տալու համար, ով կարիքի մեջ էր.

«Մի ցրտաշունչ ձմեռային առավոտ փողոցները մաքրող անձնակազմը [Սոլթ Լեյք Սիթիում] հեռացնում էր սառույցի մեծ կտորներ փողոցի ջրորդաններից: Սովորական անձնակազմին օգնում էին ժամանակավոր աշխատողներ, ովքեր աշխատանքի խիստ կարիք ունեին: Նրանցից մեկն իր հագին ուներ թեթև սվիտեր և տանջվում էր ցրտից: Մի բարեկազմ մարդ լավ հարդարված մորուքով կանգ առավ անձնակազմի մոտ և հարցրեց այդ աշխատողին. «Դուք ավելի տաք բանի կարիք ունեք, քան այդ սվիտերն է այսպիսի ցուրտ առավոտյան: Ո՞ւր է ձեր վերարկուն: Մարդը պատասխանեց, որ նա վերարկու չուներ, որ հագներ: Այդ ժամանակ այցելուն հանեց իր սեփական վերարկուն, տվեց այդ մարդուն և ասաց. «Այս վերարկուն ձերն է: Սա հաստ բրդից է և ձեզ տաք կպահի: Ես աշխատում եմ փողոցի այն կողմում»: Դա Տաճարի Հարավային փողոցն էր: Բարի Սամարացին, որը քայլեց դեպի Եկեղեցու կառավարչական շենքն իր ամենօրյա աշխատանքին, առանց իր վերարկուի, Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթն էր՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուց: Նրա անձնազոհ առատաձեռնության այդ քայլը բացահայտեց նրա փափկասրտությունը: Իհարկե, նա իր եղբոր պահապանն էր»:[4] (Տես առաջարկություն 1 էջ 20:)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Բոլոր մարդիկ մեր եղբայրներն ու քույրերն են՝ մեր Երկնային Հոր զավակները:

Մենք նայում ենք բոլոր մարդկանց որպես մեր եղբայրների և բոլոր կանանց որպես մեր քույրերի. մենք նայում ենք յուրաքանչյուր մարդկային էակի դեմքին, որն աշխարհում է՝ որպես մեր Հոր զավակի, և հավատում, որ, քանի որ յուրաքանչյուրը Հոր պատկերով է, ուրեմն յուրաքանչյուրը կրում է նաև աստվածության մի կայծ, որը եթե զարգացվի կնախապատրաստի մեզ՝ վերադառնալու Նրա ներկայության մեջ: . . .

Սա է այս աշխարհում մեր գոյության նպատակը և բացատրում է մեր հետաքրքրությունը մեր մերձավորի նկատմամբ: Շատերը կարծում են, որ մենք մեկուսացված ենք մեր կյանքում, իսկ ոմանք էլ կարծում են, թե մենք կլանային ենք: Փաստը նրանում է, որ մենք նայում ենք այս աշխարհում ծնված յուրաքանչյուր երեխայի, որպես Աստծո որդու կամ դստեր, որպես մեր եղբոր կամ մեր քրոջ և մենք զգում ենք, որ մեր երջանկությունը կատարյալ չի լինի երկնքի արքայությունում, մինչև մենք չվայելենք մեր ընտանիքների և մեր ընկերներից և ծանոթներից նրանց ընկերակցությունը, որոնց հետ մենք ծանոթացել ենք, և որոնց շահերի համար մենք այնքան շատ ժամանակ ենք տրամադրել երկրի վրա:[5]

Երբ մտածում եմ իմ Հոր ընտանիքի, մարդկային ընտանիքի հանդեպ իմ հարգանքին կապվածության մասին, ես մտաբերում եմ իմ երկրային հոր ասածներից մեկը, և ես կարծում եմ, որ գուցե մասամբ ես նրանից եմ ժառանգել դա: Նա ասել է. «Երբեք չեմ տեսել Աստծո որևէ զավակի ջրորդանում այնքան խրված, որ ներքին մղում չզգայի կռանալ և բարձրացնել նրան, ոտքի կանգնեցնել նրան և կրկին նրան օգնել՝ վերսկսելու իր կյանքը»: Կկամենայի ասել, որ երբևէ չեմ տեսել իմ Հոր զավակներից մեկին իմ կյանքում, որ չգիտակցեի, որ նա իմ եղբայրն է, և որ Աստված սիրում է իր զավակներից յուրաքանչյուրին:[6]

Ինչպիսի երջանիկ աշխարհ կլիներ, եթե մարդիկ ամենուրեք ճանաչեին իրենց մերձավորներին որպես եղբայրներ և քույրեր և ապա հետևեին, որ սիրեին իրենց մերձավորին ինչպես իրենց:[7] [Տես առաջարկ 2, էջ 20:]

Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանում է մեզ սիրել Աստծո բոլոր զավակներին:

Ավետարանն ուսուցանում է մեզ գթություն ունենալ բոլորի հանդեպ և սիրել մեր մերձավորներին: Փրկիչն ասել է.

«Սիրիր քո Տեր Աստուծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը եւ քո բոլոր մտքովը: Սա է առաջին եւ մեծ պատվիրանը:

Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս: Այս երկու պատվիրանքից կախուած են բոլոր օրենքը ու մարգարէքը» (Մատթեոս ԻԲ.37–40):

Եղբայրներ և քույրեր, եթե Հիսուս Քրիստոսի ավետարանը, ինչպես որ տրվել է ձեզ, ձեր սրտերում չի սերմանել սիրո այդ զգացումը ձեր ընկերների հանդեպ, ապա ես կուզեի ասել, որ դուք չեք վայելել այդ սքանչելի պարգևի լիակատար իրականացումը, որը երկիր եկավ, երբ այս Եկեղեցին կազմավորվեց:[8] (Տես առաջարկ 3 էջ 20:)

Մեր ծառայությունը սիրո ծառայություն է: Մեր ծառայությունն այնպիսին է, որը հարստացնում է մեր կյանքը. . . Եթե մենք ապրենք այնպես ինչպես Աստված է կամենում, որ ապրենք, եթե մենք ծառայենք այնպես ինչպես Նա է ցանկանում, որ ծառայենք, մեր կյանքի ամեն օրը կհարստանա Նրա Հոգու ազդեցությամբ, մեր սերը մեր մերձավորների հանդեպ կմեծանա և մեր հոգին կընդարձակվի այնքան, մինչև որ կզգանք, որ կարող ենք մեր գիրկն առնել Աստծո բոլոր որդիներին, ցանկանալով օրհնել նրանց և բերել նրանց ճշմարտության իմացությանը:[9]

Որպես Քրիստոսի Եկեղեցու անդամներ, մենք պետք է պահենք Նրա պատվիրանները և սիրենք միմյանց: Այդ ժամանակ մեր սերը կանցնի Եկեղեցու սահմանազծերից այն կողմ, որով մենք ճանաչվում ենք և կհասնի մարդկանց զավակներին:[10]

Եկեք ապացուցենք մեր վարքով, մեր մեղմությամբ, մեր սիրով, մեր հավատքով, որ մենք իսկապես պահում ենք այն մեծ պատվիրանը, որն ըստ Փրկչի խոսքերի նման է առաջին մեծ պատվիրանին. «Սիրիր քո ընկերին քո անձի պէս»:[11]

«Եկեք ապացուցենք մեր վարքով. . . որ մենք իսկապես պահում ենք այդ մեծ պատվիրանը. . . «Սիրիր քո ընկերին քո անձի պէս»»:

Մենք գործադրում ենք գթություն՝ հասնելով նրանց, ովքեր օգնության և խրախուսանքի կարիք ունեն:

Անհնարին է որոշել՝ որքան արդյունք կարող է աշխարհ բերել սերն ու գթությունը: Հնարավորություն ընձեռվում է ամեն ճյուղում և ծխում ու միսիոներական դաշտում. առաջ գնացեք արևի շողեր սփռելով, դրսևորելով երջանկություն և բարձրացնելով նրանց, ովքեր հուսահատված են և բերելով ուրախություն և սփոփանք նրանց, ովքեր թշվառության մեջ են:[12]

Տերն ասում է այս.

«Տեսեք, որ դուք սիրեք միմյանց, դադարեք ագահ լինել. Սովորեք բաժին հանել մեկդ մյուսին, ինչպես պահանջում է ավետարանը»: . . .

«Եվ ամեն բանից վեր, ձեր վրա հագեք գթության կապը, ինչպես մի թիկնոց, որը կատարելության և խաղաղության կապն է» (ՎԿՈՒ 88.123, 125) . . .

. . .Դուք հետևո՞ւմ եք գթության վերաբերյալ նրա խորհրդին: Ես ուզում եմ ասել, որ մեր կյանքի այս հատուկ ժամանակաընթացքում մենք պետք է գործադրենք գթություն, ոչ միայն բաժին հանելով մեր ունեցվածքից նրանց համար, ովքեր կարիքի մեջ են, այլ պետք է գթություն ցուցաբերենք մեր Հոր զավակների թուլությունների և ձախողումների ու սխալների հանդեպ:[13]

Եթե գտնում ենք մի տղամարդու կամ կնոջ, որը հաջողություն չի ունեցել իր կյանքում, մեկը որը թուլացել է հավատքում, եկեք չշրջենք մեր մեջքը նրան, եկեք նպատակ դնենք այցելել նրան և գնանք նրա մոտ բարությամբ և սիրով և քաջալերենք նրան իր սխալ ճանապարհից ետ դառնալ: Որպես ժողովուրդ անհատական աշխատանք կատարելու հնարավորությունն առկա է ամենուրեք, և Եկեղեցում քիչ տղամարդիկ կամ կանայք կան, որոնք ցանկության դեպքում հնարավորություն չեն ունենա իրենց ճանաչողների շրջանակից դուրս ձեռք մեկնել և ասել մի բարի խոսք կամ ուսուցանել ճշմարտությունը մեր Հոր զավակներից ոմանց. . . Սա մեր Հոր աշխատանքն է: Սա ամենակարևոր բանն է, որով մենք կկայանանք այս կյանքում:[14]

Ես միայն բարի կամք ունեմ իմ սրտում մարդկության հանդեպ: Ես իմ սրտում ոչ մի թշնամանք չունեմ ապրող որևէ մարդկային էակի հանդեպ: Ես գիտեմ ոմանց, ովքեր կկամենայի, որ ավելի լավ պահեին իրենց, քան նրանք պահում են, բայց դա նրանց խնդիրն է, ոչ թե իմը: Եթե կարող եմ դնել ձեռքս նրանց ուսին և օգնել նրանց վերադառնալ երջանկության մայրուղի՝ ուսուցանելով նրանց Հիսուս Քրիստոսի ավետարանը, իմ երջանկությունը կաճի դրա հետևանքով. . . Դուք չեք կարող մարդկանց հարկադրել՝ անել բաներ, որոնք ճիշտ են, բայց դուք կարող եք սիրել նրանց, անելով այդ բաները, եթե ձեր օրինակն այնպիսին է իր բնույթով, որ նրանք կարող են տեսնել, որ դուք ի նկատի ունեք այն, ինչ ասում եք:[15] (Տես առաջարկ 4 էջ 21:)

Ճշմարիտ երջանկությունը գալիս է ուրիշներին սիրելուց և ծառայելուց:

Մի մոռացեք, որ անկախ նրանից, թե որքան փող կտաք, անկախ նրանից, թե որքան դուք կցանկանաք այս աշխարհի բաները ձեզ երջանկացնելու համար, ձեր երջանկությունը համապատասխան կլինի ձեր գթությանը և ձեր բարությանը և

«Առաջ գնացեք արևի շողեր սփռելով, դրսևորելով երջանկություն և բարձրացնելով նրանց, ովքեր հուսահատված են և բերելով ուրախություն և սփոփանք նրանց, ովքեր թշվառության մեջ են»:

ձեր սիրուն նրանց հանդեպ, ում հետ դուք հաղորդակցվում եք այստեղ՝ երկրի վրա: Մեր Երկնային հայրն ասել է շատ պարզ արտահայտություններով, որ նա, ով ասում է սիրում է Աստծուն և չի սիրում իր եղբորը, ճշմարիտ չէ (տես Ա Հովհաննես Դ.20)[16]:

Ոչ թե միայն այն է մեզ երջանկացնում, ինչ մենք ստանում ենք, այլ այն, ինչ տալիս ենք, և որքան ավելի շատ ենք տալիս այն, ինչ բարձրացնում է և հարստացնում մեր Հոր զավակներին, այնքան ավելի շատ պետք է տանք: Այն աճում է կյանքի վիթխարի աղբյուրի նման և հորդում դեպի հավերժական կյանք:[17]

Երբ մեր կյանքն այստեղ ավարտվի և մենք տուն վերադառնանք, մենք կհայտնաբերենք, որ յուրաքանչյուր բարի գործ, որ մենք կատարել ենք, յուրաքանչյուր բարեգութ արարք և յուրաքանչյուր ջանք, որ գործադրել ենք հօգուտ մեր մերձավորի, մուտքագրվել է մեր հաշվին . . .

. . . Եկեք Տիրոջ կողմից մեզ տրված բաների համար մեր երախտագիտությունը ցույց տանք՝ ծառայելով Նրան, իսկ մենք

ծառայում ենք Նրան, երբ բարիք ենք անում Նրա զավակներին: Զրի ստացել ենք, այժմ էլ ձրի տալիս ենք (տես Մատթեոս Ժ.8): Մեր ընկերների հանդեպ սիրուց և բարությունից ջերմացած սրտերով, եկեք հաստատուն առաջ մղվենք մինչև վերջնական կոչնագիրը գա և մենք դեմ հանդիման հանդիպենք մեր կյանքի արձանագրությանը: Այն ժամանակ, եթե մենք զարգացրած լինենք մեր տաղանդները, եթե ազնիվ, հավատարիմ, մաքրաբարո, նվիրաբերող և գթառատ լինենք և ձգտած լինենք բարձրացնել ամեն հոգու, որի հետ մենք հաղորդակցվել ենք, եթե ապրած լինենք ըստ այն լույսի, որ մենք ստացել ենք և տարածել այդ լույսը, երբ որ հնարավորություն է ներկայացել, որքան երջանիկ կլինենք և ինչպես կուռչեն մեր սրտերը երախտագիտությունից, երբ մենք ստանանք երկնքի և երկրի Արարչից ողջույնի այդ խոսքը. «Լաւ, բարի եւ հավատարիմ ծառայ. Քիչ բաների վերայ հաւատարիմ էիր, ես քեզ շատ բաների վերայ կդնեմ. Մտիր քո Տիրոջ ուրախությունը»: (Մատթեոս ԻԵ.21:)[18] (Տես առաջարկ 5 էջ 21:)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ նախապատրաստվում եք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջ v–viii:

1. Մտածեք ուղիներ սեր ցույց տալու համար, ինչպես Նախագահ Սմիթն էր ցույց տվել (տես էջեր 13–15): Օրինակ՝ ինչպե՞ս կարող ենք սեր ցույց տալ՝ կատարելով տնային ուսուցչին այցելող ուսուցչի մեր հանձնարարությունները:
2. Երբ ուսումնասիրեք ուսմունքների առաջին բաժինը (էջեր 15–16), մտածեք թե ինչպես կարող է այս ուսմունքների կիրառումը բարելավել ձեր հարաբերությունը հարևանների, աշխատակիցների, ընտանիքի անդամների և ուրիշների միջև:
3. Կարդացեք 15 [էջի վերջին լրիվ պարբերությունը: Որո՞նք են ուսմունքներից կամ պատմություններից մի քանիսը սուրբ գրություններում, որոնք ոգեշնչել են ձեզ սիրել և ծառայել ուրիշներին:

4. Ուսումնասիրեք 17 էջում սկսվող բաժինը, հատկապես վերջին երկու պարբերությունները: Մտածեք այն մեկի մասին, ով կարող է դուրս լինել «[ձեզ] ճանաչողների շրջանակից»: Ի՞նչ առանձնահատուկ բան կարող եք անել՝ օգնության հասնելու այդպիսի մի անձնավորության:
5. Խորհեք 19–20 էջերի Նախագահ Սմիթի ուսմունքների մասին: Ինչպիսի փորձառություններ եք ունեցել, որոնք ուսուցանել են ձեզ, որ իսկական երջանկությունը գալիս է ուրիշներին երջանիկ դարձնելուց:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Մատթեոս Ե.43–44, ԻԵ.34–40; Ղուկաս Ժ.25–37; Հովհաննես ԺԳ.34–35, Ա Հովհաննես Դ.7–8, 1 Նեփի 11.16–25, Մորոնի 7.44–48

Օգնություն ուսուցչին. «Եկեղեցում բավականաչափ հաճախ ուսուցումը կատարվում է միապաղաղ դասախոսության ձևով: Դասերի ժամանակ մենք այնքան էլ լավ չենք արձագանքում դասախոսություններին: Մենք լավ ենք արձագանքում հաղորդության ժողովին և համաժողովների ժամանակ, բայց ուսուցումը կարող է լինել երկկողմանի, այնպես որ դուք կարող եք հարցեր տալ: Դասարանում կարելի է հեշտ է նպաստել, որ հարցեր տրվեն» (Boyd K. Packer, "Principles of Teaching and Learning," *Ensign,* June 2007, 87):

Հղումներ

1. J. Reuben Clark Jr., "No Man Had Greater Love for Humanity Than He," *Deseret News,* Apr. 11, 1951, Church section, 10, 12.
2. "After Eighty Years," *Improvement Era,* Apr. 1950, 263.
3. Richard L. Evans, "Anniversary," *Improvement Era,* Apr. 1946, 224.
4. In Conference Report, Apr. 1990, 62; or *Ensign,* May 1990, 47.
5. "Mormon View of Life's Mission," *Deseret Evening News,* June 27, 1908, Church section, 2.
6. "Pres. Smith's Leadership Address," *Deseret News,* Feb. 16, 1946, 6.
7. In Conference Report, Oct. 1946, 149.
8. In Conference Report, Apr. 1922, 52.
9. In Conference Report, Oct. 1929, 24.
10. In Conference Report, Apr. 1905, 62.
11. In Conference Report, Apr. 1949, 10.
12. "To the Relief Society," *Relief Society Magazine*, Dec. 1932, 704.
13. "Saints Blessed," *Deseret News,* Nov. 12, 1932, Church section, 5, 8.
14. In Conference Report, Apr. 1914, 12–13.
15. In Conference Report, Apr. 1946, 184–85.
16. "To the Relief Society," 709.
17. *Sharing the Gospel with Others,* sel. Preston Nibley (1948), 214; address given Nov. 4, 1945, in Washington, D.C.
18. "Mormon View of Life's Mission," 2.



«Ես գիտեմ որ իմ Քավիչն ապրում է և ուրախությամբ տրամադրում եմ իմ խոնարհի ջանքերը հաստատելու Նրա ուսմունքները»։

Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայությունը

Վերականգնված ավետարանը Վերջին Օրերի Սրբերին տալիս է լրացուցիչ վկայություն, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Որպես Գերագույն Իշխանավոր իր ճանապարհորդությունների ընթացքում Ջորջ Ալբերտ Սմիթը, երբեմն, հանդիպում էր այնպիսի մարդկանց, ովքեր կարծում էին, որ Վերջին Օրերի Սրբերը չեն հավատում Հիսուս Քրիստոսին: Այս թյուրըմբռնումը զարմացնում էր և անհանգստացնում Նախագահ Սմիթին, և նա փորձում էր ուղղել այդ՝ կիսվելով Հիսուս Քրիստոսի մասին իր անձնական վկայությամբ:

Մի առիթով նա խոսեց Եկեղեցական մի ժողովում Քարդսթոնում՝ Կանադա, Քրիստոսի կյանքի և առաքելության մասին: Հաջորդ առավոտ նա գնաց երկաթուղային կայարան գնացքի տոմս գնելու: Երբ հերթի մեջ սպասում էր, նա լսեց մի կնոջ և տոմսավաճառի միջև ընթացող զրույցը: Կինը նշեց, որ նախորդ երեկոյան նա որոշեց հաճախել Վերջին Օրերի Սրբերի պաշտամունքի ծառայությանը:

Տոմսավաճառը թվում է զարմացավ: «Աստված իմ, – ասաց նա, –Մի՞թե նկատի ունես, որ եկեղեցի ես գնացել այնտեղ»:

«Այո՛, – պատասխանեց կինը: –Իսկ ինչո՞ւ ոչ»:

Տոմսավաճառն ասաց. «Նրանք նույնիսկ չեն հավատում Հիսուս Քրիստոսին»:

Կինը պատասխանեց. «Հենց երեկ երեկոյան ես լսեցի Եկեղեցու երեցներից մեկին, որը խոսում էր Նազովրեցի Հիսուսի կյանքի մասին, և ես երբեք չեմ լսել որևէ մեկի, որն այդպես

խորապես տպավորված լիներ իմացությամբ, որ Հիսուսն իսկապես Քրիստոսն է, քան այդ առիթով խոսողը»:[1] (Տես առաջարկ 1 էջ 33:)

Ջորջ Ալբերտ Սմիթն ուժ էր ստանում Հիսուս Քրիստոսի իր վկայությունից և հրճվում էր՝ կիսվելով ուրիշների հետ: 44 տարեկան հասակում ծառայած լինելով իր առաքելական կոչումում 11 տարի, նա ասել է.

«Ես վեր եմ մղվել, կարծես թե բարձրացվել և իմ կարողությունից վեր ուժ եմ ստացել `ուսուցանելու փառահեղ ճշմարտությունները, որոնք հռչակվել են աշխարհի Քավիչի կողմից: Ես չեմ տեսել նրան դեմ առ դեմ, բայց վայելել եմ Նրա Հոգու ընկերակցությունը և զգացել Նրա ներկայությունը մի ձևով, որն անսխալ է: Ես գիտեմ, որ իմ Քավիչն ապրում է և ուրախությամբ տրամադրում եմ իմ խոնարհ ջանքերը հաստատելու Նրա ուսմունքները. . . Իմ էության յուրաքանչյուր ջիղ թրթռում է այն իմացությունից, որ Նա ապրում է և մի օր բոլոր մարդիկ կիմանան այդ:

Փրկիչը մահացավ, որ մենք ապրենք:Նա հաղթեց մահին և գերեզմանին և հրամցնում է բոլոր նրանց, ովքեր հնազանդվում են Իր ուսմունքներին, փառահեղ հարության հույսը. . . . Ես գիտեմ, որ սա Տիրոջ աշխատանքն է, որ Հիսուսն իսկապես մեր Փրկիչն է»:[2]

Նախագահ Սմիթը կյանքից հեռացավ իր 81-րդ տարեդարձի օրը, 1951 թվականի ապրիլի 4-ին: Իր կյանքի վերջին պահերին, երբ իր ընտանիքն իր կողքին էր, նրա որդին հարցրեց. «Հայրիկ, կա՞ մի բան, որ կկամենայիր ասել ընտանիքին՝ ինչ-որ առանձնահատուկ բան»:

Ժպիտով նա վերահաստատեց վկայությունը, որով նա կիսվել էր իր կյանքի ընթացքում բազմաթիվ անգամներ. «Այո, միայն այս. Ես գիտեմ, որ իմ Քավիչն ապրում է»:[3]

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է և Նա ապրում է այսօր որպես մեր հարություն առած Փրկիչ:

Ես շատերին եմ գտել աշխարհում, ովքեր իմացել են, թե մենք չենք հավատում մեր Տիրոջ աստվածային առաքելությանը, և ես

առաջնորդվել եմ ասելու մեկ անգամից ավելի առիթներով, որ չկան աշխարհում մարդիկ, ովքեր այնքան լավ են հասկանում Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը, ովքեր այնքան խորապես են հավատում նրան, որ Նա Աստծո Որդին է եղել, ովքեր լիովին [համոզված] են, որ ներկա պահին նա փառքով թագադրված է իր Հոր աջ կողմում, ինչպես Վերջին Օրերի Սրբերը:[4]

Ես գիտե՛մ, ինչպես գիտեմ, որ ապրում եմ, որ նա Աստծո Որդին էր, որ նրա միջոցով և միմիայն նրա միջոցով մենք ձեռք կբերենք վեհացում սելեստիալ արքայությունում և բոլոր նրանք, ովքեր քայլում են նրա հետքերով և ապրում համաձայն նրա տված ուսմունքների, երջանիկ կլինեն այս կյանքում և իրենց համար կպատրաստեն ապարանք նրա սելեստիալ արքայությունում, որտեղ նրանք կբնակվեն նրա հետ հավերժ:[5]

Մարդկության Քավիչն ավելին էր, քան մի բարի մարդ, որն աշխարհ եկավ մեզ բարոյականություն ուսուցանելու: Մարդկության Քավիչն ուներ ավելին, քան սովորական բանականությունն է: Նա իսկապես Աստծո Որդին էր, Աստծո միածինը մարմնում. . . Նա եկավ կանչելու մարդկանց ապաշխարության, իրենց սխալ ուղիներից նրանց դարձի բերելու: Նա շրջում էր նրանց մեջ, ներկայացնելով Աստծուն՝ Հավերժական Հորը, հռչակելով, որ Նա իր Հոր պատկերով է, որ նրանք ովքեր տեսել էին նրան, տեսել էին Հորը, և ասում էր, որ ինքն ուղարկվել է կատարելու իր Հոր կամքը և նա կոչ էր անում բոլոր մարդկանց դարձի գալ սխալներից, որոնք նրանց մեջ են սողոսկել, ապաշխարել իրենց մեղքերից և մտնել մկրտության ջրերը:[6]

Փրկչի ժամանակ հակառակորդը շշնջում էր մարդկանց՝ նա Աստծո Որդին չէ, անկասկած դուք չպետք է ընդունեք նրան, նա ուղղակի սովորական մարդ է, նա ընդամենը Մարիամի և Հովսեփի որդին է և նա Աստծո Որդին է այնքանով, որքանով դուք եք, և մարդիկ լսեցին այդ նենգ ու ամբարիշտ մեկին և խաչեցին մարդկության Քավչին:[7]

Նա իսկապես Աստծո Որդին էր: Նա աշխատեց [ժողովրդի] մեջ սիրով և բարությամբ, բայց նրանք Նրա անունը դուրս նետեցին որպես չար. . . Նա Աստծո Որդին էր և Նա իսկապես իրավունք ուներ խոսելու Հոր անունից: Ճշմարտությունները, որոնք նա բերեց աշխարհ, գալիս էին Հորից և չնայած նրան գամեցին խաչին, չնայած Նրա գլխին փշերից հյուսված պսակ

դրեցին և ծաղրական գավազան դրեցին Նրա ձեռքում, չնայած հեղեցին Նրա արյունն անգութ նիզակով, այնուամենայնիվ խոսքը, որ Նա հաղորդեց նրանց, Տիրոջ խոսքն էր և Նա իսկապես Աստծո Որդին էր։[8]

Մենք ոչ միայն հավատում ենք, որ Նազովրեցի Հիսուսն ապրեց երկրի վրա, այլ մենք հավատում ենք, որ նա դեռ ապրում է, ոչ թե որպես անմարմին կամ անշոշափելի էություն, այլ մենք հավատում ենք նրան որպես վեհացում ստացած մարդ, քանզի նա բարձրացավ նույն մարմնով, որով դրվեց գերեզման Հովսեփ Արիմաթիացու կողմից, այն նույն մարմնով, որը սպասավորվեց նրանց կողմից, ովքեր սիրում էին նրան։ Նույն Հիսուս Քրիստոսը, որը դուրս եկավ գերեզմանից, իր հետ բերեց այն մարմինը, որը մաքրված էր ու սրբված. . . և նա վերցրեց այն իր հետ, երբ անհետացավ մարդկության աչքից Երուսաղեմում, երբ երկու մարդ սպիտակ հանդերձներով ասացին. «այսպէս կգայ ինչպէս նորան տեսաք երկինքը գնալիս»։ (Տես Գործք Ա.10–11։)

Սա է այն Նազովրեցի Հիսուսը, որին հավատում են Վերջին Օրերի Սրբերը։ Մենք հավատում ենք նաև, որ այն խոստումները, որոնք տրվել են մարդկության վերաբերյալ, կիրագործվեն, որ ուրույն ժամանակին, երբ ավետարանը քարոզվի ողջ աշխարհին՝ ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի, երբ մարդիկ դրա վերաբերյալ կթողնվեն առանց արդարացման, մենք հավատում ենք, որ Երկնային Հոր զորությամբ մարդկությունը կստանա մեռելներից հարության այդ սքանչելի օրհնությունը, և որ մարդկության Քավիչը կգա ամպերով՝ զորությամբ և փառքով բնակվելու այս երկրի վրա։ Մենք հավատում ենք, որ Հիսուս Նազովրեցին կգա ապրելու նրանց հետ, ովքեր արժանի են սելեստիալ փառքի։[9] [Տես առաջարկություն 2 էջ 33։]

Մենք ընդունում ենք Աստվածաշնչի վկայությունը Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելության վերաբերյալ։

Նազովրեցի Հիսուսը վար իջավ ջրի մեջ և մկրտվեց Հովհաննեսի կողմից, և երբ նա դուրս եկավ ջրից, Սուրբ Հոգին եկավ և իջավ նրա վրա աղավնու պես։ Եվ մի ձայն երկնքից ասաց. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցի»։ (Տես Մատթեոս Գ.13–17։)

Կարո՞ղ է լինել ավելի որոշակի բան, քան սա։ Մեր սքանչելի Աստվածաշունչը պարունակում է ողջ այդ տեղեկությունը

«Մենք անառարկելիորեն ընդունում ենք վկայությունը. . . Նոր Կտակարանում մարդկության Քավիչի հարության մասին»։

և շատ ավելին, իհարկե։ Երբ մարդիկ ասում են կամ մտածում, որ մենք չենք հավատում Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությանը, թող նրանք իմանան, որ մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստվածաշունչն ուսուցանում է Նրա վերաբերյալ։ Մենք հավատում ենք այն պատմությանը, թե ինչպես նա կազմակերպեց իր ժողովրդին և ուսուցանեց նրանց և ինչպես, ի վերջո. . . Նա խաչվեց։[10]

Մենք անառարկելիորեն ընդունում ենք բոլոր ավետարանիչների վկայությունը, որ պարունակում է Նոր Կտակարանը մարդկության Քավչի հարության մասին։ Դա այնքան պարզ է, որ ինձ թվում է, որ ոչ մի լրջմիտ մարդ չի կարող ձախողվել այն հասկանալիս։ Փաստն այն է, որ Փրկչին խաչելուց և Նրան գերեզմանում դնելուց հետո, Նա դուրս եկավ և քառասուն օր հաղորդակցվեց իր աշակերտների հետ, նա ճաշակեց ձկից և մեղրախորիսխից նրանց հետ, նրանք շոշափեցին բևեռների հետքերը Նրա ձեռքերի մեջ և նիզակի հետքը նրա կողի վրա։

Նա հրապարակեց նրանց, երբ կանգնած էր նրանց մեջ. «Տեսէք իմ ձեռքերը եւ իմ ոտները, որ ես ինքս եմ. Շոշափեցէք ինձ եւ տեսէք. Որովհետեւ ոգին մարմին եւ ոսկերք չունի, ինչպէս ինձ էք տեսնում որ ունիմ» (Տես Ղուկաս ԻԴ.39–43)։ Իհարկե, սա անհակաճառելի փաստ է, և այնուամենայնիվ, մեր Հոր զավակներից շատերը կան, ովքեր չեն հասկանում այդ։[11] (Տես առաջարկ 3 էջ 34։)

Մորմոնի Գիրքը և Ջոզեֆ Սմիթի վկայությունը մեզ լրացուցիչ վկայություն են տալիս Քրիստոսի աստվածայնության վերաբերյալ։

Հին աշխարհում հարց բարձրացվեց, որ Հիսուսն աստվածային ծագում չուներ, որովհետև Նա ծնվել էր որպես փոքրիկ մանկիկ, օրորոց ունենալով մսուրը, Նրա մայրը Մարիամն էր և Նրա հայրը հայտնի էր որպես հյուսն Հովսեփ։ Շատերն են ընդունել, որ Նա մեծ և բարի մարդ էր, բայց նրանք ցանկանում էին կողոպտել Նրանից Իր ծննդյան աստվածայնությունը։

Սակայն Վերջին Օրերի Սրբերի համար բարեբախտաբար, մենք ստացել ենք վկայություն, որ այս բաները ճշմարիտ են, բացի դրանից մենք ստացել ենք վկայություն, որ Նա եկավ արևմտյան կիսագունդ, ինչպես գրված է Մորմոնի Գրքում և ծառայեց Նեփիացիներին այս մայրցամաքում։ Այս անգամ նա չեկավ որպես փոքրիկ երեխա, այլ Նա եկավ երկնքի ամպերի միջով և Նրա գալուստը հռչակվեց ձայնի կողմից, որը ներթափանցեց ամեն մարդու հենց կենտրոնից, որոնք ապրում էին այդ երկրում։ Այս անգամ Նա եկավ որպես մարդ երկնքից և նրանք տեսան Նրան գալու ընթացքում։ Նրանք գիտեին, որ դա Քրիստոսն էր, քանզի Նրա գալուստը կանխագուշակվել էր նրանց մարգարեների կողմից։ Նա տվեց նրանց նույն կազմակերպությունը, ինչ որ Երուսաղեմի Եկեղեցում էր գտնվում։ Նա ուսուցանեց նրանց, որ պետք է մկրտվեին, ինչպես ինքն էր արել, նրանց կողմից ովքեր իշխանություն ունեին պաշտոնավարելու այդ արարողությունը։ (Տես 3 Նեփի 11.1–27։) Սա մի սովորական մարդու խոսք չէր, սա Աստծո Որդու խոսքն էր, որը համբարձվել էր Իր Հոր մոտ, որ կրկին ետ էր եկել, որպեսզի մարդկանց որդիներն ունենային ևս մեկ վկայություն ի հավելում այն թվաքանակին, որն արդեն տրվել էր նրանց։[12]

Երբ հարություն առած Փրկիչն այցելեց Նեփիացիներին, «հրեշտակներն իջան երկնքից, կարծես թե կրակի մեջ էին, և օղակեցին այն փոքրիկների շուրջը»:

Էլ ի՞նչ ավելի ուղղակի ապացույց կարող էր լինել մեռելներից Նրա հարության վերաբերյալ, քան այն, որ Նա իր հարություն առած մարմնով եկավ [Նեփիացիների] մեջ ուսուցանեց նրանց նույն ավետարանը, որը Նա ուսուցանել էր Երուսաղեմում: Եվ այժմ Նա կատարեց խոստումը, որ Նա տվել էր Երուսաղեմում, երբ նա ասաց. «Ուրիշ ոչխարներ էլ ունիմ, որ այս գաւիթիցը չեն, եւ նորանց էլ պէտք է բերեմ. Եւ իմ ձայնին կլսեն, եւ մի հոտ և մի հովիւ կլինին»: Հովհաննես Ժ.16 Նա եկավ իր հարություն առած մարմնով բերելու նրանց այն տեղեկությունը, որը նա կանխատեսել էր պետք է տրվեր նրանց, ում նա այժմ ծառայում էր:

Դա մի սքանչելի փորձառություն էր այդ ժողովրդի համար: Ողջ օրը նրանց ուսուցանելուց հետո. . . նա բժշկեց նրանց հիվանդներին և շարունակեց հրահանգել նրանց իր Ավետարանի գեղեցկությամբ: Նրանց մտքերում չկար կասկած, որ նա աշխարհի Փրկիչն էր: Նրանք տեսան նրան երկնքից գալիս և

ականատես եղան նրա սքանչելի զորությանը. . . Նա եկավ փառքով: Հրեշտակներն իջան երկնքից, կարծես թե կրակի մեջ էին, և օղակեցին այն փոքրիկների շուրջը, այնպես որ նրանք օղակվեցին կրակով: Եվ հրեշտակները սպասավորում էին նրանց: (Տես 3 Նեփի 17.6–24:)

Դրանք զգայախաբություններ չէին, այլ այնպիսի սքանչելի բնույթի փորձառություններ, որպեսզի հիշվեին հավերժ նրանց կողմից, ովքեր զգացել էին դրանք: Որպես Վերջին Օրերի Սրբեր՝ մենք ընդունում ենք այս հիշատակարանը որպես Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ հարության ապացույց:[13]

Այնուհետև այն օրում և դարում, որում մենք ենք ապրում, բարձրացավ մեկ ուրիշ անձնավորություն. . . [Զոզեֆ Սմիթը] ոչ միայն վկայություն ուներ Աստվածաշնչի մասին, որ Հիսուսը Քրիստոսն էր, այլ Նա տեսավ Հայր Աստծուն կանգնած երկնքի ամպերի մեջ, հանդերձավորված փառքով և Հիսուս Քրիստոսին՝ աշխարհի Քավչին, վեհացած՝ Նրա աջ կողմում, և նա լսեց Տիրոջ ձայնն ասելիս. «Սա է Իմ Սիրելի Որդին: Լսիր Նրան» Տես Զոզեֆ Սմիթ—Պատմություն 1.16–17: Նա վկայություն բերեց այս փառահեղ տեսիլքի մասին նրանց, որոնց հետ նա հաղորդակցվում էր: Ուրիշները ևս վկայություն ստացան ի վերուստ: Նրանց վկայությունը Փրկչի առաքելության աստվածայնության մասին մեծացավ և ամրացավ, այնպես որ այն այլևս հնադարյան պատմության հարց չէր, որ Աստված ապրում էր, և որ Հիսուսը Քրիստոսն էր, նրանք դա անձնապես իմացան, որովհետև նրանք իրենք էին վկայություն ստացել:[14]

Իմ կարծիքով Փրկչի կյանքի աստվածայնության ամենաուժեղ վկայություններից մեկը Զոզեֆ Սմիթի վկայությունն է, որը վայր դրեց իր կյանքը որպես ապացույց Հիսուս Քրիստոսի ավետարանի ճշմարտության վերաբերյալ:[15] (Տես առաջարկություն 3 էջ 34:)

Մեզանից յուրաքանչյուրը կարող է ձեռք բերել անձնական վկայություն, որ Հիսուսը Քրիստոսն է:

Մենք ունենք ևս մեկ ապացույց, որը նույնիսկ ավելի կատարյալ է և ավելի համոզիչ, քան մյուսները, որովհետև այն գալիս է անձնավորությանը, երբ նա ենթարկվում է մեր Երկնային Հոր

պահանջներին: Դա վկայություն է, որը բոցավառվում է մեր հոգիներում Սուրբ Հոգու զորությամբ, երբ մենք կատարում ենք այն աշխատանքը, որը Տերն ասել է պետք է կատարվի, եթե մենք կամենում ենք իմանալ, որ վարդապետությունն աստծուց է թե մարդուց:[16]

Նա Ինքն է ասել. «Իմ վարդապետությունն իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է: Եթէ մէկը կամենում է նորա կամքն անել, նա կիմանայ այս վարդապետութեան համար, թե արդեօք Աստուածանի՞ց է, կամ եթե ես իմ անձիցն են խոսում» (Հովհաննես Է.16–17): Դա նրա անձնական խոստումն է: Մենք որպես Քրիստոնյաներ ողջ աշխարհում ընդունում ենք այդ խոստումը և պետք է փորձենք այն ստուգելու համար՝ տեսնելու արդյոք դա աշխատում է թե ոչ: Կան շատերը, ովքեր դա արել են: Ես գիտակցում եմ, որ կան. . . շատերը, որ այն ստուգարքի են դրել, շատերը, ովքեր գիտեն, որ Աստված ապրում է, և որ Հիսուսը Քրիստոսն է, որ Նա աշխարհի Փրկիչն է:[17]

Այսպիսով, մենք ոչ միայն հիշատակարանների ապացույցն ունենք . . . , ոչ միայն լավ մարդկանց վկայությունը, ովքեր ապրել են երկրի վրա մեր օրերում, այլ եթե մենք ենթարկվենք մեր երկնային Հոր պահանջներին, եթե հավատք ունենանք Աստծո հանդեպ, եթե ապաշխարենք մեր մեղքերից, եթե մենք ստանանք մկրտություն ընկղմամբ, եթե ստանանք Սուրբ Հոգին Տիրոջ լիազորած ծառաների ձեռքերի ներքո, ես ասում եմ, եթե մենք անենք բոլոր այս բաները, ապա յուրաքանչյուր հոգում կլինի անկասկած գիտելիք, որը չի կարող ժխտվել [ուրանալ], որ Աստված ապրում է, և որ Հիսուս Քրիստոսը մարդկության Քավիչն է: . . .

. . .Որպես այս Եկեղեցու խոնարհ անդամներից մեկը՝ ես բերում եմ իմ վկայությունը, որ գիտեմ Նա ապրում է ինչպես գիտեմ, որ ապրում եմ ես. . . Հիսուսը Քրիստոսն է և ես գիտեմ, որ մարդկանց զավակները պետք է գան այդ իմացությանը, որ նրանք պետք է ստանան դա և Նրա լեզվով, ով ապրում է երկնքում. «ամեն ծունկ պիտի ծալվի, և ամեն լեզու պիտի խոստովանի, որ Հիսուսը Քրիստոսն է»: [Տես ՎևՈւ 88:104:][18] (Տես առաջարկ 4 էջ 34:)

Մեր առաքելությունն է կիսվել բոլոր մարդկանց հետ, ինչ մենք գիտենք Հիսուս Քրիստոսի մասին:

Ես ասում եմ ձեզ Վերջին Օրերի Սրբեր, չկան այլ մարդիկ ողջ աշխարհում, ովքեր ունեն բոլոր այն տեղեկությունը, որ մենք ունենք Փրկչի աստվածայնության վերաբերյալ, և եթե մենք չհավատանք Նրան, մենք կլինենք ավելի մեծ դատապարտության տակ, քան մյուսները, որոնք երբեք չեն ունեցել այդ տեղեկությունը: Եվ այսպիսով, մենք կարող ենք ասել աշխարհին առանց տատանվելու, որ մենք հավատում ենք այս բաներին: . . .

Ես շնորհավորում եմ ձեզ, որ ձեր կյանք է եկել այս արտոնությունը և այս օրհնությունը: Իսկ այժմ ես հորդորում եմ որպես ձեր եղբայր, աղերսում ձեզ որպես ամենախոնարհը ձեր մեջ, մի թաքցրեք ձեր մոմը գրվանի տակ: Մի թաքցրեք այն գիտելիքը, որ Աստված է տվել ձեզ, ձեր մերձավորներից:

Մի ձանձրացրեք նրանց, բայց մի եղեք այնքան ոչ իմաստուն, որ թաքցնեք նրանցից Հիսուս Քրիստոսի ավետարանը:[19]

Ամենաերջանիկ տղամարդիկ և կանայք, ում դուք գիտեք աշխարհում, նրանք են, ովքեր համապատասխանեցնում են իրենց կյանքը Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսմունքներին: Այդ նրանք են ովքեր ունեն հավերժական կյանքի հավաստիացումը, այդ նրանք են, ովքեր հասկանում են մեր գոյության նպատակը. . . Երբ ես ճանապարհորդել եմ այս ու այնտեղ աշխարհում տանելով այս ուղեձը, հոգիս լցվել է ուրախությամբ և աչքերս մշուշվել արցունքներից, երբ տեսել եմ, թե ինչպես մարդկանց կյանքը կարող է կատարելապես փոխակերպվել Հիսուս Քրիստոսի ավետարանի միջոցով: Ես տեսել եմ նրանց ովքեր հուսահատված են եղել, ովքեր խավարում են եղել, նրանց ովքեր հարցականի տակ են դրել իրենց գոյության նպատակը և երբ նրանք ուսուցանվել են Հիսուս Քրիստոսի ավետարանի փառահեղ ճշմարտությունները, նրանք փոխվել են, նրանք սովորել են երջանիկ լինել, գոհ լինել, բավարարված լինել, լինել խանդավառված հավատալով և ուսուցանելով ավետարանը, որը հռչակվել էր Հիսուս Քրիստոսի կողմից, երբ Նա ապրում էր այս երկրի վրա և ճանապարհորդում էր Գալիլեայում:

Եղբայրներ և քույրեր, աշխարհը չի հասկանում այդ, բայց մեր առաքելությունն է օգնել նրանց հասկանալ դա, և դա

եսասիրությամբ չէ, դա գոռոզությամբ չէ, այլ գթությամբ բոլորի հանդեպ, սիրառատ քնքշությամբ է, որ այս ուղերձն առաջ է ուղարկվում։ . . .

Որպես ձեր մեջ ամենախոնարհներից մեկը՝ ես շնորհակալություն եմ հայտնում նրան ողջ իմ սրտով այն հավաստիացման համար, որ եկել է իմ կյանք. . . Ամենից վեր, ես շնորհակալ եմ նրան այն գիտելիքի համար, որը բոցավառվել է իմ հոգում, ես գիտեմ, որ իմ Երկնային Հայրն ապրում է, ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը մարդկության Փրկիչն է, և որ չկա ուրիշ անուն երկնքի տակ, որի միջոցով տղամարդիկ և կանայք կարողանան փրկվել, բացի Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ անունից։ Ես իսկապես գիտեմ, որ նա աշխարհ եկավ այս վերջին օրերում, որ նա մի խոնարհ տղայի օժտեց աստվածային իշխանությամբ, որը որոնում էր ճշմարտությունը, և դրա հետևանքը եղավ Եկեղեցու կազմավորումը, որով մենք ճանաչվում ենք և դրա հետ կա Աստծո զորությունն ի փրկություն բոլոր նրանց, ովքեր հավատում են։[20]

Աղոթում եմ, որ մենք այնպես ապրենք, որպեսզի լինենք արժանավոր օրինակներ Նրա գործի։ Աղոթում եմ, որ մեր կյանքն այնպիսին լինի, որ մենք կարողանանք ցույց տալ դրանով, որ մենք իսկապես Տեր Հիսուս Քրիստոսի հավատացյալներն ենք։[21] (Տես առաջարկ 5 էջ 34։)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ նախապատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջ v–viii։

1. Կարդացեք 23 էջի պատմությունը։ Ինչպե՞ս կարձագանքեիք ինչ-որ մեկին, ով ասում է Վերջին Օրերի Սրբերը չեն հավատում Հիսուս Քրիստոսին։
2. Նախագահ Սմիթն ուսուցանել է. «Մենք ոչ միայն հավատում ենք, որ Նազովրեցի Հիսուսն ապրեց երկրի վրա, այլ մենք հավատում ենք, որ նա դեռ ապրում է» էջ 26։ Ի՞նչ պատճառներ ունեն Վերջին Օրերի Սրբերը հավատալու, որ Հիսուս Քրիստոսն ապրում է այսօր։ Ի՞նչ պատճառներ ունեք դուք, անձնապես հավատալու սրան։

3. Համառոտ աչքի անցկացրեք էջ 26–29: Ինչպիսի՞ պատմություններ և հատվածներ կան սուրբ գրություններում, որոնք զորացրել են ձեր վկայությունը, որ Հիսուս Քրիստոսն աստծո Որդին է: Կարդացեք 1 Նեփի 10.17 և մտածեք ուղիներ, որոնցով դուք կարող եք ընդլայնել ձեր հասկացողությունը Փրկչի առաքելության վերաբերյալ:
4. Երբ կարդաք էջ 30-ը, մտածեք, թե ինչպես հնազանդությունն ավետարանի սկզբունքներին և արարողություններին զորացրել է ձեր վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին: Ի՞նչ կարող են անել ծնողները օգնելու իրենց երեխաներին այս վկայությունը ձեռք բերելիս:
5. Ի՞նչ մտքեր կամ զգացումներ եք ունենում, երբ կարդում եք Նախագահ Սմիթի վկայությունը 31–32 էջերում: Մտածեք այն դեպքերի մասին, երբ դուք տեսել եք մարդկանց կյանքը փոխվելիս, Հիսուս Քրիստոսի ավետարանի շնորհիվ: Ինչպե՞ս է ավետարանը փոխել ձեր կյանքը:

Թեմային առնչվող սուրբ գրություններ. Մատթեոս ԺԶ.15–17, 17.1–5,2 Նեփի 25.26, Ալմա 5.45–48, Վարդապետություն և Ուխտեր 76.22–24, 110.1–4

Օգնություն ուսուցչին. [Խուսափեք] խիստ մեծ քանակությամբ նյութ տալու գայթակղությունից: Մենք ուսուցանում ենք մարդկանց, ոչ թե առարկայի նյութը, և. . . յուրաքանչյուր դասի ուրվագիծ, որ ես երբևէ տեսել եմ, անխուսափելիորեն կարող է ունենալ ավելի շատ բան իր մեջ, քան կարելի է այն հնարավորինս յուրացվել սահմանված ժամանակի շրջանակներում» (Jeffrey R. Holland, "Teaching and Learning in the Church," *Ensign,* June 2007, 91):

Հղումներ

1. In *Deseret News,* Dec. 27, 1924, Church section, 6; see also *Sharing the Gospel with Others,* sel. Preston Nibley (1948), 201–2.
2. "Testimony of Elder George Albert Smith," *Liahona: The Elders' Journal,* Feb. 2, 1915, 502.
3. In Robert L. Simpson, *The Powers and Responsibilities of the Priesthood,* Brigham Young University Speeches of the Year (Mar. 31, 1964), 8.
4. In *Deseret News,* Dec. 27, 1924, Church section, 6.
5. In *Deseret News,* Jan. 15, 1927, Church section, 8.
6. In Conference Report, Oct. 1921, 39.
7. In Conference Report, Apr. 1918, 39.
8. In Conference Report, Apr. 1904, 63.
9. In *Deseret News,* Dec. 27, 1924, Church section, 6.

10. In Conference Report, Oct. 1950, 156.
11. In Conference Report, Apr. 1939, 120–21.
12. In Conference Report, Apr. 1905, 61.
13. In Conference Report, Apr. 1939, 121–22.
14. In Conference Report, Apr. 1905, 61–62.
15. In *Deseret News,* Jan. 15, 1927, Church section, 8.
16. In *Deseret News,* Dec. 27, 1924, Church section, 6.
17. Sharing the Gospel with Others, 206; address given Nov. 4, 1945, in Washington, D.C.
18. In *Deseret News,* Dec. 27, 1924, Church section, 6.
19. *Sharing the Gospel with Others,* 211, 214; address given Nov. 4, 1945, in Washington, D.C.
20. In Conference Report, Oct. 1927, 48–50.
21. In *Deseret News,* Jan. 12, 1907, 31.

1905 թվականի դեկտեմբերի 23-ին Ջորջ Ալբերտ Սմիթը Եկեղեցու մյուս ղեկավարների հետ մասնակցեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի ծննդավայրում հուշարձանի նվիրագործմանը:

Մարգարե Զոզեֆ Սմիթ՝ ճշմարտությունը վերականգնելիս Աստծո գործիք

Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով Աստված վերականգնեց ավետարանն իր անաղարտությամբ:

Զորջ Ալբերտ Սմիթի կյանքը

Մարգարե Զոզեֆ Սմիթի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ, Երեց Զորջ Ալբերտ Սմիթը ճանապարհորդեց Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթի և ուրիշների հետ՝ այցելելով Մարգարեի կյանքում կարևոր վայրերով: 1905 թվականի դեկտեմբերի 23-ին՝ Վերմոնթում, Զոզեֆ Սմիթի հիշատակին մի հուշարձան կանգնեցվեց: Դա հուզումնալի փորձառություն էր Զորջ Ալբերտ Սմիթի և ուղեկիցների համար ավետարանի վերականգման հետ կապված այդպիսի նշանակություն ունեցող մի վայրում լինել. «Արցունքներն առատորեն հոսում էին, – հիշում էր նա: – Հոգու ազդեցության ներքո, յուրաքանչյուր հոգի խոնարհվել էր, յուրաքանչյուր սիրտ հալվել և մենք ցնծում էինք մեր Երկնային Հոր օրհնություններով»:[1] Զորջ Ալբերտ Սմիթին խնդրվեց ասել նվիրազործման ծառայության փակման աղոթքը: Այդ օրն ամփոփելուց հետո իր օրագրում, նա գրել է. «Այսպես ավարտվեց իմ կյանքի իրադարձություններով լի օրերից մեկը: Ես շնորհակալ եմ, որ մեր մարդկանցից այն քչերից մեկն էի, որ հենց նոր ավարտի հասցրած այդ խնդրում օգտակար եղա»:[2]

Հետագայում նրանք այցելեցին Առաջին Տեսիլքի վայրը Պալմիրայում: Երեց Սմիթը վերհիշում է. «Մենք գնացինք այն պուրակը, որտեղ Ջոզեֆը ծնկի էր իջել և հարցրել Տիրոջը հաղորդել իրեն թե եկեղեցիներից որ մեկին նա պետք է միանար: Մենք զգացինք, որ պետք է երգեինք այդ սրբազան վայրում. . . «Ջոզեֆ Սմիթի առաջին աղոթքը» գեղեցիկ օրհներգը:[3]

Կումորա բլուրը, Կիրթլենդի Տաճարը և Մարգարեի առաքելության հետ կապված այլ վայրեր այցելելուց հետո, ընկերախումբը Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից կանչվեց միասին հավաքվելու ճանապարհորդության ավարտական երեկոյի առթիվ: «Սիոնի մի քանի երգեր երգելուց հետո, խմբի յուրաքանչյուր անդամի թույլ տրվեց վկայել մեր հանդեպ մեր Հոր բարության և ողորմածության մասին: Տիրոջ Հոգին դուրս թափվեց մեզ վրա, և մենք ուրախության և երջանկության արտասուքներ հեղեցինք»:[4] (Տես առաջարկ 1 էջ 48:)

Մի քանի տարի անց, երբ Ջորջ Ալբերտ Սմիթը ծառայում էր որպես Եկեղեցու Նախագահ, հրատարակվեցին մի քանի գրքեր, որոնք փորձում էին զրպարտել Ջոզեֆ Սմիթին: Եկեղեցու Գերագույն Համաժողովում Նախագահ Սմիթը համարձակորեն պաշտպանեց Մարգարեին, բերելով վկայություն նրա առաքելության վերաբերյալ հետևյալ խոսքերով.

«Ինձ տրված օգուտների և օրհնությունների մեծ մասը եկել են այդ մարդու միջոցով, ով տվեց իր կյանքը Հիսուս Քրիստոսի ավետարանի համար: Եղել են ոմանք, ովքեր ձգտել են նվաստացնել նրան, բայց ես կկամենայի ասել, որ նրանք, ովքեր արել են այս, կմոռացվեն և նրանց աճյունները կհանձնվեն մայր հողին, եթե արդեն չեն հանձնվել, և նրանցից միշտ անարգության հոտ կգա, մինչդեռ Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից դրսևորված փառքը և պատիվը և քաջությունն ու հավատարմությունը հավերժ կկցվի նրա անվանը»:[5]

Երեց Հարոլդ Բ. Լին, այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, այնպես էր ցնցված այդ խոսքերից, որ նա պահում էր այդ քաղվածքն իր ծոցատետրում և հաճախ էր այն մեջբերում, կամենալով, որ Նախագահ Սմիթի խոսքերը «լսվեին բոլորի կողմից աշխարհի բոլոր ծայրերում»:[6]

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսլիքը ցույց տվեց, որ երկինքները կնքված չեն:

Մենք հավատում ենք, որ մեր Երկնային Հայրը խոսել է մեր օրերում . . . , որ Նա լսեց մի խոնարհ պատանու աղոթքը Պալմիրայում, և պատասխանեց նրա աղոթքին և օրհնեց նրան իր անձի վերաբերյալ գիտությամբ, որպեսզի բոլոր մարդիկ կարողանային ճանաչել Տիրոջը, եթե կամենան:

Շատ բնական բան էր, որ Ջոզեֆ Սմիթը պիտի որոներ Տիրոջը: Նա սերվուում էր. . . մի ժողովրդից, ովքեր հավատում էին մեր Երկնային Հորը, Փրկչի աստվածային առաքելությանը, աղոթքի արդյունավետությանը, և որ Աստված կլսեր և կպատասխաներ իր ժողովրդին, եթե նրանք նրա առաջ գնային պատշաճ հոգով: Այդ երիտասարդ տղայի համար հեշտ էր հավատալ, որովհետև նա ծնվել էր և մեծացել հավատացյալ ընտանեկան մթնոլորտում, և երբ նա դուրս եկավ և գնաց անտառ՝ ի պատասխան սուրբ գրության կարգադրության Հակոբոս Ա.5. «Բայց եթե մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կտրուի նորան», նա հավատում էր, որ պատասխան կստանա իր աղոթքին և մեր Երկնային Հայրը խոստացել է իր զավակներին ի սկզբանե, որ «հավատքով դուք կիմանաք բոլոր բաները»:[7]

Նրա հավատքն առ Աստված նրան հեռացրեց իր օրերում սովորական այն համոզմունքից, որ Աստվածաշունչը պարունակում է բոլոր հնարավոր հայտնությունները մարդկանց համար, և որ երկինքները փակ են նրա գլխավերևում: Նա աղոթեց Տիրոջը և նրա աղոթքը պատասխանվեց: Նա տեսավ Հորը և Որդուն իջնելիս երկրի վրա շրջապատված փառահեղ լույսով: Նա ստացավ անառարկելի գիտելիք, որ Նրանք ունեին մարդկանց նման մարմիններ, և որ Նրանք նյութական անձնավորություններ էին, նրանք խոսեցին նրա հետ և նա լսեց նրանց ձայները:[8]

[Ջոզեֆի աղոթքի] հետևանքով էր այդ սքանչելի դրսևորումը, ի տարբերություն որևէ այլ պատմության, որ երբևէ լսել էինք աշխարհում: Մենք լսել ենք դեպքերի մասին, որտեղ մեր Երկնային Հայրը ցույց է տվել իրեն. մենք կարդացել ենք դեպքերի

մասին, որտեղ մարդկության Քավիչն է ցույց տվել իրեն, բայց մենք երբեք չենք կարդացել որևէ դեպք, որտեղ Հայրը և Որդին նախկինում հայտնվեին որևէ ապրող էակի և խոսեին այդ անձնավորության հետ։

Աշխարհի մարդիկ չեն հավատում դրան։ Տղամարդկանց և կանանց ուսուցանվել է, որ երկինքները կնքված են . . . , և երբ այդ պատանին հայտարարեց, որ մեր օրերում, – հենց այն ժամանակ, երբ մենք բոլորից շատ լույսի կարիք ունեինք, երբ տղամարդիկ և կանայք այս ու այն կողմ էին վազում Աստծո խոսքի համար և չէին կարողանում գտնել այն, ինչպես կանխագուշակվել էր հնադարյան մարգարեների կողմից [տես Ամովս Ը.11–12], – Տերն իրեն ցույց է տվել, նա [Ջոզեֆը] ծաղրի ենթարկվեց. . . Նրա հաղորդածը մերժվեց, և նրանք ովքեր պետք է լինեին նրա ընկերները, հեռացան նրանից և նույնիսկ ասացին, որ դա չարից էր։ Ո՞րն էր այդ տղայի վկայությունը։

«. . . Ես իսկապես տեսել էի լույսը և այդ լույսի մեջ ես տեսել էի երկու Անձնավորություն, և նրանք իրականում խոսել էին ինձ հետ. և չնայած ինձ ատում և հալածում էին այն բանի համար, որ ասում էի, թե տեսիլք եմ տեսել, այնուամենայնիվ, դա ճշմարիտ էր. և մինչ նրանք հետապնդում էին ինձ, այդպես ասելու համար անարգելով ինձ և ընդդեմ ինձ ամեն տեսակի չար բան սուտ տեղն ասելով, ես դրդվում էի ասելու իմ սրտում. Ինչո՞ւ եք ինձ հալածում ճշմարտությունն ասելու համար։ Ես իսկապես տեսիլք եմ տեսել. և ո՞վ եմ ես, որ դեմ կանգնեմ Աստծուն, կամ ինչո՞ւ է աշխարհը մտադրված՝ ստիպելու ինձ ուրանալ այն, ինչ իրականում տեսել եմ։ Քանզի, ես տեսել էի տեսիլք. Ես գիտեի դա և գիտեի, որ Աստված գիտի դա, և չէի կարող ուրանալ, ոչ էլ կհամարձակվեի դա անել. համենայն դեպս, ես գիտեի, որ այդպես անելով, կմեղանչեի Աստծո առաջ և կընկնեի դատապարտության տակ»։ (Տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.25–19։)[9]

1830 թվականին, երբ այս Եկեղեցին կազմակերպվեց, երկրի վրա չկար եկեղեցական կազմակերպություն, որը կհայտարարեր, որ հավատում էր, որ Աստված Իրեն հայտնի է դարձնում մարդկանց զավակներին։ Եկեղեցիների ուսմունքները ամբողջովին հակառակ էին դրան և Հայրը տեսնում էր ապարդյունությունը փորձել փրկել իր որդիներին և դուստրերին մինչև նրանք չկարողանային ոգեշնչվել գալու նրա մոտ այն հավատքով, որ

Նա կլսեր և կպատասխաներ նրանց աղոթքներին: Երբ պատանի մարգարեն Պալմիրայի անտառներում տեսավ Հորը և Որդուն և հասկացավ, որ նրանք իսկապես անձնավորություններ են, որ նրանք կարող են լսել և պատասխանել, ինչ նա ասում էր, այն սկսեց մի նոր դարաշրջան այս աշխարհում և դրեց մարդկանց զավակների հավատքի հիմքը: Նրանք կարող էին այժմ աղոթել մեր Հորը երկնքում և հասկանալ, որ նա կարող էր լսել և պատասխանել նրանց աղոթքներին, որ կար կապ երկնքի և երկրի միջև:[10] (Տես առաջարկ 2 էջ 48:)

Չնայած որ երիտասարդ էր և անփորձ, Ջոզեֆ Սմիթը կանչվեց վերականգնելու Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին:

Հավատքը հուշեց Ջոզեֆին որոնել Աստծուն աղոթքով և հարցնել, թե որ եկեղեցուն ինքը պետք է հարի: Ինչպիսի՞ն էր պատասխանը: Արդյոք Տերն ասա՞ց. «Տղաս, դրանք բոլորն էլ լավն են, դրանք բոլորը ձգտում են պահել իմ պատվիրանները, մարդիկ, որոնք այս բոլոր եկեղեցիների ղեկավարներն են, իմ կողմից են հովանավորվում, յուրաքանչյուր եկեղեցին էլ հարմար կլինի, դրանք բոլորը կառաջնորդեն քեզ ետ՝ դեպի մեր Երկնային Հոր ներկայություն»: Գոյություն ունեցող իրավիճակում պատանին հնարավոր է սպասեր նման պատասխանի: Բայց նա ուզում էր իմանալ, թե ինչ աներ և ուներ լիակատար հավատք, որ Տերը կասի իրեն: Այսպիսով, երբ նա աղոթեց, նա հարցրեց, թե եկեղեցիներից որ մեկին պիտի միանա, և ենթադրում եմ, նա ապշեց, երբ [նրան ասվեց], «որ դրանցից ոչ մեկին չպետք է միանայի, նրանք վարդապետություններ են ուսուցանում, որոնք մարդկանց պատվիրաններն են, և նրանք ունեն աստվածայնության կերպարանք, բայց ուրանում են նրա զորությունը»: (Տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.19:) Պատկերացրեք մի տասնչորս տարեկան պատանու, որը բարձրանում է ծնկի իջած վիճակից իր տան մոտ գտնվող անտառում և աշխարհին հայտարարում այդպիսի մի ուղերձ: Կարո՞ղ եք պատկերացնել, որ որևէ պատանի կարող էր անել այդպիսի բան: Բայց այն վկայությունը, որը տրվեց նրան իր Երկնային Հոր կողմից, անձամբ Տիրոջ կողմից տրված պատվիրանով, արդյոք նա կհամարձակվե՞ր անել որևէ այլ բան, բացի հայտարարելուց, որ Տերը խոսել է իր հետ[11]:

Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքը «նոր դարաշրջան սկսեց այս աշխարհում և հիմք դրեց մարդկանց որդիների հավատքին»:

Ջոզեֆ Սմիթը պատանի էր դեռ, երբ Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի ձեռքերը դրվեցին նրա գլխին և նա կարգվեց Մելքիսեդեկյան Քահանայության՝ նա և Օլիվեր Քաուդերին: Որոշ ժամանակ անց Ջոզեֆ Սմիթին կարգադրվեց կազմակերպել Եկեղեցի: Նա երիտասարդ էր, բայց նա կազմակերպեց այն մարդկության Քավչի ղեկավարությամբ: Եվ դա այն Եկեղեցու օրինակով էր, որը կազմավորված էր Փրկչի կողմից, երբ նա երկրի վրա էր: Ես կասկած չունեմ, որ կային շատերը, ովքեր նայում էին այդ երիտասարդին որպես նորելուկի և կարծում էին ծիծաղելի էր, որ մեկը, ով կրթություն չէր ստացել ղեկավար

դառնալու, մտածում էր ղեկավարել: Բայց նա նման էր մեր Երկնային Հոր մյուս ծառաներին, ովքեր ապրել էին երկրի վրա, ովքեր կանչվել էին Տիրոջ կողմից կատարելու հատուկ աշխատանք և գիտելիքի բացակայությունն այս աշխարհի բաների վերաբերյալ չխանգարեց Տիրոջը հնարավորություն տալու նրան ստանալ տեղեկություն, որը դարձրեց նրան հավասար և նույնիսկ գերազանց շատ կողմերով նրանց համեմատությամբ, ովքեր ունեցել էին մեծ աշխարհիկ հնարավորություններ, որոնցից նա զուրկ էր մնացել:[12]

Չնայած անարգված և սխալ հասկացած, արհամարհված նրանց կողմից, ովքեր պետք է լինեին նրա ընկերները, մերժված այդ ժամանակվա կրթյալների և գիտնականների կողմից, նա հաջողության հասավ՝ վերականգնելով կյանքի և փրկության Ավետարանը և հիմնադրելով Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին:

Չնայած չարի ուժերը միշտ ակտիվ էին նրան կործանելու համար, նա պահպանվեց Տիրոջ կողմից, մինչև նրա աշխատանքն ավարտվեց և մարդկային ընտանիքի փրկության համար բոլոր անհրաժեշտ բանալիներն ու արարողությունները կրկին տրվեցին մարդկանց:[13] (Տես առաջարկ 3 էջ 48:)

Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգված ճշմարտությունները խաղաղություն և ուրախություն է բերում նրանց, ովքեր ընդունում են դրանք:

Այդ պատանուց, որը տասնչորս տարեկան հասակում տեսավ Հորը և Որդուն, եկավ այն սքանչելի ուղերձը, որ մեր Հայրը երկնքում և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, փառավորված մարդիկ են, որ աշխարհի Փրկիչը հարություն է առել մեռելներից: Այդ պատանին տեսավ այն, ինչ աշխարհն իմացել էր, բայց ինչ-որ պատճառով մոռացել էր, և նա սկսեց վկայություն տալ դրա մասին մարդկանց զավակներին:[14]

[1800-ականների սկզբում] քիչ մարդիկ կային աշխարհում, ովքեր հավատում էին մարմին ունեցող Աստծո անհատականությանը: Բայց այդ ժամանակ հայտնություն եկավ Մարգարե Ջոզեֆ Սմիթին, երբ նա դեռ պատանի էր, տասնհինգ տարեկան էլ չկար և նա տեսավ Հորը և Որդուն և վկայեց այդ մասին: Նա

նաև այցելություններ ունեցավ այլ երկնային էակների կողմից և Տիրոջից, նրանց միջոցով տրվեց լրացուցիչ տեղեկություն մարդկանց զավակների համար և իր իսկ ուրույն ձևով նա կյանքի նպատակի մասին իմացություն տվեց մեզ կամ նրանց, ովքեր նախորդել էին մեզ Եկեղեցում. . . Երկնքի նրա նկարագրությունը ոգեշնչում է մեզ ցանկությամբ՝ այնտեղ տուն ունենալու արժանի լինել, երբ մեր երկրային կյանքն ավարտվի: Հարության և երկնքի ու դժոխքի ճշգրիտ բացատրությունն այնքան հստակ է արված, որ սուրբ գրության խոսքերով ասած. «անգամ մտամոլոր ու տկարամիտ մարդը չի մոլորվի»: (Տես Եսայիա ԼԵ.8:)[15]

Նրա միջոցով հայտնի դարձվեց տաճարների կառուցումը, ամուսնական ուխտի հավերժական լինելը և մահացածների փրկագնումը՝ բերելով անասելի ուրախություն մեր Հոր հազարավոր զավակների:

Նրա կողմից հայտարարված հավերժական ճշմարտություններն իրենց ուղին են գտնում երկրագնդի ժողովուրդների մեջ, բերելով խաղաղություն և գոհություն նրանց, ովքեր ընդունում են դրանք:[16]

Մեր Երկնային Հայրը գիտեր, թե ինչ էր գալու, երբ այս վերջին օրերում նա վերականգնեց ավետարանն իր անաղարտությամբ: Նա գիտեր աշխարհում իր զավակների մեջ ուրացության մասին, և որ նրանք հեռացել էին պարզ ճշմարտությունից և իր մեծ ողորմածությամբ, Նա հայտնի դարձրեց այս վերջին օրերի աշխատանքը: Գյուղական միջավայրից Նա ընտրեց մի պատանու ժողովրդի միջից և ոգեշնչեց նրան սկսել աշխատանքը, որը նախասահմանված էր հեղափոխել կրոնական աշխարհը: Նա գիտեր, որ աշխարհը խարխափում էր խավարում և ողորմածությամբ վերականգնեց լույսը: Չկա այլ ճանապարհ, որ մարդկանց զավակները կարողանան երջանկություն վայելել, եթե ոչ արդարակյաց կյանքի միջոցով և մարդիկ չեն կարող արդարակյաց կյանքով ապրել և լինել անընդհատ աշնակության մեջ ճշմարտության հետ: Աշխարհում շատ ճշմարտություն կար, բայց այն խառնված էր սխալի հետ այնքան, որ Տերն անձնապես ասաց Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որ մարդիկ ովքեր ուսուցիչներ և հրահանգիչներ էին եկեղեցիներում, որպես վարդապետություն սովորեցնում էին մարդկային պատվիրաններ և նախազգուշացրեց պատանուն, որ նա չպետք

Ես ասում եմ բոլոր մարդկանց ամենուրեք, քննեք մեր Տիրոջ Ավետարանի ուսմունքները, ինչպես բացահայտվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին, հետազոտեք դրանք աղոթքով:

է հարի դրանց: Այնուհետև, նա վերականգնեց ավետարանը՝ Աստծո զորությունն ի փրկություն, բոլոր նրանց համար, ովքեր կհավատային և կհնազանդվեին:[17]

Ես ասում եմ բոլոր մարդկանց ամենուրեք, քննե՛ք մեր Տիրոջ Ավետարանի ուսմունքներն, ինչպես բացահայտվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին, հետազոտե՛ք դրանք աղոթքով և դուք կգտնեք բալասան այս աշխարհի ցավերի համար, քանզի այն ուրիշ ոչ մի այլ ձևով չի հայտնաբերվի:[18] (Տես առաջարկ 4 էջ 48:)

Ջոզեֆ Սմիթը հոժար էր տալ իր կյանքն իր վկայության համար:

Ինչպես նախկինում Տիրոջ բարձրացած մարգարեների դեպքում էր, այս դեպքում էլ թվում է անհրաժեշտ էր, որ Իր ծառայի վկայությունը պետք է կնքվեր իր կյանքի արյամբ: Աշխարհի պատմության մեջ հնարավոր չէ գտնել ավելի [դառը] էջ, քան այն, որի վրա գրվեց մեր սիրելի Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերջին խոսքերը: Նա գիտեր, որ իր ժամանակը մոտ էր՝ առձեռն, նա հասկանում էր որ իր կյանքի առաքելությունն ավարտվում էր. . . Եվ երբ ժամանակը եկավ, երբ նա երես առ երես հանդիպեց մահին, նա ասաց. «Ես գնում եմ ինչպես գառը՝ մորթվելու. Սակայն ես հանգիստ եմ, ինչպես ամառային առավոտը. Իմ խիղճը մաքուր է Աստծո առաջ և բոլոր մարդկանց առաջ: Եթե նրանք խլեն իմ կյանքը, ես կմեռնեմ անմեղ, և այնուամենայնիվ, իմ մասին կասվի,– նա սպանվեց սառնարյուն ձևով»: (Տես ՎևՈւ 135.4:)

Նա չվախեցավ կանգնել հաճելի դատարանի առջև. . . և պատասխանել այն գործերի համար, որոնք արվել էին մարմնում: Նա չէր վախենում պատասխան տալ մեղադրանքին, որն առաջ էր քաշվել նրա դեմ, թե նա խաբում է մարդկանց և մարդկանց հանդեպ անարդար է վարվում: Նա չէր վախենում իր կյանքի առաքելության արդյունքից և գործի վերջնական հաղթանակի համար, որը նա գիտեր որ աստվածային ծագում ուներ, և որի համար նա տվեց իր կյանքը: Սակայն աշխարհիկ մարդիկ, ինչպես նախկինում, դատում են նրա գործը մարդկային ոգով: Նրանք չունեն Աստծո Հոգին, որը նրանց հնարավորություն կտար հասկանալ, որ այն եկել է մեր Հորից, որ երկնքում է:[19]

Այս պատանին այնքան վստահ էր այն հայտնության վրա, որ ստացել էր, և այնքան անհանգստացած էր, որ իր Հոր զավակները՝ բոլորն իմանային ճշմարտությունը, որ այն ժամանակից ի վեր, երբ ստացավ Մորմոնի Գրքի թիթեղները Մորոնի հրեշտակից, նա նվիրեց ողջ իր կյանքը Եկեղեցու կազմակերպմանը և ճշմարտության տարածմանը. . . Նրա հոգում մի գիտելիք էր բոցավառվում ինչպիսին Ստեփանոսն ուներ (տես Գործք Է.54–60), ինչպիսին Քավիչն ուներ, որ մեր Երկնային Հայրը ղեկի մոտ է, որ սա Նրա գործն է երկրի վրա, որ Նրա զորությունն է, որ պիտի ի վերջո գերիշխի, որ այս կյանքը

ընդամենը հավերժության մի մասն է: Նա նախապատրաստված էր իր երկրային կյանքի մի մասից հրաժարվել, եթե անհրաժեշտ լիներ, որպեսզի կարողանար հավերժորեն վայելել այն ընկերակցությունը, որը նա այնպես անկեղծորեն սիրում էր և հաղորդակցումը լավ տղամարդկանց և կանանց, ովքեր ապրել են և իսկապես ապրում են և կրկին կապրեն երկրի վրա, երբ այն դառնա սելեստիալ արքայություն:[20]

Ջոզեֆ Սմիթն ուսուցանում էր, որ նա գիտի, որ այստեղից հետո կա կյանք և նա գիտի, որ Աստված ապրում է, և որ Աստված գիտի, որ ինքը գիտի, որ Աստված ապրում է: Նա հոժար էր տալ իր կյանքը, որպեսզի դուք իմ եղբայրներ և քույրեր, կարողանայիք ձեր հավատքը զորացնել, և որպեսզի ձեր վստահությունը նրա հանդեպ չտատանվեր: Նա գիտեր այս կյանքի նպատակը: Նա գիտեր, որ մենք այստեղ ենք պատրաստվելու ապագայի և ավելի փառավոր գոյության համար: Եվ նա հոժար էր, անհրաժեշտության դեպքում տալ իր սեփական կյանքը, ոչ թե պարզապես այն կորցնելու համար՝ հանուն մեր օգտի, այլ որովհետև գիտեր, որ Հայրն ասել է, որ ով կամենա իր անձը փրկել, կկորցնի այն, բայց ով կորցնի իր կյանքը հանուն Նրա, կգտնի այն, նույնիսկ կյանք հավերժական (տես Մատթեոս ԺԶ.25): Այս գիտելիքն էր, որ հնարավոր դարձրեց Մարգարեի և Եկեղեցու Հայրապետի [Հայրում Սմիթի] համար այն վաղ օրերին [ետևում թողնել] իրենց սիրելիներին՝ բանտարկվելու բանտում և տալու այն ամենն, ինչ ունեին այս կյանքում, որ մարդիկ կարող են տալ իրենց եղբայրներին՝ իրենց մահկանացու կյանքը:[21]

1830 թվականին Եկեղեցին կազմակերպվեց վեց անդամներով: Բոլոր արդարության հակառակորդն այդ օրվանից սկսած ձգտել է խոչընդոտել դրա առաջընթացը և կործանել այն: Ինձ հետաքրքիր է, թե այդ մեծ մարդը՝ Ջոզեֆ Սմիթը, ով տվեց իր կյանքը, որպեսզի Եկեղեցին կազմակերպվի և առաջ գնա ինչպես Տերն է նախատեսել, տեսնո՞ւմ է Եկեղեցին այնպես, ինչպես այն գոյություն ունի այսօր, իր ճյուղերը հաստատված աշխարհի բոլոր մասերում և հասկանում, որ յուրաքանչյուր օր նրա նահատակվելուց ի վեր, սկսած այն օրից, երբ նա վայր դրեց իր կյանքը և կնքեց իր վկայությունն իր արյամբ, Եկեղեցին դարձել է ավելի ուժեղ, քան մեկ օր առաջ էր:[22] (Տես առաջարկություն 5 էջ 48:)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ նախապատրաստվում եք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջ v–viii:

1. Մտածեք այն փորձառությունների մասին, որոնք Նախագահ Սմիթը նկարագրում է առաջին երեք պարբերություններում «Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից» բաժնում (էջեր 37–38): Ինչպիսի՞ փորձառություններ են զորացրել ձեր վկայությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին: Երբ կարդաք այս գլուխը, նշեք դրույթներ Նախագահ Սմիթի ուսմունքներից, որոնք ամրացնում են ձեր վկայությունը և մտածեք դրանցով կիսվել ձեր ընտանիքի անդամների, քահանայության քվորումի կամ Սփոփող Միության անդամների հետ:
2. Վերանայեք ուսմունքների առաջին բաժինը (էջեր 38–40) և վերանայեք Ջոզեֆ Սմիթի սեփական պատմությունն առաջին Տեսիլքի վերաբերյալ (տես Ջոզեֆ Սմիթ Պատմություն 1.10–19): Ինչպե՞ս է ազդել Առաջին Տեսիլքն աստծո հանդեպ ձեր հավատքի վրա: Ինչպե՞ս եք տեսել այն ազդելիս ուրիշների հավատքի վրա:
3. Ուսումնասիրեք 41 էջում սկսվող բաժինը և կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 1.17–19: Ի՞նչ կարող ենք սովորել Եկեղեցում ծառայելու Ջոզեֆ Սմիթի օրինակից: Մտածեք այն ժամանակի մասին, երբ ձեզ հանձնարարություն տրվեց Տիրոջից և ձեզ համապատասխան չէիք համարում: Ինչպե՞ս Տերն օգնեց ձեզ:
4. Որո՞նք են այն ճշմարտություններից մի քանիսը, որոնք Տերը բացահայտեց Ջոզեֆ Սմիթի միջոցով: (Այս ճշմարտությունների մի քանի օրինակներ տես այն բաժնում, որը սկսվում է 45 էջում:) Ինչպե՞ս է օրհնվել ձեր կյանքն այս ճշմարտություններն իմանալու շնորհիվ:
5. Երբ խորհեք ուսմունքների վերջին պարբերության մասին (էջ 47), մտածեք թե ինչ կարող եք անել օգնելու, որ Եկեղեցին շարունակի ուժեղանալ:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Եսայիա ԻԹ.13–14, Ա Կորնթացիս Ա.26–27, 2 Նեփի 3.5–9, 11–15, Վարդապետություն և Ուխտեր 135

Օգնություն ուսուցչին. «Քննարկում խրախուսելու համար օգտագործեք գլխի վերջում գտնվող հարցերը. . . Դուք կարող եք նաև կազմել ձեր սեփական հարցերը, հատկապես նրանց համար, ում դուք ուսուցանում եք: Օրինակ, դուք կարող եք հարցնել մասնակիցներին, թե ինչպես կարող են կիրառել Նախագահ Սմիթի ուսմունքներն իրենց պարտականություններում որպես ծնողներ կամ տնային ուսուցիչներ, կամ էլ այցելող ուսուցիչներ» (այս գրքի vi էջից):

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1906, 54.
2. Journal entry dated Dec. 23, 1905, George Albert Smith Family Papers, University of Utah, box 73, book 2, page 160.
3. In Conference Report, Apr. 1906, 56.
4. In Conference Report, Apr. 1906, 57–58.
5. In Conference Report, Apr. 1946, 181–82.
6. Harold B. Lee, in Conference Report, Oct. 1947, 67.
7. In Conference Report, Oct. 1921, 158–59.
8. "The Latter-day Prophet," *Millennial Star,* Dec. 7, 1905, 822.
9. In Conference Report, Oct. 1921, 159–60.
10. In Conference Report, Apr. 1917, 37.
11. In Conference Report, Oct. 1921, 159–60.
12. In Conference Report, Apr. 1927, 83.
13. "The Latter-day Prophet," 823.
14. In Conference Report, Oct. 1921, 160.
15. In Conference Report, Apr. 1934, 26.
16. "The Latter-day Prophet," 823.
17. In Conference Report, Oct. 1916, 46–47.
18. In Conference Report, Oct. 1931, 121.
19. In Conference Report, Apr. 1904, 63–64.
20. In Conference Report, Oct. 1927, 48.
21. In Conference Report, Apr. 1905, 62–63.
22. In Conference Report, Oct. 1945, 18.

«Հետաքրքիր է, երբ տղան սարկավագ է կարգվում հայրն արդյոք նրան զգացնել տալիս է, որ ինքն այժմ ունի մի բան, որը հավերժորեն կարևոր է»:

Սուրբ Քահանայությունն Աստծո զավակների օրհնության համար

Քահանայությունն աստծո իշխանությունն է: Նրանք, ովքեր կրում են քահանայություն, պետք է արժանի լինեն և օգտագործեն այն ուրիշներին օրհնելու համար:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

1948 թվականի հոկտեմբերի 2-ի գերագույն համաժողովի քահանայության նիստի ընթացքում Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթն ասաց.

«Երբեմն մտածում եմ, թե որդյոք որպես հայրեր մենք ջանք գործադրում են բացատրելու մեր տղաներին վերցրած պարտականության կարևորությունը, երբ տղան սարկավագ է դառնում: Հետաքրքիր է, երբ տղան սարկավագ է կարգվում հայրն արդյոք նրան զգացնել տալիս է, որ ինքն այժմ ունի մի բան, որը հավերժորեն կարևոր է: . . .

«Հիշում եմ, կարծես թե երեկ էր, երբ Ջոն Թինգին դրեց իր ձեռքերը գլխիս և կարգեց ինձ սարկավագ: Ինձ այդ հարցն ու դրա կարևորությունն այնպես ներկայացվեց, որ ես զգացի, որ դա մեծ պատիվ էր: Արդյունքն այն եղավ, որ դա օրհնություն եղավ ինձ համար, իսկ հետո, որոշ ժամանակ անց, ես այլ կարգումներ ստացա: Բայց յուրաքանչյուր դեպքում դրվեց հիմք իմ մտքում, որ ահա կար մեկ ուրիշ օրհնության հնարավորություն»:[1]

Նույն ելույթում Նախագահ Սմիթն ուսուցանեց, որ օրհնություններից մեկը, որը գալիս է քահանայության կարգումից՝ ուրիշների կյանքն օրհնելու հնարավորությունն է: Որպես օրինակ

նա պատմեց մի ազդեցիկ քահանայություն կրողի՝ իր պատանեկության տարիների մի տնային ուսուցչի մասին։

«Ռոդնի Բաղգերն իմ հայրական տան ուսուցիչն էր տարիներ շարունակ և հիանալի մարդ էր։ Երբ նա գալիս էր ընտանիքը հավաքվում էր և նա նստում էր մեզ հարցեր տալիս և պատմում մեզ այն բաները, որոնք նա գտնում էր, որ մենք պարտավոր էինք հասկանալ։ Եվ ես ուզում եմ ասել, որ երբ նա գալիս էր մեր տուն, նա բերում էր Տիրոջ հոգին իր հետ։ Եվ երբ նա դուրս էր գալիս, մենք զգում էինք, որ Տիրոջ ծառան էր մեզ այցելել»։[2]

Նախագահ Սմիթը եզրափակեց արտահայտելով իր ցանկությունը, որ քահանայություն կրողները ծառայեն իրենց ծխերի և ցցերի անդամներին և «հնարավորությունը բաց չթողնեն՝ օգնելու բարձրացնելու և զարգացնելու ու նրանց այնպիսին դարձնելու համար, ինչպիսին մեր Հայրն է կամենում, որ նրանք լինեն»։[3] (Տես առաջարկություն 1 էջ 60։)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Հիսուս Քրիստոսը վերականգնեց աստվածային իշխանությունը երկրի վրա Իր մահկանացու ծառայության ընթացքում։

Երբ Փրկիչը եկավ ժամանակի գագաթնակետին, նա գտավ այդ մեծ քաղաք Երուսաղեմը չարով լցված։ Բնակիչներն ապրում էին այն ձևով, որ նրանք կորցրել էին աստվածային իշխանությունը, այսպիսով, [Աստված] ուղարկեց Իր Որդուն աշխարհ և կրկին սկիզբ դրեց մի Եկեղեցու, որն ուներ աստվածային զորություն. . . Նրա շառավղում կային լավ մարդիկ. . . և կային ուրիշները, ովքեր դեռ պաշտոնավարում էին Քահանայությունում, բայց անհրաժեշտ էր Փրկչի համար գալ վերականգնելու աստվածային իշխանությունը։ . . .

. . .Երբ Նա սկսեց Իր ծառայությունը, Նա չկանչեց Իրեն օգնելու թագավորների և կառավարիչների ու քահանաների և նրանց, ովքեր բարձր էին իշխանությամբ, այլ նա կանչեց խոնարհ ձկնորսների և արդյունքում Նա Իր շուրջը հավաքեց մարդկանց, ովքեր կարող էին ուսուցանվել և ոչ թե մարդիկ, ովքեր չէին կամենում հավատալ Նրան։ Նա կազմակերպեց

Եկեղեցի Երկնային Հոր առաջնորդությամբ։ Նա Իր ընկերակիցներին օժտեց աստվածային իշխանությամբ և ուղղորդեց նրանց, թե ինչ պետք է նրանք անեին. . . Նա ուներ աստվածային իշխանություն և արդարներն ընդունեցին Նրան որպես Աստծո Որդի։ Ոմանք կարծում են, որ Նա ուղղակի լավ մարդ էր։ Մենք հավատում ենք, որ Նա եկավ երկիր ոչ միայն ուսուցանելու ժողովրդին թե ինչ անեն, այլ օժտելու Իր ընկերակիցներին աստվածային իշխանություն՝ Իր Եկեղեցու արարողությունները սպասավորելու համար։ . . .

Փրկչի օրերում Նա էր նախագահող իշխանությունը։ Նրան հաջորդեց Իր կողմից ընտրված տասներկու մարդկանց քվորումը։ Երբ Նա մահացավ, Տասներկուսի Քվորումը, ոչ թե մի շարք սովորական մարդիկ, ովքեր իրենց անվանեցին աշակերտներ, այլ տասներկու մարդկանցից կազմված քվորումը, ովքեր ունեին աստվածային իշխանություն և ստացել էին դա Հիսուս Քրիստոսից, դարձան Եկեղեցու ղեկավարությունը։[4] (Տես առաջարկություն 2 էջ 60։)

Քահանայությունը վերականգվեց մեր օրերում մարդկանց կողմից, ովքեր հին ժամանակ կրել էին այն։

Հետո, երբ [Հիսուս Քրիստոսը] թողեց երկիրը, երկնքում և երկրի վրա արձանագրվել է և ընդունվել, որ դավանանքներն ու աղանդները բազմացան և եկեղեցիները թվով աճեցին երկրի վրա, մինչև որ Ջոզեֆ Սմիթի՝ մեր սիրելի մարգարեի օրերին կային բազմաթիվ դավանանքներ։ Կային շատ մարդիկ, ովքեր ձևացնում էին, որ ունեին աստվածային իշխանություն, և ես կարծում եմ, նրանցից ոմանք մտածում էին, որ ստացել էին այն։ . . .

Երբ ժամանակը եկավ և աշխարհը կորցրեց Քահանայության իշխանությունը, Տերը կանչեց մի խոնարհ պատանու և տվեց նրան երկնային հայտնություն և խոսեց նրա հետ, ասաց նրան, թե ինչ պետք է աներ և ուղարկեց ուրիշ սուրհանդակներ և երկնային էակներ, ժամանակ առ ժամանակ, որի արդյունքում կազմակերպվեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին և այդ Եկեղեցուն տրվեց աստվածային իշխանություն։ . . .

«Մարդիկ, ովքեր նախկինում կրել էին Քահանայություն, եկան և շնորհեցին այդ Քահանայությունը խոնարհ մարդկանց»:

Երբ Ջոզեֆ Սմիթը երիտասարդ տղամարդ էր, Տերը հանձնարարեց նրան թարգմանել Մորմոնի Գիրքը: Մի առիթով, երբ Ջոզեֆը և Օլիվեր Քաուդերին թարգմանում էին, Տերն ուղարկեց մի սուրբ էակի՝ պատասխանելու մկրտության վերաբերյալ նրանց հարցերին: Ո՞վ էր նա, որ եկավ: Հովհաննես Մկրտիչը, որը կրում էր Ահարոնյան Քահանայությունը: Որտեղի՞ց նա եկավ: Նա եկավ երկնքից. . . Նա հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին որպես փառահեղ հարություն առած էակ: Նա մեր Երկնային Հոր հանձնարարությամբ եկավ շնորհելու Ահարոնյան Քահանայություն Ջոզեֆին և Օլիվերին, քանզի ողջ աշխարհում ոչ մի տեղ այն չկար: Անհրաժեշտ էր, որ երկինքները բացվեին և մարդը, որը կրել էր այդ Քահանայությունը և դեռ կրում էր, գար և շնորհեր այն:

Դրանից հետո Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, ովքեր կրում էին Մելքիսեդեկյան քահանայություն, շնորհեցին այդ

քահանայությունը Ջոզեֆին և Օլիվերին, և Տերը ղեկավարում էր Եկեղեցու կազմակերպությունը, Նախագահությամբ, որը բաղկացած էր նախագահից և երկու խորհրդականներից, նաև Տասներկու Առաքյալների Քվորումից, Հայրապետից, Քահանայապետերից, Յոթանասունականներից, Երեցներից, Քահանաներից, Ուսուցիչներից և Սարկավագներից, նույնպիսի կազմակերպություն, որը գոյություն ուներ սկզբնական եկեղեցում, որքանով որ իշխանությանն էր վերաբերում։[5]

Նույն իշխանությունը, որ [Ջոզեֆ Սմիթն] ուներ, շնորհվել է ձեր որդիներին և նրանցից կպահանջվի մեր Հոր կողմից սպասավորել Ավետարանի արարողությունները։ Պատասխանատվությունը, որը եկավ Ջոզեֆ Սմիթին, չէր կորել նրա հեռանալով, այն ընկել էր ուրիշի ուսերին։ Մեր Երկնային Հայրը ժամանակ առ ժամանակ բարձրացրել է նրանց, ովքեր իշխանություն են ունեցել խոսելու Նրա անունով, սպասավորելու Ավետարանի արարողությունները և օրհնելու մարդկանց որդիներին։ Նրանք այդ պատվով կիսվել են ձեզ հետ և ձեր երեխաների հետ։[6]

Երախտապարտ եմ, որ այս օրերում և դարում Տերը կրկին հայտնի է դարձրել Ավետարանը։ Հայրը և Որդին հայտնվել են, մարդիկ ովքեր նախկինում կրել էին Քահանայություն, եկան և շնորհեցին այդ Քահանայությունը խոնարհ մարդկանց, և նրանք իրենց հերթին կարգադրվեցին շնորհել այն ուրիշների։ Այդպիսով, Ավետարանը և Քահանայությունը հասանելի դարձան բոլոր նրանց, ովքեր կորակավորվեն ստանալու նույնը, և դա Տիրոջ ուղով է։[7]

Դուք, տղամարդիկ, ովքեր կրում եք Քահանայությունը, ձեր առաքելությունը նշանավոր է։ Ձեզ շնորհվել է աստվածային իշխանություն։ Դուք չեք ձեռք բերել իրավունք քարոզելու և ուսուցանելու ավետարանը և պաշտոնավարելու դրա արարողությունները քոլեջում կամ համալսարանում ուսանելու հետևանքով։ Դուք ստացել եք ձեր իշխանությունը մարդկանցից, որոնք աստվածային լիազորություն են ունեցել գործելու որպես Տիրոջ ծառաներ և դա շնորհվել է ձեզ նրանց կողմից, ովքեր այն ստացել են անմիջապես Հիսուս Քրիստոսից՝ մեր Տիրոջից։[8] (Տես առաջարկ 3 էջ 60։)

Աստծո զորությունն ու իշխանությունը կարող է գտնվել միայն Իր ճշմարիտ Եկեղեցում:

Եղել են մարդիկ ովքեր հարցրել են ինձ. «Ինչպիսի՞ առավելություն ունի ձեր Եկեղեցին որոշ այլ եկեղեցիների համեմատ»: Ես փորձել եմ նրբանկատորեն բացատրել նրանց տարբերությունը: Ցանկացած կազմակերպություն կարող է միավորվել մեկտեղ՝ երկրպագելու համար, բայց դա չի տալիս նրանց աստվածային իշխանություն: Եկեղեցիների ցանկացած խումբ կարող է հավաքվել միասին և կարող է ստեղծել եկեղեցիների համայնք: Այն չի շնորհում նրանց աստվածային իշխանություն: Տղամարդիկ կարող են միանալ բարի նպատակներով, բայց իշխանությունը մեր Երկնային Հոր կողմից ձեռք է բերվում միայն իր ուղով և նրա ուղին նախկինում տղամարդկանց կանչելն էր և կարգելը և ձեռնադրելն այդ աշխատանքի համար: Նույնը ճշմարիտ է մեր օրերում: . . .

Մարդկանց պետք է օգնել հասկանալ, որ ուղղակի Տիրոջ առջև խոնարհվելն աղոթքով նրանց չի տալիս աստվածային իշխանություն: Ազնվության, առաքինության, ճշմարտության և այլ պահանջներով ապրելը նրանց չի տալիս աստվածային իշխանություն և այն պնդումը, որ մենք ունենք այդ իշխանությունը, դա է այս Եկեղեցու վրա բերել հալածանքի մեծ մասը, որը հետապնդել է նրան սկզբից ի վեր: Բայց սա է ճշմարտությունը և մեր Հոր զավակներից շատերը սկսում են նկատել աստվածային իշխանության ազդեցությունն այս Եկեղեցում:[9] (Տես առաջարկ 4 էջ 60:)

Ես անձնապես չեմ ցանկանում մարդիկ մտածեն, որ ես սխալներ եմ փնտրում և քննադատում եմ այն մարդկանց, ովքեր պատկանում են աշխարհի տարբեր դավանանքներին: Ես երախտապարտ եմ, որ կան այդքան շատ բարի տղամարդիկ և կանայք, ովքեր հավատում են նրան և ունեն լույս, որով ծառայում են Աստծուն. բայց փաստը մնում է այն, որ մեր Հայրը հիմնադրել է իր Եկեղեցին այս աշխարհում: Նա շնորհել է մարդկանց այս օրերում իր իշխանությունը և չկա որևէ այլ իշխանություն այս աշխարհում, որ նա կճանաչի, բացի նրանից, որը նա ինքն է հիմնադրել:[10] (Տես առաջարկ 5 էջ 60:)

Քահանայության արարողությունները կարևոր են մեզ համար սելեստիալ արքայություն մտնելու համար:

Եթե մենք նման լինեինք բոլոր այլ կրոններին, մենք կկարողանայինք որոնել Տիրոջը և ստանալ նրա օրհնությունները, որովհետև ամեն մարդ, որը բարիք է անում այս աշխարհում ստանում է իր օրհնությունները. մենք հնարավոր է ունենայինք բոլոր գլխավոր արժանիքները և դարձնեինք դրանք մեր սեփականը, բայց առանց Աստծո զորության և սուրբ Քահանայության իշխանության հնարավոր չէ մարդկանց հասնել սելեստիալ արքայություն:[11]

Միակ ծրագիրը, որը կպատրաստի մարդկանց Սելեստիալ արքայության համար, այն ծրագիրն է, որը տրվել է Հիսուս Քրիստոսի կողմից, և միակ իշխանությունը, որը կորակավորի մարդկանց պատշաճորեն ուսուցանել և պաշտոնավարել Ավետարանի արարողությունները, Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ իշխանությունն է:[12]

Ջոզեֆ Սմիթ կրտսերը կանչվեց Աստծո կողմից լինել Իր մարգարեն և նրա միջոցով վերականգվեց Սուրբ Մելքիսեդեկյան Քահանայությունը, որն Իր անունով գործելու մարդկանց լիազորված Աստծո զորությունն է: Այս Քահանայության միջոցով՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանի յուրաքանչյուր արարողություն, որն անհրաժեշտ է մարդկանց որդիների փրկության համար, հեղինակավորությամբ սպասավորվում է:[13]

Ինչպե՞ս կազդեր մեզ վրա, եթե մենք բաժանվեինք իշխանությունից, որն աստված շնորհել է մեզ: Դա կնշանակեր, որ սելեստիալ արքայության դռները կփակվեին մեզ համար: Դա կնշանակի, որ չի իրականանա այն մեծագույն օրհնությունը, որի ուղղությամբ ես ուսուցանվել եմ նայել սկսած երեխա ժամանակից. . . Իմ սիրելիների ընկերակցությունը. . . ովքեր գրեթե կյանքիս չափ թանկ են ինձ համար, հնարավոր չի լինի վայելել սելեստիալ արքայությունում:[14]

Քահանայությունը. . . մի օրհնություն է, որը եթե հավատարիմ լինենք, կբացի սելեստիալ արքայության դռները և կտա մեզ տեղ այնտեղ ապրելու հավերժության դարերի ընթացքում: Թեթևամտորեն մի մոտեցեք այս անգին օրհնությանը:[15] (Տես առաջարկ 6 էջ 60:)

Քահանայություն կրողները պատասխանատվություն ունեն ապրել օրինակելի կյանքով և օգտագործել քահանայությունն ուրիշներին օրհնելու համար:

Որքան գեղեցիկ է հասկանալ, որ մարդիկ, ովքեր արժանի են, կարող են ստանալ քահանայությունը և այն իշխանությամբ, որը տրվում է նրանց, անել այնքան բաներ, որոնք օրհնություն կլինեն մեր Հոր մյուս զավակների համար:[16]

Դուք չեք կարող դուրս գնալ աշխարհ որևէ այլ եկեղեցի կամ բոլոր մյուս եկեղեցիները և գտնել. . . մարդկանց ովքեր կրում են աստվածային իշխանություն: Մի մոռացեք դա: Դուք պատկանում եք տղամարդկանց ընտրյալ մի խմբի. . . որոնց վրա են դրվել ձեռքեր, և որոնք ստացել են աստվածային իշխանություն, դարձնելով ձեզ ընկերակիցներ Երկնքի և Երկրի Տիրոջ հետ: Ես ի նկատի չունեմ, որ դուք չեք կարող ծիծաղել, ժպտալ և վայելել կյանքը, բայց ի նկատի ունեմ, որ պետք է յուրաքանչյուրի հոգում լինի խորը գիտակցություն, որ «Ես եմ իմ եղբոր պահապանը: Ես եմ կրում Տեր Հիսուս Քրիստոսի կողմից իշխանություն, ես Սուրբ Քահանայություն կրող եմ»: Եթե մենք անենք այս, մենք թեթևամտորեն չենք մոտենա սրբազան բաներին, ինչպես ոմանք են արել անցյալում:[17]

Փաստը, որ նրանք կրում են Քահանայություն, շատ մարդկանց համար կլինի դատապարտություն, այն ձևի համար, որով նրանք վերաբերվել են դրան, համարելով այն իբրև ինչ-որ մի շատ սովորական բան:[18]

Որոշ տղամարդիկ մտածում են, քանի որ իրենք Քահանայություն են կրում, այն տալիս է նրանց հատուկ միջոց, որի միջոցով նրանք կարող են իրենց պահել տանը: Ես ուզում եմ ասել ձեզ, տղամարդի՛կ, ովքեր Քահանայություն եք կրում, դուք երբեք չեք մտնի Սելեստիալ Արքայություն, մինչև չպատվեք ձեր կանանց և ձեր ընտանիքներին և չուսուցանեք և չտաք նրանց այն օրհնությունները, որոնք դուք ուզում եք ձեզ համար:[19]

Երկնային Հոր իշխանությունը երկրի վրա է մարդկության օրհնության համար, ոչ թե այդ իշխանությունը ստացողներին գոռոզ դարձնելու, այլ նրանց խոնարհեցնելու. ոչ թե դարձնելու նրանց, ովքեր հատուկ արտոնություններ են ստացել զգալ, որ իրենք ավելի մեծ են, քան ուրիշները, այլ դարձնելու խոնարհ

մեր հոգիներում, աղոթքով լի՝ մեր սրտերում և հոգատար բոլոր մարդկանց հանդեպ բոլոր բաներում, որ մենք անում ենք, և այսպիսով, շիտակ կյանքով օրինակելով այն, ինչ մեր Երկնային Հայրն է ցանկանում, որ մենք սովորենք։[20]

Եկեղեցու անդամ լինելն ու Քահանայություն կրելը մեզ չի տանի ոչ մի տեղ, մինչև արժանի չլինենք։ Տերն ասել է, որ ամեն մի օրհնություն, որ մենք ցանկանում ենք, ստորոգվում է Նրա պատվիրաններին հնազանդվելով։ Մենք կարող է խաբենք մեր հարևաններին և մենք կարող է խաբենք ինքներս մեզ այն գաղափարով, որ մեզ մոտ ամեն ինչ կարգին է, սակայն մինչև չպահենք մեր Երկնային Հոր պատվիրանները, մինչև չկրենք արժանիորեն այս սուրբ Քահանայությունը, որը շատ թանկարժեք է, մենք չենք գտնի մեր տեղը սելեստիալ արքայությունում։[21]

Դուք, եղբայրներ. . . ձեր վրա եք վերցրել սրբազան հնարավորություն, սրբազան վստահություն։ Դուք ստացել եք սուրբ Քահանայության օրհնությունները։ Ձեզ շնորհվել է Աստվածային իշխանություն և այդ իշխանությամբ եկել է պատասխանատվություն՝ բարձրացնելու ձեր ձայնը և ապրելու ձեր կյանքն այնպես, որպեսզի աշխարհի ժողովուրդը կարողանա տեսնել Հիսուս Քրիստոսի Ավետարանի և աշխարհի մյուս կազմակերպությունների միջև եղած տարբերությունը։[22]

Ուր էլ որ դուք գնաք, պահեք ձեր մտքում այն փաստը, որ դուք ներկայացնում եք նրան, ով մեր գոյության հեղինակն է։ Քահանայությունը, որ դուք կրում եք, Ջոզեֆ Սմիթի կամ Բրիգամ Յանգի կամ որևէ այլ մարդու քահանայությունը չէ, ովքեր կանչվել են Եկեղեցու առաջնորդներ տանը կամ արտասահմանում։ Քահանայությունը, որ դուք կրում եք, Աստծո զորությունն է, որը ձեզ է շնորհվել ի վերուստ։ Սուրբ էակներ պետք եղավ ուղարկել երկիր. . . որպեսզի վերականգվեր այդ փառահեղ օրհնությունը, որը կորել էր երկրից հարյուրավոր տարիներ։ Անշուշտ, մենք պետք է երախտապարտ լինենք մեր օրհնությունների համար։[23]

Ես աղոթում եմ, որ Տերն օրհնի մեզ բոլորիս, որ մենք արժանի լինենք կրելու քահանայությունը, որ Նա է տվել մեզ և շնորհել այն մեզ, որպեսզի ուր էլ որ գնանք, մարդիկ կարողանան ասել. «Այդ մարդը Տիրոջ ծառան է»։[24] (Տես առաջարկ 7 էջ 61։)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես v–viii էջեր։

1. Մտածեք Նախագահ Սմիթի փորձառությունների մասին, որոնք նկարագրված են 51–53 էջեր։ Ի՞նչ կարող ենք անել մենք՝ օգնելու երիտասարդ տղամարդկանց նախապատրաստվել ձեռնադրվելու քահանայության պաշտոններում։ Ի՞նչ կարող ենք անել մենք՝ օգնելու երիտասարդ կանանց հասկանալ քահանայության զորության կարևորությունը մեր կյանքում։ Ինչո՞ւ է կարևոր տղամարդկանց և կանանց համար սովորել քահանայության մասին։
2. Ինչո՞ւ էր «անհրաժեշտ Փրկչի համար. . . վերականգնել աստվածային իշխանությունը» (էջ 53) Իր երկրային ծառայության ընթացքում, ի լրումն ավետարանի ուսուցման։
3. Կարդացեք 55 էջը և 56 էջի առաջին պարբերությունը։ Ձեր կարծիքով պաշտոնական ուսուցում ստացած մի քանի մարդկանցով սահմանափակվելու փոխարեն, Տերն ինչո՞ւ է Իր իշխանությունը հասանելի դարձնում բոլոր արժանի տղամարդկանց։
4. Նախագահ Սմիթը խոսել է «այն զարգացման մասին, որը կատարվում է տղամարդկանց և կանանց կյանքում» քահանայության շնորհիվ (էջ 56)։ Ի՞նչ է նշանակում այս միտքը ձեզ համար։ Ի՞նչ կարող եք անել դուք մեծացնելու քահանայության զորությունն ու ազդեցությունը ձեր կյանքում։
5. Երբ աչքի անցկացնեք 56 էջում սկսվող բաժինը, մտածեք թե ինչպես դուք կարձագանքեք, եթե ինչ-որ մեկն ուղղի ձեզ այն հարցը, որը տրվել է Նախագահ Սմիթին. «Ինչո՞վ է առավել ձեր եկեղեցին ուրիշ եկեղեցիներից»։
6. Ուսումնասիրեք 57 էջում սկսվող բաժինը։ Որոնք են այն մի քանի «անգին օրհնությունները», որոնք դուք ստացել եք քահանայության շնորհիվ։

7. Երբ ուսումնասիրեք ուսմունքների վերջին բաժինը (58–59 էջեր), որոնեք այն պարտականությունները, որոնք Նախագահ Սմիթն ասում է, որ գալիս են քահանայության հետ: Ի՞նչ կարող են անել քահանայության քվորումի անդամները միմյանց աջակցելու իրենց պարտականություններում: Ինչպե՞ս կարող են կանայք օգնել քահանայություն կրողներին հավատարիմ մնալ այդ պարտականություններին: Ի՞նչ կարող են անել քահանայություն կրողներն աջակցելու կանանց իրենց աստվածային դերը կատարելիս:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Հովհաննես ԺԵ.16, Ալմա 13.1–3, 6–10; Վարդապետություն և Ուխտեր 84.19–22, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.68–72; Հավատո Հանգանակ 1.5

Օգնություն ուսուցչին. «Վկայեք ամեն անգամ, երբ Հոգին հուշում է ձեզ, ոչ թե ուղղակի ամեն դասի վերջում: Հնարավորություններ ապահովեք նրանց համար, ում դուք ուսուցանում եք, բերելու իրենց վկայությունները» (*Teaching, No Greater Call,* 45):

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1948, 180–81.
2. In Conference Report, Oct. 1948, 186.
3. In Conference Report, Oct. 1948, 190.
4. "The Church with Divine Authority," *Deseret News,* Sept. 28, 1946, Church section, 6.
5. "The Church with Divine Authority," 6.
6. In Conference Report, Apr. 1904, 64.
7. In Conference Report, Apr. 1934, 28–29.
8. In Conference Report, Apr. 1927, 83.
9. In Conference Report, Apr. 1934, 28–29.
10. In Conference Report, Apr. 1917, 37–38.
11. In Conference Report, Oct. 1926, 106.
12. In Conference Report, Apr. 1934, 30.
13. "Message to Sunday School Teachers," *Instructor,* Nov. 1946, 501.
14. In Conference Report, Apr. 1925, 65.
15. In Conference Report, Apr. 1949, 191–92.
16. In Conference Report, Oct. 1950, 6.
17. Seventies and stake missionary conference, Oct. 4, 1941, 7.
18. In Conference Report, Apr. 1948, 184.
19. In Conference Report, Apr. 1948, 184.
20. In Conference Report, Oct. 1928, 94.
21. In Conference Report, Apr. 1943, 91–92.
22. In Conference Report, Oct. 1933, 25.
23. In Conference Report, Oct. 1945, 118.
24. In Conference Report, Oct. 1950, 182.



«Ես ընդամենը մարդ եմ, ձեր միջի խոնարհներից մեկը, բայց ես կանչվել եմ այս ծառայությանը. . . մեր Երկնային Հոր իշխանությամբ»:

Հաստատել նրանց, ում Տերն է հաստատում

Մեր ղեկավարները ընտրվում են Տիրոջ կողմից, և Նա ակնկալում է մեզանից, որ մենք կհաստատենք նրանց խոսքով և գործով:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Ջորջ Ալբերտ Սմիթը հաստատվել է Եկեղեցու Նախագահ 1945 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ: Համաժողովի ավարտին մոտ Նախագահ Սմիթն արտահայտեց երախտագիտություն Սրբերի հաստատող քվեի համար. «Ես շնորհակալություն եմ հայտնում այն վստահության համար, որը ցույց տրվեց, իմ եղբայրներ և քույրեր, հուսալով, որ ես գուցե հաջողության հասնեմ և խոստանալով, ինչպես ձեզանից ոմանք, որ դուք կօգնեք ինձ հաջողության հասնել, որովհետև ես ընդամենը մարդ եմ, ձեր միջի խոնարհներից մեկը, բայց ես կանչվել եմ այս ծառայությանը, և ես այստեղ չէի լինի, եթե չիմանայի, որ կանչվել եմ Երկնային Հոր իշխանությամբ»:

Ապա նա ավելացրեց այս խնդրանքը. «Ես յուրաքանչյուր տղամարդու, յուրաքանչյուր կնոջ և յուրաքանչյուր երեխայի օգնության կարիքը կունենամ, ոչ թե իմ օրհնության համար, այլ ձեր օրհնության և մարդկանց որդիների օրհնության, որտեղ էլ որ նրանք լինեն: Սա *իմ* պատասխանատվությունը չէ, սա *մեր* պատասխանատվությունն է»:[1]

Ինչպես այս գլխում ցույց է տրվում, Ջորջ Ալբերտ Սմիթը հասկանում էր ծանր բեռները, որ կրում էին Առաջին Նախագահության անդամները, նույնիսկ նախքան Եկեղեցու Նախագահ դառնալը: Նա ուսուցանել է Սրբերին, որ նրանց անձնվիրությունը և հավատարմությունը կարող է օգնել թեթևացնել այդ բեռները, և նա օրինակով ցույց էր տալիս այդ

սկզբունքը Տասներկու Առաքյալների Քվորումում իր ծառայության ընթացքում:

1946 թվականին, երբ նա վարում էր գերագույն համաժողովի մի նիստ, Նախագահ Սմիթը հաստատման ներկայացրեց Եկեղեցու պաշտոնյաներին՝ բացատրելով, որ դա ավելին է, քան ուղղակի պասիվ մի գործողություն. «Մենք այժմ ունենք գործունեության մեկ կարգ, որոնք սովորական են այս Համաժողովներում, այսինքն՝ Եկեղեցու Իշխանավորների ներկայացումը ժողովրդի քվեարկությամբ հաստատման համար: Հուսով եմ, որ դուք կհասկանաք, դո՛ւք, բոլո՛րդ, որ սա սրբազան արտոնություն է: Այն չի լինի ուղղակի որպես խորհրդանշան, այլ այն կլինի որպես արտահայտություն, որ Տիրոջ օգնությամբ, դուք կկրեք աշխատանքի ձեր մասը»:[2] (Տես առաջարկ 1 էջ 73:)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Նրանք, ովքեր նախագահում են Եկեղեցու վրա, նախապատրաստված են, ընտրված և ոգեշնչված՝ Տիրոջ կողմից:

Այս մեծ Եկեղեցին նախագահել են մարդիկ, ովքեր հատուկ նախապատրաստվել են, հատուկ ուսուցանվել, հատուկ սպառազինվել այդ բարձր պատվի համար, որը շնորհվել է նրանցից յուրաքանչյուրին, երբ որ նրանք զբաղեցրել են իրենց տեղը: Մեր Երկնային Հայրն իր իմաստությամբ շրջապատել է Իսրայելի այս ղեկավարներին ուրիշ ղեկավարներով, ովքեր իրենց նման հավատք ունեն, և ովքեր չեն խոնարհվում անձին կամ անհատին որպես Եկեղեցու նախագահի, այլ ովքեր ճանաչում են նրան որպես մեր Երկնային Հոր խոսնակի և հաստատում նրան ու բարձր պահում և աղոթում նրա համար և սիրում նրան, որպեսզի նրանք նույնպես կարողանան ստանալ մեր Երկնային Հոր օրհնությունները:

Աշխարհում չկա սրա նման որևէ այլ կազմակերպություն: Չկա որևէ այլ ժողովուրդ, [ովքեր] առաջնորդվում են ինչպես այս ժողովուրդն է առաջնորդվում: Ճիշտ է ասված, որ նրանք, ովքեր նախագահում են, արդար մարդիկ են: Նրանց միջոցով է, որ ավետարանը պետք է ուսուցանվի. . . Մարդը, որը նախագահում է մեզ այսօր, չի նախագահում իր բնական ունակությամբ:

Նա չի նախագահում, որովհետև ինչ-որ մեծ տիրակալի որդին է, այլ նա իր զբաղեցրած պաշտոնում է, որովհետև մեր Երկնային Հայրը գիտի նրա հոգու ազնվության մասին: Գիտենալով նրա վճռականությունը, որ նա ունի տանելու այս ուղերձը երկրագնդի բոլոր ազգերին, նա պատրաստել է նրան այս բարձր կոչմանը, որը շնորհվել է նրան: Նա նախագահում է որպես մեր Երկնային Հոր ներկայացուցիչ:[3]

Այսօր ես մտածում եմ այն խոնարհ, բայց մեծ մարդկանց մասին, ովքեր առաջնորդել են այս Եկեղեցին իր կազմավորումից սկսած. . . Ես լավ ծանոթ եմ եղել [Եկեղեցու] Նախագահներից [շատերին] և հավատում եմ, որ նրանք բոլորն Աստծո մարդիկ էին: Աներևակայելի է, որ Երկնային Հայրն ընտրեր որևէ այլ կարգի մարդկանց՝ նախագահելու իր Եկեղեցու վրա:[4]

Ի՞նչ պատահեց, երբ [Ջոզեֆ Սմիթը] մահացավ. . . [Սրբերը] չհրավիրեցին առանձնաժողով՝ ընտրելու նախագահ և գտնելու նոր առաջնորդ: Առաջնորդն արդեն ընտրված էր Տիրոջ կողմից: Նա Տասներկուսի Քվորումի ավագ անդամն էր՝ Բրիգամ Յանգը. . . Եկեղեցին որպես կազմակերպություն իր բոլոր նիստերում հաստատեց նրան որպես Նախագահ: Երբ նա մահացավ, նրա խորհրդականները չասացին, որ իրենք են Նախագահը, բայց Տասներկուսի Քվորումը նախագահեց երկար ժամանակ, իսկ հետո նրանց ավագ անդամը հաստատվեց որպես Եկեղեցու Նախագահ: Կատարյալ կարգը հաղթանակեց: . . .

Ես անդրադարձա այս բաներից մի քանիսին, որպեսզի ոչ մի սխալ չառաջանա: Ջոզեֆ Սմիթն իրեն չընտրեց Եկեղեցու Նախագահ: Ոչ էլ որևէ մեկը, ովքեր հետևեցին նրան. . . Նշանակումը գալիս է մեր Երկնային Հորից՝ Իր ոգեշնչման միջոցով և մարդիկ ստանում են ողջ զորությունը, որը գալիս է նշանակման հետ:[5]

Որքան երախտապարտ մենք պետք է լինենք իմանալով, որ այս աշխատանքը մարդու աշխատանք չէ, այլ Տիրոջ գործն է, որ այս Եկեղեցին, որը կրում է Հիսուս Քրիստոսի անունը, ղեկավարվում է նրա կողմից, և նա թույլ չի տա ոչ մի մարդու կամ մարդկանց խմբի կործանել այն: Նա թույլ չի տա, որ մարդիկ, ովքեր նախագահում են Եկեղեցու վրա, ժողովրդին մոլորության մեջ գցեն, այլ նա կհաստատի նրանց իր ամենազոր

ուժով: Նա կմեծարի նրանց լավ և մեծ մարդկանց և կանանց աչքում: Նա կօրհնի նրանց ծառայությունը և այն լցված կլինի հաջողությամբ: Նրանք, ովքեր կընդդիմանան և կգանգատվեն, ուրախություն չեն գտնի իրենց ընդդիմությունում: Նրանք ովքեր քննադատում են և ձգտում կործանել Եկեղեցու ղեկավարների ազդեցությունը, իրենց սխալ գործերի հետևանքով կտառապեն:[6]

Մենք պետք է մեր սրտերում շնորհակալություն ունենանք, որ առաջնորդվում ենք սուրբ մարդկանց կողմից, ովքեր ոգեշնչվում են մեր Երկնային Հոր կողմից՝ ուսուցանելու մեզ օրըստօրե:[7] (Տես առաջարկ 2 էջ 73:)

Իր ծառաների միջոցով Տերն ուսուցանում է մեզ դեպի երջանկության և ապահովության ուղին:

Հայր Ադամի ժամանակից մինչև ներկա ժամանակը Տերը հորդորել է ժողովրդին իր ծառաների միջոցով: Նա ոգեշնչել է նրանց ավելի լավ ապրելակերպի, երբ նրանք լսել են Նրան և դարեդար, երբ իր զավակները պահանջել են դա, նա աշխարհ է ուղարկել սուրբ մարդկանց, հաղորդելու հրահանգներ, որոնք տանում են դեպի երջանկություն, ոգեշնչել է նրանց ուսուցանել փառահեղ ճշմարտություններ, որոնք ազնվացնում են և հարստացնում մարդկությանը:[8]

Ես աշխարհում տեղի ունեցած մեծ կարևորություն ունեցող ոչ մի բան չգիտեմ, որ Տերն իր մարգարեների միջոցով խորհուրդ տված չլինի նախօրոք, այնպես որ նրանք անտեղյակության մեջ մնացած լինեին, թե ինչ պետք է կատարվեր, այլ կարողանային ծրագրել իրենց կյանքը, եթե ուզենային՝ հոգուտ իրենց: . . .

Նոյի դեպքը ճիշտ տեղին է: Նա պատվիրվել էր Տիրոջ կողմից կառուցել տապան, որում արդարները կպահպանվեին ջրհեղեղից, որը պիտի գար: Նոյը կառուցեց տապանը քարոզեց ապաշխարություն իր սերնդին հարյուր քսան տարի, այսպիսով՝ լիովին նախազգուշացնելով նրանց: Սակայն մարդիկ այնքան ամբարիշտ էին, որ նրանց չհաջողվեց ուշադրություն դարձնել նախազգուշացմանը: Ունենալով իրենց ազատ կամքը, նրանք ընտրեցին ավելի շուտ չարը, քան արդարությունը: Անձրևները տեղացին և ջրհեղեղները եկան և միայն Նոյն ու իր ութ հոգուց բաղկացած ընտանիքը փրկվեցին: Բոլորը լիովին

նախազգուշացված էին, բայց նրանք իրենց հոժարակամության և ապաշխարելու իրենց մերժման պատճառով խեղդվեցին: (Տես Մովսես 8.13–30:)[9]

Տերն ուզում է, որ մենք երջանիկ լինենք: Այդ պատճառով տվեց մեզ Հիսուս Քրիստոսի ավետարանը: Այդ պատճառով նա մեզ շնորհեց քահանայություն: Նա ուզում է, որ մենք ունենանք ուրախություն: Այդ պատճառով նա կազմակերպեց այս եկեղեցին և դրեց տարբեր պաշտոններ և բոլոր այս բաները կարգի մեջ են. . . Եթե դուք հետևեք Տիրոջ ղեկավարությանը և նրանց, ում Տերը հաստատում է, դուք չեք շեղվի՝ ընկնելով խավարի մեջ, կորցնելով լույսը, խախտելով Աստծո օրենքները և վտանգի ենթարկելով ձեր արտոնությունները, որոնք նա այնքան ձգտում է, որ մեզանից բոլորը վայելեն:[10]

Կա միայն մեկ ուղի դեպի ապահովություն և դա՝ նրանց հետևելն է, ում Տերն է նշանակել առաջնորդելու: Ես կարող է ունենամ իմ սեփական գաղափարներն ու տեսակետները, ես կարող է հիմնադրեմ իմ սեփական դատողությունը երևույթների վերաբերյալ, բայց ես գիտեմ, որ եթե իմ դատողությունը հակասում է նրանց ուսմունքներին, ում Տերը տվել է մեզ ցույց տալու ճանապարհը, ես պետք է փոխեմ իմ ընթացքը: Եթե ես ցանկանում եմ փրկություն, ես կհետևեմ առաջնորդներին, որոնց մեր Երկնային Հայրն է տվել մեզ, քանի դեռ նա հաստատում է նրանց:[11] (Տես առաջարկ 3 էջ 73:)

Նրանք, ովքեր խոնարհ են և հավատարիմ, հաստատում են և պաշտպանում Տիրոջ ծառաներին:

Ես ճանաչել եմ այս մեծ Եկեղեցու կոչումներին և շարքերին պատկանող հազարավորների՝ բազմաթիվ ազգերի տղամարդկանց և կանանց, ովքեր համեստորեն և հավատարմորեն ընդունել են ավետարանը և միացել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն. . . [Նրանք] աղոթել են իրենց ղեկավարների համար և հաստատել նրանց . . . և Եկեղեցում իմ փորձառության ընթացքում ես չեմ իմացել գեթ մեկ մարդու, որ իր ձայնը բարձրացներ նրանց դեմ, ովքեր կանչվել էին նախագահելու Եկեղեցու վրա: Դա իսկապես ուշագրավ է: . . .

«Մենք. . . պետք է նման լինենք հին դարերի Ահարոնին և Ովրին. մենք պետք է բարձր պահենք [մարգարեի] ձեռքերը»:

Ինձ համար այս աշխատանքի աստվածայնության մեծագույն վկայություններից մեկն այն է, որ բազմաթիվ մարդիկ. . . ունենալով Ցցի Համաժողովներում արտահայտվելու հնարավորություն. . . իր քվեով հաստատելով կամ հրաժարվելով հաստատել նրանց, ովքեր նախագահում են իրենց վրա (ամեն մեկը գործադրելով իր ազատ կամքը) շարունակում են աջակցել իրենց առաջնորդներին: Անկասկած, Տիրոջ Հոգին հուշում է հավատարիմ, խոնարհ ժողովրդին հաստատել իր ընտրած ծառաներին:[12]

Երբ Մովսեսը Իսրայելին առաջնորդում էր անապատի միջով դեպի խոստացված երկիր, Ամաղէկը հարձակվեց Իսրայելի վրա Ռափիդիմում: Մովսեսը հրահանգեց Հեսուին ընտրել կռվող մարդկանց՝ Իսրայելը պաշտպանելու համար: Մովսեսը, Ահարոնը և Ովրը բարձրացան բլրի գագաթը նայելու ճակատամարտի դաշտը: Երբ Մովսեսը պահում էր Աստծո գավազանն իր գլխի վերևում Իսրայելը հաղթում էր, բայց երբ նա իջեցնում էր

իր ձեռքերը թուլության պատճառով, Ամաղէկն էր հաղթում։ Մի քարե նստատեղ սարքվեց և Ահարոնն ու Ովրը բարձր պահեցին նրա ձեռքերը, որպեսզի Աստծո օրհնությունները կարողանային հոսել դեպի Իսրայելը, որպեսզի նրանց ռազմիկները հաղթեին և շահեին ճակատամարտը։ Աստծո զորությունը Մովսեսի վրա էր և մնաց նրա հետ, մինչև նա ավարտեց իր գործը։ [Տես Ելից ԺԷ.8–13։] Երբ նա ունենում էր մարդկանց աջակցությունը, նրանք ևս օրհնվում էին, և այդպես է եղել Տիրոջ յուրաքանչյուր ծառայի հետ, որը նախագահել է Իսրայելի վրա։ . . .

. . . Ճիշտ այնքան ժամանակ, քանի դեռ [Նախագահը] նախագահում է այս Եկեղեցու վրա, նշանակություն չունի թե քանի տարի դա կլինի, մեր Երկնային Հայրը կտա նրան ուժ, զորություն, իմաստություն, դատողություն և ոգեշնչում՝ խոսելու Իսրայելի համար, երբ նրանք կարիք ունենան, որ խոսվի։ Հետևելով նրա առաջնորդությանը, մենք պետք է նման լինենք հին դարերի Ահարոնին և Ովրին. մենք պետք է բարձր պահենք նրա ձեռքերը, որ նրա միջոցով Տերը թույլ տա երկնքի օրհնություններն իջնեն մեզ վրա և այս ժողովրդի վրա։[13]

Ես գիտեմ, որ այս մարդիկ [Գերագույն Իշխանավորները] Տիրոջ ծառաներն են և ես գիտեմ, որ նրանք ձգտում են օրհնել մարդկությանը։ Հուսով եմ, որ ձեզանից ոչ մեկը չի ձախողվի նրանց հաստատելով, ոչ միայն ձեր հավատքով և աղոթքներով, այլ եթե նրանց սխալ ձևով են ներկայացնում, որ դուք պատրաստ լինեք և ձգտեք պաշտպանել նրանց, եթե կարիք լինի, որովհետև գալիս է ժամանակը, երբ նրանք ձեր պաշտպանության կարիքը կունենան։ Հակառակորդը չի մոռացել նրանց, և այս մարդկանց կոչման աստվածայնության ապացույցներից մեկն այն է՝ ինձ համար, որ չար մարդիկ չարն են խոսում նրանց մասին, իսկ բարի մարդիկ և բարի կանայք լավն են խոսում նրանց մասին։[14] [Տես առաջարկ 4 էջ 73։]

Երբ մենք քննադատում ենք մեր ղեկավարներին կամ արհամարհում նրանց խորհուրդը, մենք թույլ ենք տալիս, որ հակառակորդը մեզ մոլորեցնի։

Մեր մեջ կան այնպիսի մարդիկ. . . ովքեր կուրացել են մարդկանց իմաստակությունից ու հիմարությունից։ Կան ոմանք,

ովքեր մերժում են այս Եկեղեցու գլխին Աստծո կողմից դրած մարդկանց խորհուրդն ու խրատը։ . . .

Մարդիկ, ովքեր խիստ շատ տեղեկություն չունեն, հանկարծ հայտնվում են մի պայծառ զաղափարով և առաջարկում են. «սա է ճանապարհը» կամ «դա է ճանապարհը», և չնայած դա հակասության մեջ է Տիրոջ խորհրդի հետ, ոմանք համոզում են փորձել դա։ Տերը տվել է ապահով խորհուրդ և նշանակել է Իր Եկեղեցուն Նախագահ այդ խորհուրդը մեկնաբանելու համար։ Եթե մենք մերժում ենք այն, ինչ նա խորհուրդ է տալիս, որպես Եկեղեցու նախագահ, մենք կարող ենք հայտնաբերել, որ լուրջ սխալ ենք գործել։[15]

Եկեղեցու Նախագահությունը. . . Երկնային Հոր ներկայացուցիչներն են, ոչ միայն այս ժողովրդի համար, այլ նրանք ներկայացնում են Նրան աշխարհի բոլոր ժողովուրդներին։ Մենք լավ կանենք, եթե մեծարենք և պատվենք այս մարդկանց, ում նա դրել է մեր գլխին։ Նրանք մարդիկ են մարդկային թուլություններով, նրանք կգործեն սխալներ, բայց եթե մենք լինենք այնքան գթառատ այն սխալների հանդեպ, որոնք նրանք են գործում, որքան մեր սեփական ձախողումների և սխալների հանդեպ, մենք կտեսնենք նրանց առաքինությունները, ինչպես որ մենք տեսնում ենք մերը։

Ես կանգնած եմ այստեղ՝ աղերսելու ձեզ իմ եղբայրներ և քույրեր, մի թույլ տվեք քննադատության կամ անբարյացակամության խոսքեր անցնեն ձեր շուրթերով, նրանց վերաբերյալ, ում Տերը կանչել է առաջնորդելու մեզ։ Մի եղեք նրանց ընկերակցության մեջ, ովքեր նվաստացնում են նրանց կամ թուլացնում նրանց ազդեցությունը մարդկանց որդիների մեջ։ Եթե դուք դա անեք, ես կարող եմ ասել ձեզ, որ դուք կգտնեք ձեզ հակառակորդի իշխանության ներքո։ Դուք կներգործվեք նրա կողմից այնքան հեռու գնալով ճշմարտության ուղուց, որքան հնարավոր է, և եթե դուք չապաշխարեք, դուք կարող է գտնեք ձեզ, երբ խիստ ուշ լինի, երբ կորցրած կլինեք «թանկագին մարգարիտը»։ Ձեր եսասիրության և ձեր կուրության պատճառով՝ դուք հեռու կտարվեք և ձեր սիրելիները. . . վարագույրի մյուս կողմում, կսգան ձեր թուլության և ձեր անմտության պատճառով։[16] [Տես առաջարկ 5 էջ 73։]

Հակառակորդը քնած չէ: Նա խաբում է շատերին և առաջնորդում մեղանչելու. . . Կան ոմանք, ովքեր ուսուցանում են կեղծ վարդապետություն և ոմանք էլ ձգտում են համոզել տղամարդկանց և կանանց խախտել մեր Երկնային Հոր պատվիրանները. . . Եթե այս Եկեղեցու անդամները, ովքեր սխալ են փնտրում Եկեղեցու առաջնորդների մեջ և քննադատում են նրանց, ովքեր նվիրում են իրենց իսկ կյանքը, որ օրհնեն և օգնեն մեզ, եթե միայն բավականաչափ դադար տան և աղոթքով հարցնեն. «Այս ուսուցիչներից ո՞ւմ է ապահով հետևել», նրանք դժվարություն չեն ունենա գտնել իրենց ճիշտ ուղին և կհաստատեն նրանց, ում Տերն է հաստատում:[17]

Երբ մենք հաստատում ենք մեր ղեկավարներին, մենք պարտավորվում ենք հետևել նրանց խորհրդին և մեծարում ենք մեր իսկ կոչումները:

Պետք է որ ուժի աղբյուր լինի այս Եկեղեցու Նախագահի համար նայել հազարավոր ազնիվ տղամարդկանց և կանանց դեմքերին և տեսնել, թե ինչպես են նրանք բարձրացնում իրենց ձեռքը մեր Երկնային Հոր հետ ուխտով և հաստատում նրան պաշտոնում, որին նա կանչվել է որպես նախագահ այս հսկայական Եկեղեցում: Պարտականությունը, որ մենք վերցնում ենք, երբ բարձրացնում ենք մեր ձեռքերն այդպիսի հանգամանքներում, ամենասրբազանն է: Դա չի նշանակում, որ մենք անաղմուկ պիտի գնանք մեր ճանապարհով և հոժար լինենք, որ Տիրոջ մարգարեն առաջնորդի այս աշխատանքը, այլ դա նշանակում է, — եթե ես հասկացել եմ իմ վերցրած պարտավորությունը, երբ բարձրացրեցի ձեռքս, — որ մենք կկանգնենք նրա թիկունքին, մենք կաղոթենք նրա համար և կպաշտպանենք նրա բարի անունը և կձգտենք կատարել նրա հրահանգները, երբ Տերն ուղղության տա նրան՝ առաջարկելու դրանք մեզ, մինչ նա մնում է այդ պաշտոնում:[18]

Երբ ես մտածում եմ այն բեռների մասին, որոնք կրում են այս Եկեղեցու Նախագահը և նրա խորհրդականները և գիտակցում պարտավորությունները, որոնք դրվում են նրանց ուսերին, իմ ողջ սրտով ես կամենում եմ օգնել նրանց, որպեսզի ես չդառնամ խոչընդոտ, այլ որ այն պաշտոնում, որ ես եմ կանչվել ձեզ հետ, իմ եղբայրներ և քույրեր, մենք յուրաքանչյուրս

Մենք հաստատում ենք մեր ղեկավարներին, երբ «կրում ենք մեր բաժին բեռը և մեծարում ենք մեր կոչումներն Աստծո պատվի և փառքի համար»:

զբաղեցնենք մեր տեղը և կրենք բեռի մեր բաժինը և մեծարենք մեր կոչումներն աստծո պատվի և փառքի համար:[19] (Տես առաջարկ 4 էջ 73:)

Աստված տա, որ մենք, ովքեր այնքան առատորեն օրհնվել ենք, կարողանանք վեր պահել Տիրոջ ծառայի ձեռքերը, ով նախագահում է մեզ վրա, որ մենք կարողանանք քայլել այն դրոշի ներքո, որը նա բարձր կբռնի, երբ Աստված շարունակի հաստատել նրան որպես Եկեղեցու Նախագահ, որպես Տիրոջ մարգարե այս վերջին օրերում:[20]

Եկեք հաստատենք այս մարդկանց, որոնց Աստված է բարձրացրել նախագահելու մեզ վրա: Եկեք օրհնենք նրանց, ոչ միայն մեր շուրթերով, այլ աջակցելով նրանց ամեն հնարավոր ուղիներով կրելու այս բեռը, որն այնքան ծանրորեն դրված է նրանց ուսերին. . . Աղոթեք նրանց համար և օրհնեք նրանց ու օգնեք նրանց:[21]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար, տես էջ v–viii։

1. Կարդացեք «Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից» բաժնի վերջին պարբերությունը (63–64 էջեր)։ Ո՞րն է «աշխատանքի ձեր մասը»։ Երբ ուսումնասիրեք այս գլուխը, մտածեք ուղիներ, որոնցով դուք կարող եք ցույց տալ ձեր խոսքերով և գործողություններով, որ դուք հաստատում եք Եկեղեցու առաջնորդներին։
2. Աչքի անցկացրեք ուսմունքների առաջին բաժինը (65–66 էջեր), հատկապես երկրորդ և չորրորդ պարբերությունները։ Ինչպիսի՞ն է, ի տարբերություն աշխարհիկ ուղիների, առաջնորդներ ընտրելու Տիրոջ ուղին։ Ինչպիսի՞ փորձառություններ եք ունեցել դուք, որոնք զորացրել են ձեր հավատքը, որ մեր առաջնորդները ընտրվում են Տիրոջ կողմից։
3. Ուսումնասիրեք 66 էջում սկսվող բաժինը և կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 21.4–7։ Ի՞նչ առանձնահատուկ խորհուրդ է տվել Տերը Եկեղեցու ներկա Նախագահի միջոցով, ձեր ցցի կամ շրջանի նախագահի միջոցով, ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի միջոցով։ Ի՞նչ օրհնություններ եք դուք ստացել, երբ հետևել եք այս խորհրդին
4. Աչքի անցկացրեք 69 էջում սկսվող բաժինը և կարդացեք 71 էջի առաջին երկու լրիվ պարբերությունները։ Ի՞նչ է նշանակում ձեզ համար հաստատել Եկեղեցու առաջնորդներին։ Ինչպե՞ս է Եկեղեցու առաջնորդներին հաստատելը զորացնում մեր ընտանիքներն ու տները։
5. Կարդացեք 71 էջի առաջին լրիվ պարբերությունը։ Ինչո՞ւ է վտանգավոր քննադատել Եկեղեցու առաջնորդներին։ Ինչպիսի՞ն կլիներ պատշաճ ուղին արձագանքելու, եթե ինչ-որ մեկը նշեր ձեր տեղական առաջնորդներից մեկի հանցանքը։

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Ամովս Գ.7, Եփեսացիս Դ.11–14, Եբրայեցիս Ե.4, Վարդապետություն և Ուխտեր 84.109–10, 107.22, 112.20

Օգնություն ուսուցչին. «Ջանասիրաբար ուսանելը խրախուսելու ուղիներից մեկն ուշադիր լսելն է, երբ ինչ-որ մեկը հարց է տալիս կամ դիտողություն է անում: «Լսելը սիրո արտահայտություն է: Այն, երբեմն, պահանջում է զոհաբերություն: Երբ մենք իսկապես լսում ենք ուրիշներին, մենք հաճախ թողնում ենք ինչ-որ բան ասելու ցանկությունը, որպեսզի նրանք արտահայտվեն» (*Teaching, No Greater Call,* 66):

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1945, 174–75.
2. In Conference Report, Oct. 1946, 153–54.
3. In Conference Report, Apr. 1927, 86–87.
4. In Conference Report, Apr. 1931, 31.
5. "The Church with Divine Authority," *Deseret News,* Sept. 28, 1946, Church section, 6, 9.
6. In Conference Report, Apr. 1934, 29.
7. In Conference Report, Oct. 1917, 45.
8. In Conference Report, Oct. 1917, 40.
9. In Conference Report, Apr. 1945, 136.
10. In Conference Report, Apr. 1949, 192.
11. In Conference Report, Apr. 1937, 33.
12. In Conference Report, Apr. 1931, 32.
13. In Conference Report, Apr. 1942, 14.
14. In Conference Report, Oct. 1933, 29.
15. In Conference Report, Oct. 1936, 75.
16. In Conference Report, Apr. 1937, 34.
17. In Conference Report, Apr. 1937, 33.
18. In Conference Report, June 1919, 40.
19. In Conference Report, Oct. 1929, 24.
20. In Conference Report, Apr. 1930, 68–69.
21. In Conference Report, Oct. 1930, 69.

Հոգու անմահությունը

Մեր կյանքը հավերժական է և այս գիտելիքն օգնում է մեզ ճիշտ ընտրություններ կատարել և միսիթարում է մեզ սգի ժամանակ:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Ջորջ Ալբերտ Սմիթն օրհնվեց կյանքի նպատակի ամուր հասկացողությամբ, և սա հնարավորություն տվեց նրան խրախուսել ուրիշներին, երբ նրանք հանդիպում էին ձախորդության: Նա հաճախ էր հիշեցնում Սրբերին, որ «մենք ապրում ենք հավերժական կյանք», որ հավերժությունը չի սկսվում այս կյանքից հետո, այլ որ մահկանացու կյանքը հավերժության էական մասն է: «Ես, երբեմն, ասել եմ իմ ընկերներին, երբ նրանք, թվում է թե գտնվում էին խաչմերուկներում, համոզված չլինելով, թե որ ճանապարհով էին ուզում գնալ. «Այսօր է հավերժական երջանկության կամ հավերժական հիասթափության սկիզբը»»:[1]

Նախագահ Սմիթը վկայեց այս ճշմարտությունների մասին Հայրում Գ. Սմիթի՝ Եկեղեցու Հայրապետի թաղման արարողության ժամանակ, որը մահացավ համեմատաբար երիտասարդ հասակում, թողնելով իր ետևում կնոջն ու ութ երեխաներին:

«Ես զգացի, հենց որ ինձ խնդրեցին խոսել այս թաղման ժամանակ, որ, հավանաբար, չէի կարողանա անել այդ: Իմ զգացմունքները խռովված էին, և ես ինձ անկարող զգա վերահսկել դրանք, բայց հենց եկա այս շենքը, մի հաճելի, քաղցր ազդեցություն մտավ հոգիս: . . .

Սգալու փոխարեն ես զգում եմ, որ շնորհակալություն պիտի հայտնեմ մեր Հորը, որ երկնքում է Իր Սիրելի Որդու Ավետարանի համար, որը հայտնի դարձվեց նորից մեր օրերում. . . Գիտելիքը, որ կյանքը հավերժական է, սքանչելի օրհնություն է, իմացությունը, որ հավերժության ընթացքում այն օրհնությունները, որոնց համար այս լավ մարդն ապրել է, իրենը կլինեն:

«Ես շնորհակալ եմ, որ մեզ բացահայտվել է և պարզ դարձվել այս վերջին օրերում, որ այս կյանքը վերջը չէ, որ սա ընդամենը հավերժության մի մասն է»:

Նրա մահկանացու կյանքն ավարտվել է, բայց սա հավերժական կյանքի միայն մի մասն է: Նա խորը և ապահով հիմք է դրել, որի վրա նա կառուցել է և կշարունակի կառուցել հավերժության ընթացքում: Ուրախությունը, որը նա զգացել է այստեղ՝ երկրի վրա, իր վրա հավելում կստանա: . . .

Երբ մտածում եմ աշխարհում մարդկանց փորձառությունների մասին, այսպիսի առիթների ժամանակ, հրճվանք եմ զգում, թե ինչպես եմ ես օրհնվել: Ես այնքան անկասկած գիտեմ հավերժական կյանքի և հոգու անմահության մասին, որքան այն, որ արևը փայլում է կեսօրին. . . Տխուր բան է բաժանվել մեր սիրելիներից, նույնիսկ ժամանակավորապես: Մենք նրանց ուղարկում ենք միսիայի կամ նրանք գնում են աշխարհի այլ մասեր ապրելու և մենք կարոտում ենք նրանց: Երբ այնպիսի դեպք է պատահում, ինչպիսին սա է, թվում է թե նրանք ավելի հեռու են, բայց իրականում այդպես չէ, եթե մենք միայն հասկանանք. . . Ցավակցություն հայտնելու փոխարեն, որը, երբեմն, կարող է ասվել ոմանց, ովքեր որբացած են, ինձ մոտ կարծես ուրախություն կա այսօր, քանի որ գիտեմ, որ սա վերջը չէ: . . .

. . .Այսպիսով՝ այսօր, երբ ես կանգնած եմ ձեր ներկայության մեջ, երբ, հավանաբար, պետք է արցունքներ հոսեին, իմ սիրտը լցված է մխիթարությամբ և բավարարվածությամբ: Ես աղոթում եմ, որ սփոփանք լինի նրանցից յուրաքանչյուրի կյանքում, ովքեր հարազատներից զրկվել են»:[2] (Տես առաջարկ 1 էջ 87:)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Մենք ապրել ենք որպես ոգիներ, նախքան երկիր գալը, և մեր ոգիները կշարունակեն ապրել մեր մահանալուց հետո:

Այս կյանքի մեր ըմբռնումն այն է, որ սա հավերժական կյանք է, որ այսօր մենք ապրում ենք հավերժության մեջ՝ ինչպես երբևէ կապրենք հավերժության մեջ: Մեր հավատամքն է, որ մենք ապրել ենք նախքան մեր այստեղ գալը. այն ինչ բանականություն է, այն ինչ ոգի է այս կյանքում չէ, որ սկիզբ են առել: Մենք հավատում ենք, որ ստացել ենք հոգևոր խորան նախքան այս աշխարհ գալը: Այդ հոգևոր մարմինն ուղարկվեց այս աշխարհ և այստեղ այն ստացավ ֆիզիկական խորան, այն մարմինը,

որը մենք տեսնում ենք: Ֆիզիկական մասը, որը մենք տեսնում ենք երկրից է՝ հողեղեն (տես 1 Կորնթացիս ԺԵ.47), բայց այն մասը, որը թողնում է մարմինը, երբ մեր կյանքը վերջանում է, այն է, ինչ հոգևոր է և այն երբեք չի մահանում: Ֆիզիկական խորանը դրվում է գերեզմանում, այն երկրի մի մասն է և ետ է վերադառնում դեպի մայր հողը, բայց այն բանականությունը, որն Աստված դրել է դրա ներսում, այն ինչը զորություն ունի տրամաբանելու, մտածելու, այն ինչ զորություն ունի երգելու և խոսելու, մահ չունի, այն ուղղակի անցնում է հավերժական կյանքի այս ոլորտից և սպասում այնտեղ ֆիզիկական խորանի մաքրագործմանը, մինչև այն ժամանակը, երբ այն կվերամիավորվի այս խորանի հետ, որը կփառավորվի, նույնիսկ ինչպես մեր հարություն առած Տիրոջ մարմինն էր փառավորված, եթե մենք ապրենք արժանի լինելու դրան:[3]

Բանաստեղծի լեզվով ասած «Կյանքն իրական է;Կյանքը գրավական է» և «Նպատակը գերազմանը չէ»: [Henry Wadsworth Longfellow, “A Psalm of Life”]: Ոգին, որ բնակվում է խորանում, անմահ է: Այն ապրում է գերեզմանից այն կողմ: Մարմինը քայքայվում է և վերադառնում հող, բայց ոգին շարունակում է ապրել:[4]

Ես շնորհակալ եմ, որ մեզ բացահայտվել է և պարզ դարձվել այս վերջին օրերում, որ այս կյանքը վերջը չէ, որ սա ընդամենը հավերժության մի մասն է, և որ, եթե մենք օգտվում ենք մեր արտոնություններից այստեղ, որ այս միայն առաջընթացի ուղի է ավելի մեծ և ավելի ցանկալի պայմանների համար:[5] (Տես առաջարկություն 2 էջ 87:)

Մեր նպատակն այստեղ երկրի վրա մեր Երկնային Հոր հետ ապրելուն նախապատրաստվելն է:

Ոմանք հավատում են, որ երբ մենք անցնում ենք գոյության այս ոլորտից, դա վերջն է: Ինձ անհավատալի է թվում, – երբ նայում ենք բնության գործերին, երբ հետազոտում ենք մարդու օրգանիզմը, նրա մարմնի կատարելությունը, նրա սրտի բաբախումը, մանկությունից մինչև հասունություն կառուցվածքի աճն ու ամրացումը, իսկ հետո աստիճանական ծերացումը, մինչև այս կյանքի ավարտը, – որ հնարավոր է, որ մեր Հոր զավակներից որևէ մեկը կարողանա հավատալ, որ մարդկային էակները

ծնվում են աշխարհում միայն ապրելու, հասնելու տղամարդու և կանացի հասունության, անցնելու ծերության հասակի և մահանալու, առանց նպատակի, ապրելով այստեղ իրենց կյանքը։[6]

Այս կյանքը մեզ տրված չէ որպես ժամանց։ Մեր ստեղծման համար կար մի կարևոր նպատակ այն կյանքում, որ Աստված է տվել մեզ։ Եկեք ուսումնասիրենք, թե որն է այդ նպատակը, որպեսզի մենք կարողանանք առաջ ընթանալ և ձեռք բերել հավերժական կյանք։[7]

Վերջին Օրերի Սրբի մտքում չկա կասկած մեր երկրային կյանքի նպատակի վերաբերյալ։ Մենք այստեղ ենք մեզ նախապատրաստելու և մեզ զարգացնելու և մեզ որակավորվելու, որ արժանի լինենք բնակվելու Երկնային Հոր ներկայության մեջ։[8]

Մենք հավատում ենք, որ մենք այստեղ ենք, որովհետև մենք պահել ենք մեր առաջին վիճակը և վաստակել ենք այս երկիր գալու արտոնությունը։ Մենք հավատում ենք, որ մեր գոյությունն իսկ պարգև է նախքան մեր այստեղ գալը մեր հավատարմության համար, և որ մենք վայելում ենք երկրի վրա հոգևոր աշխարհում մեր ջանքերի պտուղները։ Մենք նաև հավատում ենք, որ մենք այսօր ենք ցանում սերմերն այն բերքահավաքի, որը մենք կհնձենք, երբ գնանք այստեղից։ Հավերժական կյանքը մեզ համար հանրագումարն է նախագոյության, ներկա գոյության և կյանքի շարունակությունն անմահության մեջ, մեզ համար ուժ ընձեռելով անվերջ առաջընթացի և աճի համար։ Այդ զգացումով և այդ համոզվածությամբ մենք հավատում ենք, որ «Ինչպես մարդն է, մի ժամանակ Աստվածն էր և ինչպես որ Աստվածն է, մարդը կարող է դառնալ»։ [Տես Լորենցո Մնոու «Մարդու մեծ ճակատագիրը» *Deseret Evening News,* հուլիս 20, 1901, 22։] Ստեղծված լինելով Աստծո պատկերով, մենք հավատում ենք, որ անպատշաճ չէ, որ անարդար չէ մեզ համար հուսալ, որ մեզ թույլ կտրվի ճաշակել աստվածության հատկանիշներից և եթե մենք հավատարիմ լինենք, կդառնանք Աստծո նման, քանի որ, երբ մենք ստանում ենք և հնազանդվում մեր Հոր բնական օրենքներին, որոնք կառավարում են այս կյանքը, մենք ավելի ենք նմանվում Նրան, և երբ մենք օգտագործում ենք մեր հասանելիության սահմաններում դրված հնարավորությունները, մենք պատրաստվում ենք ստանալ ավելի մեծ հնարավորություններ այս կյանքում և այն կյանքում, որ պիտի գա։ . . .

Ինչպիսի երջանիկ ժողովուրդ մենք պետք է լինենք այն իմացությամբ, որ այս փորձարկումը չպիտի նախապատրաստի մեզ մահանալու համար, այլ ապրելու համար, որ Հոր ցանկությունն է մեզ համար, որ մենք խուսափենք ամեն սխալից և ստանանք ամեն ճշմարտություն, և կիրառելով ճշմարտությունը մեր կյանքում, ավելի նման դառնանք նրան և արժանի դառնանք բնակվելու Նրա հետ:[9]

Եղբայրներ և քույրեր, սա լուրջ հարց է: Մենք պետք է լրջորեն մտածենք դրա մասին: Մենք պետք է նայենք մեր սեփական կյանքին և հայտնաբերենք, թե արդյոք մենք պատրաստ ենք այն մեծ ապագա կյանքին, եթե մենք վաղը կանչվենք այստեղից, արդյոք մենք նախապատրաստված կլինենք հաշիվ տալու մեր երկրային գործերի համար. արդյոք մենք կկարողանանք զգալ, որ կստանանք մեր Երկնային Հորից հրավերի ողջույնը. «Լաւ, բարի եւ հաւատարիմ ծառայ»:[10] (Տես առաջարկ 3 էջ 87:)

Այս կյանքի ընթացքում մենք պետք է ձգտենք այն բաներին, որոնք հավերժական արժեք ունեն:

Մենք, գուցե, այս կյանքում շնորհել ենք մեզ մի քանի բաներ, որոնք մեզ ժամանակավորապես բավականություն են պատճառել, բայց այն բաները, որոնք հավերժական են, այն բաները, որոնք «արժանավոր են», այդ հավերժական բաներին է, որ մենք պետք է ձգտենք հասնել և պատրաստվենք ստանալ և դիմանանք՝ անձնական ջանքեր գործադրելով:[11]

Մի՞թե բացառիկ բան չէ, որ այն, ինչի համար աշխարհը պայքարել է սկզբից ի վեր՝ հարստություն, իշխանություն, բոլոր այդ բաները, որոնք մարդկանց հարմարավետություն են բերում, այսօր առատորեն առկա է՝ ավելի լավ և ավելի շատ հագուստեղեն, քան երբևէ նախկինում, ավելի շատ ուտելիք, քան կարելի է սպառել, ավելի շատ հարստություն ամեն տեսակի, քան աշխարհը երբևէ ունեցել է նախկինում: Մեր տները հարմարավետ են: Կյանքի հարմարավետությունը բազմապատկվել է հրաշագործ ձևով այն ժամանակից ի վեր, ինչ Ավետարանը եկավ երկիր և այժմ, այն, ինչի համար մենք պայքարել ենք, մենք ունենք: Կրթությունը հասել է իր բարձրագույն կետին: Այս երկրագնդի գաղտնիքների մասին ավելի շատ գիտելիք ունենք,

«Այն, ինչ. . . ավելի թանկ արժե, քան բոլոր մնացած բաները հավերժական կյանք ձեռք բերելու հնարավորությունն է [ձեր] որդիների, դուստրերի, ամուսնու և կնոջ հետ»:

քան երբևէ նախկինում: Այն ամենն, ինչի համար մարդկությունը պայքարել է ժամանակների սկզբից ի վեր, ինչը համարվել է ամենացանկալին, երկրագնդի վրա է այսօր, և չնայած այդ բոլորին, կա կասկած և սարսափ, թե ինչ է պահված ապագայում:

Ո՞րն է մեր խնդիրը: Մենք ձգտել ենք մարմնական հարմարավետության, մենք ձգտել ենք մարդկանց գովասանքին, մենք ձգտել ենք այն բաներին, որոնք եսասիրությունն է դնում մեր հոգիներում: Մենք ձգտել ենք մեզ վեր դնել և մեզ ավելի լավն ենք դասել մեր Հոր մյուս զավակներից:[12]

Եկեք չհանդարտվենք քնելով, եկեք չխաբվենք այս աշխարհի լավ բաների առատությամբ, քանզի ինչ օգուտ մարդու համար, որ նա ձեռք բերի ողջ աշխարհը և կորցնի իր սեփական հոգին: (Տես Մարկոս Ը.36:) Մի թույլ տվեք, որ ստեղծման նպատակն աչքաթող արվի, այլ եկեք տքնենք մեր հոգիների փրկության համար:[13]

Ամենացավալի բաներից մեկը կյանքում այն է, երբ որևէ տղամարդ կամ կին դրվում են Մայր հողում այն փաստի իրականացմամբ, որ նրանք մերժել են ավելի մեծ օրհնությունները, որոնք մեր Հայրն առաջարկել է նրանց, և շարունակել են կառչել պղպջակներից, որոնք ինքնիրեն անհետանում են: Երբ մտածում եմ Աստծո միլիոնավոր զավակների մասին աշխարհում և հասկանում, թե որքան քիչ են ձգտում այն բաներին, որոնք իսկապես կարևոր են, ես տխրություն եմ զգում:[14]

Հիշեք, որ մտավոր կարողությունն է, որ դուք ձեռք եք բերում, որը հավերժական է, ճշմարտությունը, որ դուք սովորում եք այստեղ և կիրառում ձեր կյանքում, գիտելիքը և փորձառությունը, որ ձեռք եք բերում և օգուտ քաղում դրանց միջոցով, դուք կվերցնեք ձեզ հետ, երբ դուք գնաք տուն:[15]

Գանձերը, որոնք մենք կգտնենք, երբ մենք գնանք մյուս կողմը, կլինեն նրանք, ում մենք հավաքել ենք այնտեղ՝ սպասավորելով մեր Հոր մյուս որդիներին ու դուստրերին, որոնց հետ մենք ընկերակցել ենք այստեղ: Նա դա հնարավոր է դարձրել մեզ բոլորիս համար, և մեր այստեղ մնալու ընթացքում, մենք ավելի երջանիկ կլինենք ծառայելով մեր ընկերներին, քան կկարողանայինք լինել որևէ ուրիշ ուղով:[16]

Այնքան էլ կարևոր չէ, թե որքան արժեքներ դուք կարող է ունեցած լինեք այստեղ, որքան շատ ունեցվածք կունենաք, և որքան մարդկանց պատվոգրեր կարող է ձեռք բերած լինեք և բոլոր այն բաները, որոնք այնքան ցանկալի են աշխարհում: Այն, ինչ Աստված է տվել ձեզ, որն ավելի թանկ արժե, քան բոլոր մնացած բաները, հավերժական կյանք ձեռք բերելու հնարավորությունն է սելեստիալ արքայությունում, և որպես ձեր ուղեկիցներ, հավերժության դարերի ընթացքում, որդիներ և դուստրեր, ամուսին և կին ունենալը, ում հետ դուք հաղորդակցվել եք այստեղ երկրի վրա:[17] (Տես առաջարկ 4 էջ 87:)

Հիսուս Քրիստոսի շնորհիվ մենք հարություն կառնենք:

Փրկչի արդար կյանքը կատարյալ օրինակ է բոլորին, և Նրա հարությունն առաջին հավաստիացումն էր մարդկությանը, որ մենք ևս դուրս կգանք գերեզմանից:[18]

Երբ Հիսուսը հարություն առավ մեռելներից, Նա դարձավ հարության առաջնապտուղը: Ոգին, որը ծնունդ էր առել Հորից (Նրա հոգու բանական մասը) վերաբնակվեց Իր երկրային խորանում, որը մաքրագործվել էր և Նա դարձավ փառավորված սելեստիալ էակ և զբաղեցրեց իր տեղը Հոր աջ կողմում, որպես Աստվածագլխի անդամներից մեկը: Նա ուներ զորություն հաղթելու մահին, որովհետև Նա ենթարկվեց Իր Հոր կառավարող բոլոր օրենքներին, և հաղթելով մահին, նա պտտեց բանալին, որով ողջ մարդկությունը կարող է հարություն առնել, և բոլորը նույնպես կարող են փառավորվել հնազանդվելով Նրա ուսմունքներին, որոնք այնքան պարզ են, որ բոլորը կարող են ենթարկվել, եթե կամենան:[19]

Հիսուս Քրիստոսն առանց մեղքի մարդ էր: Իր մաքրության, Իր շիտակության և Իր առաքինության պատճառով, Նա կարողացավ բացել բանտի դռները՝ հաղթահարելու մահն ու գերեզմանը և բացել ճանապարհը. . . դեպի այն երկինքը, որտեղ մենք ակնկալում ենք գնալ:[20]

Մենք կարող ենք դիմել Վարդապետություն և Ուխտեր 88 բաժնին և տեսնել, թե ինչ է ասել Տերը մեր հարության մասին, ոչ միայն Փրկչի հարության մասին, այլ Նա ասում է թե ինչ կարող է պատահել մեզ հետ. . . Մեզ տեղեկացվում է այս բաժնում, որ մեր մարմինները պետք է բարձրանան գերեզմանից, ոչ թե ուրիշ մարմիններ և այն ոգիները, ովքեր տիրել են այս խորաններին այժմ, կբնակվեն նույն խորաններում դրանք մաքրագործվելուց և սրբագործվելուց և անմահացվելուց հետո: (Տես ՎԿՈՒ 88.14–17, 28–33:)[21]

Բավականին շատ մարդիկ աշխարհում չգիտեն թե ինչ է հարությունը: Դուք ուսուցանո՞ւմ եք ձեր երեխաներին և ձեր ընկերներին, թե ինչ է դա նշանակում. . . [Փրկչի] հարությունը պարզ է Վերջին Օրերի Սրբերին, ովքեր հասկանում են ավետարանը, բայց կան այնքան շատերը, ովքեր չեն հասկանում, թե ինչ է դա նշանակում. . . Հիսուս Քրիստոսի Ավետարանի նպատակն է նախապատրաստել ամեն տղամարդու, կնոջ և երեխայի այն ժամանակի համար, երբ բոլորը, ովքեր մահացել են, առաջ կբերվեն իրենց գերեզմաններից և երբ մեր Երկնային Հայրը կհիմնադրի իր արքայությունն այս երկրի վրա, և արդարները

«Փրկչի. . . հարությունն առաջին հավաստիացումն էր մարդկությանը, որ մենք ևս դուրս կգանք գերեզմանից»:

կբնակվեն այնտեղ և Հիսուս Քրիստոսը կլինի մեր Թագավորն ու մեր Օրենսդիրը:[22] (Տես առաջարկ 5 էջ 87:)

Հոգու անմահության մեր գիտելիքը ոգեշնչում է, քաջալերում և մխիթարում է մեզ:

Հոբի գրքում մենք կարդում ենք. «Բայց մարդիս միջինը հոգին է, եւ Ամենակարողի շունչն է նորանց հանճար տալիս» [Հոբ ԼԲ.8.] Նրանք, ովքեր չեն ստացել այդ ոգեշնչումը, չեն հասկանա մեռելներից հարության իմաստը և առանց այդ հասկացողության, ինձ թվում է, կլինի քիչ երջանկություն նրանց համար, ովքեր ապրում են ծերության տարիները, սպասելով այն ժամանակին, երբ ոգին թողնում է մարմինը գնալու իրենք էլ չգիտեն թե ուր:[23]

Օ՜, որքան տխուր կլինեինք, եթե մտածեինք, որ մահն ընդհատել էր մեր կարիերան: Եթե մենք մեր կյանքի աշխատանքը երկրի վրա ավարտեինք, մենք չէինք ունենա հնարավորություն շարունակել զարգացումը, քիչ բան կոգեշնչեր մեզ ապրել այստեղ, այնպես ինչպես պետք էր: Այն գիտելիքը, որ ողջ բարին,

որ մենք իրականացնում ենք այստեղ և ողջ զարգացումը, որ մենք ապրում ենք, կմեծացնի մեր երջանկությունը հավերժորեն, կքաջալերի մեզ անելու մեր լավագույնը:[24]

Մենք բոլորս սրընթաց անցնում ենք դեպի այն ժամանակը, երբ մենք կկանչվենք այստեղից: Եթե մենք չենք հասկացել, որ կա ապագա կյանք, եթե մենք չենք հասկացել, թե կա ինչ-որ բան ավելի, քան այն ազդեցությունը, որ մենք ստացել ենք մինչև այժմ, եթե այս կյանքում ապրելու համար չկա որևէ բան, բացի սնապարծությունից և կյանքի անախորժություններից մեզ համար, ինձ թվում է կան շատերը, ովքեր կհոգնեին այն պայքարից, որ գոյության համար պետք է մղեին այստեղ:[25]

Տերն օրհնել է մեզ այն իմացությամբ, որ Նա ապրում է և ունի մարմին, և որ մենք ստեղծվել ենք նրա պատկերով: Մենք չենք հավատում, որ նա ինչ-որ էություն է կամ որ նա աներևակայելի է: Եթե դուք ստացած լինեիք վկայություն, որը տրվել է ինձ և իմանայիք ինչպես ես գիտեմ, որ մեր Երկնային Հայրը հայտնի է դարձրել իրեն մարդկանց որդիներին, որ նա անհատականություն ունեցող Աստված է, որ մենք ստեղծվել ենք Նրա պատկերով, որ մեր ոգիները ծնվել են նրանից, որ նա տվել է մեզ հնարավորություն բնակվել երկրի վրա ստանալու ֆիզիկական խորան, որպեսզի մենք կարողանանք պատրաստվել վերադառնալ նրա ներկայություն և հավերժորեն ապրել նրա հետ, ես ասում եմ, եթե դուք ստանայիք այդ հավաստիացումը, ապա կունենայիք հիմք, որի վրա դուք կկառուցեիք ձեր հավատքը: Եթե ձեզանից վերցվի այն գիտելիքը, որ իսկապես Աստված ապրում է, համոզվածությունը, որ Հիսուս Քրիստոսն աստծո դրսևորումն էր մարմնում, համոզմունքը, որ լինելու է տառացի հարություն մեռելներից, և դուք ձեզ գտնեք այն վիճակում, որ մեր Հոր զավակներն են ողջ աշխարհում, ապա ես հարցնում եմ ձեզ, ինչ սփոփանք է մնում ձեզ այդ դեպքում: Սրանք ճշմարտություններ են, որոնք սկզբունքային են:[26]

Իմ սիրելիների ավելի մեծ մասը մյուս կողմում են, քան այստեղ և երկար ժամանակ չի անցնի իրադարձությունների բնական ընթացքով, մինչև ես էլ կստանամ իմ հրավերն առաջ անցնելու: Ես չեմ սպասում այդ ժամանակին անհանգստությամբ և վշտով, այլ հույսով և համոզվածությամբ, որ փոփոխությունը, երբ այն տեղի ունենա, կլինի երջանկության և

հնարավորությունների աճի համար, որոնք մենք չենք կարող իմանալ մահկանացու կյանքում։[27]

Երբ մենք հասկանում ենք, որ մահն այն քայլերից միայն մեկն է, որ Աստծո զավակները պետք է կատարեն հավերժության ընթացքում, և որ դա նրա ծրագրի համաձայն է, այն վերացնում է մահվան խայթը և բերում մեզ դեմ առ դեմ հավերժական կյանքի իրականությանը։Շատ ընտանիքներ կանչվել են ժամանակավորապես ցտեսություն ասելու նրանց, ում նրանք սիրում են։ Երբ այդպիսի անցումներ մյուս աշխարհ տեղի են ունենում, դրանք անհանգստացնում են մեզ, եթե մենք թույլ ենք տալիս դրանց, և այսպիսով՝ մեծ վիշտ բերում մեր կյանք։ Բայց եթե մեր հոգևոր աչքերը կարողանային բացվել և կարողանայինք տեսնել, համոզված եմ, մենք կհանգստանայինք նրանից, ինչ մեր տեսողությունը կընկալեր։ Տերը մեզ չի թողել առանց հույսի։ Ընդհակառակը, նա տվել է մեզ ամեն հավաստիացում հավերժական երջանկության վերաբերյալ, եթե մենք կամենանք ընդունել նրա խորհուրդը և խրատը, մինչ այստեղ՝ մահկանացու կյանքում ենք։

Սա դատարկ երազ չէ։ Սրանք փաստեր են։ Ձեզ համար, ովքեր Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամներ եք, այս պատմությունը հասարակ է, բայց ճշմարիտ։ Կան սրբազան հատորներ սուրբ գրությունների, որ մեր Երկնային Հայրը դրել է մեր հասանելիության սահմաններում, որոնք ուսուցանում են մեզ, որ մենք ապրում ենք հավերժորեն. . . Տերը տվել է մեզ այս տեղեկությունը մեծ հստակությամբ, և իմ սրտի խորքից ես շնորհակալ եմ այն գիտելիքի համար, որ նա տվել է մեզ, որ նրանք ովքեր սգում են, կմխիթարվեն, և որ մենք ինքներս կարողանանք հասկանալ այստեղ լինելու մեր նպատակը։ Եթե նրանք, ովքեր անցել են, կարողանային խոսել մեզ հետ, նրանք կասեին. «Առաջ գնացեք, առաջ գնացեք հանուն այն նպատակի, որը մեզ միասին հավերժական երջանկություն կբերի»։ Արեք այն բաները, որոնք Տերը կկամենար, որ դուք անեք, և դուք չեք բաց թողնի որևէ բան, որն արժանավոր է, այլ ընդհակառակը, դուք անընդհատ գանձեր կհավաքեք երկնքում, որտեղ ցեցը և ժանգը չեն կարող փչացնել, ոչ էլ կարող են գողերը ջարդել դուռը և գողանալ։ (Տես Մատթեոս 6.19–20։)

Ես թողնում եմ իմ վկայությունը ձեզ, որ ես գիտեմ, որ մենք ապրում ենք հավերժական կյանքով, և որ մահվան ժամանակավոր բաժանումը. . . միայն հավերժական առաջընթացի ուղու երկայնքով քայլերից մեկն է և, ի վերջո, կհասցնի երջանկության, եթե մենք հավատարիմ լինենք։[28] (Տես առաջարկ 6 էջ 88։)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների մասին, երբ ուսումնասիրեք գլուխը կամ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես v–viii էջերը։

1. Երբ կարդաք «Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից» բաժինը (75–77 էջեր), մտածեք մի ժամանակի մասին, երբ դուք փորձել եք մխիթարել ինչ-որ մեկին իր սիրեցյալի մահից հետո։ Ի՞նչը բերեց մխիթարություն Նախագահ Սմիթին։
2. Նախագահ Սմիթն ուսուցանել է, որ «Այս [կյանքը] հավերժության միայն մի մասն է» (էջ 77)։ Ի՞նչ է դա նշանակում ձեզ համար։ Ինչպե՞ս է այս սկզբունքի մեր հասկանալն ազդում այն ընտրությունների վրա, որ մենք կատարում ենք։
3. Ուսումնասիրեք 78 էջում սկսվող բաժինը։ Ինչպե՞ս են ուսմունքներն այս բաժնում տարբերվում նրանից, ինչ աշխարհն է ուսուցանում կյանքի իմաստի մասին։ Ի՞նչ փորձառություններ ենք ունենում մահկանացու կյանքում, որոնք կարող են օգնել մեզ «ճաշակել աստվածության հատկանիշներից»։
4. Աչքի անցկացրեք 80 էջում սկսվող բաժինը, հատկապես բաժնի վերջին չորս պարբերությունները։ Ինչո՞ւ է աշխարհիկ բաներին ձգտելը նման «պղպջակներից կառչելուն, որոնք ինքնիրեն անհետանում են»։
5. 83 էջում Նախագահ Սմիթը մեջբերում է հարության մասին տեղեկությունը Վարդապետություն և Ուխտեր 88 բաժնից։ Ի՞նչ են ուսուցանում այս բաժնի 14–17 և 28–33 հատվածները հարության մասին։ Որոնք են երեխաներին հարության մասին ուսուցանելու մի քանի արդյունավետ ուղիները։

6. Կարդացեք 84 էջում սկսվող բաժինը: Որո՞նք են կյանքի փորձություններից մի քանիսը, որոնք ավելի տանելի են դառնում, որովհետև դուք վկայություն ունեք այս բաժնում ուսուցանվող սկզբունքների մասին:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Ա Կորնթացիս ԺԵ.12–26, 35–42, 53–58, 2 Նեփի 9.6–13, Ալմա 12.24, 28.12, Վարդապետություն և Ուխտեր 93.19–20, 29–34, 130.18–19, Աբրահամ 3.24–26

Օգնություն ուսուցչին. «Խնդրեք մասնակիցներին ընտրել մի բաժին, որը նրանց հետաքրքրել է և կարդացեք այն մտքում: Հրավիրեք նրանց հավաքվել երկու կամ երեք մարդկանցից կազմված խմբերով, ովքեր ընտրել են նույն բաժինը և քննարկեք, թե ինչ սովորեցին» (տես այս գրքի vii էջը):

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1944, 94.
2. In *Deseret News,* Feb. 13, 1932, Church section, 5, 7.
3. “Mormon View of Life’s Mission,” *Deseret Evening News,* June 27, 1908, Church section, 2.
4. In Conference Report, Apr. 1905, 62.
5. In Conference Report, Oct. 1923, 70–71.
6. In Conference Report, Apr. 1905, 59.
7. In Conference Report, Oct. 1906, 48.
8. In Conference Report, Oct. 1926, 102.
9. “Mormon View of Life’s Mission,” 2.
10. In Conference Report, Apr. 1905, 63.
11. In Conference Report, Oct. 1909, 78.
12. In Conference Report, Apr. 1932, 44.
13. In Conference Report, Oct. 1906, 50.
14. In Conference Report, Oct. 1923, 70.
15. “Mormon View of Life’s Mission,” 2.
16. In *Deseret News,* May 26, 1945, Church section, 6.
17. In Conference Report, Apr. 1948, 163.
18. “President Smith Sends Greetings,” *Deseret News,* Dec. 27, 1950, Church section, 3.
19. “Mormon View of Life’s Mission,” 2.
20. In Conference Report, Apr. 1905, 60.
21. In Conference Report, Apr. 1939, 122–23.
22. In Conference Report, Apr. 1950, 187–88.
23. In Conference Report, Apr. 1939, 121.
24. In Conference Report, Oct. 1921, 41.
25. In Conference Report, Oct. 1923, 71.
26. In Conference Report, Oct. 1921, 39.
27. In *Deseret News,* May 26, 1945, Church section, 4.
28. “Some Thoughts on War, and Sorrow, and Peace,” *Improvement Era,* Sept. 1945, 501.

Տաճարային օրհնություններ մեզ համար և մեր նախնիների համար

Տաճարների նպատակն է տեղ ապահովել, որտեղ սուրբ արարողություններ են կատարվում ողջերի և մահացածների համար:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

1905 թվականին՝ որպես նոր Առաքյալ, Ջորջ Ալբերտ Սմիթն ուղևորություն կատարեց Եկեղեցու պատմական մի քանի կարևոր վայրեր Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի և Տասներկուսի Քվորումի մյուս անդամների հետ միասին: Վայրերից մեկը, որը նրանք այցելեցին Կիրթլենդն էր՝ Օհայո, որտեղ Առաջին Սրբերը կառուցեցին այս տնտեսության առաջին տաճարը: «Երբ տեսադաշտում հայտնվեց քաղաքը, – վերհիշում է Երեց Սմիթը, – առաջին բանը, որ գրավեց մեր տեսողությունը, Կիրթլենդի գեղեցիկ տաճարն էր. . . Այդտեղ էր, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը և [Օլիվեր Քաուդերին] տեսան Փրկչին ամբիոնի բազրիքի վրա: Այդտեղ էր, որ Մովսեսը հանձնեց նրանց Իսրայելի հավաքման բանալիները և Եղիասն ու Եղիան եկան իրենց մեծ կոչման զորությամբ և փառահեղությամբ ու հանձնեցին այն բանալիները, որոնք հանձնարարվել էին նրանց խնամքին երկրի վրա իրենց ծառայության օրերին»:

Մինչ խումբը քայլում էր տաճարի միջով, Երեց Սմիթը մտածում էր նվիրված Սրբերի մասին, ովքեր կառուցել էին այն: «Երբ մենք հասկացանք, որ այդ շենքը կառուցվել էր մարդկանց կողմից, ովքեր ծայրահեղ աղքատության մեջ էին եղել, թե որքան քաջ էին եղել տղամարդիկ, աշխատելով օրվա ընթացքում, դնելով հիմքը և կառույցի պատերը սարքելով, իսկ հետո գիշերը կանգնելով և զենքերով պաշտպանելով այն նրանցից, ովքեր

Կիրթլենդի Տաճարի ներքին տեսքը, որտեղ հնարարության մարգարե Եղիան հայտնվեց Զոզեֆ Սմիթին և շնորհեց նրան կնքելու զորությունը և մահացածների համար աշխատանքի բանալիները:

երդվել էին, որ շենքը երբեք չի ավարտվի, մենք չէինք կարող չզգալ, որ զարմանալի չէր, որ Տերն ընդունել էր նրանց նվիրատվությունները և օրհնել նրանց, ինչպես քիչ մարդիկ են օրհնվել երկրագնդի վրա»:[1]

Տարիներ հետո, ձեռնադրվելով որպես Եկեղեցու Նախագահ, Նախագահ Սմիթը նվիրագործեց Այդահոյի՝ Այդահո Ֆոլզի Տաճարը: Նվիրագործման աղոթքում, նա շնորհակալություն հայտնեց փրկարար աշխատանքի համար, որը կատարվում էր տաճարում ողջերի և մահացածների համար.

«Շնորհակալ ենք քեզ, ով Աստված, Եղիային՝ հնադարյան մարգարեին ուղարկելու համար, ում . . . հանձնված էր հայրերի սրտերը զավակներին դարձնելու և զավակների սրտերը հայրերին դարձնելու զորության բանալիները, որպեսզի ողջ երկիրը չզարկվի անեծքով» (ՎԵՈՒ 27.9): Մենք շնորհակալություն ենք հայտնում, որ նրան ուղարկեցիր քո ծառային՝ Ջոզեֆ Սմիթին, շնորհելու մահացածների համար իշխանության բանալիները և հայտնի դարձնելու, որ փրկության ծրագիրն ընդգրկում է ողջ մարդկության ընտանիքը, որ ավետարանը համընդհանուր է գործունեության շրջանակներով, և որ դու խտրականություն չես դնում անձանց միջև, ապահովելով փրկության ավետարանի քարոզումն ինչպես ապրողներին, այնպես էլ մահացածներին: Մենք շատ երախտապարտ ենք քեզ, որ փրկությունը տրվել է բոլորի համար, ովքեր կամենում են փրկվել քո արքայությունում:

Թող հաճելի լինի քո ժողովրդի համար հետազոտել և գտնել իրենց նախնիների ծագումնաբանությունը, որպեսզի նրանք փրկիչներ դառնան Սիոն սարի վրա՝ քո տաճարներում պաշտոնավարելով իրենց ցեղի մահացածների համար: Մենք աղոթում ենք նաև, որ Եղիայի ոգին ուժգնորեն մնա բոլոր ժողովուրդների վրա ամենուրեք, որ նրանք կարողանան առաջ շարժվել հավաքելով և մատչելի դարձնելով իրենց նախնիների ծագումնաբանությունը, և որպեսզի քո հավատարիմ զավակները կարողանան օգտագործել քո սուրբ տաճարները, որտեղ մահացածների համար կկատարեն նրանց հավերժական վեհացման հետ կապված բոլոր արարողությունները»:

Իր աղոթքում Նախագահ Սմիթը նաև ընդունեց, որ տաճարն իսկապես Տիրոջ տունն է և մի տեղ, որտեղ Աստծո ներկայությունը կարող է զգացվել.

Այսօր մենք այստեղ և այժմ նվիրաբերում ենք տաճարը քեզ այն ամենով, ինչ կապված է դրա հետ, որպեսզի այն սուրբ լինի քո աչքում, որպեսզի այն լինի աղոթքի տուն, գովաբանության և երկրպագության տուն, որպեսզի քո փառքը հանգչի դրա վրա և քո սուրբ ներկայությունն անընդհատ լինի այնտեղ, և որպեսզի այն լինի ընդունելի բնակավայր քո Շատ Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի, մեր Փրկչի համար, և մենք աղոթում ենք, որ բոլոր նրանք, ովքեր կանցնեն քո այս Տան շեմը, տպավորվեն դրա սրբությամբ։ . . .

Մեր Երկնայի՛ն Հայր, թույլ տուր, որ քո ներկայությունը միշտ զգացվի այստեղ, որ բոլոր նրանք, ովքեր հավաքված են այստեղ, հասկանան, որ իրենք քո հյուրերն են, և որ սա քո Տունն է»։[2] (Տես առաջարկ 1 էջ 101։)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Տաճարում մենք ստանում ենք սրբազան արարողություններ, ներառյալ արարողություններ, որոնք կապում են ընտանիքները հավերժության համար։

Որպեսզի կարողանանք պատրաստվել [սելեստիալ] արքայության համար, Տերն իր ողորմածությամբ, այս վերջին օրերում վերականգնեց Հիսուս Քրիստոսի ավետարանը և դրեց այնտեղ աստվածային իշխանություն, իսկ հետո տվեց հասկացողություն Իր զավակներին, որ որոշ արարողություններ կարելի է ստանալ և կատարել։ Այդ նպատակով կառուցվեցին տաճարներ և այդ տաճարներում, նրանք ովքեր ցանկանում են տեղ Սելեստիալ Արքայությունում, որ հնարավորություն ունենան գնալ և ստանալ իրենց օրհնությունները, հարստացնելու իրենց կյանքը և պատրաստվելու այդ արքայության համար։[3]

Մենք աշխարհում միակ ժողովուրդն ենք, ովքեր գիտեն թե ինչի համար են տաճարները։[4]

Յուրաքանչյուր [տաճար] կառուցվել է մեկ մեծ նպատակի համար՝ ծառայելու որպես Տիրոջ Տուն, ապահովելու մի սրբազան և հարմար տեղ սուրբ արարողությունների համար, որոնք կապում են երկրի վրա ինչպես և երկնքում —արարողություններ մահացածների համար և ողջերի համար, որոնք հավաստիացնում են նրանց, ովքեր ստանում են դրանք, և ովքեր

հավատարիմ են իրենց ուխտերին, իրենց ընտանիքներն ու նրանց ընկերակցությունն ունենալը, աշխարհներ առանց վերջի և վեհացում նրանց հետ մեր Հոր սելեստիալ արքայությունում:[5]

Մենք պետք է երախտապարտ լինենք ամուսնական ուխտի հավերժության գիտելիքի համար: Եթե միայն այս կյանքում մենք հույս ունենայինք, մենք իսկապես բոլոր մարդկանցից ամենաթշվառը կլինեինք (տես Ա Կորնթացիս ԺԵ.19): Համոզվածությունը, որ մեր հարաբերությունն այստեղ որպես ծնողներ և զավակներ, որպես ամուսիններ և կանայք կշարունակվի երկնքում, և որ սա միայն սկիզբն է մեծ և փառահեղ արքայության, որը մեր Հայրն է նախատեսել, որ մենք ժառանգենք մյուս կողմում, լցնում է մեզ հույսով և ուրախությամբ:[6]

Եթե ես մտածեի, ինչպես շատերն են մտածում, որ այժմ, երբ իմ սիրելի կինը և իմ սիրելի ծնողները գնացել են, որ նրանք հեռացել են իմ կյանքից հավերժ, և որ երբեք չեմ տեսնի նրանց կրկին, դա կզրկեր ինձ ամենամեծ ուրախություններից մեկից, որ ես ունեմ կյանքում, նրանց կրկին հանդիպելու մտորումից և նրանց ողջույնը և նրանց քնքշանքը ստանալուց և նրանց շնորհակալություն հայտնելուց երախտապարտ սրտի խորքերից այն ամենի համար, որ նրանք արել են ինձ համար:

Բայց շատ շատ միլիոններ կան մեր Հոր զավակներից, ովքեր չգիտեն, որ Երկնային Հոր կողմից նշանակած որոշ արարողություններից օգտվելով, ամուսիններն ու կանայք կարող են միավորվել ժամանակի և հավերժության համար և հավերժ վայելել իրենց երեխաների ընկերակցությունը: Որքան շնորհակալ մենք պետք է լինենք այդ գիտելիքի համար:[7]

Աշխարհում միայն մի քանի տեղեր կան, որտեղ մենք կարող ենք ամուսնանալ հավերժության համար, և դրանք Աստծո տաճարներն են. . . Կան նաև մեր եղբայրներից և քույրերից, բոլոր Երկնային Հոր զավակներից շատերը, ովքեր մերժել են այս արտոնությունը. . . անխուսափելի պատճառների հետևանքով: Բայց եթե նրանք արժանի ապրեն, և եթե նրանք օգտվեն այդ արտոնությունից, եթե նրանք ի վիճակի լինեին անել այդ, նրանք ոչինչ չէին կորցնի այս ժամանակավորապես անբարենպաստ հանգամանքների պատճառով: Ուրեմն մտածեք, թե որքան ավելի մեծ կլիներ նրանց պատասխանատվությունը, ովքեր ապրում են այնտեղ, որտեղ տղամարդիկ և կանայք կարող են

միավորվել հավերժության համար, և որտեղ նրանք կարող են գնալ և իրենց մահացածների համար կատարել աշխատանքը։ Աշխարհի մարդիկ չունեն այս օրհնությունը։ Արդյոք մենք դա գնահատո՞ւմ ենք։ . . .

Եկեք հրահանգենք մեր երիտասարդ մարդկանց այս հարցերում իրենց ամենավաղ պատանեկությունից, որպեսզի երբ նրանք մոտենան ամուսնության ժամանակին, նրանց մտքերում հարց չծագի, թե որտեղ կամ ինչպես կամ ում միջոցով այդ սրբազան արարողությունը պետք է կատարվի—և միակ տեղը, որտեղ այն կարող է կատարվել ժամանակի և հավերժության համար, տաճարն է։[8]

Ես շնորհակալ եմ [Տիրոջից] բոլոր արարողությունների համար, որոնք ես ստացել եմ Տիրոջ տանը, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է ոչ միայն ինձ համար, այլ ինձ թույլատրվել է ստանալ մի մասը նրա, ինչ նախատեսված էր բոլոր նրա զավակների համար, ուր էլ որ նրանք լինեն, եթե նրանք հոժար են ստանալ այն, ինչ նա առաջարկում է նրանց, առանց փողի և առանց գնի։[9]

Բոլոր. . . տաճարները, որոնք կառուցվել են կամ դեռ կնվիրագործվեն, կպարզվի որ չափից դուրս մեծ օրհնություն են բոլոր նրանց համար, ովքեր արժանիորեն օգտվում են արտոնությունից և օգտագործում են այն, ինչպես իրենց, այնպես էլ իրենց ցեղի մահացածների համար։[10] (Տես առաջարկ 2 էջ 101։)

Տաճարային աշխատանքի միջոցով մենք հավերժական օրհնությունները մատչելի ենք դարձնում մեր մահացած նախնիների համար։

Ծագումնաբանական ընկերությունը շատ տարիներ ժամանակ է անցկացրել, հավաքելով [ընտանեկան պատմության] վերաբերյալ տեղեկություններ, իսկ մյուսները տարիներ շարունակ ժամանակ են տրամադրել Տիրոջ տուն գնալու և նրանց համար մկրտվելու, ովքեր մահացած են, ամուսիններին և կանանց ու երեխաներին կնքելու միմյանց հետ՝ միավորելու ընտանիքն ինչպես մեր Երկնային Հայրն է հրահանգել, որ մենք անենք։ Լավ կլիներ, եթե մեզանից յուրաքանչյուրն իրեն տար հետևյալ հարցը. Ի՞նչ եմ անում այդ ուղղությամբ։ Ես անո՞ւմ եմ իմ մասը։ Մեր Երկնային Հայրն ասել է ժողովրդին Ջոզեֆ

«Աշխարհում միայն մի քանի տեղեր կան, որտեղ մենք կարող ենք ամուսնանալ հավերժության համար, և դրանք Աստծո տաճարներն են»:

Սմիթի միջոցով, որ եթե մենք չկատարենք աշխատանքը մեր մահացածների համար, մենք կկորցնենք մեր սեփական օրհնությունները և մենք կկտրվենք և ամենավերջին բաներից մեկը, որ Մարգարեն փորձեց անել, տաճարն ավարտելն էր, որտեղ մարդիկ կարող էին գնալ և կատարել աշխատանք իրենց մահացածների համար: Ահա թե որքան կարևոր է դա: Այն պետք է արվի ինչ-որ մեկի կողմից:[11]

Այստեղ ես հիշեցի մի պատմություն երկու եղբայրների մասին, ովքեր ապրում էին հյուսիսային Յուտայի քաղաքներից մեկում. Մեծ եղբայրը՝ Հենրին, բանկատեր էր և առևտրական և լիառատ պայմաններում էր ապրում: Մյուս եղբայրը՝ Ջորջը, ագարակատեր էր և իր կարիքները բավարարելուց բացի ուրիշ շատ միջոցներ չուներ, բայց նա ցանկություն ուներ կատարել տաճարային աշխատանք մահացածների համար: Նա հետազոտեց իրենց ծագումնաբանությունը և գնաց տաճար և աշխատեց նրանց համար, ովքեր վախճանվել էին:

Մի օր Ջորջն ասաց Հենրիին. «Կարծում եմ դու պետք է տաճար գնաս և օգնես»:

Բայց Հենրին ասաց. «Ես ժամանակ չունեմ որևէ այդպիսի բան անելու համար: Իմ ողջ ժամանակը ծախսվում է իմ գործի մասին հոգ տանելով»: . . .

Դրանից մոտ մեկ տարի հետո, Հենրին այցելեց Ջորջի տուն և ասաց. «Ջորջ, ես երազ եմ տեսել, և դա անհանգստացնում է ինձ: Արդյոք կարո՞ղ ես ասել, թե դա ինչ է նշանակում»:

Ջորջը հարցրեց. «Ի՞նչ ես տեսել Հենրի»:

Հենրին ասաց. «Ես տեսա երազումս, որ դու և ես հեռացել էինք այս կյանքից և վարագույրի մյուս կողմում էինք: Երբ առաջ գնացինք եկանք մի գեղեցիկ քաղաք: Մարդիկ հավաքված էին խմբերով շատ տեղերում և ամեն տեղ ուր գնում էինք, նրանք սեղմում էին քո ձեռքը և գրկում էին քեզ և օրհնում քեզ և ասում, թե որքան շնորհակալ էին նրանք քեզ տեսնելու համար, բայց, – ասաց նա, – նրանք ոչ մի ուշադրություն չէին դարձնում ինձ, նրանք չէի ասի, որ սիրալիր էին: Ի՞նչ է դա նշանակում»:

Ջորջը հարցրեց. «Դու կարծում ես՝ մենք վարագույրի այն կողմում էի՞նք»:

«Այո»:

«Սա հենց այն է, ինչի մասին ես խոսում էի քեզ հետ: Ես փորձում էի համոզել քեզ անել այդ աշխատանքը նրանց համար, ովքեր այնտեղ են: Ես նրանցից շատերի համար կատարել եմ աշխատանք, բայց շատ ավելի մեծ թվով մարդկանց համար դեռ պետք է արվի: Ավելի լավ է գործի անցնես, քանի որ դու համտեսել ես, թե ինչ կարող ես սպասել, երբ այնտեղ հասնես, եթե դու չանես քո մասը՝ կատարելով այս աշխատանքը նրանց համար»: (Տես առաջարկ 3, էջ 101:)

Ես շատ անգամներ եմ մտածել երկու եղբայրների կյանքից այս պատմության մասին: Շատ մարդիկ չեն հասկանում կյանքի լրջությունն ու սրբությունը, նրանք չեն հասկանում հավերժական ամուսնության սրբությունը: Մեր մարդկանցից կան ոմանք, ովքեր չեն հետաքրքրվում իրենց ծագումնաբանությամբ: Նրանքչեն հոգում իրենց նախնիների մասին, առնվազն կարելի է այդպես մտածել, տեսնելով նրանց վարվելաձևը:

«Մտածեք նրանց նվիրվածության և հավատարմության մասին, ովքեր օրեցօր գնում են տաճար և կատարում պարտականությունը նրանց համար, ովքեր անցել են մյուս կողմը»։

Նրանք չեն գնում տաճար իրենց մահացածների համար աշխատանք կատարելու։ . . .

. . . Մեր սեփական օրհնությունների համար Տիրոջ Տանը լինելուց հետո, եկեք մտածենք մեր նախնիների հանդեպ մեր պատասխանատվության մասին։ Ինչպիսի՞ն կլինի ձեր ընդունելությունը, երբ գնաք մյուս աշխարհ։ Դուք արդյո՞ք կլինեք այն մեկը, ում նրանք կհասնեն և կօրհնեն հավերժության դարերի ընթացքում, թե կլինեք այն եղբոր նման, որը եսասիրաբար աշխատում էր իր խնդիրները լուծել այստեղ և թողնում նրանց, ովքեր չէին կարող իրենք իրենց օգնել առանց իր օգնության։[12]

Դուք գիտեք, որ մենք բոլորս կապված ենք միմյանց այն մեծ աշխատանքով, որն արվում է մեր Հոր տաճարներում, որտեղ ընտանիքները, որոնք չեն միավորվել նախկինում, միմյանց մոտ են բերվում Սուրբ Քահանայության զորությամբ։ Տերը

նախատեսել է, որ իր որդիներից ու դուստրերից ամեն մեկն ունենա հնարավորություն օրհնվելու, ոչ միայն այստեղ երկրի վրա, այլ վայելելու հավերժական օրհնություններ:

Մտածեք նրանց նվիրվածության և հավատարմության մասին, ովքեր օրեցօր գնում են տաճար և կատարում պարտականությունը նրանց համար, ովքեր անցել են մյուս կողմը, և գիտեն, որ նրանք, ովքեր մյուս կողմում են, ճիշտ նույնքան անհանգիստ են մեզ համար: Նրանք աղոթում են մեզ համար և մեր հաջողության համար: Նրանք աղերսում են իրենց սեփական ձևով, իրենց հետնորդների համար, նրանց սերնդի համար, ովքեր ապրում են երկրի վրա:[13]

Տերը կօգնի մեզ որոնել մեր տոհմի մահացածներին:

Չիկագոյում, մի քանի տարի առաջ, «Առաջընթացի դարաշրջան» ցուցահանդեսի ժամանակ, մի օր ես գնացի մեր Եկեղեցու տաղավարը և հարցրեցի միսիոներներից, թե ով էր այդ մեծ մշակութային և գիտական տոնավաճառի ղեկավարը:

Նրանք ասացին, որ մարդու անունը Դոուզ է, և ես հարցրեցի. «Նա Չարլզ Գ. Դոուզի եղբա՞յրն է, որը Միացյալ Նահանգների փոխնախագահն էր և նաև մեծ Բրիտանիայի դեսպանը»:

Եվ նրանք պատասխանեցին. «Այո՛»:

«Լավ, – ասացի ես, – ես ուրախ եմ այդ իմանալու համար: Ինձ բախտ է վիճակվել նրան ճանաչել»:

Ես մտքումս ասացի.«Գնամ նրան տեսնեմ: Նա պետք է որ Հենրի Դոուզը լինի»: Ես գիտեի Հենրի Դոուզին, այսպիսով, ես մոտեցա հեռախոսին և զանգահարեցի նրա գրասենյակը: Նրա քարտուղարը. . . ասաց Պր.Դոուզին, որ Ջորջ Ալբերտ Սմիթը Սոլթ Լեյք Սիթիից այնտեղ էր և ուզում էր հանդիպել իրեն և նա ասաց նրան, որ ես գնամ իր մոտ: Այսպիսով, փոխարեն հերթագրելու ինձ հարյուր մարդուց հետո, սպասելու իմ հերթին, նա ինձ տարավ զարտուղի դռնով, և իմ առջև հայտնվեց մե բարձրահասակ տղամարդ, որին երբևէ չէի տեսել իմ կյանքում:

Նա ասաց. «Ես եմ Պր.Դոուզը»:

Նա շատ հաճելի էր, բայց կարող եք պատկերացնել, թե որքան ես անհարմար զգացի: Նա *Պր. Դոուզն էր*, և նա դեսպան

Դոուզի եղբայրն էր, բայց նա Ռուֆուս Դոուզն էր: Ես չգիտեի, որ գոյություն ուներ ոմն Ռուֆուս Դոուզ աշխարհում:

«Դեհ,– ասացի ես,– եկա ձեզ ասելու, որ սա հիանալի տոնավաճառ է և իմ շնորհակալությունը հայտնելու այն ամենի համար, որ դուք արել եք այն կազմակերպելով և ղեկավարելով: Սքանչելի է այն, ինչ իրականացվել է, և ինչպիսի կրթություն այդքան շատ մարդկանց համար: Այժմ ես հասկանում եմ, որ դուք զբաղված մարդ եք և սա այն բոլորն է, ինչ ես կամենում էի գալ և ասել, և շնորհավորել ու շնորհակալություն հայտնել ձեզ»:

«Դուք շատ ուշադիր եք, – ասաց նա: – Ներս եկեք»:

«Ոչ դա այն ամենն է, ինչ ես եկա ասելու», – պատասխանեցի ես:

Նա ասաց. «Ներս եկեք»:

Ես ասացի. «Ոչ այնտեղ հարյուր մարդ կա, որոնք սպասում են ձեզ տեսնելու համար»:

«Նրանցից ոչ մեկը չի ասի որևէ բան, որն այնքան սիրալիր լիներ, որքան ձեր ասածը»:

Այսպիսով՝ ես ներս մտա, առանց որևէ գաղափարի և գրեթե շնչակտուր: Նա պնդեց, որ ես նստեի և հաջորդ բանը, որ ես ասացի սա էր. «Ի դեպ, Պր. Դոուզ, որտեղի՞ց են ծագումով ձեր ժողովուրդը»:

«Ի նկատի ունեք Ամերիկայո՞ւմ»:

«Ի նկատի ունեմ որևէ տեղ»:

Նա ասաց. «Դուք հետաքրքրվո՞ւմ եք ծագումնաբանությամբ»:

«Իհարկե, հետաքրքրվում եմ, – պատասխանեցի ես: – Սոլթ Լեյք Սիթիում մենք ունենք ամենալավ ծագումնաբանական գրադարաններից մեկը»:

Նա ասաց. «Ներեցեք ինձ, մեկ րոպե» և դուրս եկավ իր գրասենյակից ու վերադարձավ ստվարաթղթե տուփով, որն ընտանեկան հին աստվածաշնչի չափսի էր և հանեց մի փաթեթ, որը սպիտակ նուրբ թղթով էր փաթաթված: Նա հանեց նուրբ թուղթը և սեղանին դրեց ամենագեղեցիկ կազմված գրքերից մեկը, որ երբևէ տեսել էի: Այն լավ էր տպագրված և առատորեն նկարազարդված էր, իսկ կազմը նրբագեղորեն քանդակադրոշմված էր ոսկով:

Երբ ես աչքի անցկացրեցի այն, ես ասացի. «Պր. Դոուզ, սա գեղեցիկ աշխատանք է»։

«Դա պետք է որ լինի։ Այն ինձ վրա նստել է քսանհինգ հազար դոլար»։

«Դեհ, – ասացի ես, – սա արժե այդքան»։

Նա ասաց. «Դա ձեզ համար որևէ բան արժե՞»։

Ես ասացի. «Կարժենար, եթե իմը լիներ»։

Նա ասաց. «Շատ լավ, դուք կարող եք այն վերցնել»։ Քսանհինգ հազար դոլար արժողությամբ ծագումնաբանությունը դրվեց իմ ձեռքում մի մարդու կողմից, ում ես հանդիպել էի ընդամենը հինգ րոպե առաջ։ Ես ուղղակի ապշել էի։ Մեր առաջին հանդիպումը շարունակվեց մի փոքր անց։ Ես ասացի, թե որքան ուրախ էի այն ստանալու համար, և որ ես կդնեմ այն Սոլթ Լեյք Սիթիի ծագումնաբանական գրադարանում։

Նախքան սենյակից իմ հեռանալը, նա ասաց. «Պր. Սմիթ, սա իմ մոր ծագումնաբանությունն է, Գեյթերի ծագումնաբանությունը։ Մենք պատրաստում ենք նաև իմ հոր՝ Դոուզների ընտանիքի ծագումնաբանությունը։ Այն կլինի ճիշտ այսպիսին։ Երբ այն ավարտվի ես կկամենայի դրա մի օրինակ ևս ուղարկել ձեզ»։

Հիսո՛ւն հազարանոց ծագումնաբանություն—և ուղղակի այն պատճառով, որ ես փորձեցի քաղաքավարի լինել ինչ-որ մեկի հանդեպ։ Չեմ կարծում, որ դա պատահականություն էր։ . . .

Տերն օգնում է մեզ, սքանչելի է, թե ինչպես է բացվում ճանապարհ և թե ինչպես են այլ մարդիկ հաճախ հուշում զգում պատրաստել իրենց ծագումնաբանությունը։ Բայց մենք, երբեմն, ձախողվում ենք օգտվել հնարավորություններից պատրաստելու մեր ծագումնաբանությունը, չնայած Տերը շատ դիպուկ է ասել, որ մինչև մենք չհոգանք մեր տաճարային աշխատանքի մասին, մենք կմերժվենք մեր մահացածների հետ (տես ՎևՈ 124.32)։ Սա շատ լուրջ բան է։ Սա մի բան է, որը մենք չենք կարող փոխել, եթե վատնել ենք մեր հնարավորությունները մինչ կյանքն անցնում է. . . Մենք չենք կարող սպասել, որ ուրիշներն անեն այս աշխատանքը մեզ համար։

Այսպիսով, Տերն, այնուհանդերձ, խրախուսում է, խորհուրդ տալիս և հորդորում է մեզ անել մեր աշխատանքը։ Որոշ

ընտանիքներ, ովքեր չեն կարողանում իրենք անել աշխատանքը, ունեն ուրիշ մեկին, ով աշխատում է ողջ ժամանակ իրենց տաճարային ծագումնաբանության և արձանագրությունների վրա։

Եթե մենք անում ենք մեր մասը, մեր ծագումնաբանությունները կբացվեն մեզ համար, երբեմն մի ձևով, երբեմն էլ մեկ ուրիշ ձևով։ Այսպիսով՝ ես ցանկանում եմ առաջարկել ձեզ, իմ եղբայրներ և քույրեր, եկեք անենք մեր մասը։[14] (Տես առաջարկ 4 էջ 101։)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես v–viii էջեր։

1. Կարդացեք Այդահոյի Այդահո Ֆոլզի Տաճարի նվիրագործման աղոթքից հատվածներ էջեր 91–92, և կարդացեք ՎևՈՒ 109.1–5, 10–13 հատվածները (Կիրթլենդի Տաճարի նվիրագործման աղոթքից)։ Խորհեք այն զգացումների մասին, որ դուք ունեցել եք, երբ հաճախել եք տաճար և մտածեք այն փորձառությունների մասին, որոնք զորացրել են ձեր վկայությունը, որ տաճարը Տիրոջ տունն է։
2. Ի՞նչ պատճառներ է բերում Նախագահ Սմիթը տաճարներ կառուցելու համար (տես էջեր 92–93)։ Ի՞նչ կարող ենք անել մենք խրախուսելու երիտասարդներին պատրաստվելու տաճարում ամուսնանալու համար։
3. Կարդացեք 94 էջի պատմությունը։ Որո՞նք են այն մի քանի ուղիներն այն մարդու համար, որն ունի շատ ուրիշ պարտականություններ ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելու համար։ Ի՞նչ կարող են անել քահանայության քվորումներն ու Սփոփող Միությունը՝ մասնակցելու համար։
4. Վերանայեք 96 էջում սկսվող բաժինը։ Ինչպե՞ս է Տերն օգնել ձեզ, երբ դուք փորձել եք տեղեկություն գտնել ձեր նախնիների մասին։ Ի՞նչ այլ օրհնություններ եք ստացել, երբ մասնակցել եք ընտանեկան պատմության աշխատանքին։

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Մաղաքիա Դ.5–6, Վարդապետություն և Ուխտեր 97.15–16, 110, 124.39–41, 128.9, 15–24:

Օգնություն ուսուցչին. «Երբ մի անձնավորություն բարձրաձայն կարդում է Նախագահ Սմիթի ուսմունքներից, հրավիրեք դասարանի մյուս անդամներին «լսել և փնտրել առանձնահատուկ սկզբունքներ կամ գաղափարներ: Եթե մի հատված պարունակում է անսովոր կամ դժվար խոսքեր կամ արտահայտություններ, բացատրեք դրանք նախքան հատվածի կարդալը: Եթե որևէ մեկը դժվարություն ունի խմբում կարդալու, նրանց հերթով կարդալ տալու փոխարեն խնդրեք թող կամավորները կարդան» (*Teaching, No Greater Call,* 56):

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1906, 57.
2. "Dedicatory Prayer . . . Idaho Falls Temple," *Improvement Era,* Oct. 1945, 564–65.
3. In *Deseret News,* Feb. 13, 1932, Church section, 7.
4. In Conference Report, Oct. 1950, 159.
5. "The Tenth Temple," *Improvement Era,* Oct. 1945, 561.
6. In Conference Report, Oct. 1905, 29.
7. "Priceless Prospects," *Improvement Era,* June 1950, 469.
8. "The Tenth Temple," 561, 602.
9. In Conference Report, Oct. 1929, 25.
10. "The Tenth Temple," 602.
11. "The Tenth Temple," 602.
12. "The Tenth Temple," 561, 602.
13. In Conference Report, Apr. 1937, 34–35.
14. "On Searching for Family Records," *Improvement Era,* Aug. 1946, 491, 540.

Աղոթքով բացեք ձեր հոգին Տիրոջը

Անձնական և ընտանեկան աղոթքի միջոցով մենք կարող ենք զգալ Երկնային Հոր ազդեցությունը մեր կյանքում և մեր տներում:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Աղոթքը կարևոր մաս էր այն տանը, որտեղ Ջորջ Ալբերտ Սմիթն է մեծացել: «Առանձին և ընտանեկան աղոթքներ էին հղվում ընտանիքի յուրաքանչյուր անդամի կողմից», ասում էր նա: «Բավականին վաղ ես կյանքում սովորեցի, որ Տերը պատասխանում էր աղոթքին, քանի որ Նա պատասխանում էր իմին և շատ ուղիներով Նա տվել է ինձ Իր աչալուրջ հոգատարության ապացույցը»:[1]

Նույնիսկ իր կյանքի ուշ շրջանում Նախագահ Սմիթը հիշում էր քնքշությամբ, թե ինչպես էր իր մայրը՝ Սառա Ֆարր Սմիթը սովորեցնում իրեն աղոթել.

«Ես դաստիարակվել եմ Վերջին օրերի Սուրբ մոր ծնկներին: Առաջին բաներից մեկը, որ հիշում եմ այն է, երբ նա բռնեց ձեռքս և տարավ աստիճաններով վեր: Այնտեղ սենյակում երկու մահճակալ կար, մահճակալը, որտեղ ծնողներս էին քնում և մի փոքրիկ անիվներով մահճակալ, որը մյուս կողմում էր գտնվում: Հիշում եմ այն, ինչպես երեկ: Երբ մենք բարձրացանք վերև, նա նստեց իմ անիվներով մահճակալի կողքին: Ես երբեք դա չեմ մոռանա: Նա ինձ ծնկի իջեցրեց իր դիմաց, ծալեց ձեռքերս և իր ձեռքերի մեջ առավ ու սովորեցրեց ինձ իմ առաջին աղոթքը: Ես երբեք այն չեմ մոռանա: Ես չեմ ուզում մոռանալ այն: Դա ամենահրաշալի հիշողություններից է, որ ունեմ կյանքում, հրեշտակային մայր նստած մահճակալիս կողքին և սովորեցնելով ինձ աղոթել:

«Քանչելի օրհնություն է, որը մենք վայելում ենք, աստվածային առաջնորդություն զգալ, ունենալ բացարձակ հավատք Աստծո անհատականության հանդեպ, որը հետաքրքրվում է մեզանով, և որը լսում է և պատասխանում մեր աղոթքներին»:

Դա այնքան պարզ աղոթք էր, բայց. . . այդ աղոթքը բացեց ինձ համար երկնքի պատուհանները: Այդ աղոթքը տարածեց դեպի ինձ իմ Երկնային Հոր ձեռքը, քանի որ նա ինձ բացատրել էր, թե ինչ էր այդ բոլորը նշանակում, այնքանով որքանով փոքր երեխան կարող էր հասկանալ: Այդ օրվանից մինչև այժմ, մինչ ես մոտավորապես միլիոն մղոններ եմ անցել աշխարհում մեր Հոր մյուս զավակների մեջ, ամեն օր և ամեն գիշեր, որտեղ էլ որ ես լինեի, երբ ես գնացել եմ քնելու կամ վեր եմ կացել, ես զգացել եմ, որ իմ Երկնային Հայրը մոտիկ է: Նա հեռու չէ:[2]

Իր կյանքի ընթացքում Նախագահ Սմիթն ապավինել է աղոթքին, ոչ միայն որպես միջոց Աստծուն ավելի շատ մոտենալու համար, այլ նաև օգնություն խնդրելու Նրանից կարիքի դեպքում: Մի օր, երբ նա լողում էր Խաղաղ օվկիանոսում՝ Կալիֆոռնիայի ափերին, նա ունեցավ հետևյալ փորձառությունը.

«Ես համարվում էի շատ լավ լողորդ և խորապես վայելում էի այդ մարզաձևը: Այդ առանձնահատուկ օրը մակընթացությունը շատ բարձր էր և սրընթաց: Հեռանալով ափից և լողալով դեպի օվկիանոսի խորքը, ես սուզվում էի ալեկոծվող և ինձ վրա ցայտող մեծ կոհակների միջով: Իմ նպատակն էր հասնել մեծ կոհակներից այն կողմ գտնվող թեթև ալեծփանքը, որտեղ ես կկարողանայի պառկել մեջքիս և վերև ու ներքև սահել մեծ ալիքների վրայով:

« Մինչ զբաղված էի այս հետաքրքիր մարզախաղով, մի շատ վիթխարի ալիք բարձրացավ և ցայտեց ինձ վրա, նախքան կկարողանայի ուղղել ինքս ինձ և սուզվել նախորդի միջով: Երկրորդը բռնեց ինձ և գցեց դեպի օվկիանոսի հատակը: Ես կարողացա զգալ, որ դուրս էի քաշվում բուքսիրով: Ճիշտ հենց այդ պահին միմյանց արագ հաջորդող շատ ալիքներ եկան և ես չկարողացա շտկվել նախքան պետք է սուզվեի մեկից դեպի մյուսը: Ես հասկացա, որ ուժս արագորեն լքում էր ինձ, որ անհրաժեշտ էր լինելու ինչ-որ օգնության միջոց գտնել: Երբ ես սահում էի դեպի մի վիթխարի ալիքի կատարը, տեսա մոտակայքում մի կառանացցի նեցուկները, և մտածեցի, որ եթե գերմարդկային ճիգերով կարողանայի միայն հասնել այդ ապահով նեցուկներին, կկարողանայի փրկել կյանքս:

Ես մտքումս խնդրեցի Երկնային Հորն ինձ տալ այնքան ուժ, որ հասնեի նպատակակետին: Երբ հասա կառանացցին

ես մեկնեցի ձեռքերս և գրկեցի սյուներից մեկը: Դրանք ծածկված էին սուր մուգ կապույտ գույնի խեցեմորթներով, և երբ ես ձեռքերով և ոտքերով ապահով փաթաթվեցի սյունին, դրանք կտրեցին իմ կրծքավանդակը, ոտքերս ու ազդրերս: Ես կախված մնացի, որքան կարողացա դիմանալ ցավին՝ սպասելով մի մեծ և անվտանգ ալիքի, որը կգար իմ ճանապարհով, որպեսզի կարողանայի ինձ նետել դրա վրա և անցնել դեպի մեկ ուրիշ հենասյուն, որն ավելի մոտ էր ափին: Ամեն անգամ աղոթքը սրտումս, ես ջանք էի գործադրում գլորվող ալիքների օգնությամբ ուղևորվելով մի հենասյունից դեպի մյուսը:

Դանդաղ, բայց հաստատակամորեն և մեծ դժվարությամբ ես ճանապարհ հարթեցի դեպի ափը, որտեղ ջուրը բավականաչափ սաղր էր ինձ համար, որ քայլեի դեպի ափը: Երբ հասա տաք ավազի անվտանգությանը, ես ընկա նվաղած: Այնքան թույլ էի, հազիվ խեղդվելուց պրծած, ես ի վիճակի չէի քայլել տուն, մինչև որ չհանգստացա որոշ ժամանակ: Պառկած ավազի վրա տաք ու ապահով ես մտածում էի այն տանջալի փորձառության մասին, որը ես հենց նոր էի տարել և իմ սիրտը լցված էր երախտագիտությամբ և խոնարհությամբ, որ Տերը. . . խնայեց իմ կյանքը»:[3] (Տես առաջարկ 1 էջ 112:)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Աղոթքը թույլ է տալիս մեզ խոսել մեր Երկնային Հոր հետ այնպես, կարծես թե Նա ներկա է:

Այս լարվածության և անկայունության ժամանակներում սքանչելի օրհնություն է, որը մենք վայելում ենք, աստվածային առաջնորդության վստահություն զգալ, ունենալ բացարձակ հավատք Աստծո անհատականության հանդեպ, որը հետաքրքրվում է մեզանով և որը լսում է և պատասխանում մեր աղոթքներին:[4]

Մի քանի տարի առաջ. . . ես լսեցի [մի] ինը տարեկան որբ տղայի մասին, որը շտապել էր հիվանդանոց, որտեղ զննումը ցույց էր տվել, որ նա պետք է անհապաղ վիրահատվի:Նա ապրում էր ընկերների հետ, ովքեր նրան տուն էին տվել: Նրա հայրն ու մայրը, (երբ կենդանի էին) նրան սովորեցրել էին աղոթել, այսպիսով, երբ նա հիվանդանոց եկավ, միակ բանը, որ նա ուզում էր, այն էր, որ Տերն օգներ իրեն:

Բժիշկները որոշել էին խորհրդակցություն անցկացնել: Երբ անվասայլակով նրան վիրահատարան տարան, նա նայեց շուրջը և տեսավ բուժքույրերին և բժիշկներին, ովքեր խորհրդակցել էին իր հիվանդության վերաբերյալ: Նա գիտեր, որ վիճակը լուրջ էր և նա ասաց նրանցից մեկին, երբ պատրաստվում էին նրան ցավազրկել. «Բժիշկ, մինչև վիրահատությունը սկսելը չէի՞ք աղոթի ինձ համար»:

Բժիշկն ակնհայտ շփոթությամբ ներողություն խնդրեց՝ ասելով. «Ես չեմ կարող աղոթել քեզ համար: Ապա տղան խնդրեց մյուս բժիշկներին և արդյունքը եղավ նույնը»:

Ի վերջո, տեղի ունեցավ շատ նշանակալից մի բան. այս փոքրիկ տղան ասաց. «Եթե չեք կարող աղոթել ինձ համար, խնդրում եմ չէի՞ք սպասի, որ ես աղոթեմ ինձ համար»:

Նրանք հեռացրեցին ծածկոցը և նա ծնկի իջավ վիրահատական սեղանի վրա, խոնարհեց գլուխն ու ասաց. «Երկնային Հայր, ես մի որբ տղա եմ: Ես ահավոր հիվանդ եմ: Խնդրում եմ, ինձ չե՞ս լավացնի: Օրհնիր այս մարդկանց, ովքեր պատրաստվում են վիրահատել, որպեսզի նրանք դա ճիշտ անեն: Եթե դու ինձ լավացնես, ես կփորձեմ մեծանալ և լավ մարդ դառնալ: Շնորհակալություն Երկնային Հայր, ինձ լավացնելու համար»:

Երբ նա վերջացրեց աղոթելը, նա պառկեց: Բժիշկների և բուժքույրերի աչքերը լցվել էին արցունքով: Ապա նա ասաց.«Ես պատրաստ եմ»:

Վիրահատությունը կատարվեց: Փոքրիկ տղային ետ տարան իր սենյակ և մի քանի օրից նրան դուրս գրեցին հիվանդանոցից, դեպի լիակատար ապաքինում ընթացող լավ վիճակում:

Դրանից մի քանի օր հետո, մի մարդ, որը լսել էր այդ դեպքի մասին, գնաց վիրաբույժներից մեկի գրասենյակը և ասաց. «Պատմեք այն վիրահատության մասին, որ դուք կատարել եք մի քանի օր առաջ՝ փոքրիկ տղայի վիրահատության մասին»:

Վիրաբույժն ասաց. «Ես վիրահատել եմ մի քանի փոքր տղաների»:

Տղամարդն ավելացրեց. «Այդ տղան ուզում էր, որ ինչ-որ մեկն աղոթեր իր համար»:

Բժիշկն ասաց շատ լրջորեն. «Այդպիսի դեպք եղել է, բայց դա շատ սրբազան բան է ինձ համար, որպեսզի ես խոսեմ դրա մասին»:

Տղամարդն ասաց. «Բժիշկ, եթե դուք պատմեք այն, ես հարգանքով կվերաբերվեմ դրան, ես կուզենայի լսել այն»:

Այդ ժամանակ բժիշկը պատմեց պատմությունը գրեթե այնպես, ինչպես ես պատմեցի այստեղ, և ավելացրեց. «Ես վիրահատել եմ հարյուրավոր մարդկանց, տղամարդկանց և կանանց, ովքեր կարծում էին, որ իրենք հավատք ունեին բժշկվելու, բայց երբեք չէի զգացել Աստծո ներկայությունն, ինչպես զգացի դա այն ժամանակ, երբ կանգնած էի այդ փոքրիկ տղայի կողքին: Այդ տղան բացեց երկնքի պատուհանները և խոսեց իր Երկնային Հոր հետ ինչպես մեկը կխոսեր մյուսի հետ երես առ երես»:[5] (Տես առաջարկ 2 էջ 112:)

Եկեք այնպես ապրենք, որ ամեն գիշեր, երբ ծնկի ենք գալիս աղոթելու և ամեն առավոտ, երբ խոնարհվում ենք Տիրոջ առջև շնորհակալություն հայտնելու, մեր մեջ լինի երկինքները բացելու զորությունը, որպեսզի Աստված լսի և պատասխանի մեր աղոթքներին, որպեսզի մենք իմանանք, որ մենք Նրա կողմից հավանության ենք արժանանում:[6]

Եթե մենք ապրենք մեր Երկնային Հորը մոտիկ, մենք կոգեշնչվենք իմանալու, թե ինչի մասին մենք աղոթենք:

Հայրս, երբ երիտասարդ տղամարդ էր, քիչ էր մնացել իր կյանքը կորցներ Պրովո գետում. . . Նրա հայրը, որը գտնվում էր Սոլթ Լեյք Սիթիում, ներգործված զգաց՝ գնալու այն սենյակը, որը հատկացված էր աղոթքի համար: Նա. . . ծնկի իջավ. . . և ասաց. «Երկնային Հայր, ես զգում եմ, որ ինչ-որ լուրջ բան է պատահել իմ ընտանիքի հետ Պրովոյում: Դու գիտես ես չեմ կարող լինել այնտեղ և լինել այստեղ: Երկնային Հայր, չէի՞ր պահպանի և անվտանգ պահի նրանց . . .»:

Այն ժամանակ, երբ նա աղոթում էր, մոտավորապես ճիշտ նույն պահին, ըստ ստուգված ժամանակի, հայրս ընկել էր գետը: Դա տեղի էր ունեցել հեղեղի ժամանակ: Գերաններն ու քարերը գետն էին լցվում ձորից և նա անօգնական էր:Նրանք, ովքեր մոտիկ էին, տեսնում էին նրա դժվարին կացությունը,

«Մենք պետք է այնքան մոտ ապրենք մեր Երկնային Հորը, որ երբ խոնարհվենք Նրա առջև, մենք կարողանանք իմանալ, որ այն բանը, որ մենք խնդրում ենք, հաճելի կլինի Նրան»:

բայց չէին կարողանում հասնել նրան: Ջրի ալեկոծությունն այնպիսին էր, որ ոչ ոք չէր կարող փրկվել դրանից: Նրանք ուղղակի սարսափահար կանգնած էին: Հայրս անում էր, ինչ կարող էր, գլուխը ջրից վեր պահելու համար, բայց նա զցվում էր վեր ու վար և բախվում քարերին և գերաններին: Հանկարծ մի ալիք բարձրացրեց նրա մարմինը ջրից և նրան ափ նետեց: Դա աղոթքի. . . ուղղակի պատասխանն էր:[7]

Մենք պետք է ուշադիր լինենք մեր առանձին աղոթքների հանդեպ: Մենք պետք է այնքան մոտ ապրենք մեր Երկնային Հորը, որ երբ խոնարհվենք Նրա առջև, մենք կարողանանք իմանալ, որ այն բանը, որ մենք խնդրում ենք, հաճելի կլինի Նրան, և եթե այն չշնորհվի այն ձևով, որ մենք խնդրում ենք, մենք կարողանանք իմանալ, որ մեզ կգա այն օրհնությունը, որին լիազորված ենք, և որ այն իսկապես օրհնություն կլինի:[8] (Տես առաջարկ 3 էջ 113:)

Աղոթքը հզոր ազդեցություն է մեր անձնական կյանքում, մեր տներում և մեր համայնքներում:

Տերը. . . բացատրել է մեզ, թե ինչպես կարող ենք օրհնություններ ստանալ աղոթքի միջոցով: Կան շատ մարդիկ աշխարհում, ովքեր չեն գիտակցում աղոթքի իսկական օգուտները: Աղոթքը զորություն է: Այն ունի այնպիսի ազդեցություն, որը, կարծես, համեմատաբար քիչ մարդիկ են հասկանում: . . .

. . . Քանի՞սն են այս Եկեղեցում, ովքեր չգիտեն, որ նրանք իրավունք ունեն, բացարձակ իրավունք, աղոթել իրենց Երկնային Հորը և խնդրել Նրան իրենցից վերցնել իրենց մտահոգությունը և տանել իրենց դեպի գոհունակություն և երջանկություն:[9]

Տարօրինակ է, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու որևէ անդամ պետք է հարկադրվի ասելու իր աղոթքները, և դեռ կան որոշ մարդիկ, ովքեր չեն աղոթում առանձին կամ իրենց ընտանեկան աղոթքներն ասում: Սակայն, եթե մենք չենք աղոթում, մենք կորցնում ենք աղոթքով եկող պաշտպանությունը:[10] (Տես առաջարկ 4 էջ 113:)

Ես կկամենայի շեշտել այս. Հուսով եմ, որ Վերջին օրերի Սրբերը չեն ձախողվի հղելու իրենց աղոթքները, իրենց առանձին աղոթքները և իրենց ընտանեկան աղոթքները: Երեխաները, որոնք մեծանում են տներում, որտեղ չեն արվում ընտանեկան աղոթքներ և առանձին աղոթքներ, շատ բան են կորցնում, և ես վախենում եմ, որ աշխարհիկ խառնաշփոթության, շտապողականության և իրարանցման մեջ, շատ դեպքերում տները մնում են առանց աղոթքի, առանց Տիրոջ օրհնությունների, այդ տները չեն կարող շարունակել երջանիկ լինել: Մենք ապրում ենք մի դարում, երբ մենք նույնքան մեր Երկնային Հոր կարիքն ունենք, որքան ամեն մի դարում երբևէ նրանք են ունեցել Նրա կարիքը:[11]

Մի հեռացրեք ձեզանից Աստծո զորությունը: Պահպանեք ձեր տներում աղոթքի և գոհաբանության ազդեցությունը և թող երախտագիտությունը հորդի դեպի նա, ով հեղինակն է և տվողը բոլոր բարիքների:[12]

Թող որ մեր տները լինեն մնայուն տեղեր աղոթքի և գոհաբանության ու երախտագիտության. . . Եկեք աղոթենք մեծ տղամարդկանց և կանանց համար աշխարհի, ովքեր Տիրոջ

«Պաշտպանեք ձեր ընտանիքներն ամեն հնարավոր ձևով: Միավորեք նրանց աղոթքի ազդեցության ներքո»:

կարիքն ունեն, բայց չեն հասկանում նրա հետաքրքրությունն իրենց հանդեպ: Աղոթեք. . . մեր կառավարիչների, մեր քաղաքապետերի՝ այն մարդկանց համար, ովքեր ազդեցություն ունեն քաղաքականության մեջ մեր տարբեր համայնքներում, որպեսզի նրանք կարողանան անել այն բաները, որոնք ավելի լավ կլինեն մեզ բոլորիս համար և կդարձնեն ավելի երջանիկ և բավականություն կպատճառեն մեր Երկնային Հորը: Դա մեր արտոնությունն է: Ես ասում եմ ձեզ, որ աղոթքի ուժը, մի բան է, որը հնարավոր չէ չափվել:[13]

Ընտանեկան աղոթքը միաբանություն է բերում ընտանիքներում:

Մենք, [որպես ընտանիքի անդամներ], միշտ չէ որ միանման ենք տեսնում, տղամարդիկ միշտ չէ, որ մտածում են ինչպես իրենց կանայք են մտածում և ճիշտ հակառակը, բայց եթե դուք աղոթեք միմյանց հետ, միաբանվելու անկեղծ միտումով, ես

կարող եմ ասել ձեզ, դուք համաձայնության կգաք բոլոր կարևոր հարցերի շուրջ։

Ես նկատեցի դա. . . հայտարարությունների տախտակի վրա. «Ընտանիքը, որն աղոթում է միասին մնում է միասին»։ Ես չգիտեմ, թե ով է դա տեղադրել այնտեղ, բայց ես ուզում եմ ասել, որ եթե դուք մի պահ մտածեք այդ մասին, դուք կիմանաք, որ դա ճիշտ է։ Ես հորդորում եմ ձեզ աղոթել միասին Տիրոջը, և ես նկատի չունեմ, որ ուղղակի միասին ասեք աղոթքները, ես նկատի չունեմ. . . որ կրկնեք ինչ-որ բան կրկին և կրկին, այլ բացեք ձեր հոգիները Տիրոջը՝ որպես ամուսիններ և հայրեր ձեր տանը, և ձեր կանանց և ձեր երեխաներին միավորեք ձեզ հետ։ Նրանց մասնակից դարձրեք։ Այդ ժամանակ տուն է գալիս մի ազդեցություն, որը դուք զգում եք, երբ գնում եք այնտեղ։[14]

Որպես մեկը, որին Տերը խնդրել է ուսուցանել, ես աղերսում եմ ձեզ կարգի դրեք ձեր տները։ Մի համարեք շատ բաներ, որ այդպես էլ պետք է լիներ։ Մի տարվեք աշխարհի խենթություններով և թուլություններով։ Պաշտպանեք ձեր ընտանիքներն ամեն հնարավոր ձևով։ Միավորեք նրանց աղոթքի ազդեցության ներքո. . . Աղոթքը շատ մեծ ուժ է՝ հավերժական կյանքի արահետում մեզ պահելու և մեզ դեպի սելեստիալ արքայություն տանելու համար։[15] (Տես առաջարկ 5 էջ 113։)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես v–viii էջեր։

1. «Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից» բաժնում (103–105 էջեր), ուշադրություն դարձրեք, թե ինչպես է Նախագահ Սմիթի աղոթքի հետ կապված վաղ փորձառություններն ազդել նրա վրա իր ողջ կյանքի ընթացքում։ Որո՞նք են այն մի քանի արդյունավետ ուղիները, որոնցով կարելի է ուսուցանել երեխաներին աղոթքի զորության մասին։
2. Վերանայեք պատմությունն ինը տարեկան տղայի մասին (106–107 էջեր)։ Ինչո՞ւ է երբեմն լինում այնպես, որ մեր

զրույցը Երկնային Հոր հետ դեմ առ դեմ խոսակցության նման չի լինում: Մտածեք, թե ի՞նչ կարող եք անել ձեր անձնական աղոթքներում Նրա ներկայությունն ավելի հաճախ զգալու համար:

3. Երբ խորհեք Նախագահ Սմիթի ուսմունքների մասին 108–109 էջեր, մտածեք այն մասին, թե ինչ հուշվեց ձեզ խնդրել աղոթքի ժամանակ: Ի՞նչ կասեիք որևէ մեկին, ով զգացել է, թե իր աղոթքներն առանց պատասխանի են մնացել:
4. Մտածեք Նախագահ Սմիթի այս մտքի մասին. «Եթե մենք չենք աղոթում, մենք կորցնում ենք աղոթքով եկող պաշտպանությունը» (էջ 100): Ի՞նչ ձևերով եք դուք զգացել աղոթքի ուժը և պաշտպանությունը: Մտածեք աղոթքի զորության մասին ձեր վկայությունով կիսվելու մասին նրանց հետ, ում դուք այցելում եք որպես տնային ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ:
5. Նախագահ Սմիթն ուսուցանել է, որ աղոթքը «կպահի մեզ հավերժական կյանքի ուղու վրա» (էջ 111): Ինչո՞ւ եք կարծում, որ դա այդպես է: Ի՞նչ կարող են անել ընտանիքները, որպեսզի միշտ հետևողականորեն միասին աղոթեն: Մտածեք, թե ինչ կարող եք անել անձնական աղոթքը ձեր կյանքի ավելի իմաստալի մասը դարձնելու համար:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Մատթեոս Զ.7–13, 7.7–11, 2 Նեփի 4.35, Ալմա 34.18–27, 37.37, 3 Նեփի 18.20–21, Վարդապետություն և Ուխտեր 88.63–64

Օգնություն ուսուցչին. «Պետք է աշակերտներին գործի դնել: Երբ ուսուցիչն իր վրա է վերցնում լուսարձակը, դառնում է ներկայացման աստղը, ինքն է խոսում ամբողջ ժամանակ և կամ այլ կերպ վերցնում է ողջ գործունեությունն իր վրա, գրեթե հաստատ է, որ նա խանգարում է դասարանի անդամների սովորելուն» (Asahel D. Woodruff, in *Teaching, No Greater Call,* 61):

Հղումներ

1. "Testimony of Elder George Albert Smith," *Liahona: The Elders' Journal,* Feb. 2, 1915, 501.
2. In Conference Report, Oct. 1946, 150–51.
3. "How My Life Was Preserved," George Albert Smith Family Papers, University of Utah, box 121, scrapbook 1, pages 45–46.

4. In Conference Report, Apr. 1931, 31.
5. "A Story of Two Boys," *Improvement Era,* June 1949, 365.
6. In Conference Report, Apr. 1942, 17.
7. "Pres. Smith's Leadership Address," *Deseret News*, Feb. 16, 1946, Church section, 1.
8. In Conference Report, Oct. 1934, 51.
9. "Saints Blessed," *Deseret News,* Nov. 12, 1932, Church section, 5.
10. In Conference Report, Apr. 1941, 25.
11. Priesthood meeting, Oct. 4, 1947, Church History Library, Salt Lake City.
12. "Pres. Smith's Leadership Address," 6.
13. In Conference Report, Apr. 1948, 163–64.
14. In Conference Report, Apr. 1949, 190.
15. In Conference Report, Apr. 1933, 72.

Սուրբ գրություններ՝ ամենաարժեքավոր գրադարանն աշխարհում

Աստված մեզ տվել է սուրբ գրություններ՝ օգնելու մեզ և մեր ընտանիքներին պատրաստվել հավերժական կյանքի համար:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Իր կյանքի ուշ շրջանում Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթը վերհիշում էր մի փորձառություն իր երիտասարդությունից, երբ սուրբ գրության մի հատված երկարատև ազդեցություն ունեցավ իր վրա: «Երբ ես մոտավորապես տասնչորս տարեկան հասակում էի, ես կարդացի Ալմայի քառասուներորդ գլուխը Մորմոնի Գրքում մեր Կիրակնօրյա դպրոցի դասի ժամանակ: Այն մեծ տպավորություն թողեց իմ մտքի վրա և օգնեց ինձ, երբ մահը խլեց մեր սիրելիներին. . . Դա մի հատված է, որտեղ սուրբ գրություններն ասում են մեզ, թե որտեղ են գնում մեր հոգիները, երբ նրանք թողնում են այս մարմինը (տես հատվածներ 11–14), և ես կամեցել եմ գնալ դրախտ կոչված այդ տեղն այդ ժամանակից ի վեր»:[1] (Տես առաջարկ1 էջ 123:)

Նախագահ Սմիթը հույս ուներ, որ ուրիշները կունենային իրենց սեփական իմաստալի փորձառությունները՝ կարդալով սուրբ գրությունները: Իր հրապարակային դասախոսություններում և ուրիշների հետ իր անձնական փոխհարաբերություններում, նա քաջալերում էր ամենքին ուսումնասիրել սուրբ գրությունները, որպես ավետարանի վերաբերյալ իրենց սեփական վկայությունները կառուցելու միջոց: Մի անգամ նա զնացքով ճանապարհորդելիս սկսեց զրուցել մի մարդու հետ, որը մեծացել էր Վերջին Օրերի Սրբերի ընտանիքում, բայց այլևս չէր հաճախում Եկեղեցի: «Երբ մենք զրուցեցինք, – հետագայում



«[Սուրբ գրությունները պարունակում են] այն, ինչ ձեր և իմ Հայրն է բավականաչափ կարևոր համարում՝ պահպանելու և տալու մարդկանց որդիներին և հասանելի դարձնելու աշխարհի շատ լեզուներով»։

ասել է նա, –ես խոսեցի նրա հետ Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին. . . Եվ նա ասաց, երբ մենք քննարկում էինք ավետարանի հիմունքները. «Այս բաներն ինձ հետաքրքրում են»: Մենք զրուցում էինք բավականին երկար ժամանակ և երբ ավարտեցինք, այդ լավ մարդը, ես հավատում եմ, որ նա լավ մարդ էր, ասաց ինձ. «Ես կտայի ողջ ունեցվածքս, այն համոզվածությունն ունենալու համար, որ դուք ունեք. . .

Ես ասացի. «Եղբայրս, պետք չէ տալ քո ողջ ունեցվածքն այդ համոզվածությունն ունենալու համար: Այն ամենն, ինչ դու պետք է անես սուրբ գրություններն աղոթքով ուսումնասիրելն է: Գնա այնտեղ, ուր քեզ կարող են բացատրել այն: Փնտրիր ճշմարտությունը և ճշմարտության գեղեցկությունը կհրապուրի քեզ և. . . դու կկարողանաս իմանալ, ինչպես ես գիտեմ, որ Աստված ապրում է, որ Հիսուսը Քրիստոսն է, որ Ջոզեֆ Սմիթը Կենդանի Աստծո մարգարեն է»:[2]

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Սուրբ գրություններում պարունակվող ճշմարտությունները շատ ավելի արժեքավոր են, քան մարդկանց փիլիսոփայությունները:

Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը և Թանկագին Մարգարիտը պարունակում են ոչ միայն մարդկանց, այլ Աստծո իմաստությունը: Չնայած դրանք չեն գտնում իրենց ուղին դեպի շատ մարդկանց տները, դրանք պարունակում են Տիրոջ խոսքը: Քիչ օգուտ ունի, որ մենք հասկանում ենք Հոմերոսին և Շեքսպիրին և Միլթոնին, և ես կարող եմ թվել բոլոր մեծ գրողներին աշխարհի. եթե մեզ չի հաջողվել կարդալ սուրբ գրությունները, մենք բաց ենք թողել այս աշխարհի գրականության առավել հրաշալի մասը:

Իմ եղբայրներ և քույրեր, ողջ ճշմարտությունը, որն. . . անհրաժեշտ է մեր փրկության համար, պարունակվում է այն գրքերի կազմերի ներսում, որոնք ես արդեն թվարկեցի: Մենք գուցե չունենանք երկու կամ երեք հազար հատորանոց գրադարան, բայց մենք կարող ենք ունենալ փոքր գումարով անգին գրադարան, որն արժեցել է այս աշխարհում երբևէ եղած լավագույն արյունին:[3]

Ես չեմ մտահոգվում, թե արդյոք դուք ունեք աշխարհի մեծագույն գրադարանները ձեր տանը, այլ թե արդյոք դուք ունեք այս գրքերը: Մտածեք Վաշինգտոնում Կոնգրեսի գրադարանի, Բրիտանիայի գրադարանի և այլ երկրների գրադարանների միլիոնավոր հատորների մասին, և այնուամենայնիվ, այն ամենն, ինչ Աստված հայտնի է դարձրել և հրատարակել մարդկանց որդիների համար, որն անհրաժեշտ է նրանց մի տեղ պատրաստելու սելեստիալ արքայությունում, պարունակվում են այս սրբազան գրքերի կազմերի ներսում: Մեզանից քանի՞սը գիտեն, թե ինչ են դրանք պարունակում: Ես հաճախ եմ գնում տներ, որտեղ տեսնում եմ բոլոր վերջին ամսագրերը: Ես գրադարակներում գտնում եմ գրքեր, որոնք ազդարարվում են որպես լավագույն վաճառք ունեցողներ: Եթե դուք բոլորը դեն նետեք և պահեք միայն այս սրբազան սուրբ գրությունները, դուք չեք կորցնի այն, ինչ Աստված գրել է տվել և դարձրել բոլորիս համար հասանելի վայելելու: Այսպիսով, եղբայրներ և քույրեր, մեր այլ օրհնությունների շարքում, եկեք չմոռանանք, որ Տերը հնարավոր է դարձրել մեզ համար ունենալ, վայելել և հասկանալ սուրբ գրությունները և ունենալ իր խոսքը, որը տրվել է դարերի ընթացքում իր զավակների փրկության համար:[4]

Երբ կարդում եմ սուրբ գրությունները. . . ես զարմանում եմ, թե ինչ բարությամբ է Տերն օրհնում նրանց, ովքեր ընդունում են իր ուսմունքները, քանի որ մենք ավելի շատ մխիթարություն ենք գտնում սրբազան հիշատակարաններում, քան թե դարերի այն բոլոր փիլիսոփայություններում, որոնք տրվել են մեզ մարդկանց իմաստության միջոցով:[5]

Մենք խոսում ենք մարդկանց փիլիսոփայությունների մասին և նրանց բարձրացնում երբեմն, որպես գրավիչ մի պատկեր, բայց երբ դրանք հակադրվում են մեր Երկնային Հոր ուսմունքների հետ, ինչպես պարունակվում են Սուրբ Գրում, դրանք անարժեք են: Դրանք երբեք չեն տանի որևէ մեկին դեպի հավերժական երջանկություն, ոչ էլ կօգնեն նրան տեղ գտնել մեր Երկնային Հոր արքայությունում:[6]

Ես, երբեմն, զգում եմ, որ մենք չենք գնահատում Սուրբ Աստվածաշունչը, և այն ինչ դա պարունակում է և այս մյուս սուրբ գրությունները՝ Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերն ու Թանկագին Մարգարիտը, որոնք ակնարկվում են որպես

նամակներ Երկնային Հորից: Դրանք կարող են այդպես ընդունվել, դրանք առնվազն նրա խորհուրդն են բոլոր մարդկանց զավակներին, թե ինչպես օգտվեն իրենց հնարավորություններից, որպեսզի իրենց կյանքը զուր չանցնի:[7] (Տես առաջարկ 2 էջ 123:)

Տերը տվել է մեզ սուրբ գրությունները՝ օգնելու մեզ հաղթահարել մեր փորձությունները և պատրաստվելու վեհացման համար:

Այս օրը մեր ստուգվելու և փորձվելու օրն է: Սա մի օր է, երբ մարդկանց սրտերը նվաղում են վախից: Երբ բազմություններն աշխարհում իրենց հարց են տալիս, թե ինչ է լինելու վերջը: Մի քանի ոգեշնչված մարդիկ գիտեն, թե ինչ է լինելու վերջը: Տերն ասել է մեզ, թե ինչ է տեղի ունենալու, [սուրբ գրություններում], այս սքանչելի գրադարանում, որը ես բռնել եմ իմ ձեռքում: Նա տվել է մեզ տեղեկություն, որ մենք պետք է հարմարեցնենք մեր կյանքը և պատրաստվենք, որպեսզի անկախ նրանից թե ինչ կպատահի, մենք լինենք սահմանագծի Տիրոջ կողմում:[8]

Թույլ տվեք կարդալ ինչ է Տերն ասում այս վերջին օրերի վերաբերյալ Վարդապետություն և Ուխտերի առաջին բաժնում. . . .

«Ուստի, ես Տերս, իմանալով այն աղետի մասին, որը պիտի գա երկրի բնակիչների վրա, կանչեցի իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին, և երկնքից խոսեցի նրա հետ, և նրան պատվիրաններ տվեցի: . . .

Քննեք այս պատվիրանները, քանզի դրանք ճշմարիտ են ու հավատարիմ, և մարգարեություններն ու խոստումները, որոնք դրանց մեջ են, բոլորը պիտի կատարվեն:

Ինչ որ ես՝ Տերս, ասել եմ, ես եմ ասել, և չեմ արդարանում. Ու թեև երկինքն ու երկիրը պիտի անցնեն, իմ խոսքը չպիտի անցնի, այլ բոլորը պիտի կատարվի, լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է:

Քանզի ահա, տես, Տերն Աստված է, և Հոգին վկայություն է բերում, և վկայությունը ճշմարիտ է, և ճշմարտությունը մնում է հավիտյանս հավիտենից: Ամեն» (ՎևՈ 1.17, 37–39):

Այս նախաբանն արժանի է ձեր ամենալուրջ խորհրդածությանը: Սա Հոր հանդիմանությունն է ուղղված մեզ բոլորիս: Դա սիրառատ խորհուրդն է զորովալից ծնողի, ով գիտի, թե մենք

ինչ ենք պահանջում, ինչպես նա ասաց հենց նոր կարդացած գլխում, որ իմանալով թե ինչ պիտի գա երկրի բնակիչների վրա, նա տվել է այս խորհուրդները։[9]

Երբեմն մենք մոռանում ենք, որ Տերը խոսել է և մենք ձախողվում ենք տեղեկացնել մեզ Նրա վճիռների մասին։ . . .

Մեծ քանակությամբ հատվածներ սուրբ գրություններում կարելի է մեջբերել որպես ապացույց, որ մեր Երկնային Հայրը ողորմածությամբ և բարությամբ է խոսել մարդկանց որդիների հետ բոլոր դարերի ընթացքում, ոչ միայն պատմելով նրանց, թե ինչ պետք է տեղի ունենա, այլ աղերսելով նրանց ետ դառնալ իրենց սխալ ուղիներից, որպեսզի չլինի թե կործանում գա նրանց վրա։ . . .

Մեր Երկնային Հայրը, իր հավատարիմ ներկայացուցիչների միջոցով, ասել է այն կարևոր բաների մասին, որոնք պետք է տեղի ունենան, և մենք կարող ենք կարդալ դրանց մասին Նրա սուրբ գրություններում։ Եթե մենք իսկապես ցանկանանք փրկվել և վեհացում ստանալ Նրա սելեստիալ արքայությունում Նա ասել է մեզ, թե ինչպես վարվենք։[10]

[Սուրբ գրությունները] ողջ աշխարհում գտնվող մեծագույն գրադարանն է։ Ի՞նչ է այն պարունակում։ Այն պարունակում է այն, ինչ ձեր և իմ Հայրն է բավականաչափ կարևոր համարում՝ պահպանելու և տալու մարդկանց որդիներին և հասանելի դարձնելու աշխարհի շատ լեզուներով։ Այս սուրբ գրությունները բոլորը կարևոր են և պետք է հասկացվեն Վերջին Օրերի Սրբերի կողմից։ Ես չեմ պատրաստվում խնդրել ձեզ բարձրացնել ձեր ձեռքերը հավաստիանալու, թե այստեղ հավաքվածներից քանիսն են երբևէ կարդացել այդ գրքերը, այլ ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ սրանք թանկարժեք ճշմարտություններ են և պարունակում են Տիրոջ կողմից աշխարհի համար հայտնի դարձված, տպագրված և հրատարակված ճշմարտությունը՝ սելեստիալ արքայությունում իր զավակների համար տեղ պատրաստելու նպատակով։ Այդ պատճառով ես ասում եմ՝ դրանք այդքան արժեքավոր են. . . Որքան շնորհակալ մենք պետք է լինենք, որ ապրում ենք մի օրում և դարում, երբ կարող ենք կարդալ նրա խորհուրդը և խրատը և ունենալ այն բաների բացատրությունը,

որոնք այլապես անորոշ և կասկածելի կլինեին մեզ համար։[11] (Տես առաջարկ 3 էջ 123։)

Մենք հավատք ենք ոգեշնչում մեր ընտանիքներին՝ կարդալով սուրբ գրությունները նրանց հետ։

Ես կկամենայի, որ դուք հարցնեիք ինքներդ ձեզ, թե ձեզանից քանիսն են կարդացել որևէ բան ձեր ընտանիքների համար այս գրքերից, ժամանակ առ ժամանակ, կանչել նրանց միասին՝ ուսուցանելու այն բաները, որ նրանք պարտավոր են իմանալ։ Վախենում եմ մեզանից շատերը կասեն, որ խիստ զբաղված են եղել։[12]

Մենք արդեն լսել ենք շատ օրհնությունների մասին, որոնք Տերը տվել է մեզ սրբազան հիշատակարաններում, որոնք պահվել են մինչև մեր օրերը, և որոնք պարունակում են ամենագետ Հոր խորհուրդն ու խրատը։ Տարօրինակ է թվում, որ մեր ժողովրդից շատերն առաջարկվող հնարավորություններով հանդերձ այս սրբազան հիշատակարանների բովանդակությանը ծանոթ չեն։[13]

Միթե մեր Հայրը մեզ անմեղ կհամարի, երբ մենք տուն գնանք, եթե մենք ձախողվել ենք ուսուցանել մեր զավակներին այս սրբազան հիշատակարանների կարևորությունը։ Դուք կարծում եք, որ Տերը. . . մեր հասանելիության սահմաններում դնելով գերազանց ուսմունքներ պարունակող այս սուրբ հիշատակարանները, նա մեզ երախտագետ կհամարի՞, եթե մենք ձախողվենք ուսուցանել դրանք մեր ընտանիքներին և ազդեցություն գործենք նրանց վրա, ում հետ մենք շփվում ենք։

Եղբայրներ և քույրեր, ես կրկին ուզում եմ շեշտել Վարդապետի ուսուցումը. «Քննեք սուրբ գրությունները», կարդացեք դրանք աղոթքով և հավատարմորեն, ուսուցանեք դրանք ձեր տներում, հավաքեք ձեր շուրջը ձեր ընտանիքին և ներշնչեք հավատք առ կենդանի Աստված, կարդալով այն բաները, որոնք հայտնի են դարձվել։ Դրանք բոլոր աշխարհի գրադարաններից ամենաարժեքավորն են։[14]

Պահեք այս գրադարանը, որտեղ որ կարողանաք գտնել այն, և որտեղ ձեր երեխաները կգտնեն այն, իսկ հետո ունեցեք բավականաչափ հետաքրքրություն այն տղաների և աղջիկների

«Հավաքեք ձեր շուրջը ձեր ընտանիքին և ներշնչեք հավատք առ կենդանի Աստված, կարդալով այն բաները, որոնք հայտնի են դարձվել»:

հավերժական փրկության հանդեպ, ովքեր ձեր տանն են, որ դուք գտնեք ուղիներ և միջոցներ հետաքրքրելու նրանց այն բաներում, որոնք այս գրքերը պարունակում են, որպեսզի նրանք կարողանան իմանալ, թե որքան արժեքավոր են դրանք իրենց Երկնային Հոր աչքում:[15]

Որքան հրաշալի բան էր ինձ համար, երբ ես երեխա էի, ունենալ հայր և մայր, ովքեր նստում էին բուխարու կողքին և կարդում Աստվածաշունչը, մինչ մենք երեխաներով նստում էինք հատակին: . . .

Այժմ ես ասում եմ, իմ եղբայրներ և քույրեր, որ Հիսուս Քրիստոսի խորհուրդը դեռ ուժի մեջ է, որում նա ասել է. «Քննեցէք գրքերը որ դուք կարծում էք թէ նորանցով ունիք յավիտենական կեանք, եւ նորանք են որ ինձ համար վկայում են» (Հովհաննես Ե.39:) Մի անտեսեք ընտանեկան հին Աստվածաշունչը, մի դրեք այն գրադարակի մի հեռավոր տեղում և մոռացեք այն: Պարզեք, եթե արդեն չգիտեք, թե այն ինչ է ասում, իսկ եթե դուք

նախկինում այն կարդացել եք, կարդացեք այն կրկին ձեր երեխաներին և ձեր երեխաների երեխաներին։ Կարդացեք նրանց ոչ միայն Աստվածաշունչը, այլ սուրբ գրության այլ գրքեր, որոնք Տերն է տվել մեզ մեր վեհացման, մեր մխիթարության և մեր օրհնության համար։[16]

Ես հորդորում եմ ձեզ, ով Իսրայել, քննեք սուրբ գրությունները, կարդացեք այն ձեր տներում, ուսուցանեք ձեր ընտանիքներին այն, ինչ Տերն է ասել, և եկեք ավելի քիչ ժամանակ ծախսենք կարդալով անկարևոր և հաճախ ժամանակակից վնասակար գրականության վրա և գնանք դեպի ճշմարտության աղբյուրը և կարդանք Տիրոջ խոսքը։[17] (Տես առաջարկ 4։)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես v–viii էջերը։

1. Երբ կարդաք առաջին պարբերությունը էջ 115, մտածեք մի ժամանակի մասին, երբ սուրբ գրության հատվածը ոգեշնչել է ձեզ նմանատիպ ձևով։ Ինչպե՞ս եք սկսել իմանալ, որ սուրբ գրությունները ճշմարիտ են։ Ի՞նչ փորձառություններ եք ունեցել նրանց հետ վերջերս, որը զորացրել է այդ վկայությունը։
2. Կարդացեք 117 էջում սկսվող բաժինը և մտածեք, թե ինչ տեղ ունեն սուրբ գրությունները ձեր անձնական գրադարանում (Այն բաների շարքում, որոնք դուք կարդում եք, դիտում կամ ունկնդրում)։ Ի՞նչ կարող եք դուք անել սուրբ գրություններին ավելի մեծ տեղ հատկացնելու համար ձեր տանը և ձեր կյանքում։
3. Վերանայեք 118 էջում սկսվող բաժինը։ Ինչպե՞ս են սուրբ գրություններն օգնել ձեզ դիմակայել վերջին օրերի աղետներին։ Մտածեք թե ինչպե՞ս դուք կօգտագործեիք սուրբ գրությունները օգնելու ինչ-որ մեկին, որը գիտեք որ դժվարին փորձության է դիմակայում։

4. Խորհեք Նախագահ Սմիթի ընտանիքներին ուղղված խորհրդի մասին 121–123 էջեր: Ի՞նչ օրհնություններ են գալիս ընտանիքներին, ովքեր միասին են ուսումնասիրում սուրբ գրությունները: Ինչպիսի՞ արդյունավետ ուղիներ կան ոգեշնչելու մեր երեխաներին (կամ թոռներին) հետաքրքրություն դեպի սուրբ գրությունները: Աղոթքով մտածեք, թե ինչ կարող եք անել ավելի ջանասեր լինելու ձեր ընտանիքի հետ սուրբ գրություններն ուսումնասիրելիս:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Երկրորդ Օրինաց Զ.6–7, Հեսու Ա.8, Հռովմայեցիս ԺԵ.4, Բ Տիմոթեոս Գ.15–17, 2 Նեփի 4.15, Հելաման 3.29–30, Վարդապետություն և Ուխտեր 33.16

Օգնություն ուսուցչին. «Դուք կարող եք օգնել նրանց, ում ուսուցանում եք՝ ավելի վստահ զգալ քննարկմանը մասնակցելու իրենց ունակության մեջ, եթե դրականորեն արձագանքեք յուրաքանչյուր անկեղծ մեկնաբանությանը: Օրինակ դուք կարող եք ասել. «Շնորհակալություն քո պատասխանի համար: Այն շատ խորիմաստ էր». . . կամ «Դա լավ օրինակ է» կամ «Ես շնորհակալ եմ այն բոլորի համար, որ դուք ասացիք այսօր» (*Teaching, No Greater Call,* 64):

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1949, 83–84.
2. In Conference Report, Oct. 1948, 165–66.
3. In Conference Report, Oct. 1917, 43.
4. In Conference Report, Oct. 1948, 164–65.
5. In Conference Report, Oct. 1931, 120.
6. In Conference Report, Apr. 1946, 125.
7. In Conference Report, Oct. 1923, 70.
8. In Conference Report, Apr. 1942, 14.
9. In Conference Report, Oct. 1917, 42–43.
10. In Conference Report, Oct. 1940, 107–9.
11. In Conference Report, Oct. 1948, 164.
12. In Conference Report, Oct. 1950, 179.
13. In Conference Report, Apr. 1929, 30.
14. In Conference Report, Oct. 1917, 43–44.
15. In Conference Report, Oct. 1948, 165.
16. "Pres. Smith's Leadership Address," *Deseret News,* Feb. 16, 1946, Church section, 6.
17. In Conference Report, Oct. 1917, 41.

Աստծո կողմից հայտնություն Իր զավակներին

Մեր Երկնային Հայրն առաջնորդում է մեզ անհատապես և որպես Եկեղեցի՝ Սուրբ Հոգու միջոցով:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Որպեսզի ուսուցանի հայտնության կարևորությունը Եկեղեցին առաջնորդելիս Ջորջ Ալբերտ Սմիթը պատմել է մի փորձառության մասին, որ նա ունեցել է ինքնաթիռով թռչելիս Լոս Անջելոսից՝ Կալիֆոռնիա, դեպի Սոլթ Լեյք Սիթի՝ Յուտա:

«Միլֆորդի մոտ՝ Յուտայում, մենք հանկարծակի մտանք վատթարագույն մի մառախուղի մեջ, ինչպիսին երբեք չէի տեսել: Փորձեցի ինքնաթիռի պատուհանից դուրս նայել, բայց ոչինչ չտեսա մառախուղի միջով: Ինքնաթիռից դուրս ոչ մի բան չէր երևում որևէ ուղղությամբ:

Ես գիտեի, որ մենք մոտենում էինք լեռներին մոտավորապես րոպեում երեք մղոն արագությամբ, որ մենք ստիպված էինք անցնել դրանց վրայով՝ հասնելու Սոլթ Լեյքի հովիտ: Ես անհանգստացած էի և հարցրեցի ինքս ինձ.«Ինչպես կարող է օդաչուն գտնել ճանապարհը, երբ հնարավոր չէ տեսնել որևէ բան: Նա կողմնացույց ուներ, բայց օդանավը կարող է շեղվեր ուղուց: Նա ուներ սարքեր, որոնք ցույց էին տալիս մեր հեռավորությունը ծովի մակարդակից, բայց նա չէր կարող իմանալ, թե որքան հեռու էինք մենք գետնից: Ես կարծում էի, որ նա գուցե թռչեր բավականին բարձր՝ անցնելով մեր և Սոլթ Լեյքի հովտի միջև գտնվող լեռները և փորձել գտնել վայրէջքի դաշտը թարթող լույսերով, երբ բավականաչափ մոտենայինք, բայց ես սարսռում էի, երբ մտածում էի ուղին կորցնելու և լուսային ազդանշաններն ու օդանավակայանը բաց թողնելու մասին:

Ջորջ Ալբերտ Սմիթն ու նրա կինը՝ Լյուսին: Նախագահ Սմիթն օգտագործել է օդանավի վրա ունեցած մի փորձառություն, որպեսզի ուսուցանի հայտնության կարևորության մասին:

Իմ նեղսրտված վիճակում ես գնացի այն տարածքը, որը զբաղեցվում է օդաչուի և նրա օգնականի կողմից՝ տեսնելու թե ինչպես էին նրանք իմանում, թե ուր են գնում: Ես չէի հասկանում, թե գետնից մենք հարյուր ոտնաչափ, թե հազար ոտնաչափ բարձրության վրա էինք և ես չգիտեի, թե նրանք ինչպես էին կարողանում դա իմանալ, բացի դա լիներ մոտավորապես կռահելուց: Ես նկատեցի, որ օդաչուն մի փոքրիկ սարք ուներ իր ականջին, որոնք հեռախոսային գրասենյակների գործակալներն են օգտագործում: Ես հարցրեցի օդաչուի օգնականից, թե ինչպես էին իմանում, թե թռչում էինք ճիշտ ուղղությամբ, թե կուրսից շեղվել էինք: Նա պատասխանեց. «Երբ մենք չենք կարողանում տեսնել, մենք առաջնորդվում ենք ռադիոազդանշաններով»:

«Ի՞նչ է դա», – հարցրեցի ես: Նա բացատրեց, որ ազդանշանը կարելի է նմանեցնել երկու կետերի միջև գտնվող էլեկտրական գծի և մեր դեպքում այդ կետերն էին Միլֆորդը և Սոլթ Լեյք Սիթին: Նա ասաց, որ օդաչուի ականջի վրայի սարքը գործում էր այնպես, որ երբ օդանավն ազդանշանի մեջ էր, ցածր մռռոցի ձայն էր շարունակվում լսվել, բայց երբ օդանավը գնում էր աջ կամ ձախ ձայնը փոխվում էր և օդաչուն նախազգուշացվում էր մի ձայնով, որը նման էր հեռագրաստեղի ազդանշանին:

«Ես լիովին հանգստացած վերադարձա իմ տեղը՝ իմանալով, որ չնայած մենք ծածկված էինք մառախուղով և մթությամբ և չէինք կարողանում ոչ տեսնել ոչ զգալ, թե որտեղ էինք մենք, օդաչուն անընդհատ ստանում էր տեղեկություն, որ մենք գծի վրա էինք և նա գիտեր, որ մենք շուտով կժամանենք մեր նպատակակետը: Մի քանի րոպե հետո ես զգացի, որ օդանավը վայրեջքի էր գնում: Մենք անցել էինք լեռների գագաթների վրայով և մոտենում էինք օդանավակայանին: Երբ մենք գրեթե իջել էինք, տեսանք դաշտի հզոր լույսերը, որոնք նշում էին, թե որտեղ իջնենք և ինքնաթիռն իր թանկարժեք բեռով փափուկ դիպավ գետնին, ինչպես ծովաճայը թեթևորեն իջնում է ջրի վրա, դանդաղ կանգ առավ, և մենք դուրս եկանք մեր փոխադրամիջոցից գետնի վրա, երջանիկ՝ կրկին տանը լինելու համար: . . .

Ես շատ անգամներ եմ մտածել այն դասի մասին, որ ես սովորեցի ինքնաթիռում և կիրառել եմ այն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու փորձառության մեջ: . . .

«Տերը ոչ միայն խորհուրդ է տվել մեզ, որն արձանագրված է սուրբ գրություններում մեզ առաջնորդելու համար,այլ նաև դրել այս Եկեղեցում առաջնորդ, իր որդիներից մեկին, որն ընտրվել է և կարգվել ու ձեռնադրվել լինելու Նախագահ: Նա մեր օդաչուն է և նա կուղղորդվի նրա ձայնով, որը նրան հնարավորություն կտա առաջնորդելու մեզ, թե ուր պետք է գնանք: Եթե մենք իմաստուն լինենք, մենք չենք դնի մեր դատողությունը ընդդեմ նրա, այլ մենք երջանիկ կլինենք պատվել նրան իր տեղում, քանի դեռ Տերը կհաստատի նրան»:

Նախագահ Սմիթը օդանավի վրայի իր փորձառությունն օգտագործեց նաև՝ ուսուցանելու, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է ստանալ հայտնություն առաջնորդելու մեր սեփական կյանքը, եթե մենք արժանի լինենք:

«Եթե մենք ապրում ենք ինչպես գիտենք, որ պետք ապրենք, մենք արժանանում ենք հանդարտ մեղմ ձայնի շշունջներին, որն ուշադրություն է հրավիրում վտանգին, ասելով, որ սա է ապահովության ուղին, քայլեք նրանում. . . Եթե մենք սխալվել ենք մեր վարքում, ձայնը կշշնջա մեզ. «ետ դարձիր, դու սխալ ես գործել, դու ուշադրություն չես դարձրել քո Երկնային Հոր խորհրդին»: Ետ դարձիր քո սխալ ուղուց, քանի դեռ ժամանակ կա, քանզի եթե դու շատ հեռու գնաս ճիշտ ուղուց, դու չես լսի ձայնը և դու անհույս կկորչես: . . .

«Իմ խորհուրդն է ձեզ ստանալ Աստծո Հոգին և պահպանել այն և դա պահպանելու միակ ուղին, նրան մոտիկ ապրելն է, պահելով նրա պատվիրանները. . . Լսեք հանդարտ մեղմ ձայնին, որը միշտ ձեզ կուղղորդի, եթե դուք արժանի լինեք նրան մի արահետում, որը նշանակում է հավերժական երջանկություն»:[1] (Տես առաջարկ 1 էջ 135:)

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Աստված Իրեն ցույց է տալիս Իր զավակներին մեր օրերում ճիշտ ինչպես Նա արել է անցած դարերում:

Ինչպիսի արտոնություն է ապրել աշխարհի մի դարաշրջանում, երբ մենք գիտենք, որ Աստված ապրում է, երբ մենք գիտենք, որ Հիսուս Քրիստոսն աշխարհի Փրկիչն է և մեր Քավիչը և երբ գիտենք, որ Տերը շարունակում է ցույց տալ իրեն իր

զավակներին, ովքեր պատրաստվել են ստանալու նրա օրհնությունները: Ես նայում եմ մեծ լսարանի դեմքերին այս առավոտ [գերագույն համաժողովի նիստում], որոնցից մեծ մասը վայելում են Ամենազորի ոգեշնչումը և երբ նրանք աղոթում են, նրանք աղոթում են իրենց Հորը երկնքում, գիտենալով, որ իրենց աղոթքները կպատասխանվեն օրհնություններով իրենց գլխին. . . Մենք գիտենք, որ կա Աստված երկնքում, որ Նա մեր Հայրն է, որ նա հետաքրքրում է մեր գործերով և նա արել է դա աշխարհի սկզբից ի վեր, երբ նրա առաջին զավակները դրվեցին այս երկրի վրա:[2]

Այս մեծ Եկեղեցու և բոլոր մյուս եկեղեցիների միջև տարբերությունը սկզբից ի վեր կայանում է նրանում, որ մենք հավատում ենք աստվածային հայտնությանը, մենք հավատում ենք, որ մեր Հայրը խոսում է մարդու հետ այսօր, ինչպես նա արել է Ադամի ժամանակ: Մենք հավատում ենք և գիտենք, որն ավելին է, քան պարզապես հավատքը, որ մեր Երկնային Հայրը մեկնել է իր ձեռքն այս աշխարհում, մարդկանց որդիների փրկության համար:[3]

Դա այն պատճառով չէ, որ մենք հավատք ունենք այս գրքերի հանդեպ [Մորմոնի Գրքի, Վարդապետություն և Ուխտերի և Թանկագին Մարգարիտի հանդեպ], որ մենք համարվում ենք սեփական ժողովուրդ, այլ այն պատճառով, որ վստահորեն հավատում ենք, որ մեր Հայրը երկնքում խոսել է այս օրերում և այս դարաշրջանում: Փաստորեն, մենք գիտենք, որ կա հաղորդակցություն երկինքների հետ: Մենք հավատում ենք, որ Եհովան ունի նույն զգացումը մեր հանդեպ, նույն ազդեցությունը մեզ վրա, ինչ որ նա ուներ իր զավակների հանդեպ և իր զավակների վրա, ովքեր ապրում էին այս աշխարհում այն ժամանակներում, որոնք անցել են:

Անհավատների կողմից, Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամներն աշխարհի բոլոր դարերում համարվել են յուրահատուկ ժողովուրդ: Երբ Տերը խոսել է իր ծառաների միջոցով, եղել են տարբեր ժամանակաշրջաններ, երբ եղել են շատ մարդիկ երկրագնդի վրա, ովքեր ասել են. «Ես չեմ հավատում հայտնության»: Այս դարը բացառություն չէ կանոնից: Մեր Հոր հազարավոր, այո, միլիոնավոր զավակներ, ովքեր ապրում են երկի վրա, կրկնում են անցյալի պատմությունը, երբ նրանք մերժում են, որ

Աստված կրկին հայտնել է իր կամքը մարդկանց որդիներին և ասում, որ իրենք կարիք չունեն որևէ այլ հայտնության։[4]

Մենք չենք հավատում, որ երկինքները կնքված են մեր գլխավերևում, այլ որ նույն Հայրը, ով սիրել և փայփայել է Իսրայելի զավակներին, սիրում և փայփայում է մեզ։ Մենք հավատում ենք, որ մենք նույնքան մեր Երկնային Հոր օգնության կարիքն ունենք, որքան նրանք ունեին։ Մենք գիտենք, որ այն օրերում և դարում, որում մենք ապրում ենք, կնիքը ջարդվել է, և Աստված կրկին խոսել է երկինքներից։[5] (Տես առաջարկ 2 էջ 135։)

Տերն առաջնորդում է Իր ժողովրդին Եկեղեցու Նախագահին տրված հայտնության միջոցով։

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին կազմակերպվել է Երկնային Հոր կողմից ուղղակի պատվիրանով։ Այս Եկեղեցին հայտնության վեմի վրա է հիմնված և առաջնորդվել է հայտնության միջոցով։[6]

Այս օրերում առանձնահատուկ մի բան է՝ պատկանել մի եկեղեցու, որում նրանք, ովքեր անդամներ են, հավատում են, որ Տերը խոսում է իրենց առաջնորդների միջոցով։ Երբ մենք հրահանգվում ենք այս Եկեղեցու Նախագահի միջոցով, մենք հավատում ենք, նա ասում է մեզ, թե ինչ է կամենում Տերը, որ մենք անենք։ Մեզ համար դա ավելին է, քան մարդու կողմից տրված ինչ-որ խորհուրդ։ Մենք հավատում ենք, որ այն քննում է մեր հոգիները և մեզ հուշվում է վերանորոգել մեր վճռականությունը լինելու այն, ինչ Աստված է կամենում, որ մենք լինենք։[7]

Մենք ունեցել ենք մոլորության մեջ ընկած հոգիներ Եկեղեցում, ովքեր իրենց անգիտության մեջ, հակադրվել են [Եկեղեցու Նախագահին], չգիտակցելով այն փաստը, որ նրանք հակադրվում են Տիրոջը, և նրանք ընկել են խավարի և վշտի մեջ և մինչև նրանք չապաշխարեն, նրանք չեն գտնի տեղ սելեստիալ արքայությունում։

Եկեք հիշենք, որ այս Եկեղեցու Նախագահն այստեղ մահկանացու կյանքում պաշտոնապես նշանակված է որպես Եկեղեցու օդաչու՝ ներկայացնելով երկնքի և երկրի Տիրոջը։[8]

Երբ մարդիկ, քանի որ երբեմն դա անում են՝ ինչ-որ մի ուղղությամբ հաջողության հասնելու համար, գալիս են և ասում

որևէ անձնավորության կամ անձանց. «Ես տեսել եմ այս երազը և սա է այն, ինչ Տերը կամենում է մեզ, որ անենք», դուք կարող եք իմանալ, որ նրանք սահմանագծի Տիրոջ կողմում չեն։ Աստծո կողմից երազները, տեսիլքները և հայտնությունները գալիս են իր կանոնավոր նշանակված ծառայի միջոցով։ Դուք կարող եք ունենալ երազներ և դրսևորումներ ձեր իսկ հանգստության և բավարարվածության համար, բայց դուք չեք ունենա դրանք Եկեղեցու համար. . . Մենք չպետք է խաբվենք։[9]

Հոգիս լցված է երախտագիտությամբ այսօր իմանալով, որ, քանի դեռ մենք կշարունակենք մեր անդամակցությունը Եկեղեցում, մենք իսկապես կունենանք օդաչու, ով գիտի ճանապարհը և եթե մենք հետևենք նրա հրահանգին. . . մենք չենք հանդիպի հոգևոր աղետների, որոնք աշխարհն է դիմակայում, այլ առաջ կգնանք անելով բարիք, օրհնելով մարդկությանը և ուրախանալով նրանց ընկերակցությամբ, ում մենք սիրում ենք։[10] (Տես առաջարկ 3 էջ 135։)

Մեզանից յուրաքանչյուրն իրավունք ունի անհատական ոգեշնչման Սուրբ Հոգուց, եթե մենք պահում ենք պատվիրանները։

Ես հավատում եմ ձեզ, իմ եղբայրներ և քույրեր. . . Ձեզ իրավունք է տրված ունենալ նույն գիտությունը, ինչ որ նա, ով նախագահում է Եկեղեցու վրա։ Դուք իրավունք ունեք ունենալու նույն ոգեշնչումը, որը հորդում է դեպի նրանց, ում Աստված կարգել է որպես Իր առաջնորդներ։ Դուք իրավունք ունեք Հոգու ոգեշնչումն ունենալու և գիտելիքը, որ Նա ձեր Հայրն է, և երբ ես ասում եմ «դուք», ես նկատի ունեմ բոլոր նրանց, ովքեր հնազանդվել են մեր Հոր պատվիրաններին և ճաշակել են Տիրոջ Հոգու քաղցր ազդեցությանը Քրիստոսի Եկեղեցում. . . Մեզանից յուրաքանչյուրն իրավունք ունի Տիրոջ ոգեշնչումն ունենալու այնչափ, որչափ մենք ապրում ենք բարեպաշտ կյանքով։[11]

Գնացեք, ուր կկամենաք, դուք չեք գտնի սրա նման որևէ հավաքված խումբ, որոնցից յուրաքանչյուրը հավատք ունի առ Աստված. և եթե հարցնենք ձեզ բոլորիդ, թե քանիսն ունեք վկայություն, ոչ թե հավատք, քանի որ ինչ-որ մեկն ասել է դա, այլ թե ձեզանից քանիսն ունեն համոզվածություն, որ սա Աստծո աշխատանքն է, որ Հիսուսը Քրիստոսն է, որ մենք ապրում ենք

«Մեզանից յուրաքանչյուրն իրավունք ունի Տիրոջ ոգեշնչումն ունենալու այնչափ, որչափ մենք ապրում ենք բարեպաշտ կյանքով»:

հավերժական կյանքով, որ Ջոզեֆ Սմիթը Կենդանի Աստծո մարգարեն էր, դուք կասեք, որ դուք ունեք այդ վկայությունը, որը ոգևորում է ձեզ և զորացնում ձեզ և տալիս ձեզ բավականություն, երբ դուք առաջ եք գնում աշխարհում: . . .

. . . Երբ ես դեռ պատանի էի, իմացա, որ սա Տիրոջ աշխատանքն է: Ես իմացա, որ երկրի վրա կան ապրող մարգարեներ: Ես իմացա, որ Ամենազորի ոգեշնչումը կազդի նրանց վրա, ովքեր ապրում են այն վայելելու համար, այնպես որ մենք կախված չենք մեկ կամ երկու տասնյակ մարդկանցից: Կան այս Եկեղեցու հազարավոր անդամներ, ովքեր գիտեն, որ դա ամենևին երևակայության հարց չէ, նրանք գիտեն, որ Աստված ապրում է, և որ Հիսուսը Քրիստոսն է, և որ մենք Աստծո զավակներն ենք:[12]

Դուք կախված չեք միայն պատմությունից, ոչ էլ որևէ մարդու ուսմունքներից, իմանալու համար, որ սա Տիրոջ աշխատանքն է, որովհետև այն բոցավառվել է ձեր հոգում Սուրբ Հոգու պարգևով: Ձեր մտքում կասկած չկա, ինչ վերաբերում է ձեր

ծագմանը, ոչ էլ այն տեղին, թե ուր եք գնալու, երբ ձեր կյանքն ավարտվի, եթե դուք հավատարիմ լինեք այն վստահությանը, որը ցույց է տրվել ձեզ։[13]

Վկայությունը չի կարող տրվել մեզ մեկ ուրիշի կողմից։ Համոզմունքը գալիս է Երկնային Հորից։[14]

Այսօր ես կանգնած եմ այստեղ՝ խորապես երախտապարտ այն գիտելիքի համար, որ տրվել է ինձ։ Ես շնորհակալ եմ, որ ես կախված չեմ ոչ մի անձնավորությունից այն վկայության համար, որ ես ունեմ։ Իհարկե, ես շնորհակալ եմ այն քաջալերանքի համար, որ ես ստացել եմ ուրիշներից, ովքեր ունեն լույս և ճշմարտություն և տալիս են քաջալերանք արդարակյաց կյանքով, բայց ես կախված չեմ նրանցից որևէ մեկից այն գիտելիքի համար, որ Աստված ապրում է, որ Հիսուս Քրիստոսը մարդկության Քավիչն է և Ջոզեֆ Սմիթը Տիրոջ մարգարեն է։ Այս բաները ես գիտեմ ինքնուրույն։

. . . Ես ուրախանում եմ վկայելով, որ գիտեմ ավետարանը ճշմարիտ է և իմ ողջ սրտով ես շնորհակալ եմ իմ Երկնային Հորը, որ նա ինձ դա հայտնի է դարձրել։[15]

Կյանքում ինձ եկած բոլոր օրհնություններից ամենաթանկարժեքն այն գիտելիքն է, որ Աստված ապրում է, և որ սա նրա աշխատանքն է, որովհետև դա ընդգրկում է բոլոր մյուս օրհնությունները, որոնց ես կարող է հույս ունենամ վայելել այս կյանքում կամ այն կյանքում, որը պիտի գա։[16] (Տես առաջարկ 4 էջ 135։)

Սուրբ Հոգին ապահով առաջնորդ է մահկանացու կյանքի արահետում։

[Աստծո] Հոգու ընկերակցությունը. . . ապահով առաջնորդություն է մահկանացու կյանքի արահետում և հաստատուն նախապատրաստություն տան համար իր սելեստիալ արքայությունում։[17]

Մենք կարդում ենք Հոբի գրքում, որ կա հոգի մարդու մեջ, և Ամենազորի ոգեշնչումը տալիս է նրան հասկացողություն (տես Հոբ ԼԲ.8)։ Եթե մենք պահենք Աստծո պատվիրանները մենք իրավունք ունենք այդ ոգեշնչմանը և եթե մենք ապրենք ինչպես Աստծո որդիները պարտավոր են ապրել, մենք կունենանք այդ

ոգեշնչումը, և ոչ ոք չի կարող խանգարել դրան և արդյունքը կլինի մեր սեփական ֆիզիկական և մտավոր ու բարոյական զարգացումը մահկանացու կյանքում և զարգացման շարունակումը հավերժության դարերի ընթացքում։[18]

Տիրոջ Հոգու ընկերակցությունը հակաթույն է հոգնածության. . . վախի և բոլոր այն բաների դեմ, որոնք երբեմն պարուրում են մեզ կյանքում։[19]

Երբ Փրկչի աշակերտները նրա հետ էին, նրանք հիանում էին նրանով՝ չիմանալով թե իրականում որքան մեծ էր նա, մինչև որ Սուրբ Հոգու զորությունը չեկավ նրանց վրա, մինչև նրանք չմկրտվեցին կրակով, նրանք չկարողացան դիմակայել խնդիրներին և համբերել հալածանքներին, որոնք դարձնում էին կյանքը գրեթե անտանելի։ Երբ Ամենազորի ոգեշնչումը տվեց նրանց հասկացողություն, նրանք իմացան, որ ապրում էին [մի] հավերժական կյանքով, և եթե նրանք ապացուցեին իրենց հավատարմությունը, նրանք գիտեին, որ երբ նրանք վար դնեին իրենց մարմինները մահվամբ, նրանք կբարձրացվեին գերեզմանից ի փառք և անմահություն։

Դա Աստծո Հոգու ոգեշնչման արդյունքով էր, Ամենազորի ոգեշնչումը, որը նրանց ըմբռնում տվեց։ . . .

Ես աղոթում եմ, որ այն Հոգին, որը պահում է մեզ ճշմարտության և արդարության ուղու վրա, մնա մեզ հետ, և աղոթում եմ, որ այն ցանկությունը, որը գալիս է մեր Երկնային Հոր ոգեշնչումից, կարողանա ուղղորդել մեզ կյանքի այդ ճանապարհին։[20]

Երբ կյանքի գործն ավարտվի, թող որ մենք գտնենք, որ լսել ենք այն մեղմ ու հանդարտ ձայնի շշունջներին, որը միշտ առաջնորդում է մեզ արդարության ուղում և գիտենանք, որ դա մեզ համար նշանակել է Սելեստիալ արքայության դռան բացումը մեզ համար և նրանց համար ում մենք սիրում ենք, առաջ գնալով դարերի միջով. . . հավերժորեն երջանիկ։[21] (Տես առաջարկ 5 էջ 135։)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար, տես v–viii էջեր։

1. Երբ կարդաք «Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից» բաժնի (125–128 էջերը), մտածեք, թե ինչպես Նախագահ Սմիթի համանմանությունը վերաբերում է մեր մահկանացու կյանքի միջով ճամփորդությանը։ Ի՞նչ կարող է մառախուղը, ռադիոազդանշանը և հեռագրաստեղի ազդանշանը ներկայացնել։ Ինչպե՞ս է Տերը նախազգուշացրել ձեզ վտանգի մասին և օգնել ձեզ մնալ հավերժական կյանքի ուղու վրա։
2. 128–130 էջերում Նախագահ Սմիթը հայտարարում է, որ հայտնությունն այնքան անհրաժեշտ է այսօր, որքան աստվածաշնչյան ժամանակներում էր անհրաժեշտ։ Ինչպե՞ս կպատասխանեք մեկին, որն ասում է, որ հայտնությունները սուրբ գրություններում բավական են մեր օրերի համար։ Ո՞ր փորձառություններն են ուսուցանել ձեզ, որ Երկնային Հայրը «իսկապես հետաքրքրվում է մեր գործերով»։
3. Աչքի անցկացրեք 130 էջում սկսվող բաժինը։ Ինչպե՞ս եք իմացել, որ մարգարեի խորհուրդը գալիս է Տիրոջից և «ավելին է քան մարդու խորհուրդը» (էջ 131)։ Ինչպե՞ս կարող էր անձնական հայտնությունն օգնել ձեզ ընդունել և կիրառել մարգարեի կողմից տրված հայտնությունը։
4. Երբ ուսումնասիրեք 131 էջում սկսվող բաժինը, մտածեք, թե ինչպես եք դուք ձեռք բերել վկայություն ավետարանի մասին։ Ինչպե՞ս օգնեցին ձեզ ուրիշների վկայությունները։ Ի՞նչ արեցիք ճշմարտությունն ինքնուրույն իմանալու համար։
5. Ուսմունքների վերջին բաժնում (133–134 էջեր), որոնեք այն բառերն ու արտահայտությունները, որոնք նկարագրում են այն ուղիները, որոնցով Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ։ Մտածեք, թե ինչ կարող եք անել՝ արժանի լինելու ձեր կյանքում Սուրբ Հոգու ընկերակցությունն ավելի հաճախ ունենալու համար։

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Հովհաննես ԺԵ.26, 1 Նեփի 10.17–19, 2 Նեփի 32.5, Մորոնի 10.3–5, Վարդապետություն և Ուխտեր 1.38, 42.61, 76.5–10, Հավատո հանգանակ 1.9

Օգնություն ուսուցչին. «Մի մտահոգվեք, եթե ուսանողները լուռ են մնում մի քանի վայրկյան ձեր հարցը տալուց հետո: Մի պատասխանեք ձեր սեփական հարցին, ժամանակ տվեք ուսանողներին մտածելու պատասխանների մասին: Այնուամենայնիվ, երկարաձգվող լռությունը կարող է ցույց տալ, որ նրանք չեն հասկանում հարցը, և որ դուք պետք է այն վերաձևակերպեք» (*«Teaching, No Greater Call»,* 69):

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1937, 50–53.
2. In Conference Report, Apr. 1946, 4.
3. In Conference Report, Apr. 1917, 37.
4. "Some Points of 'Peculiarity,'" *Improvement Era,* Mar. 1949, 137.
5. In *Proceedings at the Dedication of the Joseph Smith Memorial Monument,* 55.
6. "Message to Sunday School Teachers," *Instructor,* Nov. 1946, 501.
7. In Conference Report, Oct. 1930, 66.
8. In Conference Report, Oct. 1937, 52–53.
9. In Conference Report, Oct. 1945, 118–19.
10. In Conference Report, Oct. 1937, 53.
11. In Conference Report, Oct. 1911, 44.
12. In Conference Report, Apr. 1946, 124–25.
13. In Conference Report, Apr. 1905, 62.
14. "Opportunities for Leadership," *Improvement Era,* Sept. 1949, 557.
15. In Conference Report, Oct. 1921, 42.
16. In Conference Report, Apr. 1927, 82.
17. "To the Latter-day Saints Everywhere," *Improvement Era,* Dec. 1947, 797.
18. In Conference Report, Apr. 1944, 31.
19. In Conference Report, Oct. 1945, 115–16.
20. In Conference Report, Apr. 1939, 124–25.
21. In Conference Report, Apr. 1941, 28.

Ավետարանով կիսվելու ջերմեռանդ ցանկություն

Մեր եղբայրներն ու քույրերը ողջ աշխարհով մեկ վերականգնված ավետարանի ուղերձի կարիքն ունեն, և մեր արտոնությունն է կիսվել նրանց հետ:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Ջորջ Ալբերտ Սմիթի մի մտերիմ ընկեր գրել է. «Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթը բնական միսիոներ է: Իր պատանեկությունից նա ջերմեռանդ ցանկություն է ունեցել կիսվել ավետարանի ուսմունքներով իր ընկերակիցների՝ «Աստծո որդիների ու դուստրերի» հետ, որոնց բոլորին նա համարում է իր եղբայրներն ու քույրերը, հայտնի դարձնելով այն ճշմարտությունները, որոնք բացահայտվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթին:

Մի քանի առիթներով ես արտոնություն եմ ունեցել ճանապարհորդել գնացքով Նախագահ Սմիթի հետ: Ամեն անգամ, ես նկատում էի, որ հենց որ ճանապարհորդությունը լավ հունով էր ընթանում, նա վերցնում էր մի քանի ավետարանական բրոշյուրներ իր պայուսակից, դնում իր գրպանում, ապա շարժվում ուղևորների միջով: Իր ընկերական, հանդուրժողական վարվելակերպով նա շուտով ծանոթանում էր ընկերակից մի ճանապարհորդի հետ, և կարճ ժամանակ անց, ես լսում էի, թե ինչպես էր պատմում Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից Եկեղեցու հիմնադրման մասին կամ պատմում սրբերի դուրս գալը Նավուից և նրանց փորձություններն ու դժվարությունները տափաստաններն անցնելիս դեպի Յուտա կամ իր նոր գտած ընկերոջը բացատրում որոշ ավետարանական սկզբունքներ: Զրույց զրույցի ետևից հետևում էին մեկ ուղևորից մյուս ուղևորը, մինչև ճանապարհորդությունն ավարտվում էր: Նախագահ Սմիթի հետ իմ ողջ ծանոթության ընթացքում, որը տևել է ավելի քան



«Հիսուս Քրիստոսի ավետարանն է, որ մենք կրում ենք: Մարդկանց զավակների հոգիների փրկությունն է, որ բոցավառում է մեր սրտերը»:

քառասուն տարի, ես հասկացել եմ, որ որտեղ էլ որ նա լինի, նա, նախ և առաջ, Հիսուս Քրիստոսի Վերջին օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներ է:[1]

Նախագահ Սմիթի մասին նաև գրվել է. «Նա խոսում էր կրոնի մասին ծխնելույզ մաքրողի հետ իր տանը: Նա հազվադեպ էր «վերականգված ավետարանի հավերժական ճշմարտությունները» բացատրելու առիթը բաց թողնում» ինչպես ընկերոջն, այնպես էլ օտարականին: Նրա տեսանկյունից, սա մեծագույն բարությունն էր, քանի որ Քրիստոսի ուղերձն ամենակարևոր պարգևն էր, որ նա կարող էր տալ:[2] (Տես առաջարկ 1 էջ 149:)

Քանի որ ավետարանով կիսվելը մի թեմա էր, որին Նախագահ Սմիթը հաճախ էր անդրադառնում իր ուսուցումների ժամանակ, սա այս գրքում այդ նյութի վերաբերյալ երեք գլուխներից առաջինն է: Այս գլուխը կենտրոնանում է այն պատճառների վրա, որոնց հետևանքով կիսվում ենք ավետարանով. գլուխ 13-ը ներկայացնում է մի քանի ուղիներ, որոնցով մենք կարող ենք մասնակցել այս կարևոր աշխատանքին. իսկ գլուխ 14-ը նկարագրում է, թե ինչպես մենք կարող ենք ամենարդյունավետը լինել մեր ջանքերում:

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Աշխարհը կարիք ունի այն բաներին, որոնք մենք ունենք՝ իր լրիվությամբ վերականգված Հիսուս Քրիստոսի ավետարանի կարիքը:

Աշխարհն աղետի մեջ է, երկունքի մեջ է մեկ ծայրից մինչև մյուսը:Տղամարդիկ և կանայք նայում են այստեղ և այնտեղ, որոնելով թե ուր գնան, անելու բաներ, որոնք նրանց խաղաղություն կբերեն. . . Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է: Երկնքից բացահայտված ճշմարտությունն այստեղ է և դա այն ճշմարտությունն է, այն ավետարանը, որը եթե միայն աշխարհն իմանար, կլիներ բալասան բոլոր նրանց ցավերին: Դա միակ բանն է, որ խաղաղություն կբերի նրանց, մինչ նրանք բնակվում են երկրի վրա:[3]

Այս աշխարհի մարդկանց համար անհրաժեշտ է քննել իրենց քայլերը և վերադառնալ այն հիմքերին, որոնք դրվել էին երկնքի և երկրի Տիրոջ կողմից, հավատքի, ապաշխարության և

մեղքերի թողության համար մկրտության հիմքին և Սուրբ Հոգու ընդունումը՝ նրանց ձեռքերի ներքո, ովքեր աստվածային իշխանություն ունեն: Սա է այն, ինչի կարիքն աշխարհն ունի: Ես իսկապես երախտապարտ եմ, որ շատերն են նայում այդ ձևով: Նրանք կուրորեն գնում էին արահետով, որը տանում էր դեպի վիշտ ու ցավ, բայց բոլոր տկարությունների համար հասանելիության սահմաններում դրված է սպեղանի՝ —Հիսուս Քրիստոսի ավետարանը: Բոլորի համար ուրվագծված է մի արահետ, որը, չնայած հետևելու համար նեղ է և դժվարին, այն տանում է ետ՝ դեպի մեր բոլորի Հայրը, և չկա այլ ուղի, որ տանի այնտեղ:[4]

Աշխարհի եկեղեցիներն իրենց ուղով փորձում են խաղաղություն բերել մարդկանց սրտերին: Նրանք ունեն շատ առաքինություններ և ճշմարտություններ և իրականացնում են շատ բարիք, բայց նրանք չեն ստացել աստվածային իշխանություն: Ոչ էլ նրանց քահանաներն ունեն աստվածային լիազորություն:[5]

Վերջին Օրերի Սրբերը միակն են, ովքեր կրում են մեր Երկնային Հոր իշխանությունը՝ սպասավորելու Ավետարանի արարողությունները: Աշխարհն ունի մեր կարիքը:[6]

Աշխարհում իսկական սով է Տիրոջ խոսքի համար և շատ ազնիվ հոգիներ լրջորեն ձգտում են իմանալ, թե ինչ է մեր Երկնային հայրն ուզում իրենցից: Ես հանդիպել եմ աշխարհի եկեղեցիների մի շարք առաջնորդների հետ և գտել եմ նրանց մեջ ազնիվ գործիչներ, ովքեր նվիրված են բարիք անելուն, բայց հազվադեպ է պատահել, որ գտնեմ նրանց մեջ այնպիսիներին, ովքեր կանչվել են ծառայության տարբեր եկեղեցական կազմակերպություններում, մարդկանց, ովքեր ունեն պատկերացում իրենց գոյության նպատակների մասին կամ գիտակցում են, թե մենք ինչու ենք այստեղ աշխարհում: Մարդիկ չեն կարող ուսուցանել այն, ինչ իրենք չգիտեն: Այս լավ մարդիկ չհասկանալով ավետարանը և դրա արարողությունների անհրաժեշտությունը, սահմանափակում են իրենց ուսուցումները մեծ մասամբ բարոյականության վերաբերյալ դասերով և կարդալով սաղմոսներն իրենց համայնքների համար: Սուրբ գրքերի առանձին հատվածներ ընտրվում են որպես տեքստեր առաքինության, ազնվության և այլն ելույթների համար, որոնցից բոլորն օգտակար են և վեհացնող, բայց քիչ քարոզներ կան, որ բացատրում են, թե ինչ է պահանջվում յուրաքանչյուր հոգուց, նախքան մենք

կկարողանանք մտնել երկնքի արքայություն: Աշխարհն ամենաշատն այս տեղեկության կարիքն ունի: Քիչ սպասավորներ կան, ովքեր ունեն ուղերձ իրենց համայնքների համար, որոնք ոգեշնչում են նրանց հավատք Հիսուս Քրիստոսի աստվածայնության վերաբերյալ և նրա կողմից նշանակված արարողություններից օգտվելու անհրաժեշտության վերաբերյալ:[7] (Տես առաջարկություն 2 էջ 149:)

Շատ մարդիկ կան, ովքեր կընդունեն ճշմարտությունը, եթե հնարավորություն տրվի:

Մեր Հոր զավակները մտահոգվում են ամենուրեք իմանալու համար, թե իրենք ինչ պետք է անեն, բայց չար ազդեցությունների պատճառով, որով լցված է աշխարհը, նրանք խաբվում են, աշխարհի պատվավոր մարդիկ կուրացած են ճշմարտության հանդեպ. . . Հակառակորդը գործում է և միակ ուժը, որը կարող է չեզոքացնել նրա ազդեցությունը, Հիսուս Քրիստոսի ավետարանն է:[8]

Մարդիկ դարձել են կասկածամիտ միմյանց հանդեպ: Նրանք չեն հավատում իրենց լսածին և նրանք ցանկություն չունեն անելու այն, ինչ Փիլիպպոսն արեց, Փրկչի աշակերտներից մեկը, խորհուրդ տալով Նաթանայելին, որն իր հետ էր: Փիլիպպոսն ասաց. «Տերը եկել է»:

Եվ նա նկարագրեց նրան և Նաթանայելը հարցրեց. «Որտեղի՞ց է նա եկել»:

Եվ Փիլիպպոսը պատասխանեց. «Նա Նազարէթից է եկել»: Ապա՝ այդ լավ մարդն ասաց. «Կարելի՞ է որ Նազարէթիցը մի բարի բան լինի»: Փիլիպպոսն ասաց. «Եկ և տես» (Տես Հովհաննես Ա.43–46:)

Նաթանայելին սովորեցրել էին հավատալ, որ ոչ մի լավ բան չէր կարող գալ Նազարեթից, և այնուամենայնիվ, նա էր այն մարդը, որին հետագայում Փրկիչն ակնարկեց որպես Իսրայելացի առանց նենգության՝ լավ մարդ, բայց խաբված այն պատմությունների պատճառով, որ նա լսել էր:

Բայց, երբ մի անգամ իմացավ, երբ ընդունեց աշակերտների հրավերը «Եկ և տես», նա եկավ տեսնելու:

Մենք մեծ ուրախություն ենք զգացել Նրա Հոգու ազդեցության ներքո: Նա կկամենար, որ ամեն ոք վայելեր այդ օրհնությունը, և այսպիսով, երբ մեզ հարցրել են. «Ինչպիսի՞ մարդիկ են սրանք այստեղ», մեր պատասխանն է եղել. «Եկեք և տեսեք»:[9]

Իմ Երկնային Հայրը. . . կանչել է ինձ գնալ երկրագնդի տարբեր մասերը, և մեկ միլիոն մղոնից ավելի ճանապարհ եմ անցել, ինչ կանչվել եմ այս ծառայությանը: Ես ճամփորդել եմ շատ երկրներում և կլիմայական գոտիներում և ուր էլ որ գնացել եմ, ես գտել եմ լավ մարդկանց՝ կենդանի Աստծո որդիներին և դուստրերին, ովքեր սպասում են Հիսուս Քրիստոսի ավետարանին և կան հազարավորներ, հարյուր հազարավորներ, միլիոնավորներ նրանցից, ովքեր կընդունեին ճշմարտությունը, եթե միայն նրանք իմանային այն, ինչ մենք գիտենք:[10]

Կան շատ մեծ եկեղեցական կազմակերպություններ աշխարհում, շատ նվիրված տղամարդիկ և կանայք, ովքեր ապրում էին համաձայն մեր Երկնային Հոր կամքին, ինչպես իրենք են հասկանում այն: . . .

Բոլոր մարդիկ, ովքեր կապրեն ըստ այն լույսի, որ Տերն է առաջարկել նրանց և կփնտրեն նրան լուրջ աղոթքով, նրանց սրտերը կշարժվի, նրանց մտքերը կներգործվեն և նրանց հնարավորություն կընձեռվի իմանալու, որ Աստված կրկին խոսել է:[11] (Տես առաջարկ 3 էջ 149):

Մենք խանդավառ ենք ավետարանով կիսվելու վերաբերյալ, որովհետև մենք սիրում ենք մեր մերձավորներին:

Հավանաբար, դրսի դիտորդին կարող է թվալ, որ Վերջին Օրերի Սրբերի մեջ կա մի անսովոր խանդավառություն: Ինչպես մի մարդ ասաց վերջերս. «Ինձ համար տարօրինակ է, թե ինչպիսի ուրախությամբ է ձեր ժողովուրդն առաջ տանում ձեր աշխատանքը: Նշանակություն չունի, թե խոսում եմ ձեր մարդկանցից մի պատանու հետ, թե մի հասուն մարդու հետ, պարտիզպանի թե ոստիկանի հետ, նրանք բոլորը երջանիկ են և գոհ են և վստահ, որ իրենք ունեն Հիսուս Քրիստոսի ավետարանը»: . . .

. . . Միթե՞ զարմանալի է, որ մեր պաշտամունքի մեջ խանդավառություն կա, որ մենք այս փառավոր ճշմարտությունները

«Նրանք, ովքեր հավատում են, կհետևեն Քրիստոսի կողմից տրված օրինակին, երբ Նա ասաց Իր աշակերտներին. «Ով որ հաւատաց եւ մկրտուեցաւ կփրկուի. Եւ ով որ չհաւատաց՝ կդատապարտուի»»:

մեր մերձավորների հետ կիսվելու համար մտահոգվելու բնավորություն ունենք: Միթե՞ պետք է զարմանալ, որ երբ ժամանակը գալիս է, երբ մեր որդիները կանչվում են միսիոներական ծառայության կամ մեզ խնդրվում է մի կողմ դնել մեր պարտականությունները և դուրս գնալ որպես կենդանի Աստծո ծառաներ, ի վերուստ օժտված զորությամբ, ունենալով իշխանություն, որը շնորհվել է այս վերջին օրերում, որպեսզի մենք կարողանանք կիսվել բոլոր մարդկանց հետ այս սքանչելի ճշմարտությամբ, որը մեր կյանքն այնքան հարստացրել է. . . որ մենք արձագանքում ենք հոժարակամորեն և ուրախությամբ:[12]

Հիսուս Քրիստոսի ավետարանն է, որ մենք կրում ենք: Մարդկանց զավակների հոգիների փրկությունն է, որ բոցավառում է մեր սրտերը: Պատճառը մեր կայանալը և ֆինանսապես հզոր ժողովուրդ դառնալը չէ, ոչ էլ մեր նվաճումների համար մեր անունները երկրում փառավորելը, այլ այն, որ Աստծո որդիներն

ու դուստրերը, որտեղ էլ որ լինեն, կարողանան լսել այս Ավետարանը, որն Աստծո զորությունն է ի փրկություն բոլոր նրանց համար, ովքեր հավատում են և հնազանդվում դրա օրենքներին: Եվ նրանք, ովքեր հավատում են կհետևեն Փրկչի կողմից տրված օրինակին, երբ Նա ասաց Իր աշակերտներին. «Ով որ հաւատաց եւ մկրտուեցաւ կփրկուի. Եւ ով որ չհավատաց՝ կդատապարտուի» (Մարկոս ԺԶ.16):[13]

Մտածեք այն պատասխանատվության մասին, որ մեր վրա է, եթե անփութությամբ կամ անտարբերությամբ ենք ապրում մեր կյանքը, չձգտելով կիսվել ճշմարտությամբ նրանց հետ, ում Տերը սիրում է այնքան, որքան մեզ է սիրում, և ովքեր թանկ են նրա աչքում: Զգում եմ, որ պետք է մի արթնացում տեղի ունենա այս Եկեղեցու անդամներից ոմանց մոտ: Կարծում եմ մի մեծ ջանք պետք է գործադրվի կիսվելու մեր Հոր զավակների հետ ողջ ճշմարտությամբ, որը պահվում է այս Եկեղեցում:[14]

Երբ մարդը հիվանդ է, եթե նա մեր մերձավորն է, մենք նրան ուրախությամբ ծառայում ենք, եթե մահ կա նրա ընտանիքում, մենք փորձում ենք սփոփել նրան: Բայց տարեց տարի մենք թույլ ենք տալիս, որ նա քայլի ուղիներում, որոնք կկործանեն հավերժական կյանքի նրա հնարավորությունը, մենք անցնում ենք նրա կողքով, կարծես նա անպետք մի բան է:[15]

Արդյոք մենք գիտակցում ենք, որ յուրաքանչյուր մարդ Աստծո պատկերով է և Աստծո որդի է և յուրաքանչյուր կին նրա դուստրն է: Անկախ նրանից թե որտեղ կարող են նրանք լինել, նրանք Նրա զավակներն են և նա սիրում է նրանց և ցանկանում նրանց փրկությունը: Անկասկած, որպես այս Եկեղեցու անդամներ՝ մենք չենք կարող անգործ նստել: Մենք չենք կարող ստանալ մեր Երկնային Հոր կողմից մեզ շնորհված բարեհաճ հովանավորությունը ՝ հավերժական կյանքի գիտելիքը, և եսասիրաբար պահենք այն, մտածելով, որ դրա շնորհիվ մենք կարող ենք օրհնվել: Ոչ թե այն է հարստացնում մեր կյանքը, ինչ որ ստանում ենք, այլ այն, ինչ տալիս ենք:[16]

Եկեք բավականաչափ հետաքրքրվենք մարդկանց փրկությամբ, որպեսզի գործի դնենք սրբազան եռանդ նրանց դարձի բերելու համար, որպեսզի վայելենք նրանց հավերժական

երախտագիտությունը և սերը և մեր Երկնային Հոր շնորհակալությունը, Իր զավակների հանդեպ անեսասեր հետաքրքրության համար:[17]

Մեր Հոր զավակների հանդեպ մեր առաքելությունը. . . խաղաղության, բարի կամքի առաքելություն է բոլոր մարդկանց հանդեպ: Դա ուժեղ և խանդավառ ցանկություն է՝ կիսվել բոլոր մեր Հոր զավակների հետ այն լավ բաներով, որոնք այնքան շռայլորեն նա շնորհել է մեզ, և դա այն հույսով է, որ նրանք կհասկանան, որ մենք գնում ենք ծնկաչոք, օրըստօրե, և աղոթում, որ նրանց սրտերը շարժվեն, որ Աստծո հոգին կարողանա մտնել նրանց հոգիների մեջ, որ նրանք կարողանան հասկանալ ճշմարտությունը, ինչպես այն տրվում է նրանց:[18]

Երանի՜ այս մեծ Եկեղեցին կարողանար այն զորությամբ, որ տրվել է նրան Աստծո կողմից, ավելի ուժգնորեն տարածեր ճշմարտությունը և փրկեր ազգերին կործանումից: Մենք բուռն զարգացում ենք ապրում որպես կազմակերպություն, բայց ես ավելի շատ ուրախանում եմ ոչ թե թվաքանակի աճով, այլ այն հավատքով, որ մարդիկ սկսում են զգալ, որ ազդեցությունը, որ մենք ճառագում ենք, բարու համար է, և որ մեր Հոր զավակները հյուսիսից մինչև հարավ և արևելքից մինչև արևմուտք լսում են կյանքի և փրկության ուղերձը, առանց որի նրանք չեն կարող բնակվել մարդկության Քավչի ներկայությամբ:[19] (Տես առաջարկ 4 էջ 149:)

Տերը մեզ հաշվետու կպահի ավետարանի պարգևով կիսվելու մեր ջանքերի համար:

Մենք սքանչելի մի պարգև ենք ստացել, բայց այդ պարգևով գալիս է մեծ պատասխանատվություն: Մենք օրհնվել ենք Տիրոջ կողմից մեր ընկերներից առավել և այդ գիտելիքով գալիս է պահանջ, որ մենք կիսվենք դրանով Նրա զավակների հետ, որտեղ էլ որ լինի:[20]

Ես չեմ հասկանում, ինչպես ենք մենք ծառայում Աստծուն մեր ողջ ուժով, եթե թողնում ենք նրա զավակներին, և եթե մեր ժամանակի այդքան մեծ մասն անցկացնում ենք եսասիրաբար՝ մեր կայացման համար, կուտակելով այս կյանքի ինչքերը, և թողնում նրա զավակներին խավարի մեջ, երբ կարող

էինք բերել նրանց դեպի լույսը: Իմ հասկացողությունը սա է, որ ամենակարևոր միսիան, որ ես ունեմ այս կյանքում, առաջինն՝ Աստծո պատվիրանները պահելն է, ինչպես դրանք ուսուցանվել են ինձ, իսկ հետո՝ իմ Հոր զավակներին ուսուցանելն է, ովքեր չեն հասկանում դրանք:[21]

Չկա փրկության այլ ավետարան, և մենք իմ եղբայրներ, որ կրում ենք սուրբ քահանայություն, ունենք պատասխանատվություն այդ ուղերձը տանելու ոչ միայն երկրի ազգերին, այլ դրա օրինակը ծառայելով մեր կյանքում և ուսուցանելով այն նրանց, ովքեր մեր մերձավորներն են, ոչ մեր հավատքից: Ես նախազգուշացնում եմ ձեզ այս օրը, որ Տերը մեզ պատասխանատվության է ենթարկելու Իր զավակներին ապաշխարության կանչելու և Իր ճշմարտությունը տարածելու համար: Եթե մենք ձախողվում ենք մեր հնարավորություններից օգտվել՝ մեր Տիրոջ այս Ավետարանն ուսուցանելու Աստծո որդիներին և դուստրերին, ովքեր մեր հավատքից չեն, ովքեր ապրում են մեր շրջապատում, Նա մեր ձեռքից կպահանջի վարագույրի մյուս կողմում, այն ինչ մենք ձախողվել ենք անել:[22]

Որոշ ժամանակ անց մենք ստիպված ենք լինելու տալ մեր հաշվետվությունը և եթե մենք հավատարիմ ենք եղել, ես համոզված եմ աշխարհում մեր բոլորիս Հայրը շնորհակալություն կհայտնի մեզ և կօրհնի մեզ մեր որդիներից և դուստրերից այդքան շատերին կյանքի նպատակի հասկացողությանը բերելու համար և ինչպես վայելելու այն իր հոգու ազդեցության ներքո:[23]

Երբ մենք ունենք ավետարանի ոգին, մեր ցանկությունն է, որ մենք կարողանանք ուսուցանել մեր Հոր զավակներից այնքան շատերին, որքանին մեզ համար հնարավոր է հասնել, այն փառահեղ ճշմարտությունները, որոնք անհրաժեշտ են նրանց վեհացման համար, որ երբ գա ժամանակը, որ մենք պիտի կանգնենք մարդկության Քավչի ներկայությամբ, որպեսզի կարողանանք ասել նրան. «Այն զորությամբ, որ դու տվեցիր ինձ, այն իմաստությամբ և գիտելիքով, որ դու տվեցիր ինձ, ես ձգտեցի քնքշությամբ և սիրով, անկեղծորեն և վճռականությամբ ու բարությամբ բերել քո զավակներից այնքան շատերին ավետարանի իմացությանը, որքան հնարավոր էր ինձ համար անել դա»:[24] (Տես առաջարկ 5 էջ 150):

Եթե մենք ավետարանով կիսվենք Աստծո զավակների հետ, մեր պարգևը կլինի՝ մեծ ուրախություն նրանց հետ սելեստիալ արքայությունում:

Մեր ժամանակի մեծ մասը, մեզանից շատերն անցկացնում են որոնելով այս կյանքի բաները, որոնք մենք ստիպված կլինենք թողնել, երբ գնանք այստեղից, սակայն կան անմահ հոգիներ մեր շրջապատում, որոնց եթե կամենանք, մենք կարող էինք ուսուցանել և ոգեշնչել ուսումնասիրել ճշմարտությունը և սերմանել նրանց սրտերում, որ Աստված ապրում է: Ինչ գանձ կարող է ողջ աշխարհում այդքան թանկ լինել մեզ համար, քանզի մենք կունենանք նրանց երախտագիտությունն այստեղ և նրանց հարատև և հավերժական շնորհակալությունը գալիք աշխարհում: Դա կարևորագույն առաքելությունն է:[25]

Մտածեք, թե ինչ կնշանակի, եթե փոխարենը լինելով եսասեր, փորձելով փրկել միայն մեր սեփական փոքրիկ ընտանիքը, կարողանանք հաշվել տասնյակ կամ հարյուրավոր տղամարդկանց և կանանց, որոնց վրա մենք ազդել ենք, որ ընդունեն մեր Տիրոջ Ավետարանը: Այդ ժամանակ մենք օրհնված կզգանք իսկապես և կվայելենք նրանց սերը և շնորհակալությունը հավիտյան:[26]

Ինչպիսի ուրախություն կլինի դա վարագույրի այն կողմում, գտնել այդ լավ մարդկանց և կանանց, ովքեր ապրում են ըստ այդպիսի լույսի, ինչպիսին իրենք ունեն, փորձելով անել իրենց պարտականությունն աստծո հանդեպ և մեր շփման պատճառով, նրանց հետ կիսվելու մեր մտահոգության և հոժարակամության պատճառով, նրանք կստանան այլ տեղեկություն մեր Տիրոջ ավետարանի մասին և կընդունեն Նրա Սուրբ Տան արարողությունները և կպատրաստվեն Սելեստիալ Արքայության անդամակցության համար: Որքան երջանիկ դա կդարձնի ձեզ, երբ գա այդ ժամանակը, երբ դուք կանգնեք մեծ Դատավորի ներկայությամբ կյանքի մի քանի տարիների հաշվետվությունը տալու համար, որոնք անցել են մահկանացու մարմնում, եթե մեր Հոր այս զավակները, որոնց նա սիրում է այնքան, որքան մեզ, կանգնելով մեր կողքին, ասեն. «Երկնային Հայր, սա այն տղամարդն էր, սա այն կինն էր, ով առաջինը բերեց ինձ Քո փառահեղ ճշմարտության տեղեկությունը, որն իմ մեջ

«Երբ մենք ունենք ավետարանի ոգին, մեր ցանկությունն է, որ մենք կարողանանք ուսուցանել մեր Հոր զավակներից այնքան շատերին, որքանին մեզ համար հնարավոր է հասնել»:

ցանկություն առաջացրեց հետևել քեզ ավելի ջանասիրաբար, քան ես նախկինում էի արել: Սա այն տղամարդն է կամ այն կինը, ով արեց այս օրհնյալ բանն ինձ համար»: Սակայն սա բոլորը չէ:

Երբ գա ժամանակը, երբ դուք գնաք հավերժության դարերի միջով, որը երկար ժամանակ է, դուք կունենաք յուրաքանչյուր տղամարդու և կնոջ ու երեխայի սերը, որոնց համար միջոց եք եղել հավերժական երջանկություն բերելու համար: Միթե դա արժեքավոր չէ: Մենք կարող ենք անցկացնել մեր կյանքն այստեղ և ձեռք բերել մի քանի հարյուր կամ հազար դոլար, մենք կարող ենք ունենալ երամներ, հոտեր, տներ և հողեր, բայց մենք չենք կարող վերցնել դրանք մեզ հետ մյուս կողմը: Դրանք անհրաժեշտ չեն հավերժական կյանքի համար, դրանք անհրաժեշտ են մեզ միայն այստեղ, բայց եթե մենք վաստակել ենք Աստծո մյուս զավակների երախտագիտությունն ու սերը, այն կհոսի դեպի

մեզ հավերժ: Մտածեք, թե դա ինչ կնշանակի: Երբ գա ժամանակը, երբ աշխարհը կսրբվի ու կմաքրվի կրակով և կդառնա սելեստիալ արքայություն, բոլոր անմաքրությունը և այն ամենն, ինչ անցանկալի է, սրբված վերացած կլինի, որքան զոհացուցիչ կլինի գտնել, որ մենք ունենք ընկերակցություն նրանց հետ, ում հետ մենք ծառայել ենք մահկանացու կյանքում, նրանց հետ ժառանգություն ունենք և հավերժ ուղղորդվելու ենք Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ կողմից. մի՞թե դա արժեքավոր չէ: Մի՞թե դա ուրախալի հնարավորություն չէ:[27] (Տես առաջարկ 6 էջ 150):

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես v–viii էջերը:

1. Աչքի անցկացրեք «Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից» բաժնի (137–139 էջերը): Ի՞նչ եք կարծում ինչու՞ էր Նախագահ Սմիթն այդքան խանդավառ միսիոներական աշխատանքի վերաբերյալ: Ի՞նչ է նշանակում ձեզ համար«նախ և առաջ Եկեղեցու միսիոներ» լինել:
2. Ի՞նչ է վերականգված ավետարանն առաջարկում աշխարհին ի լրումն «բարոյական դասերի», որոնք տալիս են կրոնների մեծ մասը (Որոշ օրինակների համար տես 139–141 էջերը):
3. Կարդացեք 141 էջում սկսվող բաժինը (տես նաև ՎևՈՒ 123.12): Ի՞նչ օրինակներ եք տեսել մարդկանց, ովքեր հաղթահարել են Եկեղեցու մասին սխալ տեսակետները՝ ընդունելով «Եկ և տես» հրավերը: Որո՞նք են այդպիսի հրավեր ներկայացնելու մի քանի արդյունավետ ուղիները:
4. Կարդացեք 146 էջի երրորդ լրիվ պարբերությունը: Ինչո՞ւ եք կարծում, որ մենք երբեմն դժկամությամբ ենք կիսվում ավետարանով մեր մերձավորների հետ: Երբ դուք ուսումնասիրեք 145–149 էջերը, մտածեք այն մասին, թե ինչ մենք կարող ենք անել հաղթահարելու այդ դժկամությունը:

5. Երբ կարդաք 147 էջում սկսվող բաժինը, խորհեք թե արդյոք դուք անում եք այն, ինչ Տերն է սպասում ձեզանից անել ավետարանով կիսվելու համար: Աղոթքով մտածեք, թե ինչպես կարող եք ավելի լիովին պահել այս պատվիրանը:
6. Աչքի անցկացրեք ուսմունքների վերջին բաժինը (147–149 էջեր) և մտածեք այն մարդու մասին, ով առաջինը ներկայացրեց ձեզ կամ ձեր ընտանիքին Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանը: Ի՞նչ կարող եք անել ցույց տալու կամ արտահայտելու ձեր երախտագիտությունն այդ մարդուն:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Ամովս 8.11–12, Մոսիա 28.1–3, Ալմա 26.28–30, Վարդապետություն և Ուխտեր 4.4, 18.10–16

Օգնություն ուսուցչին. «Ավելի լավ է վերցնել ուղղակի մի քանի լավ գաղափարներ և լավ քննարկում ծավալել ու լավ ուսուցում անցկացնել, քան խելացնոր փորձել ուսուցանել ձեռնարկի յուրաքանչյուր բառը. . . Անշտապողականության մթնոլորտն անպայման կարևոր է, եթե դուք ուզում եք Տիրոջ Հոգին ներկա լինի ձեր դասին» (Jeffrey R. Holland, "Teaching and Learning in the Church," *Ensign,* June 2007, 91):

Հղումներ

1. Preston Nibley, "Sharing the Gospel with Others," *Improvement Era,* Apr. 1950, 270.
2. Merlo J. Pusey, *Builders of the Kingdom* (1981), 240.
3. In Conference Report, June 1919, 43.
4. In Conference Report, Apr. 1922, 54–55.
5. In Conference Report, Apr. 1922, 53.
6. In Conference Report, Apr. 1916, 47.
7. In Conference Report, Oct. 1921, 38.
8. In Conference Report, Apr. 1922, 53.
9. In Conference Report, Oct. 1949, 5.
10. In Conference Report, Oct. 1945, 120.
11. In Conference Report, Apr. 1935, 43–44.
12. In Conference Report, Oct. 1927, 46–47.
13. In *Proceedings at the Dedication of the Joseph Smith Memorial Monument,* 55.
14. In Conference Report, Apr. 1934, 28.
15. In Conference Report, Oct. 1916, 50.
16. In Conference Report, Apr. 1935, 46.
17. "Greeting," *Millennial Star,* July 10, 1919, 441.
18. In Conference Report, Oct. 1927, 49.
19. In Conference Report, Oct. 1922, 98.
20. In Conference Report, Apr. 1922, 53.
21. In Conference Report, Oct. 1916, 50.
22. In Conference Report, Apr. 1916, 48.
23. In Conference Report, Oct. 1948, 7–8.
24. In *Deseret News,* Aug. 20, 1921, Church section, 7.
25. In Conference Report, Oct. 1916, 50.
26. In Conference Report, Oct. 1941, 102.
27. *Sharing the Gospel with Others,* sel. Preston Nibley (1948), 214–16; address given Nov. 4, 1945, in Washington, D.C.

Կատարել Ավետարանով կիսվելու մեր մասը

Կան շատ ուղիներ, որոնցով կարող ենք մասնակցել Հիսուս Քրիստոսի վերականգնած ավետարանով կիսվելու մեծ աշխատանքին:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Բացի մոտավորապես 48 տարի Գերագույն Իշխանավոր ծառայելուց, Ջորջ Ալբերտ Սմիթը ծառայել է երեք լիաժամկետ միսիա Եկեղեցու համար, ներառյալ երկու տարի որպես Եվրոպական Միսիայի նախագահ: Նա քաջալերում էր Եկեղեցու անդամներին հոգեպես նախապատրաստվել լիաժամկետ միսիոներական ծառայության համար և ընդունել այդպիսի կանչեր, երբ դրանք գալիս են: Բայց նա նաև սովորեցրեց նրանց, որ նրանք չպետք է անպայման ստանան պաշտոնական միսիոներական կանչ, որպեսզի քարոզեն ավետարանը: Ջորջ Ալբերտ Սմիթը միսիոներ էր իր ողջ կյանքի ընթացքում և նա հաճախ էր հիշեցնում Եկեղեցու անդամներին իրենց մերձավորների և ընկերների հետ ավետարանով կիսվելու իրենց բազմաթիվ հնարավորությունների մասին և խրախուսում էր նրանց լինել Քրիստոսի աշակերտի լավ օրինակ:

Եվրոպական Միսիայում Նախագահ Սմիթի ծառայությունը սկսվեց I Համաշխարհային Պատերազմի ավարտից անմիջապես հետո: Պատերազմի պատճառով միսիոներական դաշտում միսիոներների թիվը խիստ կրճատվել էր և այդ թիվը մեծացնելու ջանքերը խոչընդոտվում էին, որովհետև միսիոներների վիզաները մերժվում էին: Բացի այդ Եկեղեցու թշնամիները կեղծ պատմություններ էին տարածում Վերջին Օրերի Սրբերի մասին, ստեղծելով նախապաշարմունքներ, որոնք դժվար էր հաղթահարել: Չնայած այս սահմանափակումներին Նախագահ

Ջորջ Ալբերտ Սմիթը ծառայել է Եվրոպական Միության նախագահ 1919–1921 թվականներին:

Սմիթը համոզված էր, որ աշխատանքն առաջ էր ընթանալու շնորհիվ հավատարիմ Վերջին Օրերի Սրբերի կողմից տրված օրինակի: Նա նշեց, որ երբ Եկեղեցին հայտնի դառնա «նրա անդամները կգնահատվեն իրենց առաքինությունների համար», իսկ քննադատները «արագ կկորցնեն իրենց անհիմն նախապաշարմունքները, ուղղակի շփման մեջ մտնելով Վերջին Օրերի Սրբերի հետ իրենց ամենօրյա կյանքում». . . Նրանք այդ ժամանակ կդատեն մեզ մեր պտուղներով, անձնական դիտակումներից ելնելով, և այդպիսի տեղեկությունը, երբ նրանք այն հաղորդեն, կարող է ունենալ միայն մեկ ազդեցություն և դա կլինի խիստ բարենպաստ մեզ համար:[1]

Որպես Միսիայի Նախագահ իր ծառայությունը սկսելուց ոչ շատ անց, նա գրեց Եվրոպայում գտնվող Եկեղեցու անդամներին՝ հիշեցնելով նրանց ավետարանով կիսվելու իրենց պարտականությունների և աշխատանքն առաջ տանելու մասին.

«Լիակատար համոզվածությամբ, որ Տերը կտրամադրի բոլոր արժանի մարդկանց սրտերն ավետարանի հանդեպ, երբ նրանք հասկանան այն, եկեք միաբանված օգտվենք աշխատելու հնարավորությունից, քանի դեռ ժամանակ կա: Եկեք տարածենք Վարդապետի ուսմունքները ՝ ինչպես աշխարհիկ այնպես էլ հոգևոր, Մեծ Բրիտանիայի և Եվրոպական Միսիայի մյուս երկրների հրաշալի ժողովրդի փրկության համար»:[2]

Մի քանի ամիս անց նա գրեց. «Եկեղեցու յուրաքանչյուր անդամ պետք է հրճվի ճշմարտությունն ուսուցանելով: Մենք պետք է յուրաքանչյուրս անենք ամեն օր ինչ-որ բան բերելու լույս մեր ընկերակիցներին: Բոլորը թանկ են մեր Երկնային Հոր աչքում և նա համապատասխանաբար կպարգևատրի մեզ նրանց լուսավորելու համար: Մեր պատասխանատվությունը չի կարող դրվել ուրիշների ուսերին»:[3]

1921 թվականին Եվրոպայից վերադառնալուց հետո, Ջորջ Ալբերտ Սմիթը գերագույն համաժողովում զեկուցեց. «Նախապաշարմունքը, որը գոյություն է ունեցել մեր դեմ անցյալում ցրվել է և հարյուրավոր ու հազարավոր տղամարդիկ և կանայք տեղյակ են դարձվել մեր կատարած աշխատանքի մասին»: Այնուհետև նա հորդորեց Սրբերին անընդհատ ուղիներ որոնել ուրիշների հետ ավետարանով կիսվելու համար. «Մեր խնդիրն է ուղի գտնել, որով կկարողանանք ներկայացնել մեր Տիրոջ

ավետարանը բոլոր մարդկանց: Դա մեր խնդիրն է և աստվածային աջակցությամբ մենք մի ուղի կգտնենք այն լուծելու համար: Մեր պարտքն է հավաստիանալ, թե արդյոք որևէ միջոցներ կա՞ն, որոնցով մենք կարող է ի վիճակի լինենք անել ավելին, քան մենք մինչև այժմ ենք արել, եթե մենք բավարարենք մեր Երկնային Հոր պահանջները»:[4] (Տես առաջարկ 1 էջ 164:)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Եկեղեցու յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն ունի կիսվելու ավետարանով:

Այնքան երախտապարտ եմ զգում Հիսուս Քրիստոսի Եկեղեցում իմ արտոնությունների համար, այս Եկեղեցու և մյուս եկեղեցիների տղամարդկանց և կանանց ընկերակցության համար: Ես երախտապարտ եմ աշխարհի տարբեր վայրերում սփռված զանազան եկեղեցիների բազմաթիվ ընկերների համար: Ես երախտապարտ եմ այդ ընկերակցությունների համար, բայց ես չեմ բավարարվի մինչև չկիսվեմ նրանց հետ այն մի քանի բաներով, որոնք դեռ նրանք չեն ստացել:[5]

Մենք միսիոներներ ենք ուղարկում երկրի ազգերին հռչակելու Ավետարանն ինչպես այն հայտնի է դարձվել այս վերջին օրերում: Բայց դա չէ մեր ողջ պարտականությունը: Հենց մեր դռների մոտ հարյուրներով և հազարներով մեր Երկնային Հոր ընտիր որդիներն են ու դուստրերը: Նրանք ապրում են մեր միջև, մենք դառնում ենք ընկերներ, բայց մենք ձախողվում ենք սովորեցնել նրանց այն չափով, որչափ պետք է Ավետարանի վերաբերյալ, որը մենք գիտենք, որ Աստծո զորությունն է ի փրկություն: Եկեղեցու Նախագահությունն անում է այն ամենը, ինչ կա իրենց զորությունում, նրանք նվիրում են իրենց ժամանակը օրվա ընթացքում և հաճախ մինչև ուշ գիշեր՝ Եկեղեցու շահերի համար: Եղբայրները, ովքեր նրանց հետ հաղորդակցվում են, առատորեն տրամադրում են իրենց ժամանակը, ճանապարհորդելով և ուսուցանելով Վերջին Օրերի Սրբերին և տանելով Ավետարանը մեր Հոր զավակներին: Ցցերի նախագահները, բարձրագույն խորհրդականները, ծխերի եպիսկոպոսներն ու նրանց օգնականներն անդադար աշխատում են՝ օրհնելու մարդկանց, և նրանց պարգևն ապահովված է: Իսկ մենք անո՞ւմ ենք այն, ինչ պարտավոր

ենք, որպեսզի երբ կանգնենք մեր Երկնային Հոր դատարանի առջև Նա ասի մեզ, որ մենք արել ենք մեր լիակատար պարտականությունը մեր ընկերների՝ Իր զավակների հանդեպ։[6]

Ամենաառաջին հայտնություններից մեկը. . . Վարդապետություն և Ուխտերում ասում է հետևյալը.

«Արդ ահա, մի զարմանալի գործ է առաջ գալիս մարդկանց զավակների մեջ, . . .

Ուստի, եթե դուք ցանկություն ունեք Աստծուն ծառայելու, ապա կանչված եք գործին» (ՎևՈւ 4.1, 3)։

Անհրաժեշտ չէ ձեզ համար կանչված լինել միսիոներական դաշտ, որպեսզի հայտարարեք ճշմարտությունը։ Սկսեք այն մարդուց, որն ապրում է կողքի դռան ետևում՝ հավատք ներշնչելով նրան ձեր հանդեպ, ձեր արդարակեցության շնորհիվ և ձեր միսիոներական աշխատանքն արդեն սկսված է։

«Քանզի ահա արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել» [ՎևՈւ 4.4]։[7]

Ճշմարտությունը տարածելն ուրիշ ինչ-որ մեկի պարտականությունը չէ, այլ դա ձեր պարտականությունն է և իմը՝ հոգ տանելու, որ Հիսուս Քրիստոսի ավետարանն իր անարատությամբ ուսուցանվի մարդկանց զավակներին։ Մի՞թե դա չի ստիպում ձեզ երախտապարտ լինել։[8]

Մեզանից յուրաքանչյուրի համար կա մեծ հնարավորություն։ Ես կկամենայի շեշտել միսիոներական անհատական աշխատանքը մեզանից յուրաքանչյուրի կողմից մեր հարևանների մեջ։ Մենք կզարմանանք, եթե մենք կատարենք մեր լավագույնը, թե որքան շատերը կհետաքրքրվեն, և ոչ միայն նրանք երախտապարտ կլինեն մեզ նրանց ճշմարտությունը բերելու և նրանց աչքերը բանալու համար՝ այն փառքերի և օրհնությունների առջև, որոնք պատրաստել է մեր Երկնային Հայրը, այլ նրանք կսիրեն մեզ և երախտապարտ կլինեն մեզ հավերժության դարերի ընթացքում։

Կան այնքան շատ բաներ, որ Տերը շնորհել է մեզ, որոնք ուրիշ մարդիկ դեռ չեն ստացել։ Անկասկած, մենք չպետք է եսասեր լինենք։ Մեր սրտերում պետք է ցանկություն լինի յուրաքանչյուր ուրիշ հոգու հետ հնարավորին չափով կիսվելու Հիսուս Քրիստոսի ավետարանի ուրախալի ճշմարտությունները։[9]

Այսպիսով, երբ մենք առաջ ենք գնում, մեզանից յուրաքանչյուրը, ամեն մեկս ունենալով ազդեցություն մեր հարևանների և մեր ընկերների վրա, եկեք չլինենք երկչոտ: Մենք չպետք ձանձրացնենք մարդկանց, բայց եկեք նրանց զգացնել տանք և հասկացնենք, որ մենք հետաքրքրված ենք, ոչ թե նրանց դարձնել եկեղեցու անդամ անդամակցության համար, այլ նրանց բերենք Եկեղեցի, որ նրանք կարողանան վայելել նույն օրհնությունները, որոնք մենք ենք վայելում:[10] (Տես առաջարկ 2 էջ 164):

Եթե մենք ապրում ենք օրինակելի կյանքով մեր ազդեցությունը կարող է քաջալերել մյուսներին սովորելու ավետարանի մասին:

Հիշեք, մենք բոլորս ունենք պարտականություններ: Հնարավոր է որ մենք չկանչվենք որոշակի պարտականության, սակայն մեր շրջակայքում յուրաքանչյուրիս համար հնարավորություն կա՝ ճառագել խաղաղության և սիրո ու երջանկության ոգի մինչև վերջ, որպեսզի մարդիկ կարողանան հասկանալ ավետարանը և հավաքվել հոտի մեջ:[11]

Միայն մի քանի օր առաջ մեր քույրերից մեկն այցի գնալով արևելք, մի կրթված մարդու հետ զրուցելիս նրան ասվեց. «Ես չեմ կարող հավատալ ինչպես դուք, բայց կուզենայի, որ կարողանայի: Դա գեղեցիկ է»: Եվ դա այդպես է մեր Հոր զավակներից շատերի հետ, ովքեր տեսնելով այս աշխատանքի բնույթը, հետևելով տղամարդկանց և կանանց գործողություններին, ովքեր ընդունել են ճշմարտությունը, նրանք լցվում են զարմանքով, տեսնելով թե ինչ է իրականացվել և խաղաղությունը և երջանկությունը, որը հետևում է անկեղծ հավատացողին և ցանկանում են, որ նրանք ևս կարողանային մասնակից լինել դրան, և նրանք կկարողանային, եթե հավատք ունենային:[12]

Ես հաճախ եմ նկատել, և կարծում եմ ձեզանից մեծ մասը, ովքեր ունեցել են միսիոներական փորձառություն, կհաստատեն դա, որ ոչ մի լավ տղամարդ կամ կին չի կարող գալ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հավատարիմ անդամների ազդեցության ներքո և զսպել իրենց հիացմունքը նրա վերաբերյալ, ինչ նրանք նկատում են, լինելով մեզ հետ: Երբ նրանք հեռանում են մեզանից, երբեմն դա տարբեր է, բայց երբ նրանք այդ ազդեցության տակ են, որը գալիս է Տիրոջից, որով

«Մեր շրջակայքում յուրաքանչյուրիս հասար հնարավորություն կա՝ ճառագել խաղաղության և սիրո ու երջանկության ոգի»:

օժտված են Նրա ծառաները, ովքեր ծառայում են նրան, նրանք, սովորաբար, գոհունակությամբ հիացմունք են հայտնում նրա վերաբերյալ, ինչ իրենք տեսնում են և զգում:[13]

Հակառակորդը գործադրում է իր ամենասաստիկ ջանքերը, որ խանգարի ավետարանի ճշմարտությունների տարածմանը: Եվ իմ ու ձեր պարտականությունն է վարվել գիտությամբ և եղբայրական սիրով ու հավատքով հաղթահարել նախապաշարմունքը, որը հակառակորդն է սերմանել մեր Հոր զավակների սրտերում, կոտրելու կեղծ տպավորությունները, որոնք գոյություն ունեն որոշ դեպքերում, նույնիսկ լավ տղամարդկանց և լավ կանանց մտքերում, և ուսուցանել նրանց մեր Տիրոջ ավետարանը, որ այն Աստծո զորությունն է ի փրկություն բոլոր նրանց, ովքեր հավատում են և հնազանդվում դրան:[14]

Կարծում եմ այս մեծ կազմակերպությունը, որին մենք պատկանում ենք, պարտավոր է ի զորու լինել այնպիսի օրինակ ցույց տալու, որ մեր հարևանությամբ ապրող մարդիկ՝

Եկեղեցու ոչ անդամները, տեսնելով մեր լավ գործերը, հարկադրված լինեն փառաբանելու մեր Երկնային Հոր անունը: Ես այդ ձևով եմ զգում դրա վերաբերյալ: Այն բոլորը, ինչ մենք պետք է անենք, օրինակ ցույց տալն է, լավ տղամարդիկ և լավ կանայք լինելն է, և նրանք դա կնկատեն: Այդ ժամանակ գուցե նրանք հնարավորություն ընձեռեն մեզ ուսուցանել իրենց այն բաները, որոնք նրանք չգիտեն:[15]

Եթե մենք որպես Եկեղեցու անդամներ պահենք Աստծո պատվիրանները, եթե մենք ճշմարտության վրա դնենք այն կարևորությունը, որը մենք պարտավոր ենք, եթե մեր կյանքը համապատասխանեցնենք դրա ուսմունքների գեղեցկություններին, որպեսզի մեր հարևանները նկատելով մեր վարքը ստիպված լինեն հետամուտ լինելու ճշմարտությանը, մենք կատարած կլինենք հրաշալի միսիոներական աշխատանք:[16] (Տես առաջարկներ 3 էջ 164:)

Մենք մասնակցում ենք միսիոներական աշխատանքին՝ օգնելով պատրաստել ապագա միսիոներներ և աջակցելով նրանց իրենց միսիաներում:

Մեր միակ առաքելությունը Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանելը չէ և դրանով ապրելը, այլ մեր առաքելությունն է աշխարհ ուղարկել մեր որդիներին և դուստրերին, երբ նրանք կանչվում են ժամանակ առ ժամանակ աշխատելու Եկեղեցու ծառայությունում: Երբ նրանք գնում են, պետք է այնպես ուսուցանված լինեն, որ լինեն անհողդողդ հակառակորդի գայթակղությունների դեմ, նրանք պետք է լինեն այնքան մաքուր և առաքինի ու արդար իրենց կյանքում, որքան հնարավոր է լինել, և այդ ժամանակ նրանց սոսկ ներկայության ազդեցությունը կզգացվի նրանց կողմից, ում հետ նրանք շփվում են: Աստծո Հոգին չի բնակվում անմաքուր խորաններում, այլ նրա Հոգին բնակվում է նրանց հետ, ովքեր իրենց պահում են մաքուր և հաճելի:

Ուստի եկեք [դաստիարակենք] մեր տղաներին և աղջիկներին Աստծո Հոգու ազդեցության ներքո:[17]

Մի թողեք ձեր երեխաներին մեծանալ, առանց նրանց ուսուցանելու Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքները: Մի սպասեք, որ ուղարկեք նրանց միսիոներական դաշտ սովորելու,

թե ինչ է նշանակում ավետարանը: Հիշում եմ, երբ ես հարավում էի [որպես միսիոներ] հիսունհինգ կամ վաթսուն տարի առաջ, մի մարդ, որը եկել էր մեծ ընտանիքից, ասաց. «Ես չգիտեմ, թե ինչ ասեմ: Ես չգիտեմ ինչ ասեմ այս մարդկանց»:

«Ինչո՞ւ, – ասաց եղբայրներից մեկը. – սովորեցրեք նրանց Աստվածաշունչը: Գնացեք և վերցրեք ձեր Աստվածաշունչը և կարդացեք Ծննդոց գիրքը»: Նա ասաց. «Ես չգիտեմ, թե որտեղ է Ծննդոց գիրքն Աստվածաշնչում» և դեռ նա եկել էր. . . Վերջին Օրերի Սրբերի ընտանիքից հասցնելու կյանքի և փրկության ուղերձը հարավի այդ մարդկանց: Ինչևէ, դրանից հետո ոչ շատ երկար ժամանակ անց նրա միտքը փոխվեց: Նա ստացավ վկայություն ճշմարտության մասին՝ ուսումնասիրելով և աղոթելով, և նա գիտեր, որ ավետարանն այստեղ էր, և նա կարողանում էր կանգնել ոտքի և համարձակ բերել իր վկայությունը, որ Հիսուս Քրիստոսի ավետարանն է ճշմարտությունը:[18]

Ես համոզված եմ աշխատանքի համար նախապատրաստման կարևորության վերաբերյալ: Բավական չէ, որ տղան պարզապես ցանկություն հայտնի, իր ծնողների հանդեպ վստահության պատճառով, անելով այն, ինչ նրանք են ստիպում, որ նա անի՝ գնա աշխարհ և քարոզի ավետարանը. բավական չէ, որ նա պատասխանի այն կանչերին, որ մեր Երկնային Հայրն է ժամանակ առ ժամանակ իր ծառաների միջոցով հղում միսիոներական ծառայության համար, այլ նաև անհրաժեշտ է, որ նա որակավորված լինի աշխատանքի համար, ուսումնասիրի սուրբ գրությունները և սովորի այն, ինչ Տերն է կամենում, որ նա իմանա: Կարևոր է, որ մեր որդիներն ու դուստրերը հաստատվեն իրենց հավատքում և իմանան, ինչպես նրանց ծնողները գիտեն, որ սա մեր Հոր աշխատանքն է: . . .

Աշխատանքի համար որակավորված տղամարդկանց մի տասնյակն ավելին արժե միսիոներական դաշտում, քան հարյուրը, ովքեր ճշմարտությանն անտեղյակ են և հենց իրենց է պետք ուսուցանել, նախքան իրենք կկարողանան բացատրել դա ուրիշներին:

Սա մեր Հոր աշխատանքն է և չպետք է դրա հետ կատակ անել: Դա մեծագույն կարևորություն ունի մեզ համար: Եկեք. . . ջանանք հավատք հաստատել մեր երեխաների մեջ, որ նրանք կարողանան պատրաստակամ լինել արձագանքելու

յուրաքանչյուր կանչին և զգան իրենց հոգու խորքում ասելով. «Ես պատրաստ եմ գնալու ուր որ իմ Երկնային Հայրը ցանկանա, որ ես գնամ։[19] (Տես առաջարկ 4 էջ 164։)

Կա պատրաստված մի խնդրանք. . . որ մենք ուղարկենք մեր որդիներին ու դուստրերին միսիոներական դաշտ։ Ինձ համար ուրախություն էր տեսնել տղամարդկանց և կանանց, ովքեր տնտեսում էին և ծրագրում, որպեսզի իրենց զավակները կարողանային գնալ աշխարհ։ Վերջին շաբաթների ընթացքում մի երիտասարդ. . . մեկնեց, գնալով միսիոներական դաշտ, և նրա երկու քույրերը. . . ուղարկում են իրենց փոքրիկ աշխատավարձի մի մասը, որպեսզի նա կարողանա վայելել միսիայի օրհնությունը։ Նա առաջինն է երեխաներով մեծ ընտանիքի, որը պիտի գնա միսիոներական դաշտ՝ տարածելու ճշմարտությունը. . . Ես գիտեմ այն ուրախությունը, որը կգա այդ երկու հիանալի կանանց սրտերը, ովքեր ունեն հավատք՝ տալու իրենց միջոցներն իրենց եղբորը, որպեսզի նա կարողանա ծառայել Տիրոջը դաշտում։ Նրանք կստանան օրհնությունը, որը գալիս է Ավետարանն ուսուցանելուց, այնքանով որքանով հնարավոր է ստանալ այն առանց անձնական ծառայության։[20]

Ես մտածում եմ. . . միսիոներական դաշտում մեր ներկայացուցիչների մասին, ցրված այս երկրի տարբեր մասերում և որոշ օտար երկրներում։ Աղոթեք նրանց համար, եղբայրներ և քույրեր։ Նրանք Տիրոջ օգնության կարիքն ունեն և նրանք մեր հավատքի և աղոթքների կարիքն ունեն։ Գրեք նրանց և քաջալերեք նրանց, որ երբ նրանք նամակ ստանան տնից, նրանք իմանան, որ իրենց հիշում են ողջ ժամանակ։[21]

Մենք մասնակցում ենք միսիոներական աշխատանքին ինքներս պատրաստվելով ծառայել միսիաներում։

Շատ երկար ժամանակ չի անցնի մինչև կարիք կլինի ընդունակ տղամարդկանց և կանանց համար այս Եկեղեցում ուսուցանել ճշմարտությունը երկրի այն մասերում, որտեղ մինչև այժմ մեզ մերժել են և եթե մենք կամենում ենք ունենալ հավերժական ուրախություն մեր Հոր արքայությունում նրանց հետ, ում հետ նա օրհնել է մեզ, եկեք անեսասեր լինենք մեր կյանքում, եկեք պատրաստվենք աշխատանքի համար և դուրս գանք աշխարհ և հռչակենք ավետարանը, երբ հնարավորություն տրվի,

«Այս Եկեղեցում կան հազարավոր տղամարդիկ և կանայք, ովքեր ի զորու են ուսուցանել ավետարանը, և ովքեր կարող են ավելի ունակ դառնալ՝ կատարելով իրենց պարտականությունը միսիոներական դաշտում»:

և լինենք միջոցներ մեր Հոր ձեռքում իր զավակներին իր մոտ ետ տանելու համար, ուսուցանելով նրանց իր ավետարանի գեղեցկությունները:[22]

Միայն մի քանի տարի առաջ իմ ընկերներից շատերը լավ ապահովված էին, նրանք ունեին կյանքի անհրաժեշտ միջոցները և շատ շքեղություններ, և երբ նրանց ակնարկվում էր, թե գուցե գնային միսիոներական ծառայության, նրանցից ոմանք ասում էին. «Ես չեմ կարող թողնել իմ գործը, ես չեմ կարող գոյատևել, եթե ես դուրս գամ և թողնեմ այն, ինչ ունեմ»: Բայց նրանց գործն ավարտվել է և լքել նրանց: Այն բաները, առանց որոնց նրանք կարծում էին չեն կարող գոյատևել, անհետացել են նրանց վերահսկողությունից և հենց այս մարդկանցից շատերն այսօր երջանիկ կլինեին, եթե նրանք կարողանային ետ գնալ տասը տարի, և եթե նրանք կարողանային գնալ ծառայության, նրանք կկարողանային ասել. «Ես կհարմարեցնեմ իմ

գործերը, ես երջանիկ եմ այն հնարավորության համար, որ ինձ տրվում է լինել կյանքի և փրկության ծառայող»:

. . . Մտածեք իմ հնարավորությունների և արտոնությունների մասին, որ կարող էի նստել աշխարհի պատվավոր մարդկանց տներում և սովորեցնել նրանց Հիսուս Քրիստոսի ավետարանը, մտածեք թե դա ինչ կարող էր նշանակել տղամարդկանց հետ, ովքեր չունեն աստվածային իշխանություն և ուսուցանել նրանց փրկության ծրագիրը և բացատրել նրանց այն ձևը, թե ինչպես նրանք ևս կարող են վայելել աստվածային իշխանության օրհնությունները, որոնք դուք եք վայելում:

Ես զգում եմ, որ մեզանից ոմանք եսասեր են: Մենք այնքան ուրախ ենք մեր օրհնությունները վայելելու համար, մենք այնքան երջանիկ ենք կյանքի հարմարավետությամբ շրջապատված լինելու համար և ունենալու լավագույն տղամարդկանց և կանանց ընկերակցությունը, որոնք կարելի է գտնել աշխարհում, որ մենք մոռանում ենք ուրիշների հանդեպ մեր պարտականությունների մասին: Որքան երջանիկ կլինեինք մենք, եթե ձգտեինք ավելի ունակ լինել բարու համար աշխարհում ծառայելով նրանց, ովքեր դեռ չեն հասկացել մեր Տիրոջ Ավետարանը:

Մեզանից շատերն անցել են միջին տարիքը, մեզանից շատերն ավարտում ենք մեր գործը: Եկեղեցին միսիոներների կարիք ունի դաշտում: Մարդիկ, ովքեր հասկանում են Ավետարանը և հոժար են տալ իրենց կյանքը դրա համար, եթե կարիք լինի, և երբ ես ասում եմ մենք կարիք ունենք միսիոներների, ես նկատի ունեմ, որ աշխարհը նրանց կարիքն ունի:[23]

Մեր միսիոներական դաշտը մեր առջև է: Մեր Հոր որդիներն ու դուստրերը մեր կարիքն ունեն. . . Այս Եկեղեցում կան հազարավոր տղամարդիկ և կանայք, ովքեր կարողանում են քարոզել ավետարանը, և որոնք կարող են ավելի ունակ դառնալ՝ կատարելով իրենց պարտականությունը միսիոներական դաշտում: Նրանք կօրհնվեն միջոցներով, որոնք բավական կլինեն կատարելու այն աշխատանքը, որը Տերն է ուզում, որ մենք կատարենք:[24]

Այժմ երբ ժամանակը մոտ է, առձեռն, երբ ավետարանի տարածման դեմ բարձրացված արգելապատերը կտապալվեն և

արգելագծերը կքանդվեն, երբ Տիրոջ ձայնը գա ձեզ իր ծառաների միջոցով. «Պատրաստվեք աշխարհ գնալ և քարոզել ավետարանը», մի արեք ինչպես Հովնանն արեց, մի փորձեք թաքնվել կամ հեռու փախչել ձեր պարտականությունից. մի պատճառաբանեք, որ դուք չունեք անհրաժեշտ միջոցներ՝ գնալու համար. մի դրեք հիմար բաներ տեսադաշտի ճանապարհին, որը կխանգարի Երկնային Հոր ներկայության մեջ հավերժական կյանքի ձեր տեսողությանը, որը կարող է գալ միայն նրա գործի հանդեպ հավատքի և նվիրվածության շնորհիվ: Թող յուրաքանչյուր մարդ կարգի դնի իր տունը, թող ամեն մարդ, ով քահանայություն է կրում, իրեն կարգի բերի և երբ կանչը գա Տիրոջ ծառաների կողմից, ասելով նրան գնալ աշխարհ՝ ուսուցանելու ճշմարտությունը, նախազգուշացնելու մարդկանց զավակներին, ինչպես մեր Հայրն է պահանջում, որ նրանք նախազգուշացվեն, թող ոչ մի մարդու ետ չպահի որևէ հիմար բան՝ կուլ գնալու, եթե ոչ մի մեծ ձկան կողմից, ապա աշխարհի հիմար բաներից (տես Հովնան Ա.1–17):[25]

Դա հեշտ գործ չէ.հաճելի բան չէ, հավանաբար, կանչվել գնալու դուրս՝ աշխարհի մեջ, թողնելով մեր սիրելիներին, բայց ես ասում եմ ձեզ դրանով նրանք, ովքեր հավատարիմ են, ձեռք կբերեն ամեն հասկացողությունից վեր խաղաղություն ու երջանկություն, քանզի նրանք, ովքեր կատարում են այդ պարտականությունը, ինչպես դա պահանջվում է իրենցից, կպատրաստվեն, որպեսզի ուրույն ժամանակին, երբ կյանքի գործն ավարտվի, նրանք կանգնեն իրենց Արարչի ներկայությամբ, Նրա կողմից ընդունված, այն բանի պատճառով, ինչ իրենք արել են:[26]

Ես աղոթում եմ, որ նրա Հոգին լինի ողջ [Եկեղեցում], որպեսզի մեր Հոր զավակների սերը լինի մեր սրտերում, որպեսզի մենք զգանք աշխարհում մեր միսիայի կարևորությունը, մինչ մենք կառչում ենք բաներից, որոնք մերը չեն, որոնք միայն վարկով են տրված մեզ՝ որպես տնտեսների, որպեսզի մենք չմոռանանք անգին պարգևը, անգին արտոնությունը, մեր հասանելիության սահմաններում՝ ավետարանի ուսուցումը և մարդկանց զավակների հոգիների փրկությունը:[27] (Տես առաջարկ 5:)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես v–viii էջեր:

1. Խորհեք «Ջորջ Ալբերտ Սմիթի Կյանքից» բաժնիՆախագահ Սմիթի խոսքերի մասին (151–154 էջեր): Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ էր նա այդքան լավատեսական Եվրոպայում միսիոներական աշխատանքի վերաբերյալ, չնայած այն ընդդիմությանը, որին նա դիմակայում էր: Ինչպե՞ս կարող է նրա օրինակն օգնել ձեզ, եթե ձեր ընտանիքի անդամները կամ ընկերները մերժում են ավետարանի մասին սովորելու ձեր հրավերը:
2. Վերանայեք ուսմունքների առաջին բաժինը (էջեր 154–156): Հարևանների և ընկերների հետ ավետարանով կիսվելու ձեր ջանքերում ո՞ր մեթոդներն են ամենաարդյունավետը եղել ձեզ համար:
3. Երբ կարդաք 156 էջում սկսվող բաժինը, մտածեք մի դեպքի մասին, երբ Եկեղեցու անդամի օրինակն առաջնորդել է ինչ-որ մեկին սովորել ավելի շատ բան Եկեղեցու մասին: Որո՞նք են որոշ այլ պատճառներ, երբ Եկեղեցու չափանիշներով ապրելն այդքան կարևոր է միսիոներական աշխատանքում:
4. 158–160 էջերում որոնեք բաներ, որոնք ապագա միսիոներները կարիք կունենան անել հոգեպես նախապատրաստվելու իրենց միսիաների համար (տես նաև ՎևՈՒ 4): Ի՞նչ կարող են անել ծնողները՝ օգնելու իրենց որդիներին և դուստրերին պատրաստվելու համար: Ինչպե՞ս կարող են օգնել քահանայության քվորումները և Սփոփող Միության քույրերը:
5. Վերանայեք ուսմունքների վերջին բաժինը (161–163 էջեր): Որո՞նք են որոշ «հիմար բաները», որոնք կարող են մեզ ետ պահել միսիայում ծառայելուց: Որո՞նք են այն օրհնությունները, որոնք գալիս են տարիքավոր միսիոներների

ծառայության միջոցով: Խորհեք թե ինչ պետք է անեք նախապատրաստվելու միսիոներական ծառայության համար:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Մատթեոս Ե.14–16, Մարկոս ԺԶ.15–16, Ա Տիմոթեոս Դ.12, Ալմա 17.2–3, Վարդապետություն և Ուխտեր 31.1–8, 38.40–41

Օգնություն ուսուցչին. «Երբ մենք օգտագործում ենք մի շարք ուսուցողական վարժություններ, սովորողները միտում ունեն ավելի լավ հասկանալ ավետարանի սկզբունքները և ավելի շատ հիշել: Խնամքով ընտրված մեթոդը կարող է սկզբունքն ավելի հստակ դարձնել, ավելի հետաքրքիր և ավելի հիշվող» (*Teaching, No Greater Call,* 89):

Հղումներ

1. "New Year's Greeting," *Millennial Star,* Jan. 6, 1921, 2.
2. "Greeting," *Millennial Star,* July 10, 1919, 441.
3. "New Year's Greeting," *Millennial Star,* Jan. 1, 1920, 2.
4. In Conference Report, Oct. 1921, 37–38.
5. In Conference Report, Oct. 1950, 159.
6. In Conference Report, Apr. 1916, 46.
7. In Conference Report, Oct. 1916, 50–51.
8. In Conference Report, Oct. 1929, 23.
9. In *Deseret News,* June 25, 1950, Church section, 2.
10. In Conference Report, Apr. 1948, 162.
11. In Conference Report, Apr. 1950, 170.
12. In Conference Report, Oct. 1913, 103.
13. In Conference Report, Apr. 1922, 49.
14. "The Importance of Preparing," *Improvement Era,* Mar. 1948, 139.
15. In Conference Report, Apr. 1941, 26.
16. In Conference Report, Oct. 1916, 49.
17. In Conference Report, Oct. 1932, 25.
18. In Conference Report, Oct. 1948, 166.
19. "The Importance of Preparing," 139.
20. In Conference Report, Apr. 1935, 45.
21. In Conference Report, Oct. 1941, 98.
22. In Conference Report, Oct. 1916, 51.
23. In Conference Report, Oct. 1933, 27–28.
24. In Conference Report, Apr. 1946, 125.
25. In Conference Report, June 1919, 44.
26. In Conference Report, Apr. 1922, 53.
27. In Conference Report, Oct. 1916, 51.

Ինչպե՞ս արդյունավետ կիսվել Ավետարանով

Ավետարանով կիսվելու մեր ջանքերն ամենաարդյունավետն են դառնում, եթե մենք սիրում ենք մեր եղբայրներին և քույրերին և ունենում ենք Սուրբ Հոգու ընկերակցությունը:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Ուրիշների հետ ավետարանով կիսվելու իր անխոնջ ջանքերում Ջորջ Ալբերտ Սմիթը հետևում էր իր անձնական նշանաբանի այս դրույթին. «Ես չեմ ձգտի պարտադրել մարդկանց ապրել իմ կատարելատիպերով, այլ ավելի շուտ կսիրեմ նրանց՝ անելով այն ինչ ճիշտ է»:[1] Նա զգացել էր, որ ավետարանով կիսվելու ամենաարդյունավետ ուղին այլ հավատքի մարդկանց մեջ լավ արժանիքներ որոնելն է և ապա, համարձակությամբ, բայց բարությամբ Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանի լրացուցիչ ճշմարտություններով կիսվելու առաջարկ կատարելը: Նա հիշում էր հետևյալ փորձառությունը, որ նա ունեցել էր, երբ նախագահում էր Եվրոպական Միսիայում.

«Մի օր ես ճանապարհորդում էի գնացքով: Կուպեում իմ ընկերակիցն էր երիցական մի ծառայող, մի շատ հաճելի, հրաշալի ջենտլմեն, և երբ նա ինձ հնարավորություն տվեց, ես ասացի նրան, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եմ: Նա զարմացած նայեց ինձ ապշանքով: Նա ասաց. «Դուք ինքներդ ձեզանից չե՞ք ամաչում, որ պատկանում եք այդպիսի մի խմբի»:

Ես ժպտացի նրան և ասացի. «Եղբայրս, ես կամաչեի ինձանից, եթե չպատկանեի այդ խմբին, իմանալով այն, ինչ ես գիտեմ»: Դա տվեց ինձ իմ ցանկացած հնարավորությունը՝ խոսելու

«Մենք ցանկանում ենք բարիք անել բոլորին և աջակցել բոլորին հասկանալու կյանքի և փրկության ծրագիրը, որը Տերը հայտնի է դարձրել այս վերջին օրերին»:

նրա հետ և բացատրելու նրան, այն բաներից մի քանիսը, որոնց մենք հավատում ենք: . . .

«Կար մի լավ մարդ, որը պատկերացում չուներ, թե մենք ինչ էինք փորձում անել: Մենք այնտեղ չէինք նրան ցավ կամ վիշտ պատճառելու համար, մենք փորձում էինք օգնել նրան: Եվ երբ մենք իրավիճակի մասին խոսեցինք վերջացրեցինք, ես նրան ասացի. «Դուք սխալ պատկերացում ունեք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին այս երկրում: Ես այստեղ եմ որպես դրա ներկայացուցիչներից մեկը, և եթե դուք ինձ ուղղակի թույլ տաք ասել ձեզ մի քանի բաներ, կարծում եմ դուք ավելի լավ կզգաք մեր հանդեպ»: Ես ասացի. «Ամենից առաջ մենք խնդրում ենք ձեզ բոլորիդ՝ այստեղ գտնվող հիանալի մարդկանց, պահպանել բոլոր այն փառահեղ ճշմարտությունները, որոնք դուք ձեռք եք բերել ձեր եկեղեցիներում, որոնք դուք կլանել եք ձեր սուրբ գրություններից, պահեք այդ բոլորը,

պահեք այն հրաշալի ուսուցումը, որը դուք ստացել եք ձեր կրթական կազմակերպություններում, ողջ գիտելիքը և ճշմարտությունը, որը դուք ձեռք եք բերել ամեն աղբյուրից, պահեք. . . այն ամենն, ինչ լավ է ձեր բնավորությունում, որը ձեզ է եկել ձեր հաճելի տներից. պահեք ողջ սերն ու գեղեցկությունը, որը ձեր սրտում է, ապրելով այսպիսի գեղեցիկ ու սքանչելի երկրում. . . Այդ ամենը Հիսուս Քրիստոսի ավետարանի մասն է: Ապա եկեք նստենք և կիսվենք ձեզ հետ որոշ բաներով, որոնք դեռ չեն եկել ձեզ՝ ձեր կյանք, որոնք հարստացրել են մեր կյանքը և մեզ երջանկացրել: Մենք առաջարկում ենք ձեզ առանց փողի և առանց գնի: Այն ամենն, ինչ խնդրում ենք ձեզանից անել՝մեր ասելիքը լսելն է, և եթե այն գրավի ձեզ, ընդունեք այն ձրի . . .»:

Սա է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վերաբերմունքը»:[2] (Տես առաջարկ 1 175 էջ):

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Միսիոներական աշխատանքն ամենաարդյունավետն է, երբ մենք անում ենք այն սիրով և բարությամբ, ոչ թե հարկադրանքով կամ քննադատությամբ:

Մեր Երկնային Հայրն. . . ուղարկել է մեզ՝ իր ներկայացուցիչներին աշխարհ, ոչ թե ստիպելու կամ հարկադրելու, այլ հրավիրելու. «Եկ, հետևիր ինձ» այն էր, ինչ Փրկիչն ասաց. «Եվ ես կտամ ձեզ խաղաղություն»: Սա այն է, ինչ Ավետարանն է ուսուցանում և դա մեր ծառայությունն է:[3]

Այս Եկեղեցու նպատակը չէ ստեղծել դրույթներ, որոնք ցավ կպատճառեն նրանց, ովքեր չեն հասկանում որոշ բաներ: Սա այն Եկեղեցին չէ, որ ման է գալիս քննադատելով և մեղավորներ գտնելով ուրիշների մեջ, այլ սիրառատ բարության ոգով և օգտակար լինելու ցանկությամբ, նրա ներկայացուցիչները տանում են Ավետարանի ուղերձը երկրագնդի ազգերին:[4]

Բոլոր. . . եկեղեցիներում կան լավ տղամարդիկ և լավ կանայք: Դա այն բարին է, որ կա այս զանազան աղանդներում, որը նրանց միասին է պահում: Ես արտոնություն եմ ունեցել լինել աշխարհի տարբեր դավանանքների մարդկանց հետ, ինչպես Քրիստոնյա, այնպես էլ Հրեա: Ես եղել եմ [Մահմեդականների] հետ, ես եղել եմ նրանց հետ, ովքեր հավատում են

Կոնֆուցիուսին, և կարող եմ նշել բավականին շատ ուրիշների: Ես հրաշալի մարդկանց եմ հանդիպել բոլոր այս կազմակերպություններում, և ես ունեմ վիթխարի պատասխանատվություն, ուր էլ որ գնամ՝ նրանց մեջ, որ ես չպետք է վիրավորեմ նրանց, չպետք է ցավ պատճառեմ նրանց, չպետք է քննադատեմ նրանց, որովհետև նրանք չեն հասկանում ճշմարտությունը:

Որպես Եկեղեցու ներկայացուցիչներ՝ մենք պատասխանատվություն ենք կրում գնալ նրանց մեջ սիրով, որպես Տիրոջ ծառաներ, որպես երկնքի և երկրի Տիրոջ ներկայացուցիչներ: Նրանք գուցե ամբողջությամբ չգնահատեն դա, նրանք գուցե վրդովվեն դրանից՝ համարելով եսասիրական և անազնիվ, բայց դա չի փոխի իմ վերաբերմունքը: Ես չեմ պատրաստվում նրանց դժբախտ դարձնել, եթե կարող եմ: Ես կկամենայի նրանց երջանիկ դարձնել, հատկապես, երբ մտածում եմ այն սքանչելի հնարավորությունների մասին, որոնք եկել են ինձ՝ այս օրհնյալ Եկեղեցու անդամակցության շնորհիվ:[5]

Մեր ծառայությունը սիրո և համբերատարության ծառայություն է և մենք ցանկանում ենք բարիք անել բոլորին, և աջակցել բոլորին հասկանալու կյանքի և փրկության ծրագիրը, որը Տերը հայտնի է դարձրել այս վերջին օրերին:[6]

Մենք չենք կարող հարկադրել երկնքի արքայությունն այս երիտասարդ մարդկանց, մեր հարևաններին և ընկերներին նախատելով նրանց և մեղավորություն գտնելով նրանց մեջ, բայց ես ուզում եմ ասել ձեզ, որ մենք կարող ենք սիրել նրանց մեր Երկնային Հոր ուղղությամբ տանելով և կամաց-կամաց, գուցեև, նրանց ևս այնտեղ առաջնորդենք:

Դա մեր արտոնությունն է: Մերը մեծ ուժ է այս աշխարհի վրա ազդելու համար:[7]

Եկեք ովքեր գիտեն մեզանից նրանց, ովքեր ունեն վկայություն, առաջ գնան օրեցօր և սիրով ու անկեղծ բարությամբ գնան այս տղամարդկանց և կանանց մեջ, անկախ նրանից նրանք Եկեղեցում են, թե Եկեղեցուց դուրս և գտնեն ուղի շարժելու նրանց սրտերը և բերեն նրանց այն արահետը, որը նրանց կապահովի գիտելիք ճշմարտության մասին:[8]

Այնպես եմ աղոթում, որ մենք որպես Տիրոջ ծառաներ կարողանանք գթություն ունենալ մարդկության հանդեպ,

կարողանանք համբերություն ունենալ նրանց հետ, ովքեր սխալվում են և բարությամբ և սիրով առաջ գնանք ուսուցանելով մեր Տիրոջ ավետարանի պարզ սկզբունքներն ի օրհնություն յուրաքանչյուր հոգու, որի հետ մենք շփման մեջ ենք մտնում:[9] (Տես առաջարկ 2 էջ 176:)

Մենք չպետք է ամաչենք կիսելով այն, ինչ մենք գիտենք, որ ճշմարիտ է:

Երբեմն ես զգում եմ, որ մենք բավականաչափ չենք գիտակցում [ավետարանի] կարևորությունը, որ մենք չենք ուսուցանում դա այնպիսի լրջությամբ, որն այն պահանջում է:[10]

Հիսուս Քրիստոսի այս ավետարանն աստծո զորությունն է ի փրկություն, ինչպես Պողոս Առաքյալն է հայտարարել (տես Հռովմայեցիս Ա.16)): Դա Քավչի գործն է: Դա միակ ուղին է, որով մենք կարող ենք ձեռք բերել բարձրագույն վեհացումը, որը մարդկության Փրկիչը նախատեսել է, որ նրանք, ովքեր կհետևեն իրեն պետք է վայելեն:Ես չեմ ասում դա եսասիրաբար, ես ասում եմ դա գթությամբ մեր Հոր զավակների հանդեպ, ովքեր պատկանում են ուրիշ եկեղեցիների: Ես ասում եմ դա սիրով նրա որդիների և դուստրերի հանդեպ, ովքեր չեն հասկանում, բայց նա պատվիրել է, որ մենք ասենք այս բանը:Սա նրա կամքն է, որ մարդիկ պետք է իմանան:[11]

Ես գիտեմ, որ Աստված ապրում է: Ես գիտեմ որ Հիսուսը Քրիստոսն է: Ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթը Տիրոջ մարգարեն է: Ես երբեք չեմ եղել որևէ տեղ, որ ամաչեի վկայել այս ճշմարտությունների մասին: Ես չգիտեմ ինչու մարդը պիտի ամաչի ճշմարտությունն իմանալու համար, քանի որ ուրիշը չգիտի այն, հատկապես, երբ այն վերաբերում է ավետարանին, որն Աստծո զորությունն է ի փրկություն:[12]

Այն չպետք է համարվի պարծենկոտություն, եթե մենք գիտենք ճշմարտությունը մեզ համար, որպեսզի ինքներս արտահայտվենք: Այն չպետք է համարվի եսասիրական, այնքանով որքանով մենք մտահոգված ենք, եթե կարող ենք ասել մեր Հոր մյուս զավակներին. «Սա ես գիտեմ և դուք ևս կարող եք իմանալ դա, եթե ցանկանաք»:

Սա է Հիսուս Քրիստոսի ավետարանի գեղեցկությունը: Այն մի քանի մարդկանց համար չէ, այլ նա յուրաքանչյուր հոգու համար է, որը ծնվել է աշխարհում իմանալու համար. . . Այսօր կան այնպիսիները, ովքեր գիտեն, որ Աստված ապրում է և կան հազարավոր ուրիշներ, ովքեր կկարողանային իմանալ դա, եթե կամենային. . . Այս մարդիկ կախված չեն մեզանից իմանալու համար, բայց նրանք կախված են մեզանից, որպեսզի մենք ուսուցանեք նրանց, թե նրանք ինչպես կարող են իմանալ:[13]

Ես գիտեմ, որ մեր Երկնային Հայրը խոսել է աշխարհի այս օրերում և դարում, որ նրա ավետարանը երկրի վրա է և չնայած ես չեմ ստիպի որևէ մեկին ընդունել այն, ես աղոթում եմ, որ մենք ունենանք զորություն և իմաստություն և ուժ հասնելու այս հարևաններին մեր, ովքեր չեն հասկանում ճշմարտությունը: Եկեք անենք մեր պարտականությունը, և տանենք նրանց Տիրոջ հոտը, որ նրանք մեզ հետ, կարողանան իմանալ, որ նա ապրում է:[14] (Տես առաջարկ 3 էջ 176:)

Մենք ձգտում ենք ավելացնել երջանկությունն ու բարությունը, որն Աստծո զավակներն արդեն ունեն:

Երբ [մարդիկ] հարցրել են ինձ. «Ի՞նչ կա ձեր կազմակերպությունում, որին դուք պատկանում եք: Ինչն է ձեզ այդքան անհանգստացնում, որ դուք ուղարկում եք ձեր միսիոներներին ողջ աշխարհով մեկ»: Ես, երբեմն, պատասխանել եմ. «Մենք ուզում ենք, որ դուք բոլորդ երջանիկ լինեք: Մենք ուզում ենք, որ դուք բոլորդ ցնծաք՝ ինչպես մենք ենք ցնծում»:[15]

Հազարավորներ միսիոներներ հազարավորների ետևից. . . գնացել են աշխարհ, և սիրով ու բարությամբ նրանք գնացել են դռնեդուռ՝ ասելով մեր Հոր մյուս զավակներին.

«Եկեք տրամաբանենք ձեզ հետ, եկեք բացատրենք ձեզ մի բան, որը մենք համոզված ենք ձեզ կերջանկացնի, ինչպես որ այն մեզ է երջանկացրել»:

Դա Եկեղեցու միսիոներական աշխատանքի պատմությունն է, որով մենք ճանաչվում ենք:[16]

Ես հիշում եմ, ինչ-որ առիթով մի մարդ ասաց ինձ որոշ ժամանակ միմյանց հետ զրուցելուց հետո. «Դեհ, այն բոլորից

ելնելով որ ես կարողացա իմանալ, ձեր եկեղեցին ճիշտ նույնքան լավն է, որքան որևէ այլ եկեղեցի»։ Կարծում եմ նա մտածում էր, թե մեզ մեծ հաճոյախոսություն էր անում, բայց ես ասացի նրան. «Եթե այն Եկեղեցին, որին ես ներկայացնում եմ այստեղ ավելի կարևոր չէ մարդկանց զավակների համար, քան որևէ այլ եկեղեցի, ապա ես սխալվում եմ իմ պարտականության մեջ այստեղ։ Մենք չենք եկել ձեզանից խլելու ճշմարտությունն ու առաքինությունը, որ դուք ունեք։ Մենք չենք եկել ձեզ մեղավոր գտնելու կամ քննադատելու համար. . . Պահեք այն բոլոր բարին, որ դուք ունեք և թույլ տվեք բերել ձեզ ավելի շատ բարիք, որպեսզի դուք ավելի երջանիկ լինեք, և որպեսզի դուք կարողանաք պատրաստված լինել մտնելու մեր Երկնային Հոր ներկայության մեջ»։ (Տես առաջարկ 4 էջ 176։)

. . . Այն ժամանակ, երբ Փրկիչը երկրի վրա էր ժամանակների գագաթնակետին, կային ուրիշ եկեղեցիներ, կային բազմաթիվ դավանանքներ և աղանդներ և նրանք հավատում էին, որ իրենք ծառայում էին Տիրոջը։ Հուդայի ժողովատները լցված էին մարդկանցով, ովքեր հավատում էին, որ իրենք քահանայության իշխանությունն ունեին։ Նրանք հետևում էին ինչպես իրենք էին կարծում Աբրահամի և Մովսեսի ուսմունքներին։ Նրանք շարունակում էին հայտարարել աշխարհի Փրկչի գալուստը։ Նրանք խրախուսում էին տղամարդկանց և կանանց կատարել արդարության գործեր։ Նրանք տաճար էին կառուցել և երկրպագության տներ։ Նրանք հուշարձաններ էին կերտել մարգարեներին, ովքեր վկայություն էին բերել Աստծո գոյության մասին և որոնցից մի քանիսը սպանվել էին և կնքել իրենց վկայությունն իրենց կյանքի արյամբ։ Սրանք էին այն մարդիկ, ում մոտ եկավ Փրկիչը. . . Նրանց մեջ շատ բարություն կար։ Նրանց մեջ կային շատ բարի տղամարդիկ և կանայք։ Այդ ժողովրդի մեջ կար շատ արդարություն։ Փրկիչը չեկավ նրանցից վերցնելու այդ լավ բաներից որևէ մեկը։ Երբ նա հայտնվեց նրանց մեջ նա դատապարտության համար չարեց դա, այլ նրանց ապաշխարության կանչելու համար, դա իրենց սխալներից նրանց կանչելու և նրանց քաջալերելու համար էր, որ պահեին ողջ ճշմարտությունը, որ նրանք ունեին։

. . . Երբ մենք քարոզում ենք մարդկության ընտանիքին, այն ձևով, որ մենք դա անում ենք, որ մարդն ուրացել է

ավետարանը, մենք չենք քարոզում մի բան, որ տեղի չի ունեցել աշխարհում նախկինում: Երբ մենք ասում ենք լավ տղամարդկանց և կանանց, որ նրանք առաջնորդվել են անելու և հավատալու բաների, որոնք ճիշտ չեն, մենք չենք ասում դա դատապարտելով, մենք չենք խոսում վիրավորելու ցանկությամբ, այլ մենք խոսում ենք ցանկությամբ, որ մարդը կանգ առնի բավականաչափ երկար քննելու ինքն իրեն, տեսնելու, թե ուր է գնում և ինչ է լինելու իրենց վերջնական ճակատագիրը:[17]

Օ՜, եթե միայն կարողանայինք մարդկությանը տալ մեր զգացմունքների մի ըմբռնում, որ նրանք կարողանային հասկանալ, որ մենք չենք կամենում սահմանափակել նրանց հնարավորությունները, այլ որ նրանք կարողանային զգալ, որ մեր սրտերը ցավում են նրանց համար սիրով և բարությամբ, առանց որևէ ցանկության նրանց ցավ պատճառելու: Մեր առաքելությունն աշխարհում հոգիներ փրկելն է, նրանց օրհնելը և նրանց մի վիճակում դնելը, որ նրանք ետ գնան մեր Հոր ներկայություն, պսակված փառքով, անմահությամբ և հավերժական կյանքով:[18]

Եթե մենք ուսուցանենք Սուրբ Հոգով,
Նա կբերի վկայություն ճշմարտության
մասին նրանց, ում ուսուցանում ենք:

Միսիոներներն ուղարկվել են երկրի չորս անկյուններն այս Եկեղեցու կողմից և նրանք հռչակել են Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Շատերն ուսուցում չեն ստացել աշխարհի մեծ համալսարաններում: Նրանց կրթությունը մեծ մասամբ սահմանափակվել է կյանքի փորձառություններով, բայց նրանք ունեցել են այն, ինչն ավելի կարողունակ է ոգեշնչելու մարդկության ընտանիքը՝ Սուրբ Հոգու ընկերակցությանը:[19]

Երբ ես ճանապարհորդում եմ միսիոներական դաշտում, ես տեսնում եմ այդ երիտասարդ տղամարդկանց և կանանց զարգացումը, ովքեր անեսասիրաբար ծառայում են, և հասկանում, որ նրանք ոչ միայն երկրի լեզուն են սովորում, որտեղ նրանք աշխատում են, այլ նրանք գիտեն, որ իրենք Տիրոջ կողմից պարգև ունեն տարածելու ճշմարտությունը, որը մարդիկ չեն կարող ձեռք բերել որևէ այլ ուղով:[20]

«Եկեք աշխատենք օրեցօր, որ մեր Հայրն օրհնի մեզ: Եթե մենք ունենք Նրա Սուրբ Հոգին, այն մարդիկ, ում հետ մենք շփման մեջ ենք մտնում, կզգան դա»:

Ձեզանից շատերը կամ ձեր նախնիները լսել են ավետարանն ինչպես այն ուսուցանվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի կողմից. . . Երբեմն դուք այն լսել եք փողոցներում, որտեղ եղել է մի խոնարհ միսիոներ, ուսուցանելով այն, ինչ Տերը կանչել է նրան ուսուցանել:

Ինչ-որ բան շարժել է նրանց սրտերը, ովքեր լսել են: Ես ունեցել եմ փորձառություններ միսիոներական դաշտում: Ես տեսել եմ մարդկանց խմբեր, ովքեր կանգնել են և լսել մի խոնարհ միսիոների կյանքի նպատակի բացատրությունը և խոսելը մարդկանց հետ և նրանց խրախուսելը իրենց մեղքերից ապաշխարել և ես երբեմն լսել եմ մարդկանց ասելիս. «Ես երբևէ նախկինում երբեք չեմ զգացել այսպիսի ազդեցություն, ինչպիսին հիմա եմ զգում, երբ այդ մարդը խոսում է»:[21]

Անկախ նրանից, թե որքան շնորհալի մենք կարող ենք լինել, և որքան ընտիր կարող է լինել մեր լեզուն, մեր Հոր Հոգին է որ

հասնում է սրտին և համոզվածություն բերում այս աշխատանքի վերաբերյալ։[22]

Սա Տիրոջ աշխատանքն է։ Մարդիկ չէին կարողանա հաջողությամբ այն առաջ տանել ինչպես այն արվել է այն պարզ միջոցներով, որոնք գործածվել են մեր կողմից։ Սովորական մարդը չէր կարողանա բերել ձեր հոգու մեջ այն գիտելիքը, որը դուք ունեք։ Ոչ էլ մենք կարող ենք որպես մարդիկ ոգեշնչել նրանց, ովքեր աշխարհում են այն համոզվածությամբ, որ Աստված ապրում է, և որ սա նրա Եկեղեցին է, բայց եթե մենք անենք մեր մասը, մեր Երկնային Հայրը կօրհնի մեր ջանքերը։[23]

Եկեք աշխատենք օրեցօր, որ մեր Հայրն օրհնի մեզ։ Եթե մենք ունենք Նրա Սուրբ Հոգին, այն մարդիկ ում հետ մենք շփման մեջ ենք մտնում, կզգան դա, որովհետև այն կներթափանցի այն մթնոլորտը, որում մենք ապրում ենք, և նրանք կճաշակեն դրանից ու կխմեն այն։[24]

Կան միայն համեմատաբար մի քանիսը, ովքեր ընդունել են ավետարանն ինչպես որ այն քարոզվել է վերջին օրերում, բայց կան միլիոնավորներ մեր Հոր զավակներից, ովքեր ցանկանում են իմանալ Նրա կամքը, և երբ ճշմարտությունը բերվի նրանց և Հոգու համոզող ազդեցությունը վկայություն բերի նրանց ճշմարտության մասին, նրանք կցնծան ընդունելով այն։[25] (Տես առաջարկ 5)։

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար, տես էջեր v–viii։

1. Ուսումնասիրեք «Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից» բաժնի վերջին երկու պարբերությունները (էջեր 166–168)։ Մտածեք ինչ-որ մեկի մասին, ում դուք գիտեք, ով Եկեղեցու անդամ չէ։ Այս անձնավորության մեջ ի՞նչ հատկանիշներով եք հիանում։ Ավետարանի ինչ ճշմարտությունների է այդ կինը կամ տղամարդն արդեն հավատում։ Ի՞նչ լրացուցիչ ավետարանական ճշմարտություններ կարող են

հատկապես օգտակար լինել նրա համար։ Ինչպե՞ս կարող է մարդկանց մասին այս ձևով մտածելն ազդել նրանց հետ ավետարանով կիսվելու ձևի վրա։

2. Երբ կարդաք ուսմունքների առաջին բաժինը (էջեր 168–170), մտածեք մի ժամանակի մասին, երբ դուք ներգործվել եք բարու համար, այն սիրուց, որն ինչ-որ մեկը ցույց է տվել ձեզ։ Ինչո՞ւ է այդքան կարևոր խուսափել քննադատական լինելուց նրանց հանդեպ, ում հավատամքները տարբերվում են մեզանից։
3. Կարդացեք 170 էջում սկսվող բաժինը։ Ի՞նչ է նշանակում կիսվել ավետարանով «լրջորեն»։ Ինչպե՞ս կարող ենք կիսվել մեր վկայություններով վերականգված ավետարանի վերաբերյալ առանց պարծենկոտ կամ եսասիրական թվալու։
4. Ի՞նչ եք կարծում ինչ ի նկատի ուներ Նախագահ Սմիթը, երբ նա ասաց. «Եթե այն Եկեղեցին, որին ես ներկայացնում եմ այստեղ ավելի շատ կարևորություն չունի մարդկանց զավակների համար, քան որևէ այլ եկեղեցի, ապա ես սխալվում եմ իմ պարտականության մեջ այստեղ» (էջ 172։)
5. Երբ կարդաք ուսմունքների վերջին բաժինը (էջեր 173–175), մտածեք մի փորձառության մասին, որը դուք ունեցել եք ինչ-որ մեկի հետ ավետարանով կիսվելիս։ Ի՞նչն է դարձրել փորձառությունը հաջողված։ Ի՞նչ կարող եք անել դուք բարելավելու ավետարանով կիսվելու ձեր ջանքերը։

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Հովհաննես ԺԳ.34–35, Բ Տիմոթեոս Ա.7–8, 2 Նեփի 33.1, Ալմա 20.26–27, Վարդապետություն և Ուխտեր 50.13–22

Օգնություն ուսուցչին. Մտածեք դասարանի անդամներին բաժանել երեքից հինգ մարդուց կազմված փոքր խմբերի։ Յուրաքանչյուր խմբում ղեկավար նշանակեք։ Յուրաքանչյուր խմբի հանձնարարեք տարբեր բաժին։ Խնդրեք նրանց, որ կարդան որպես խումբ իրենց բաժինը և քննարկեն գլխի վերջում գտնվող համապատասխան հարցերը։ Ապա հանձնարարեք դասարանի անդամներին կիսվել ողջ դասարանի հետ այն, ինչ սովորեցին իրենց խմբերում (տես *Teaching, No Greater Call,* 161)։

Հղումներ

1. "President George Albert Smith's Creed," *Improvement Era,* Apr. 1950, 262.
2. *Sharing the Gospel with Others,* sel. Preston Nibley (1948), 199–201; address given Nov. 4, 1945, in Washington, D.C.
3. In Conference Report, Oct. 1930, 67–68.
4. In Conference Report, Oct. 1931, 120.
5. In Conference Report, Oct. 1945, 168.
6. In Conference Report, Oct. 1927, 47.
7. In Conference Report, Apr. 1950, 187.
8. In Conference Report, Apr. 1934, 30.
9. In Conference Report, Oct. 1928, 94.
10. In Conference Report, Apr. 1916, 47.
11. In Conference Report, Oct. 1927, 48.
12. "At This Season," *Improvement Era,* Dec. 1949, 801, 831.
13. "Opportunities for Leadership," *Improvement Era,* Sept. 1949, 557, 603–4.
14. In Conference Report, Oct. 1930, 69.
15. In Conference Report, Oct. 1948, 7.
16. In Conference Report, Oct. 1946, 5.
17. In *Deseret News,* Aug. 20, 1921, Church section, 7.
18. In Conference Report, Oct. 1904, 66.
19. In Conference Report, Apr. 1940, 85.
20. In Conference Report, Apr. 1935, 45.
21. In Conference Report, Oct. 1949, 7.
22. In Conference Report, Oct. 1904, 66.
23. In Conference Report, Oct. 1929, 25.
24. In Conference Report, Oct. 1906, 50–51.
25. In *Deseret News,* Jan. 12, 1907, 31.

Նախագահ Սմիթը հավատում էր, որ տեխնոլոգիաների զարգացումը «կարող է դառնալ օրհնություն, եթե մենք օգտագործենք դրանք արդարությամբ՝ ճշմարտության տարածման և մարդկանց մեջ Տիրոջ աշխատանքի առաջընթացի համար»:

Առաջ տանել Տիրոջ աշխատանքը

Աստված ուղղորդում է Իր աշխատանքը, և Նա կանչում Եկեղեցու յուրաքանչյուր անդամի մասնակցել այն առաջ մղելուն:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Երբ Ջորջ Ալբերտ Սմիթը կանչվեց Տասներկու Առաքյալների Քվորում 1903 թվականին, Եկեղեցու անդամակցությունը հենց նոր էր 300,000-ից անցել: Որպես Եկեղեցու Նախագահ իր ծառայության վերջում այն անցել է 1 միլիոնից: Նախագահ Սմիթն ուրախանում էր այդպիսի աճով, որովհետև այն նշանակում էր, որ փրկության ուղերձը հասնում էր ավելի ու ավելի շատ մարդկանց: «Որքան երջանիկ պիտի լինենք մենք», ասում էր նա գերագույն համաժողովի ունկնդիրներին 1950 թվականին, «ոչ թե նա համար, որ մենք աճել ենք թվով կազմակերպությունում, որին մենք պատկանում ենք, այլ որ ավելի շատերն են մեր Հոր զավակներից, ավելի շատերն են նրա որդիներից ու դուստրերից բերվել ճշմարտության իմացությանը, և գալիս են նրա կազմակերպությունը, որը նա պատրաստել է՝ մեզ կյանքի ուղին ուսուցանելու համար և առաջնորդելու մեզ հավերժական երջանկության արահետով»:[1]

1903 թվականից մինչև Նախագահ Սմիթի մահը՝ 1951 թվականին, Եկեղեցին շատ մարտահրավերների դիմակայեց իր համաշխարհային առաջընթացքում: Այնպիսի իրադարձություններ՝ ինչպիսիք են՝ I Համաշխարհային Պատերազմը, II Համաշխարհային Պատերազմը և Մեծ Դեպրեսիան (լայնատարած տնտեսական ճգնաժամը) խիստ կրճատեց միսիոներների թիվը, ովքեր կարող էին ուղարկվել արտերկիր: Չնայած այդ դժվարություններին, Ջորջ Ալբերտ Սմիթը վստահ մնաց, որ Եկեղեցին

կշարունակի աճել և իրականացնել «ողջ երկիրը լցնելու» իր ճակատագիրը (Դանիել Բ.35)։ 1917 թվականին I Համաշխարհային Պատերազմի բարձրակետին, նա ասաց Սրբերին. «Ես չեմ հուսահատվում, որովհետև այս ճշմարտությունն ավելի սրընթացորեն չի գտնում իր ուղին։ Ընդհակառակը, այսօրվա իրադարձություններում ամենագետ Հոր անձնական միջամտող ձեռքն եմ տեսնում՝ պատրաստելով ուղի ավետարանի տարածման համար, որն ինքն է վերականգնել երկրի վրա մեր օրերում»։[2]

Չնայած 20-րդ դարի առաջին կեսը նշանակալի մարտահրավերներ տեսավ, այն նաև բերեց նոր տեխնոլոգիաներ, որոնք Նախագահ Սմիթը հավատում էր առաջ կտաներ Տիրոջ գործը։ Նա օդագնացության արդյունաբերության ուժեղ կողմնակից էր և տեսնում էր դրանում որպես Գերագույն Իշխանավոր իր ճանապարհորդական հանձնարարությունները կատարելու ավելի արդյունավետ միջոց։ Նա նաև աջակցում էր ռադիոյի և հեռուստատեսության Եկեղեցու օգտագործումը Տիրոջ խոսքն ավելի լայնածավալ լսարանի հասցնելու համար։ «Մենք պարտավոր ենք այս «հայտնագործությունները» որպես օրհնություն համարել Տիրոջից», ասել է նա։ «Դրանք մեծապես լայնացնում են մեր ունակությունները։ Դրանք իսկապես կարող են դառնալ օրհնություն, եթե մենք դրանք արդարությամբ օգտագործենք՝ ճշմարտության տարածման համար և Տիրոջ աշխատանքը մարդկանց որդիների մեջ առաջ տանելու համար։ Մեծ մարտահրավերը, որին դիմակայում է աշխարհն այսօր կայանում է այս հայտնագործություններից շատերի մեր օգտագործման մեջ։ Մենք կարող ենք օգտագործել դրանք, ինչպես երբեմն արել ենք անցյալում՝ կործանելու համար, կամ կարող ենք օգտագործել դրանք լուսավորելու և օրհնելու մարդկությանը, ինչպես մեր Երկնային Հայրը կցանկանար որ մենք անենք»։[3]

1946 թվականի գերագույն համաժողովի ելույթում Նախագահ Սմիթը մարգարեացավ այդպիսի տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ. «Երկար չի անցնի մինչև այս ամբիոնից և այլ վայրերից, որոնք կտրվեն, Տիրոջ ծառաները կկարողանան ուղերձներ հղել առանձին խմբերի, որոնք այնքան հեռու են, որոնց հնարավոր չի լինի հասնել։ Այդ ձևով և այլ ուղիներով մեր Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանը, Աստծո միակ զորությունն ի փրկություն սելեստիալ արքայության

նախապատրաստման համար, կլսվի աշխարհի բոլոր մասերում և ձեզանից շատերը, ովքեր այստեղ են կապրեն տեսնելու այդ օրը»[4] (Տես առաջարկներ 1 և 4 էջ 189:)

Նախագահ Սմիթը հասկանում էր, որ Եկեղեցու աշխատանքը հաջողվում էր, որովհետև այն Տիրոջ աշխատանքն էր և նա սովորեցնում էր Սրբերին, որ այդ աշխատանքին մասնակցելու հնարավորությունը օրհնություն է, որը Տերն առաջարկում է Իր Եկեղեցու յուրաքանչյուր անդամի: Առաջին գերագույն համաժողովի ժամանակ, երբ նա ձեռնադրվեց Եկեղեցու Նախագահ, նա ասաց. «Ես գիտակցում եմ այն մեծ պատասխանատվությունը, որն իմ ուսերին է: Ես գիտեմ, որ առանց Երկնային Հոր օգնության, կազմակերպությունը, որը մենք ներկայացնում ենք, չի կարող հաջողության հասնել: Ոչ մի մարդ կամ մարդկանց խումբ չի կարող այն հաջող դարձնել, բայց եթե այս Եկեղեցու անդամները շարունակեն պահել Աստծո պատվիրանները, ապրեն ըստ իրենց կրոնի, օրինակ դառնան աշխարհին, [և] սիրեն իրենց մերձավորին ինչպես իրենց, մենք առաջ կգնանք և երջանկության աճը կհորդի դեպի մեզ»:[5]

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Յուրաքանչյուր անդամի համար լիառատ հնարավորություն կա մասնակցել Տիրոջ աշխատանքին:

Այս աշխատանքի ղեկավարման պատասխանատվությունը ընկած է ոչ միայն [Եկեղեցու Նախագահի] վրա, ոչ էլ նրա խորհրդականների վրա, ոչ էլ Տասներկուսի քվորումի, այլ այն ընկած է նաև յուրաքանչյուր տղամարդու և կնոջ վրա, ովքեր մկրտվել են Աստծո ծառաների կողմից և դարձել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ. . . Մենք չենք կարող փոխանցել պատասխանատվությունը, եթե կամենանք, մեր Հայրն է դրել այն մեր ուսերին, և մենք պետք է վերցնենք պատասխանատվությունը և օգնենք կրելու այն հաղթականորեն:[6]

Ես հավատում եմ ձեզ իմ եղբայրներ և քույրեր: Ես վստահում եմ ձեր հավատքին և ձեր ազնվությանը. . . Ձեզանից յուրաքանչյուրը նույնպես պատասխանատու է այս աշխատանքի առաջխաղացման համար, ինչպես նրանք, ովքեր նախագահում են ձեզ: Ես չեմ կարող ասել. «Միթե՞ ես եմ եղբորս պահապանը»:

Ես չեմ կարող փոխանցել իմ պատասխանատվությունը . . . , բայց կանգնած մեր Հոր զավակների շարքում ես պետք է կրեմ իմ բաժինը, ես պետք է կրեմ այդ բեռի իմ բաժինը, որը Տերը դրել է ինձ վրա և եթե ես խույս տամ, ապա ես հասկանում եմ, որ ես վտանգի եմ ենթարկում այն օրհնությունը, որը կգար ինձ մեր Հոր պատվիրանին հնազանդության միջոցով։[7]

Որքան պետք է մտահոգվենք բարիք անելու համար։ Ծույլ է այն ծառան, որը սպասում է մինչև իրեն պատվիրեն բոլոր բաներում։ (Տես ՎԿՈՒ 58.26–27։) Մեր Երկնային Հայրը սպասում է, որ մենք փառավոր անենք մեր կոչումները, անկախ նրանից, թե որտեղ կլինի այն, անկախ նրանից, թե որքան խոնարհ կարող է լինել մեր ճակատագիրը կյանքում։[8]

Պարտադիր չէ, որ մարդ լինի Տասներկուսի Քվորումի անդամ կամ Եկեղեցու Նախագահության անդամ, որպեսզի ձեռք բերի մեր Երկնային Հոր արքայության մեծագույն օրհնությունները։ Սրանք ընդամենը պաշտոններ են, որոնք պահանջվում են Եկեղեցում, բայց կան շատ հավատարիմ և նվիրված մարդիկ, ովքեր արժանի են զբաղեցնելու այդ պաշտոնները, որոնց ժամանակը և տաղանդներն անհրաժեշտ են ողջ Եկեղեցում. . . Հիշեք կոչումներում և ողջ Եկեղեցում առատ հնարավորություններ կան յուրաքանչյուր տղամարդու և կնոջ համար ինչ-որ բան անելու իրենց ընկերակիցների օրհնությունների և Տիրոջ աշխատանքի առաջընթացի համար։[9]

Ոմանց կողմից, ովքեր քահանայություն են կրում, և ովքեր զբաղեցնում են պաշտոններ Եկեղեցում, միտում կա անտեսել հաղորդության ժողովները և այլ կարևոր պարտականություններ և սահմանափակել իրենց աշխատանքը որոշ հատուկ կոչումներով։ Նրանք կարող են լինել պաշտոնյաներ և կիրակնօրյա դպրոցի ուսուցիչներ, և երբ նրանք կատարում են իրենց կիրակնօրյա դպրոցի աշխատանքը, համարում են, որ դա բավական է, կամ նրանք կարող են լինել Երիտասարդ Տղամարդկանց կամ Երիտասարդ Կանանց, կամ էլ Երեխաների Միության կամ ծագումնաբանության կամ բարօրության ծրագրի ծառայողներ կամ ունենալ որևէ այլ հանձնարարություն, և երբ նրանք կատարում են իրենց պարտականությունը, նրանք համարում են իրենց ողջ պարտավորությունն ավարտված։

Որքան էլ որ շատ սիրենք և օրհնենք բոլոր այդպիսիներին իրենց մատուցած հիանալի ծառայության համար, մենք ստիպված ենք հիշեցնել մեզ, որ մեզանից բոլորից է պահանջվում ապրել մեր Երկնային Հոր բերանից դուրս եկող ամեն մի խոսքով (տես ՎԵՈՒ 84.44)։ Ընդհանուր առմամբ հատուկ հանձնարարությունները մեզ չեն ազատում մեր մյուս պարտականություններից, և հատուկ ժողովները սովորաբար չեն փոխարինում կամ դուրս մղում Եկեղեցու ընդհանուր ժողովները։ Եվ անկախ մեր մյուս պարտականություններից և նշանակումներից մեզանից սպասվում է, որ պահենք մեզ օրեցօր որպես Վերջին Օրերի Սրբեր բառի ամենալայն առումով, այնպես որ, երբ մենք տեսնում ենք թշվառություն կամ պակասություն կամ խորհրդի ու խրատի կարիք որևէ առիթով, մենք պետք է վարվենք որպես Տիրոջ ծառաներ հենց գործով։

Եվ կան նաև այնպիսիները, ովքեր ընդունում են Եկեղեցու ձևական անդամակցություն, բայց ովքեր թվում է զգում են իրենց ազատված որևէ ձևի ծառայություն մատուցելուց։ Բայց վաղ թե ուշ նրանք իրենց անհարմար են զգում իրենց սրտերում և կասկածամիտ իրենց մտքերում, ինչպես մենք բոլորս ենք զգում, երբ ձախողվում ենք անել այն, ինչ մենք գիտենք, որ մեր լիարժեք պարտականությունն է։ Մարդը, որն ապրում է համաձայն Հիսուս Քրիստոսի ավետարանի,երբեք կասկած չունի դրա հաջողության վերաբերյալ, բայց նա ով անտեսում է իր պարտականությունը, ով ձախողվում է պահել իր ուխտերը, կորցնում է Տիրոջ Հոգին, ապա սկսում զարմանալ, ինչ է լինելու Սիոնի հետ։ . . .

Երբ որ դուք անում եք ձեր լրիվ պարտականությունը, դուք կիմանաք, ինչպես գիտեք որ ապրում եք, որ սա Հոր աշխատանքն է, և նա այն դուրս կբերի հաղթական։[10]

Միթե՞ չեք տեսնում, թե ինչ սքանչելի աշխատանք և զարմանալիք է առաջ գնում։ Միթե՞ չեք տեսնում, թե ինչպես ենք մենք որպես անձնավորություններ ներդրել միայն մեր լուման, բայց բազմություն է միավորվել և Տիրոջ խոսքը տարածվել է մարդկանց որդիների մեջ, ոչ թե ռազմատենչ ուղով, այլ բարությամբ և սիրով, ողջ մարդկությանն օրհնելու ցանկությամբ։[11] (Տես առաջարկ 2 էջ 189։)

Ողջ Եկեղեցում առատ հնարավորություններ կան յուրաքանչյուր տղամարդու և կնոջ համար ինչ-որ բան անելու իրենց ընկերակիցների օրհնությունների և Տիրոջ աշխատանքի առաջընթացի համար:

Ընդդիմությունը չի կանգնեցնի Եկեղեցու առաջընթացը, որովհետև այն Աստծո աշխատանքն է, ոչ թե մարդու:

Եկեղեցին սկիզբ է առել ընդամենը վեց անդամներից: Այն աճել է օր օրի չնայած հակառակորդի ընդդիմությանը: Բայց եթե չլիներ արդարության հզոր բազուկը, բայց եթե չլիներ մեր Երկնային Հոր աչալուրջ խնամքն այս Եկեղեցին փոշի կդառնար խեցու նման շատ առաջ: Սակայն Տերն ասել է, որ նա կպահպանի մեզ, և խոստացել է մեզ պաշտպանություն, եթե մենք պատվենք նրան և պահենք նրա պատվիրանները:[12]

Այս Եկեղեցու աճը չի եկել այն պատճառով,որ այն հանրաճանաչ է: Այն եղավ չնայած աշխարհի իմաստուն մարդկանց ընդդիմությանը, այն եղավ չնայած կրոնական ուսուցիչների ընդդիմությանը և այն շարունակել է հավաքել այստեղ և

այնտեղ ընտիր հոգիներ, ովքեր ապրել են այնպես, որ կարողացել են ըմբռնել ճշմարտությունը:[13]

Ես կարդացել եմ իմ պապի՝ Ջորջ Ա. Սմիթի օրագիրը: Ես կարդացել եմ նրա անձնական փորձառությունները, մի քանիսը շատ ցավալի, իսկ մյուսները հրաշագործ: Իր պատանի տարիներին նա ուղարկվեց քարոզելու Տիրոջ Ավետարանը: Նրանն այլ մարդկանց փորձառությունն էր, ովքեր կանչվել էին ծառայության: Չարամիտ մարդիկ կեղծ մեղադրանքներ սարքեցին նրա և նրա ընկերների դեմ, բայց նա շարունակեց հավատարիմ և Տերը պաշտպանեց նրանց և մեծացրեց նրանց մարդկանց աչքում և տվեց նրանց վկայություն այս աշխատանքի աստվածայնության մասին, որն այնքան դրական էր, որ նրանց համար ոչ մի խնդիր խիստ դժվար չէր ձեռնարկել՝ ճշմարտության տարածման համար:

Պապիկն այն խմբի մեջ էր, որն ուղարկվեց Անգլիա քարոզելու Ավետարանը 1839 թվականին: Այնտեղ հակառակորդը ձգտում էր ամեն ձևով հուսահատեցնել նրանց: Նրանց այն ժամանակվա գրած օրագրերը բացահայտում են այն փաստը, որ նրանք սխալ էին ներկայացվել չար մարդկանց կողմից և հարձակման ենթարկվել չար հոգիների կողմից, բայց Տերը պահպանեց նրանց և նրանք մեծ աշխատանք կատարեցին: Այդ ժամանակ Տասներկուսի Քվորումից ութն այնտեղ էին գտնվում: Նրանց մեջ, ովքեր կանչվեցին գնալու Անգլիա, իրենց ճանապարհի համար վճարելու միջոցներ չունեցող մարդիկ կային, բայց նրանք իրենց տներից ճանապարհ ընկան ոտքով: Երկարատև հիվանդության պատճառով, այդ մարդկանցից մեկը խիստ թույլ էր՝ երկու մղոն քայլելու համար, որ ծածկակառք նստեր, սակայն այդ տարածությունը հաղթահարելու համար նրան օգնեց ընկերներից մեկը: Նրանք հավատք ունեին Աստծո հանդեպ, նրանք գիտեին, որ սա նրա Եկեղեցին էր, և այսպիսով, նրանք գնացին իրենց ճանապարհով. և հայտնվեցին ընկերներ, որոնք Եկեղեցու անդամ չէին, որոնք նրանց փող տվեցին և վճարեցին նրանց անցումը օվկիանոսի վրայով, որտեղ նրանք հաղորդեցին իրենց ուղերձը և շատ հավատարիմ մարդիկ նրանց ծառայության արդյունքում ընդունեցին ճշմարտությունը:[14]

Սա Աստծո աշխատանքն է: Սա որևէ մարդու աշխատանքը չէ: Ոչ մի մարդ կամ մարդկանց խումբ չէր կարող այն առաջ տանել և դարձնել այն հաջողված ի դեմս ունենալով աշխարհի ընդդիմությունը: Շատ անգամներ նրանք, [ովքեր դեմ էին աշխատանքին] զգացին, որ Եկեղեցու վերջը եկել էր, և ամեն անգամ իր զորության վեհափառությամբ Տերը բարձրացրեց այն և այն առաջ գնաց քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, ազգից ազգ:[15]

Ես գիտեմ, որ կան շատ խնդիրներ և կլինեն ավելի մեծ խնդիրներ, երբ օրերը գալիս են և գնում, բայց նույն Հայրը երկնքում, որը պահպանեց մեր նախնիներին, ովքեր եկան [Սոլթ Լեյք հովիտը] և հաստատեց նրանց այստեղ և օրհնեց նրանց և հնարավոր դարձրեց մարդկանց աղքատության մեջ ունենալ այս հիասքանչ [Սոլթ Լեյքի] տաճարը և այլ հրաշալի տաճարներ. . . այդ նույն Հայրը, ձեր Հայրը և իմ, պատրաստ է դուրս թափել իր օրհնությունները մեզ վրա այսօր:[16]

Առիթ չկա հուսահատության համար: Հիսուս Քրիստոսի ավետարանը շարունակում է գլորվել առաջ: Մենք խոստում ունենք մեր Երկնային Հորից, որ այն կշարունակի առաջ գլորվել: Ոչ մի այլ տնտեսություն չի ունեցել այն համոզվածությունը, որը մենք ունենք: Անցած տնտեսությունում Աստվածաշունչը վերցված էր երկրից: Երբ այն վերականգվեց մեր օրերում դա խոստումով էր, որ էլ երբեք այն չէր վերցվելու երկրի վրայից կամ տրվելու մեկ այլ ժողովրդի: Այսպիսով՝ ես աղաչում եմ ձեզ, ովքեր դրել եք ձեր ձեռքը գութանին, ետ մի շրջվեք: Ծառայեք Աստծուն և պահեք նրա պատվիրանները:[17]

Մենք չպետք է մտահոգված զգանք Սիոնի առաջընթացի վերաբերյալ, քանի որ հին հրաշալի նավը հպարտորեն կշարունակի նավարկել, և նրանք ովքեր հավատարիմ են և շիտակ, ափ կհասնեն ապահով Աստծո նավահանգստում, պսակված փառքով, անմահությամբ և հավերժական կյանքով: Ես վախ չունեմ այս տարեց տղամարդկանց և կանանց համար, ովքեր պահել են հավատքը:Ես վախ չունեմ տղաների և աղջիկների համար, ովքեր Տիրոջ պատվիրաններին հնազանդ են քայլում. . . Բայց Վերջին Օրերի Սրբերը, ովքեր գիտենալով մեր Հոր կամքը չեն կատարում դա, նրանք ովքեր լսում են Տիրոջ ուսմունքները ժամանակ առ ժամանակ և դրանց մեջքով են շրջվում, ես

վախենում եմ, որ նրանք չեն հասնի նպատակին, մինչև նրանք չվերադառնան և չապաշխարեն ողջ իրենց սրտով։[18]

Նրա աշխատանքն առաջադիմական է, մենք պետք է ակտիվ լինենք, եթե մենք մեր քայլվածքը պահենք դրան համընթաց։ Ամեն անցնող տարի Եկեղեցու կազմավորումից սկսած, այն ավելի ուժեղացած է տեսել, քան նախորդ տարին։ Այսօր շարունակական հաջողության հեռանկարն ավելի լավ է, քան երբևէ նախկինում։ Ավելի շատ մարդիկ են իմանում ճշմարտությունը մեր մասին և մեր վերաբերմունքը հանդեպ իրենց։ Անգիտության հետ կապված նախապաշարմունքը հաղթահարվում է, երբ լույսը տարածվում է մասսաների մեջ։ . . .

Պետք է որ ակնհայտ լինի բոլորին, և այն մի օր կլինի, որ այս աշխատանքի դեմ ընդդիմությունը կհաղթանակեր շատ վաղուց, եթե այն աստվածային չլիներ։ Թող ողջ աշխարհն իմանա, որ այն չի կարող տապալվել, քանի որ «այն Աստծո զորությունն է ի փրկություն բոլոր նրանց, ովքեր հավատում են»։ (Տես Հռովմայեցիս Ա.16։)[19] (Տես առաջարկ 3 էջ 189։)

Աստված հարմարեցնում է պայմաններն աշխարհում, որպեսզի Իր աշխատանքը կարողանա տարածվել ողջ երկրագնդում։

[Աստված] որոշել է, որ այն ուղերձը, որը հայտարարվել էր իր ծառաների կողմից անցած դարերի ընթացքում, նորացված և համաժողովրդականացված իր ծառաների կողմից վերջին օրերում, պետք է լսվի, և նրա զորության ուժով նա կհավասարեցնի աշխարհի պայմանները և կխոնարհեցնի մարդկանց զավակներին, մինչև նրանք դառնան ապաշխարող և հոժար՝ լսելու։ Ճշմարտությունները, որոնք մենք ուսուցանում ենք, այսինքն՝ այն ճշմարտությունները, որ Աստված պահանջում է մեզանից ուսուցանել աշխարհին, գտնում են իրենց ուղին։[20]

Տերը հայտնել է իր մարգարեներից մեկին, որ Մորմոնի Գրքի առաջ գալուց հետո նա կսկսի իր գործն ազգերի մեջ իր ժողովրդի վերականգման համար։ (Տես 2 Նեփի 30.3–8, 3 Նեփի 21.1–14, 29.1–2։) Երբ մենք գիտակցում ենք, թե ինչ արագությամբ Հիսուս Քրիստոսի ավետարանը կարող է տարածվել այժմ համեմատած 1830 թվականի հետ, մենք կարողանում

ենք տեսնել, որ Աստված մեկնել է իր ձեռքը՝ մարդկանց առաջարկելով գիտենալու հնարավորությունը: Այժմ երկար չի տևի մինչև այս աշխարհի ամեն մասում ավետարանը կլսվի՝ Տիրոջ ծառաների միջոցով հռչակելով այն զորությամբ: Մեր Երկնային Հայրը կհարմարեցնի պայմաններն աշխարհում, որպեսզի ավետարանը կարողանա քարոզվել:[21]

Փրկիչն ասել է, որ արքայության այս ավետարանը պիտի քարոզվի ողջ աշխարհում որպես վկայություն բոլոր ազգերին, իսկ հետո կգա վերջը (տես Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս Ա.31): Տերը չի պահանջի անհնարինը: Նա վերացնում է խոչընդոտները, և ավետարանը «պիտի քարոզվի»:[22]

Սիոնը կփրկագնվի, և աշխարհը, որն այժմ սխալ է հասկանում «Մորմոնականության» աշխատանքը, կապրի իմանալու, որ դա Աստծո զորությունն է ի փրկություն նրանց համար, ովքեր կկամենան պահել մեր Հոր պատվիրանները: Իմ վկայությունն է, որ աշխատանքն արագություն է հավաքում, և որ մարդկանց զավակները ընդունում են «Մորմոնականությունը» իրենց հոգիներում, որ այն մեր Հոր աշխատանքն է: Մենք կարող է լինենք անկատար և թույլ ինքներս, բայց եթե մենք լինենք առաքինի և մաքուր մեր կյանքում, եթե մենք անենք այն ինչ գիտենք որ ճիշտ է, տղամարդիկ և կանայք կմեծացվեն շարունակելու Տիրոջ աշխատանքը, մինչև մեր Հոր աշխատանքը կարվի այն ձևով, որ Նա է կամենում: Նրանք ովքեր թյուր ձևով են հասկանում մեզ այժմ, մեզ ավելի լավ կճանաչեն: Նրանք ովքեր հավատում են, որ մենք եսասիրական միտումներ ունենք չեն խաբվի և աշխարհի մեր եղբայրներն ու քույրերը, ովքեր ցանկանում են ճշմարտությունը և կամենում իմանալ թե ինչ է Տերը կամենում իրենցից, խղճի խայթ կզգան իրենց սրտերում և կընդունեն ավետարանը: Սիոնը կբարձրանա և կշողա և կդառնա ողջ երկրագնդի փառքը, Իսրայելի Տեր Աստված այսպես է հրամանագրել:[23] (Տես առաջարկ 4):

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար, տես էջեր v–viii։

1. Նախագահ Սմիթը մարգարեացավ, որ «մեր Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանը. . . կլսվի աշխարհի բոլոր մասերում» (էջ 180։ Ի՞նչ տեխնոլոգիաներ են օգնում այս հնարավոր դարձնելու համար։ Ի՞նչ այլ ուղիներ են նոր տեխնոլոգիաները կամ գիտության զարգացումը նպաստավոր դարձնում Տիրոջ աշխատանքի համար։
2. Երբ կարդաք ուսմունքների առաջին բաժինը (էջեր [181–183), մտածեք Եկեղեցում ձեր ներկա կոչման կամ նշանակման մասին։ Ինչպե՞ս է ձեր կոչման կատարումը թույլ տալիս ձեզ մասնակցել «Տիրոջ աշխատանքի առաջընթացին»։ Ինչպե՞ս են ձեր ջանքերը՝ որպես տնային ուսուցիչ կամ այցելող ուսուցիչ, նպաստում այս աշխատանքին։ Ի՞նչ ուղիներով կարող ենք մենք բոլորս մասնակցել, բացի մեր կոչումներից և նշանակումներից։
3. Էջեր 184–187-ում, Նախագահ Սմիթը բերում է իր վկայությունը, որ Տերը ղեկավարում է Իր Եկեղեցու աշխատանքը։ Ի՞նչ փորձառություններ եք ունեցել դուք, որոնք ցույց են տվել ձեզ, որ սա ճշմարիտ է։ Ինչպե՞ս է ավետարանն ուսուցանելն ու ավետարանով ապրելը մեր տներում ցույց տալիս մեր հավատքը Տիրոջ աշխատանքի հանդեպ։
4. Էջեր 180 և 187–188-ում, փնտրեք այն բաները, որոնք Տերն ասաց կանի նախապատրաստելու ուղի Իր ավետարանի քարոզման համար։ Ի՞նչ ապացույց եք տեսնում, որ այս բաները տեղի են ունեցել կամ տեղի են ունենում աշխարհում այսօր։

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Դանիել Բ.44–45, Հովել Բ.27–28, Մոսիա 27.13, Վարդապետություն և Ուխտեր 64.33–34, 65.1–6, 107.99–100, Մովսես 1.39

Օգնություն ուսուցչին. «Կարող են լինել. . . դեպքեր, երբ դուք գուցե չիմանաք որևէ հարցի պատասխանը: Եթե դա պատահի ուղղակի ասեք, որ դուք չգիտեք: Կամ գուցե հրավիրեք ուսանողներին գտնել պատասխանը, նրանց ժամանակ տալով մյուս դասին հաղորդելու, թե ինչ են հայտնաբերել» (*Teaching, No Greater Call,* 64):

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1950, 6.
2. In Conference Report, Apr. 1917, 37.
3. In *Deseret News,* May 10, 1947, Church section, 10.
4. In Conference Report, Oct. 1946, 6.
5. In Conference Report, Oct. 1945, 173.
6. In Conference Report, Apr. 1904, 64.
7. In Conference Report, Oct. 1911, 44.
8. In Conference Report, Apr. 1934, 30.
9. In Conference Report, June 1919, 42–43.
10. "Our Full Duty," *Improvement Era,* Mar. 1946, 141.
11. In Conference Report, Apr. 1930, 68.
12. In Conference Report, Oct. 1945, 170–71.
13. In Conference Report, Oct. 1916, 47.
14. In Conference Report, Apr. 1931, 32–33.
15. In Conference Report, Oct. 1931, 122–23.
16. In Conference Report, Oct. 1945, 174.
17. In *Deseret News,* Aug. 20, 1921, Church section, 7.
18. In Conference Report, Oct. 1906, 49.
19. "New Year's Greeting," *Millennial Star,* Jan. 1, 1920, 3.
20. In Conference Report, Apr. 1917, 37.
21. In Conference Report, Apr. 1927, 82–83.
22. "New Year's Greeting," 2.
23. In Conference Report, Apr. 1906, 58.

«Մատուցեք ձեր հաղորդություններն Իմ Սուրբ Օրը»

Կիրակի օրը սուրբ պահելը և հաղորդությունից արժանիորեն ճաշակելը բերում են մեզ հոգևոր ուժի աճ:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Երբ Ջորջ Ալբերտ Սմիթը երեխա էր, նա սովորեց կիրակի օրը հարգելու կարևորությունը:Հաճախ կիրակի օրերը հարևան երեխաները գալիս էին նրանց տուն Կիրակնօրյա դպրոցից հետո հրավիրելով նրան գնդակ խաղալ: «Ես երեխաների նման էի, – ասում էր նա, – կարծում էի մեծ զվարճություն էր գնդակ և այլ խաղեր խաղալը: Բայց ես ունեի սքանչելի մայր: Նա չէր ասում «Դու չես կարող անել դա», բայց ասում էր. «Որդիս, դու ավելի երջանիկ կլինես, եթե դու դա չանես. . . .»: Ես ուզում եմ ասել, որ ես երախտապարտ եմ տանն այդպիսի ուսուցման համար»:[1] Նրա մոր ուսուցումների ազդեցությունը կարելի է տեսնել Նախագահ Սմիթի հաճախակի հիշեցումներում Սրբերին, որ կիրակին սուրբ պահելը բերում է մեծ օրհնություններ:

Որպես Գերագույն Իշխանավոր, Ջորջ Ալբերտ Սմիթը հնարավորություն ուներ տարբեր վայրերում հաճախել Եկեղեցու կիրակնօրյա ծառայություններին: Երբ նա տեսնում էր Սրբերին, ովքեր երկրպագում էին միասին կիրակի օրը, նա զոհ էր մնում հաղորդության հանդեպ նրանց ակնածալի վերաբերմունքից. «Զգում եմ, որ Տիրոջ Ընթրիքի հաղորդության հանդեպ սրբության ըմբռնումը կարևոր է Եկեղեցու անդամների համար. . . Ես ուրախանում եմ, երբ տեսնում եմ մեր եղբայրներին և քույրերին ժողովատուն գալիս և այս խորհրդանիշներն արժանիորեն ճաշակելիս»:[2] (Տես առաջարկ 1 էջ 201:)

«Հարգեք Կիրակի օրը և սուրբ պահեք այն Վերջին Օրերի Սրբեր և այն ձեզ կբերի մեծ ուրախություն»:

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Աստծո պատվիրանը, որ մենք պետք է կիրակին սուրբ պահենք, ոչ թե բեռ է՝ այլ օրհնություն:

[Տերն] ուսուցանել է մեզ, որ մենք պետք է հետևենք Կիրակի օրը սուրբ պահելուն: Յոթից մեկ օրը նա առանձնացրել է որպես իր օր, և հաշվի առնելով այն բոլոր նրա օրհնությունները, որոնք շնորհվում են մեզ մյուս օրերին, ինձ թվում է, որ մենք պետք է ուրախություն գտնենք անելով այն բաները, որոնք նա է մեզնից խնդրում անել իր սուրբ օրը և ես հավատում եմ, որ մինչև մենք չանենք, մենք երջանկություն չենք գտնի. . . Նա ուզում է, որ մենք երջանիկ լինենք և ասել է մեզ, թե ինչպես վաստակենք այդ երջանկությունը:[3]

Մենք պետք է մտածենք [Տիրոջ] օրվա նպատակի մասին և օգտվենք երկրպագության ազդեցությունից: Ինչեր այն կիրականացներ աշխարհի համար, եթե մեր Երկնային Հոր բոլոր զավակները, իսկ մենք բոլորս Նրա զավակներն ենք, հարգեինք նրա ցանկությունը, որ կիրակին պետք է լինի երկրպագության օր: Հնարավոր չէ գնահատել թե ինչ օգտակար փոփոխություն կառաջացներ այն, ոչ միայն մեր իսկ ազգի մեջ, այլ աշխարհի բոլոր ազգերում, եթե մենք հարգեինք Կիրակի օրը և այն սուրբ պահեինք:[4]

Կիրակին դարձել է խաղի օր. . . օր, որն առանձնացվել է հազարավորների կողմից պատվիրանը խախտելու համար, որն Աստված է տվել շատ- շատ վաղուց և ես համոզված եմ, որ վշտի և թշվառության մեծ մասը, որը չարչարում է և կշարունակի չարչարել մարդկությանն այն փաստի պատճառով է, որ նրանք անտեսել են կիրակին սուրբ պահելու նրա հորդորը:[5] (Տես առաջարկ 2 էջ 201:)

Առաջին քարոզներից մեկը, որը քարոզվեց այս [Սոլթ Լեյքի] հովտում Նախագահ Բրիգամ Յանգի կողմից էր և նա նախազգուշացրեց մարդկանց հարգել Կիրակի օրը և սուրբ պահել այն և անկախ նրանց դժվարին պայմաններից նրանք չպետք է դուրս գային և ֆիզիկական աշխատանք կատարեին Կիրակի օրը. . . Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին խրախուսել է իր ժողովրդին հիշել Կիրակի օրը սուրբ պահելով

այն, որովհետև մեր Երկնային Հորը հաճելի է, որ մենք այդպես անենք։[6]

Եկեք ուսուցանենք [Եկեղեցու]այս տղաներին և աղջիկներին, մինչ նրանք մեծանում են, որ անեն այն բաները, որ Տերը կկամենար իրենք անեին Կիրակի օրը, և զարմանալի կլինի այն ազդեցությունը, որ նրանք կարող են ունենալ այն համայնքներում, որտեղ իրենք ապրում են։ Մինչև աշխարհը չապաշխարի իր անփութությունից և անտարբերությունից, մինչև մենք՝ Վերջին օրերի Սրբերս, շատ դեպքերում, չապաշխարենք մեր անտարբեր վերաբերմունքից մեր Երկնային Հոր սուրբ օրվա հանդեպ, մեզ չի կարող գալ ողջ այն ուրախությունը և երջանկությունը, որ մենք ցանկանում ենք վայելել այստեղ և այն չի կարող լինել մեզ հետ հավերժության մեջ։[7]

Որոշ մարդիկ երևում է մտածում են, որ եթե նրանք մասնակցել են կրոնական ժողովներին կամ կատարել իրենցից պահանջվող որոշ չափով ծառայություն Կիրակի օրը, ապա նրանք ազատ են հետամուտ լինելու հաճույքների և զբաղվելու արարքներով, որոնք անհամատեղելի են կիրակնօրյա ոգու հետ և դեռ շարունակելու են վայելել Հոր բարեհաճությունը։ Ես ասում եմ ձեզ, որ եթե Եկեղեցու անդամներն ավելի լավ գիտենալով շարունակում են սրբապղծել կիրակի օրը հետամուտ լինելով աշխարհիկ հաճույքների, նրանք կկորցնեն իրենց հավատքը, և մեր Երկնային Հոր Հոգին ետ կքաշվի նրանցից։[8]

Անկարևոր բան չէ Կիրակի օրը խախտելը։ Ես ուզում եմ ասել, որ դուք ամեն անգամ կորցնում եք, երբ խախտում եք Կիրակի օրը, դուք ավելի շատ եք կորցնում, քան դուք կարող եք ձեռք բերել, անկախ նրանից թե ինչ եք մտածում ձեռք բերել։[9]

Մոռանալը, որ այն [Հանգստության օրը] Տիրոջ օրն է, ինչպես մեզանից ոմանք անում են, ապերախտություն է։ Նա առանձնացրել է յոթ օրերից մեկը, ոչ թե որպես բեռ, այլ որ ուրախություն բերի մեր կյանք, և որ մեր տները լինեն ընտանիքի հավաքման վայր, որ ծնողներն ու երեխաները կարողանան հավաքվել ընտանեկան օջախի շուրջ՝ մեծացնելով միմյանց հանդեպ մեր սերը։ . . .

Հարգեք Կիրակի օրը և սուրբ պահեք այն Վերջին Օրերի Սրբեր, և այն կբերի ձեզ մեծ ուրախություն և մեր Երկնային

Հայրը կշնորհի ձեզ այն օրհնությունները, որոնք առաջանում են իր խորհրդին ու խրատին հնազանդվելուց։[10]

Եկեղեցի հաճախելը Կիրակին սուրբ պահելու կարևոր մաս է։

Եթե մենք անում ենք այն, ինչ մեր Երկնային Հայրը կկամենար որ անեինք, մենք կգնանք նրա սուրբ տունը Կիրակի օրը և այնտեղ կճաշակենք հաղորդությունն՝ ի հիշատակ այն զոհաբերության, որն արվել է մեզ համար մարդկության Քավչի կողմից։[11]

Այս [Կիրակի օրը] Տիրոջ սուրբ օրն է, սա այն օրն է, որը նա առանձնացրել է, որի ընթացքում մենք պետք է երկրպագենք նրան, և այս վերջին օրերին նա տվել է լրացուցիչ պատվիրան, որ մենք պետք է գնանք աղոթքի տուն և ծոմ պահենք նրա սուրբ օրը և այնտեղ ճանաչենք մեր մեղքերը և բերենք մեր վկայությունները միմյանց ներկայությամբ (տես ՎԵՈՒ 59.9–12)։ . . .

Այս սքանչելի դարում, երբ մարդիկ կարող են հարմարավետ նստել տանը և ունկնդրել համաշխարհային երաժշտություն և լսել հասարակական ելույթներ և քարոզներ, նրանք կմնան իրենց սեփական կրակարանի մոտ և, հավանաբար, կզգան, որ ստանում են այն ամենն, ինչ կարող են ստանալ, եթե գնային կրոնական ծառայությունների համար նշանակված վայրը։

Վերջին Օրերի Սրբերը չպետք է խաբվեն այս հարցում։ Օգտակար է ոչ միայն խոսքը, որ մենք լսում ենք, այլ այն ազդեցությունը, որ լցնում է մեր երկրպագության տները, որը գալիս է մեր Երկնային Հորից, դա՛ է կարևոր։ Մենք կարող ենք ռադիոընդունիչ ունենալ մեր տանը, բայց մենք չենք կարող այնքան օգուտ քաղել դրանից հոգևոր առումով, որքան եթե գնանք Տիրոջ տունն իր սուրբ օրը, որտեղ մեզ կթույլատրվի ճաշակել Հաղորդությունից և որտեղ մենք աղոթում ենք և խնդրում մեր Երկնային Հոր օրհնությունները և ստանում վկայություն ճշմարտության վերաբերյալ, որը նախատեսված է մարդկությանը փրկելու համար։ (Տես առաջարկ 3 էջ 201։)

Սրբազան արտոնություն է կիրակի օրը ճաշակել հաղորդությունից:

Կարծում եմ, հավանաբար, մեզանից մեծ մասը հասկանում են, թե ինչ պարգև են մեզ համար այն առիթները, երբ մեզ թույլատրվում է հավաքվել խաղաղությամբ և լռության մեջ հանդիպելու միմյանց և ճաշակելու Տիրոջ կոտրված մարմնի և հեղված արյան խորհրդանիշները: Պետք է որ ամեն մեկի մտքում լինի, և ես ենթադրում եմ, որ [դա] կա՝ մի սրբազույն և շատ հանդիսավոր առիթ՝ գիտակցելու, որ մենք նորոգում ենք մեր ուխտերը նրա հետ, ով տվեց իր կյանքը, որպեսզի մենք կարողանանք հարություն առնել և վեհացում ունենալ: Երբ մենք ճաշակում ենք այս խորհրդանիշները, ես համոզված եմ, մենք բոլորս հասկանում ենք, որ հաղորդությունը, որը հաստատվեց նրա կողմից նախքան նրա կյանքից հեռանալը, պետք է լինի մեզ համար վերելք և ոգեշնչում և օրհնություն ողջ հավերժության ընթացքում:[13]

Հաղորդությունը մեծ կարևորություն ունի: Տերն Ինքն է կարգել, որ մենք ճաշակենք այդ խորհրդանիշներից: Շատ մարդիկ են հավատում, որ անհրաժեշտ է մկրտվել և կատարել Ավետարանի մյուս արարողություններն իրենց համար, սակայն նրանք անտարբեր են դառնում և անփույթ Տիրոջ Ընթրիքի հաղորդության նկատմամբ: Այն համարվում է այդքան կարևորություն ունեցող մեր Երկնային Հոր կողմից, որպեսզի Իր սիրելի Որդու միջոցով և առաքյալների ու մարգարեների, ինչպես հիշատակված է սուրբ գրություններում, Սրբերին խրախուսվի կանոնավորապես ճաշակել այն: Ավետարանիչներից [Ավետարանը գրողներից] երեքն անդրադառնում են դրան (տես Մատթեոս ԻԶ.26–28, Մարկոս ԺԴ.22–24, Ղուկաս ԻԲ.19–20), և մենք գտնում ենք, որ սուրբ գրքերը, շատ տեղերում, ուսուցանում են դրա կարևորությունը, ինչպես այն ուսուցանվել էր հենց Իր՝ Տիրոջ կողմից, երբ Նա բնակվում էր մարմնում: Մեր Երկնային Հայրը չի տալիս մեզ պատվիրաններ կամ խորհուրդ, որոնք կարևոր չեն: Նա ուսուցանում է մեզ մեր բարձրացման, մեր աճի և զարգացման համար և եթե մենք հետևում ենք Նրա խորհրդին, այն կպատրաստի մեզ ետ գնալ Նրա ներկայության մեջ. . . Ամեն կիրակի մեզանից սպասվում է հանդիպել միմյանց և ճաշակել մեր հարություն առած Քավչի մարմնի և արյան խորհրդանիշները: . . .

«Հաղորդությունը, որը հաստատվեց [Տիրոջ] կողմից նախքան նրա կյանքից հեռանալը, պետք է լինի մեզ համար վերելք և ոգեշնչում ու օրհնություն ողջ հավերժության ընթացքում»:

Մենք դրա վերաբերյալ գտնում ենք մեջբերում Երրորդ Նեփիի 18-րդ գլխում, որտեղ Փրկիչը հրահանգում է այս (Ամերիկյան) մայրցամաքի ժողովրդին, ճիշտ ինչպես Նա ուսուցանել էր հին աշխարհում Իր աշակերտներին հետևելու հաղորդությանը: Այն կարդացվում է հետևյալ ձևով.

«Եվ երբ բազմությունը կերավ և հագեցավ, նա ասաց աշակերտներին. Ահա, մեկը կարգված պիտի լինի ձեր մեջ, և ես կտամ նրան իշխանություն, որ նա կտրի հացն ու օրհնի այն, և տա այն իմ եկեղեցու ժողովրդին՝ բոլոր նրանց, ովքեր կհավատան և կմկրտվեն իմ անունով:

«Եվ դուք միշտ պիտի հետևեք, որ անեք դա, ճիշտ ինչպես ես արեցի, ճիշտ ինչպես ես կտրեցի հացը և օրհնեցի այն, և տվեցի ձեզ»:

. . .Հաջորդ հատվածն ասում է հետևյալը.

«Եվ այս պիտի դուք անեք՝ ի հիշատակ իմ մարմնի, որը ես ցույց եմ տվել ձեզ։ Եվ դա կլինի մի վկայություն Հորը, որ դուք միշտ հիշում եք ինձ։ Եվ եթե դուք միշտ հիշեք ինձ, դուք իմ Հոգին կունենաք ձեզ հետ» (3 Նեփի 18.5–7)։

. . . Բացի դրանից, մենք մեր իսկ օրերում գտնում ենք, որ Տերը հայտնություն է տվել մեզ այդ նյութի վերաբերյալ։ Վարդապետություն և Ուխտերի 20-րդ բաժնում, Տերը մեզ հրահանգներ է տալիս այդ հարցի շուրջ։ Այդ հայտնության մեջ սկսած 75-րդ հատվածից, Նա ասում է.

«Նպատակահարմար է, որ եկեղեցին հաճախ հավաքվի՝ ճաշակելու հացից և գինուց՝ ի հիշատակ Տեր Հիսուսի.

Եվ Երեցը կամ քահանան պետք է այն սպասավորեն. և այս ձևով պետք է նրանք սպասավորեն այն, նա պետք է ծնկի իջնի եկեղեցու հետ և կանչի առ Հայրը հանդիսավոր աղոթքով՝ ասելով.

Ուշադրություն դարձրեք ինչպիսի գեղեցիկ աղոթք է հետևում դրան . . . .

«Ով Աստված, Հայր Հավերժական, խնդրում ենք քեզ, քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, օրհնիր և սրբացրու այս հացը բոլոր նրանց հոգիների համար, ովքեր ճաշակում են այն, որ նրանք կարողանան ուտել, ի հիշատակ Որդուդ մարմնի, և վկայեն քեզ, ով Աստված, Հայր Հավերժական, որ նրանք հոժար են իրենց վրա վերցնել անունը քո Որդու և միշտ հիշել նրան և պահել նրա պատվիրանները, որոնք նա տվել է իրենց. որպեսզի նրանք նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան։ Ամեն» (ՎևՈ 20.75–77)։

Ջրի աղոթքն ու օրհնությունը նմանատիպ է (տես ՎևՈՒ 20.78–79)։

Որքան սրբազան, որքան խորապես սրբազան են հաղորդության աղոթքում արտահայտված մտքերը։ Ես հորդորում եմ ձեզ, իմ եղբայրներ, որ երբ մենք պաշտոնավարենք հաղորդության սպասավորումը, մենք կրկնենք. . . հայտնությամբ տրված ճշգրիտ խոսքերը և դա մենք անենք Տիրոջ Հոգու հետ։ Երբ մենք կրկնենք այս աղոթքները, մենք պետք է զգանք այն զգացումները, որոնք արտահայտվում են այդ խոսքերով, որ մենք ասում ենք։[14]

Ես, երբեմն, վախենում եմ, որ հաղորդություն սպասավորվելիս չի լինում այն հանդիսավոր մթնոլորտը, որն այնտեղ պետք է լինի։ Դա այնքան սրբազան արտոնություն է. . . Նրանք, ովքեր [ճաշակում են] հաղորդությունը պետք է իրենց մտքում ունենան այն պարտավորությունը, որը նշվում է աղոթքում։[15] (Տես առաջարկ 4 էջ 201։)

Արժանիորեն հաղորդությունը ճաշակելը նորոգում է ձեր հոգևոր ուժը։

Մենք ճաշակում ենք ֆիզիկական ուտելիք, այսինքն՝ հաց և ջուր և այլն, սնուցելու ֆիզիկական մարմինը։ Ճիշտ նույնքան կարևոր է, որ մենք ճաշակենք հարություն առած մեր Տիրոջ մարմնի և արյան խորհրդանիշները, որպեսզի մեծացնենք մեր հոգևոր ուժը։ Նկատվում է, որ այն տղամարդիկ և կանայք, ովքեր տարեց տարի առանց Տիրոջ Ընթրիքից ճաշակելու են ապրում, աստիճանաբար կորցնում են Երկնային Հոր Հոգին, նրանք վտանգում են նրա ընկերակցությունը, որտեղ իրենք հնարավորություն ունեին մասնակից լինել այդ օրհնությունը, բայց ձախողվել են օգտվել դրանից։ . . .

Ես դիմեցի սուրբ գրքի մի հատվածի Ա Կորնթացիս ԺԱ գլխից, 23-րդ հատվածից սկսած, որն ասում է հետևյալը.

«Որովհետեւ ես Տէրիցն ընդունեցի այն որ ձեզ էլ աւանդեցի. Որ Տէր Յիսուսն այն գիշերը որ մատնվում էր, հաց առաւ,

Եւ գոհաալուց յետոյ կտրեց եւ ասեց. Առէք, կերէք. Այս է իմ մարմինը՝ որ ձեզ համար կոտրվում է. Այս արէք իմ յիշատակի համար։

Այնպէս էլ՝ ընթրիքն ուտելուց յետոյ բաժակն առավ եւ ասեց. Այս բաժակը նոր ուխտն է իմ արիւնովը. Այս արէք՝ քանի անգամ որ խմէք, իմ յիշատակի համար։

Որովհետեւ քանի անգամ որ այս հացն ուտէք, եւ այս բաժակը խմէք, Տիրոջ մահը պատմեցէք՝ մինչեւ որ Նա կգայ։

Ուրեմն ով որ այս հացն ուտէ՝ կամ Տիրոջ բաժակը խմէ անարժանութեամբ, նա պարտական կլինի Տիրոջ մարմնին եւ արիւնին։

Ուրեմն թող մարդ փորձէ իր անձը, եւ ապա այն հացիցն ուտէ՝ եւ այն բժակիցը խմէ։

Որովհետեւ անարժանութեամբ ուտողը եւ խմողն իր անձի համար դատաստան է ուտում եւ խմում, որ չէ որոշում Տիրոջ մարմինը։

Նորա համար էլ ձեր միջումը շատ հիւանդներ եւ ցավագարներ կան. Եւ շատեր էլ ննջած են» (Ա Կորնթացիս ԺԱ.23–30)։

. . . Ես ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ վտանգ կա, եթե մենք անում ենք դա [ճաշակում ենք հաղորդությունը] անարժանորեն։ Մինչև այս հաղորդությունը ճաշակելը մեր սրտերը պետք է անարատ լինեն, մեր ձեռքերը պետք է մաքուր լինեն, մենք պետք է ձերծ լինենք ամեն թշնամությունից մեր մերձավորների հանդեպ, մենք պետք է խաղաղ լինենք մեր ընկերակիցների հետ և մենք պետք է մեր սրտերում ցանկություն ունենանք կատարել մեր Հոր կամքը և պահել Նրա բոլոր պատվիրանները։ Եթե մենք դա անենք, հաղորդությունից ճաշակելը օրհնություն կլինի մեզ համար և կվերականգնի մեր հոգևոր ուժը։ . . .

. . .Մենք պետք է լրջորեն հաշվի առնենք այն ուխտերը, որ մենք կապում ենք մեր Հոր հետ։ Եկեք խիստ ուշադրություն դարձնենք այդ ուխտերին և եկեք հոգ տանենք, որ արժանիորեն ուտենք և խմենք մեր հոգիների օրհնության համար և մեր հոգևոր ուժի մեծացման համար։ Այս օրհնությունները ձեզ համար են իմ եղբայրներ և քույրեր, ովքեր հավատքի ընտանիքից եք։ Եկեք գնահատենք դրանք և արժանի ապրենք դրանց, որպեսզի մեր կյանքով մենք օրինակ լինենք մեր հավատքի։ Թող մեզանից ոչ ոք դատապարտության տակ չլինի հաղորդությունն անարժան ճաշակելու համար, դրանով զրկվելով մեր Հոր Հոգու ընկերակցությունից։[16]

Մենք պետք է ճաշակենք այն [հաղորդությունը] համեստությամբ, մաքուր ձեռքերի և անարատ սրտերի նախապատրաստությամբ, և մեր Հոր համար ընդունելի լինելու ցանկությամբ, այդ դեպքում մենք արժանիորեն կընդունենք այն և կուրախանանք այն օրհնություններով, որոնք կգան մեզ։[17]

Թող Տերն օրհնի մեզ, թող Նրա Հոգին շարունակի թափվել մեզ վրա։ Թող որ մենք սիրենք միմյանց, ինչպես մեր Հայրն է պատվիրել, որ մենք պիտի անենք։ Եթե մենք կարողանանք հաղորդությունն արժանիորեն ճաշակել, մենք կարող ենք սիրել

միմյանց, ճիշտ ինչպես մեր Հայրն է կարգադրել, հիշելով, որ Նա ասել է մեզ. «Եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք» (ՎԱՈ 38.27):[18] (Տես առաջարկ 5:)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվեք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր v–viii:

1. Կարդացեք վերջին պարբերությունը էջ 191: Եթե Եկեղեցու Նախագահն այցելեր ձեր հաղորդության ժողովը, ի՞նչ եք կարծում ինչպիսին կլիներ նրա տպավորությունը: Ի՞նչ կարող եք անել անձնապես ցույց տալու ավելի մեծ ակնածանք Տիրոջ և հաղորդության հանդեպ:
2. Խորհեք Նախագահ Սմիթի խոսքերի մասին երկրորդ և երրորդ պարբերություններում էջ 193: Ինչպե՞ս հասարակությունն ընդհանրապես կշահեր, եթե ավելի շատ մարդիկ հարգեին Կիրակի օրը: Ինչպիսի՞ պատշաճ որոշ ուղիներ կան օգնելու մեր ընտանիքներին և մյուսներին տեսնել Կիրակի օրվա պահելը ավելի շուտ որպես օրհնություն, քան բեռ:
3. Որոնք են մի քանի օգտակար բաներ միասին երկրպագելուց Կիրակի օրը, որը մենք չենք ստանում ուղղակի ուսումնասիրելով ավետարանը տներում: (Տես էջ 195 մի քանի օրինակների համար, տես նաև ՎԱՈՒ 59.9–12:)
4. Երբ կարդաք 196 էջում սկսվող բաժինը, մտածեք, թե ինչ կարող եք անել դարձնելու հաղորդության արարողությունը ձեր կյանքի ավելի իմաստալի մասը: Որո՞նք են այն մի քանի արդյունավետ ուղիները, որպեսզի երեխաներին օգնենք նախապատրաստվել հաղորդության համար և դրան ակնածանքով վերաբերվելու համար:
5. Երբ կարդաք ուսմունքների վերջին չորս պարբերությունները (էջ 200), փնտրեք թե ինչ է ասել Նախագահ Սմիթն այն մասին, թե ի՞նչն է մեզ որակավորում հաղորդությունից արժանի ճաշակելու համար: Ինչո՞ւ եք կարծում, որ

հաղորդությունն արժանիորեն ճաշակելը մեծացնում է մեր հոգևոր ուժը:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Ելից Ի.8–11, Եսայիա ԾԸ.13–14, Մատթեոս ԺԸ.20, 3 Նեփի 18.1–12, 20.8–9, Մորոնի 6.5–6

Օգնություն ուսուցչին. «Հմուտ ուսուցիչը չի մտածում. Ի՞նչ պիտի անեմ այսօր դասարանում», այլ հարցնում է. «Ի՞նչ են անելու իմ ուսանողները դասարանում այսօր», ոչ թե «Ի՞նչ եմ ուսուցանելու այսօր», այլ «Ինչպե՞ս եմ օգնելու ուսանողներիս հայտնաբերել այն, ինչի կարիքն ունեն իմանալ» (Virginia H. Pearce, in *Teaching, No Greater Call,* 61):

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1948, 188.
2. In Conference Report, Apr. 1908, 34–35.
3. In Conference Report, Oct. 1937, 50.
4. "A Faith Founded upon Truth," *Deseret News,* June 17, 1944, Church section, 4.
5. In Conference Report, Oct. 1935, 120.
6. In Conference Report, Apr. 1948, 13–14.
7. "Tribute to Richard Ballantyne," *Instructor,* Nov. 1946, 505.
8. "Faith—and Life," *Improvement Era,* Apr. 1949, 252.
9. In Conference Report, Oct. 1948, 188.
10. In Conference Report, Oct. 1932, 23.
11. In Conference Report, Oct. 1932, 23.
12. In *Deseret News,* Jan. 31, 1925, section 3, page 4.
13. "The Sacredness of the Sacrament," *Improvement Era,* Apr. 1946, 206.
14. In Conference Report, Apr. 1908, 35–37.
15. "The Sacredness of the Sacrament," 206.
16. In Conference Report, Apr. 1908, 34–35, 37.
17. In Conference Report, Apr. 1908, 36.
18. In Conference Report, Apr. 1908, 37.

Հավատքի զորացնող ուժը

Հավատքը պարզև է Տիրոջից, որի միջոցով արդարները զորացվում են նշանավոր բաներ կատարելու։

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

1919 թվականին Ջորջ Ալբերտ Սմիթը, այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, կանչվեց որպես Եվրոպական Միսիայի նախագահ։ Տեղի Սրբերին ուղղված իր մի ուղերձում ոչ շատ անց իր ժամանումից Նախագահ Սմիթը նշեց Եվրոպայում դժվարին պայմանների մասին, որը դեռ վերականգման ընթացքի մեջ էր I Համաշխարհային Պատերազմի ավերումներից հետո։ «Ես հասկանում եմ, որ մենք ապրում ենք աշխարհի պատմության մեջ մի կարևոր ժամանակաշրջան։ Առճակատող ազգերի լարվածության նոր պայմաններում և հաճախադեպ տագնապների ոգին գրեթե ամենուր մարդկանց որդիների մեջ, ուստի ես մեծ պատասխանատվություն եմ զգում հանդիպելու նրանց, և շատ լրջորեն ցանկանում աստվածային առաջնորդություն իմ պարտականությունները կատարելիս»։ Նախագահ Սմիթը հավատում էր, որ չնայած իրենք փորձության ժամանակների էին դիմակայում, անդամների և միսիոներների ջանքերը հաջողությամբ կպսակվեն. «Աջակցվելով հիանալի, ընդունակ ընկերակիցներով՝ [միսիայի] վարչությունում, և հավատարիմ տղամարդկանցով և կանանցով՝ տարածաշրջանում, ես հաճելի սպասումով ակնկալում եմ ազնիվ հոգիների պտղառատ բերքահավաք»։[1]

Որպես Միսիայի Նախագահ ամենաճնշող պարտականություններից մեկը միսիոներների թվի մեծացումն էր Եվրոպայում։ Եկեղեցին շատ քիչ միսիոներներ էր ուղարկել Եվրոպա պատերազմի ընթացքում և այժմ ուտելիքի պաշարները և այլ տնտեսական խնդիրները դարձնում էին Եվրոպայի

«Սուրբ գրքերը լի են հավատքի ուժի վերաբերյալ ապացույցներով. . . Հավատքով էր, որ Եղիա Մարգարեն երկնքից վար կանչեց կրակ՝ այրելու իր զոհը»:

կառավարական պաշտոնյաներին անհոժարակամ օտարականներին վիզա տալիս:Նախագահ Սմիթի դժվարին խնդիրն էր համոզել այդ պաշտոնյաներին թույլ տալ միսիոներներին գալ իրենց երկրներ: Իր դստերը՝ Էմիլիին գրած մի նամակում Նախագահ Սմիթը պատմել է այդ նպատակով Լոնդոն կատարած մի ուղևորության մասին.

«Մեր ամերիկյան դեսպանը շատ բարի զտնվեց և հաջողություն ունեցավ մեզ համար մի հարցազրույց նշանակելով Սըր. Ռոբերտ Հորնի՝ Մեծ Բրիտանիայի աշխատանքի նախարարի հետ: Երբ մենք ներկայացանք նրա գրասենյակ, մենք հանձնեցինք դեսպանի կողմից մեր նամակը Սըր. Ռոբերտի քարտուղարին, որը մեզ հարցրեց, թե որքան կտևեր մեր գործը, քանի որ նրա շեֆը մի քանի րոպեից մեկնում էր Շոտլանդիա և բացակայելու էր երեք շաբաթով:Ես հավաստիացրեցի նրան, որ մենք այժմ շատ շնորհակալ կլինեինք, եթե մեզ տրամադրվեր հինգ րոպե նրա ժամանակից, քանի որ մենք Լոնդոնում չէինք ապրում և մեր գործը հրատապ էր: Քարտուղարը գնաց Սըր. Ռոբերտի մոտ և շուտով վերադարձավ տեղեկացնելով, որ նա կհետաձգեր իր այցը և կհանդիպեր մեզ հետ այդ օրը՝ ժամը չորսին: Ես շատ ջերմեռանդորեն աղոթել էի այդ առավոտյան, որ մեր ճանապարհը բացվեր և երբ մեզ հրավիրեցին վերադառնալ, ես շատ երախտապարտ զգացի մեր Երկնային Հոր հանդեպ»:

Նշանակված ժամին Նախագահ Սմիթն ու իր ընկերակիցները հրավիրվեցին Սըր. Ռոբերտ Հորնի անձնական գրասենյակ: «Մենք փորձեցինք ասել նրան, թե ինչ կարիք ունեինք և հավաստիացրեցինք նրան, որ Մեծ Բրիտանիան ունի նրա կարիքը, ինչ խնդրում ենք: Մոտ մեկ և կես ժամ նա խիստ հետաքրքրված ունկնդիր էր Եկեղեցու պատմության և մեր հավատքի հանդեպ, և այլն;

Երբ ես վերջացրեցի, նա կրկին հարցրեց, թե ինչ էինք մենք կամենում իրենից, և երբ մենք ասացինք նրան, որ կամենում էինք մեր միսիոներական ուժերի թվի վերականգման արտոնություն՝ մինչև երկու հարյուր հիսուն հոգի, նույնը ինչ որ նախքան պատերազմն էր, նա ասաց, որ իր համար բավականություն կլինի հրահանգներ արձակել իր բաժնին թույլ տալու այդ թվաքանակով մարդիկ ժամանել այնքան արագ, որքան կարող էին

գալ։ Իհարկե, մենք շատ գոհ էինք և հեռացանք նրանից այն համոզվածությամբ, որ նա մի մեծ բեռ էր վերցրել մեր մտքից։

Ես զգում եմ, որ մենք ընկեր ենք ձեռք բերել հանձինս Անգլիայի ամենաազդեցիկ մարդկանցից մեկի և ես չէի տատանվի գնալ նրա մոտ ամեն առիթով, երբ անհարժեշտությունը պահանջեր»։[2]

Ջեյմս Գան Մակքեյը, Նախագահ Սմիթի միսիոներներից մեկը, որը ներկա էր Սըր. Ռոբերտ Հորնի հետ հանդիպմանը, հետագայում ասել է. «Նայեք այն հրաշալի աշխատանքին, որ նա իրականացրեց։ Այնտեղ [միսիայում] ընդամենը մի քանի միսիոներներ կային։ Ճանապարհը թվում էր խոչընդոտված, սակայն նա եկավ Տիրոջ ոգեշնչմամբ լցված, և կարողացավ թակել պաշտոնյաների դռները, ձեռք բերելով նրանց վստահությունը, և ի վերջո մենք ձեռք բերեցինք այն արտոնությունները, որոնք կամենում էինք, որ երեցները կարողանային գալ՝ անցնելու իրենց գործին, կատարելու իրենց միսիաները՝ առաջ տանելու Աստծո գործը և իրականացնելու նրա աշխատանքը և այդ ձևով նա ապահովեց մեզ վկայություն, որ Աստված ղեկավարում է այս աշխատանքը»։[3] Երեց Մակքեյը վերագրում էր Նախագահ Սմիթի հաջողությունը նրա «հավատքին և նվիրվածությանը և գթությանը բոլոր նրանց հանդեպ, ում հետ նա առնչվում էր»։ «Ես աշխատել եմ նրա հետ, – ասել է նա։ – Ես խորհրդակցել եմ նրա հետ, ես աղոթել եմ նրա հետ և ես գիտեմ, որ նրա հավատքը և հավատարմությունն այնքան խորն է, ինչպես ինքը կյանքը»։[4] (Տես առաջարկ 1 էջ 214։)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Հավատքի ուժն ակնհայտ է սուրբ գրքերում։

Մեզ տեղեկացվել է, որ առանց հավատքի մենք չենք կարող գոհացնել Աստծուն (տես Եբրայեցիս ԺԱ.6)։ Դա է բոլոր գործողությունների մղող պատճառը և սուրբ գրքերը լի են հավատքի ուժի ապացույցներով։ Նոյի հավատքն էր, որ կարողություն տվեց նրան կառուցելու տապանը, և որպես Աստծո պատվիրաններին հնազանդության արդյունք նա և նրա գերդաստանը փրկվեցին, մինչդեռ նրանք ովքեր հավատք չունեին, թաղվեցին մեծ ջրհեղեղում (տես Ծննդոց Զ.13–22, Է.1–24)։

«Հավատքով էր, որ Մովսեսն առաջնորդեց Իսրայելի զավակներին գերությունից, անցնելով Կարմիր ծովի միջով կարծես չոր հողի վրայով»:

Հավատքով էր, որ Ղովտը և նրա ընտանիքի անդամները պահպանվեցին, երբ կրակը երկնքից ոչնչացրեց Սոդոմ և Գոմոր քաղաքները և կործանեց բնակիչներին, ովքեր հավատք չունեին (տես Ծննդոց ԺԹ.12–25):[5]

Հավատքով Մովսեսն առաջնորդեց Իսրայելի զավակներին գերությունից, անցնելով Կարմիր ծովն ինչպես չոր հողի վրայով, որը, հետապնդող եգիպտացիների զորքերը փորձելով անցնել, խեղդվեցին: Բազմությունը կերակրվեց հացով երկնքից: Երբ Մովսեսը զարկեց ժայռին Քորեբում, ջուրը ժայթքեց հագեցնելու [բավարարելու] նրանց ծարավը, և անցնելով անապատով, նրանք առաջնորդվեցին դեպի խոստացված երկիր: (Տես Ելից ԺԴ.21–31, ԺԶ.14–15, ԺԷ.5–6:)[6]

Երբ Դանիելը շարունակեց բացեիբաց աղոթել Իսրայելի Աստծուն ի հակառակ հրովարտակի, որը պատրաստվել էր իր թշնամիների կողմից իրեն կործանելու նպատակով, նա գցվեց առյուծների որջը և թողվեց այնտեղ ողջ գիշեր: Նա գիտեր իր

Երկնային Հայրը կարող էր պահպանել իրեն և նրա վստահությունն անսասան էր։Հաջորդ առավոտ թագավորը վաղ գնաց փոսի մոտ և Դանիելին ողջ գտավ։ Նրա հավատքը վայրի գազաններին անվնաս էր դարձրել և վաստակել նրա համար թագավորի նվիրվածությունը (տես Դանիել Զ.4–28)։

Երեք Հրեաներ՝ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը, ովքեր հրաժարվեցին երկրպագել ոսկե արձանին, որը կանգնեցվել էր Նաբուգոդոնոսորի կողմից, գցվեցին կրակով բորբոքված հնոցը, որը յոթ անգամ ավելի շիկացված էր քան սովորական հնոցը։ Նրանք վստահեցին կենդանի Աստծուն և իրենց հավատքը պսակվեց իրենց կյանքերի պահպանմամբ (տես Դանիել Գ.8–28)։

Հավատքով՝ Եղիա Մարգարեն երկնքից վար կանչեց կրակ իր զոհն այրելու համար և թագավորն ու իր մարդիկ համոզվեցին, որ Իսրայելի Աստվածն էր Աստված, իսկ Բահաղը՝ ոչ (տես Ա Թագավորաց ԺԸ.36–40)։

Հավատքով էր, որ Հարեդի եղբայրը և նրա հետևորդները պահպանեցին իրենց հայրերի լեզուն Բաբելոնի աշտարակի մոտ լեզուների խառնվելու ժամանակ, և բերվեցին այս Արևմտյան կիսագունդը (տես Եթեր 1.33–43)։ Նմանատիպ հավատք էր, որ կարողություն տվեց Լեքիին բերել իր ընտանիքը ծովի վրայով և բնակեցնել նրանց այս երկրում, որն ընտիր է բոլոր մյուս երկրներից։

Հավատքն էր, որ կարողություն տվեց Հիսուսի աշակերտներին դիմանալու հալածանքներին, որը նրանց հետապնդում էր, և չնայած Հրեաների ընդդիմությանը հաստատել ավետարանը, որը Փրկիչը հանձնել էր նրանց։[7]

Հավատքով էր, որ Քավչի և Նրա ընկերակիցների կողմից գործվեցին բոլոր հրաշքները։ Ժամանակների սկզբից ի վեր մինչև այժմ հավատարիմ մարդն է եղել, ով ուժ է ունեցել Աստծո հետ։[8] (Տես առաջարկ 2 էջեր 214։)

Հավատքի ուժն ակնհայտ է այս տնտեսության արդար Սրբերի կյանքում։

Այս վերջին տնտեսությունում իր բացառիկ հավատքի շնորհիվ էր, որ պատանի մարգարե (Ջոզեֆ Սմիթը) գնաց անտառ և ծնկի իջավ ու աղոթեց և ստացավ առաջին մեծ երկնային

«Հավատքով էր, որ Բրիգամ Յանգն առաջնորդեց մարդկանց դեպի [Սոլթ Լեյքի հովիտ]»:

դրսևորումը, որը տրվեց նրան, որի միջոցով Աստվածագլխի անհատականությունը կրկին հայտնի դարձվեց մարդկությանը: Հավատքով էր, որ նա կարողացավ գնալ Կումորա բլուրը և ստանալ հրեշտակի ձեռքից այն սրբազան հիշատակարանները, որոնք նա հետագայում թարգմանեց Աստծո պարգևով ու զորությամբ: Հավատքով էր, որ նա առաջնորդեց իր ժողովրդին Կիրթլենդից դեպի Միսսուրիի հողը և ետ՝ դեպի Իլինոյս և հաճախակի թալաններից ու իրենց տներից քշվելուց հետո, հավատքը, որը ցանված էր նրանց սրտերում, մնաց նրանց հետ և նրանք իմացան, որ Աստված հոգատար էր իրենց հանդեպ: Հավատքով էր, որ Նավու մեծ քաղաքը հիմնադրվեց, Մարգարե Ջոզեֆ Սմիթի ղեկավարությամբ, և հավատքով էր, որ Վարդապետություն և Ուխտերում պարունակվող փառահեղ ճշմարտությունները ստացվեցին իր կողմից:

Հավատքով էր, որ Բրիգամ Յանգն առաջնորդեց ժողովրդին այս արևմտյան հողերը [Սոլթ Լեյքի հովիտը], և երբ նա հասավ

լեռան գագաթը և նայեց հովտին, Աստված վկայություն տվեց նրան, որ այդտեղ էր այն վայրը, որտեղ պետք է բնակեցվեր Իսրայելը. . . Հավատքով էր, որ մարդիկ դրեցին այս մեծ Տաճարի [Սոլթ Լեյքի Տաճարի] անկյունաքարը, իրենց թուլության և իրենց աղքատության մեջ, հավատալով, որ Աստված կպատրաստի ճանապարհ և կապահովի միջոցներ, որոնցով կառույցը կավարտվի: Հավատքով էր, որ մեր Երկնային Հոր ողորմածությունը տարածվեց ժողովրդի վրա, երբ իրենց թշվառության մեջ, նրանք տեսան թե ինչպես էր իրենց բերքը ոչնչացվում մորեխների կողմից, չունենալով միջոցներ կանխարգելելու այն և Աստծո նախախնամությամբ, նրանց աղոթքները պատասխանվեցին և նրանք ստացան վկայություն դրա մասին ճայերի գալով՝ իրենց բերքը պահպանելու համար և իրենց ազատելու սովից: . . .

. . . Հավատքով է, որ մարդիկ, ովքեր կանգնեցին այս աշխատանքի գլխին, ոգեշնչվեցին ժամանակ առ ժամանակ տալու հրահանգներ, որոնց կարիքը մենք ունենք: Հավատքով է, որ մենք դաստիարակվում ենք. . . նրանց կողմից, ովքեր ծառայում են Տիրոջ անունով և Մխիթարիչը կենդանացնում է նրանց հասկացողությունը, բերելով անցած բաները նրանց հիշողության մեջ և ցույց տալով նրանց գալիք բաները, այսպիսով՝հայտնության ոգու ականատեսը դարձնելով:[9]

Հավատքով է, որ Իսրայելի երեցներն առաջ են գնացել, թողնելով տները և սիրելիներին և դիմանալով աշխարհի նախատինքին, բերելու վկայություն, որ Աստված ապրում է, և որ Հիսուսը Քրիստոսն է, և որ Ջոզեֆ Սմիթը Տիրոջ մարգարեն էր: Հավատքով է, որ ձեր հիվանդները լավանում են, ձեր մահացածները բարձրացել են ի կյանք: Եթե այս ժողովրդի մեջ կատարված հրաշքների մասին հիշատակարանները հասանելի լինեին . . . , այն վկայություն կլիներ Աստծո զորության մասին, հավատքի միջոցով, որն անգերազանցելի է աշխարհի որևէ դարում:

Իմ եղբայրներ և քույրեր այս սկզբունքն է, որ մեզ դեպի երկինք է ուղղորդում, որ տալիս է մեզ հույս կյանքի ճակատամարտում: Երբ մենք խառնաշփոթության մեջ ենք ընկնում և մեզ գտնում առճակատման մեջ խոչընդոտների հետ, մեզ թվում է մենք չենք կարող հաղթահարել, ունենալով հավատք աշխարհի

Քավիչի հանդեպ, մենք կարող ենք գնալ Նրա մոտ և իմանալ, որ մեր աղոթքները կպատասխանվեն մեր բարիքի համար։[10] (Տես առաջարկ 3 էջ 214։)

Հաճախ հարց է տրվել. Արդյոք հնարավո՞ր է, որ տղաներն ու աղջիկները, երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք, ովքեր մեծացել են Եկեղեցու այս սերնդում կամենան տանել այն դժվարությունները, զրկանքներն ու փորձությունները, որոնք նրանց հայրերն ու մայրերն են տարել հանուն ավետարանի։ Արդյոք նրանք կթողնե՞ն իրենց հարմարավետ տները, որպեսզի բնակեցնեն նոր երկիր հանուն իրենց հավատքի շահերի։

Ես ասում եմ ձեզ, որ եթե նրանց սրտերում գիտելիք սերմանվեր այս աշխատանքի աստվածայնության վերաբերյալ, ինչպես մենք գիտենք այն, եթե հավատք տրված լինի նրանց Տիրոջ պատվիրանները պահելու պատճառով, եթե նրանց ուսուցանված լինի գիտենալու, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ Ջոզեֆ Սմիթը Տիրոջ մարգարեն էր, ապա ես ասում եմ ձեզ, Այո՛, նրանք կանեն ինչ իրենց հայրերն ու մայրերն արեցին, զբաղեցնելու իրենց տեղը վերջին օրերի Իսրայելի շարքերում։

Եթե դա նշանակեր զրկանքներ, եթե դա նշանակեր հիվանդություն և թշվառություն կամ նույնիսկ տնից արտագաղթում, կան հարյուրավորներ և հազարավորներ մեր որդիներից ու դուստրերից, ովքեր իմանալով, որ սա Քրիստոսի ավետարանն է, կանեն, եթե անհրաժեշտություն լինի, կկնքեն իրենց վկայությունն իրենց կյանքի գնով։[11] (Տես առաջարկ 2 էջեր 214։)

Տերը ճանապարհ կբացի մեզ համար անելու այն, ինչ Նա է խնդրում, եթե մենք հավատք գործադրենք։

Ես հիշում եմ մի օր տպավորվեցի ասելու մի միսիոների, որը գնում էր ինչ-որ քաղաք, որտեղ մեզ թույլ չէին տալիս փողոցում քարոզել.

«Այժմ հիշիր, հնարավորություն տուր Տիրոջը։ Դու պատրաստվում ես հովանավորություն խնդրել։ Հնարավորություն տուր Տիրոջը։ Խնդրիր նրան ճանապարհ բացել»։

Երիտասարդը գնաց այդ քաղաքը, գնաց քաղաքագլխի գրասենյակը և հարցրեց, թե կարող էր տեսնել նրան։ Նա

պատրաստվում էր հարցնել, թե նրանք կարող է փոխեին կարգը։

Երբ նա տեղ հասավ, պարզվեց, որ քաղաքապետը քաղաքում չէր։ Երիտասարդը դուրս եկավ գրասենյակից, նայեց միջանցքի երկայնքով և տեսավ մի դռան վրա «Ոստիկանապետի գրասենյակ» մակագրությունը։ Նա մի պահ տատանվեց և ինչ-որ բան ասաց նրան. «Տուր հնարավորություն Տիրոջը»։ Նա ներս մտավ ոստիկանապետի գրասենյակ և ասաց նրան, թե ինչու համար էր եկել։ Երբ նա ավարտեց այդ մարդն ասաց.

«Լավ, ո՞ր փողոցի անկյունը կկամենայիք»։

Նա ասաց. «Ես այս քաղաքն այնքան լավ չգիտեմ, որքան դուք։ Ես չէի կամենա խնդրել մի անկյուն, որն անցանկալի կլիներ կամ որտեղ մենք կխանգարեինք երթևեկությանը։ Դեմ չէի՞ք լինի գալ ինձ հետ ընտրելու մի անկյուն»։

Ուղղակի պատկերացրեք մի միսիոների, որը խնդրում է ոստիկանապետին անկյուն ընտրել, որտեղ պիտի քարոզեր ավետարանը։

Ոստիկանապետն ասաց.

«Իհարկե կգամ ձեզ հետ»։

Տասնհինգ րոպե հետո նրանք ունեին քաղաքի լավագույն անկյուններից մեկը, Հիսուս Քրիստոսի ավետարանը քարոզելու թույլտվությամբ, որտեղ այն չէր քարոզվել փողոցներում սկսած պատերազմից [I Համաշխարհային Պատերազմից] առաջ։ . . .

Տերն ունի գործեր իրականացնելու մի ուղի, որը մենք անկարող ենք անել և երբեք չի խնդրում մեզ անել որևէ բան, որն անելու համար հնարավոր ուղի չի պատրաստում։ Դա այն էր, ինչ նա ասաց մեզ Նեփիի միջոցով։ Նա չի պահանջի որևէ բան առանց ուղի պատրաստելու։

«Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, ասացի հորս. Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է, քանզի գիտեմ, որ Տերը պատվիրաններ չի տալիս մարդկանց զավակներին՝ առանց ուղի պատրաստելու նրանց համար, որպեսզի նրանք կարողանան իրագործել այն, ինչ նա պատվիրել է իրենց» (1 Նեփի 3.7)։

Եթե դուք ունեք ինչ-որ բան, որը Տերը խնդրում է կամ սպասում, որ դուք անեք և դուք չգիտեք ուղղակի թե ինչպես սկսել, արեք ձեր լավագույնը: Շարժվեք այն ուղղությամբ, որով պարտավոր եք գնալ, վստահեք Տիրոջը, տվեք նրան հնարավորություն և նա երբեք ձեզ չի ձախողի:[12]

Ինչպիսի սքանչելի բան է իմանալ, որ մենք կարող ենք, եթե կամենանք, բռնել մեր Երկնային Հոր ձեռքը և առաջնորդվել նրա կողմից: Ոչ մի ուրիշ ժողովուրդ չունի այս համոզվածությունը, որն այս մարդկանց խումբն ունի:[13] (Տես առաջարկ 4 էջ 214:)

Աստված արդարներին հավատք է շնորհում որպես պարգև:

Մեր հավատքը պայմանավորված է մեր արդարակյաց կյանքերի վրա: Մենք չենք կարող անպատշաճ կյանքով ապրել և ունենալ հավատք, որը պետք է ունենանք, բայց եթե մենք պահում ենք Տիրոջ պատվիրանները, մենք կարող ենք ունենալ հավատք և այն կաճի ու կմեծանա, երբ մեր արդարությունը մեծանա:[14]

Եթե մեզանից որևէ մեկը հավատք չունի այս աշխատանքում, դա այն պատճառով է, որ նա չի պահել Աստծո պատվիրանները: Եթե կան այնպիսիք, ովքեր չգիտեն, որ սա մեր Հոր աշխատանքն է, դա այն պատճառով է, որ չեն կատարել իրենց պարտականությունը: Ես գիտեմ, ինչպես որ գիտեմ, որ ապրում եմ, որ սա Տիրոջ աշխատանքն է և այդ գիտելիքը գալիս է որպես արդյունք Նրա պատվիրանները պահելուց:[15]

Մենք գիտենք, որ հավատքն Աստծո պարգևն է, դա արդարակյաց ապրելակերպի պտուղն է: Դա չի գալիս մեզ մեր հրամանով, այլ արդյունք է մեր Երկնային Հոր կամքը կատարելուց: Եթե մեր հավատքը պակասում է եկեք քննենք ինքներս մեզ տեսնելու թե արդյոք պահել ենք Նրա պատվիրանները և արդյոք ապաշխարում ենք առանց հետաձգելու, եթե չենք պահել. . . Թող որ Տերը մեծացնի մեր հավատքը և թող որ մենք արժանի լինենք դրան:[16]

Ես հուսով եմ, որ նրանք ովքեր ստացել են այս հրաշալի պարգևը հավատքի ապրում են պահելով այն:[17] (Տես առաջարկ 5 էջ 214:)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ պատրաստվեք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր v–viii։

1. Որոնեք ապացույցներ Ջորջ Ալբերտ Սմիթի հավատքի մասին պատմությունում էջեր 203–206։ Նախագահ Սմիթի միսիոներներից մեկն ասաց, որ նրա նվաճումները «ապահովեց մեզ վկայություն, որ Աստված է ղեկավարում այդ աշխատանքը» (էջ 206)։ Ինչպե՞ս եք ներգործվել ուրիշների հավատքից, ինչպես օրինակ ընտանիքի անդամի կամ մոտիկ ընկերոջ։
2. Վերանայեք հավատքի օրինակները էջեր 206–213։ Հավատքի ի՞նչ այլ օրինակներ իմաստալի են ձեր համար։ Ինչպե՞ս կարող եք օգտագործել այս օրինակներն ինչ-որ մեկին օգնելու համար, ով հավատք է գործադրում, բայց դեռ չի ստացել օրհնությունները, որոնք նա ցանկանում է։
3. Ինչպե՞ս է ձեր հավատքը «կյանքի ճակատամարտու հույս» տվել ձեզ։ Ինչպե՞ս կարող է հավատքն օգնել մեզ հաղթահարել վախը կամ այլ «խոչընդոտներ, որոնք թվում են մենք չենք կարող հաղթահարել» (էջ 210)։
4. Կարդացեք 201 էջի պատմվածքը և համեմատեք այն «Ջորջ Ալբերտ Սմիթի Կյանքից» պատմվածքի հետ։ Ինչպիսի՞ փորձառություններ եք ունեցել դուք, որոնք նման են սրանց։ Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում «Տիրոջը հնարավորություն տալ»։
5. Նախագահ Սմիթն ուսուցանեց, որ «հավատքը պարգև է Աստծուց», որը «չի գալիս մեզ մեր հրամանով» (էջ 213)։ Ինչպե՞ս է այս սկզբունքն ազդում այն ձևի վրա, երբ դուք փորձում եք մեծացնել ձեր հավատքը և հավատք ներշնչել ուրիշներին։ Ի՞նչ հատուկ բաներ կան, որոնք կարող ենք անել «պահպանելու» հավատքի պարգևը (տես Ալմա 32.35–43)։

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Եբրայեցիս ԺԱ.1–11, 17–34, Հակոբոս Բ.17–24, Ալմա 32.26–43, Եթեր 12.6–22, Մորոնի 7.27–39, Վարդապետություն և Ուխտեր 136.42

Օգնություն ուսուցչին. «Սովորողներին օգնելու համար հարցերին պատասխանել, դուք գուցե հարցնեք նրանց նախքան ինչ-որ բան կարդալը կամ ներկայացնելը, որ դուք հարցնելու եք նրանց արձագանքները. . . Օրինակ, դուք կարող եք ասել. «Լսեք երբ կարդամ այս հատվածը, որպեսզի կարողանաք կիսվել, թե ի՞նչն է ամենաշատը հետաքրքրում ձեզ սրանում» կամ«Ինչպես այս սուրբ գրությունն է ասում, տեսեք թե կարո՞ղ եք հասկանալ, թե ինչ է Տերն ասում մեզ հավատքի մասին» (*Teaching, No Greater Call* 69):

Հղումներ

1. "Greeting," *Millennial Star,* July 10, 1919, 440–41.
2. In Glenn R. Stubbs, "A Biography of George Albert Smith, 1870 to 1951" (PhD diss., Brigham Young University, 1974), 142–43.
3. James Gunn McKay, in Conference Report, Oct. 1921, 156.
4. James Gunn McKay, in "A Biography of George Albert Smith," 160.
5. In Conference Report, Apr. 1923, 75–76.
6. In Conference Report, Oct. 1913, 102.
7. In Conference Report, Apr. 1923, 75–76.
8. In Conference Report, Oct. 1913, 102.
9. In Conference Report, Oct. 1913, 102–3.
10. In Conference Report, Oct. 1913, 102–3.
11. "As to This Generation," *Improvement Era*, Feb. 1949, 73.
12. "Give the Lord a Chance," *Improvement Era*, July 1946, 427.
13. In Conference Report, Apr. 1947, 164.
14. In Conference Report, Oct. 1950, 6.
15. In Conference Report, Oct. 1915, 27–28.
16. In Conference Report, Oct. 1913, 103.
17. In Conference Report, Apr. 1923, 77.

«Եթե մենք հետևենք խորհրդին և խրատին, որոնք Տերը տվել է մեզ, մեր արահետը կլինի երջանկության արահետ»:

Կանգնիր սահմանագծի Տիրոջ կողմում

Տերը տվել է մեզ պատվիրաններ, որ մենք կարողանանք դիմադրել չարին և գտնել երջանկություն:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Ջորջ Ալբերտ Սմիթի պապը Ջորջ Ա. Սմիթը երկար տարիներ ծառայել է Տասներկու Առաքյալների Քվորումում և Առաջին Նախագահությունում որպես Բրիգամ Յանգի Խորհրդական: Ջորջ Ալբերտ Սմիթը հաճախ է կրկնել այն խորհուրդը, որ իր պապը սովորաբար տվել է իր ընտանիքին. «Գոյություն ունի ճշգրիտ որոշված սահմանագիծ Տիրոջ և տերիտորիայի և դևի տերիտորիայի միջև: Եթե դուք մնաք Տիրոջ սահմանագծի կողմում, դուք կլինեք Նրա ազդեցության ներքո և չեք ունենա ցանկություն սխալ գործելու, բայց եթե դուք անցնեք սահմանագծի դևի կողմը մեկ մատնաչափ, դուք փորձիչի իշխանության տակ կլինեք և եթե նրան հաջողվի, դուք չեք կարողանա մտածել կամ նույնիսկ պատշաճորեն խորհրդածել, որովհետև դուք կորցրած կլինեք Տիրոջ Հոգին»:

Ջորջ Ալբերտ Սմիթն ասել է, որ նա օգտագործում էր այս խորհուրդը ողջ իր կյանքում ղեկավարելու իր ընտրությունները. «Երբ որ ես գայթակղվում էի երբեմն ինչ-որ բան անել, ես հարցնում էի ինքս ինձ. «Սահմանագծի ո՞ր կողմում եմ ես»: Եթե ես որոշում էի լինել ապահով կողմում՝ Տիրոջ կողմում, ես անում էի ճիշտն ամեն անգամ: Այսպիսով, երբ գալիս է գայթակղությունը, մտածեք աղոթքով ձեր խնդրի մասին և Տիրոջ ազդեցությունը կօգնի ձեզ իմաստությամբ որոշելու: Մեզ համար ապահովություն կա միայն սահմանագծի Տիրոջ կողմում»:[1] (Տես առաջարկ 1 էջ 226:)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Սահմանագծի Տիրոջ կողմում մնալը պահանջում է խիստ հնազանդություն պատվիրաններին:

Ողջ ապահովությունը, ողջ արդարակեցությունը, ողջ երջանկությունը գծի Տիրոջ կողմում է: Եթե դուք պահում եք Աստծո պատվիրանները հետևելով Կիրակի օրվանը, դուք գծի Տիրոջ կողմում եք: Եթե կատարում եք ձեր զաղտնի աղոթքները և ձեր ընտանեկան աղոթքները, դուք սահմանագծի Տիրոջ կողմում եք: Եթե դուք երախտապարտ եք ուտելիքի համար և արտահայտում եք երախտագիտություն Աստծուն, դուք սահմանագծի Տիրոջ կողմում եք: Եթե դուք հետևում եք Իմաստության Խոսքին, դուք սահմանագծի Տիրոջ կողմում եք: Եվ այսպես ես կարող եմ անցնել Տասը Պատվիրաններով և մյուս պատվիրաններով, որոնք Աստված է տվել մեր առաջնորդության համար և ասել կրկին, բոլոր այդ բաները հարստացնում են մեր կյանքը և դարձնում մեզ երջանիկ և պատրաստում հավերժական ուրախության համար սահմանագծի Տիրոջ կողմում: Սխալ գտնելով այն բաներում, որոնք Աստված է տվել մեզ մեր առաջնորդության համար սահմանագծի Տիրոջ կողմում չէ:[2] (Տես առաջարկ 2 էջ 226:)

[Աստված ասել է] «Քանզի, ես՝ Տերս, չեմ կարող մեղքը նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարել», ոչ նվազագույն իսկ աստիճանով (ՎևՈւ 1.31): Ինչո՞ւ: Որովհետև նա գիտի, որ եթե մենք ճաշակենք մեղքից մենք կկորցնենք օրհնություն, որը մենք կարող էինք վայելել, եթե մենք չկքեհինք արահետը, որը տանում է դեպի այդ օրհնությունը:[3]

Ժամանակ առ ժամանակ մենք լսում ենք, թե ինչպես է մեկնումեկն ասում. «Օ՜հ, ես չէի լինի այդքան բծախնդիր: Տերը չի լինի շատ խիստ մեզ հետ, եթե մենք մասնակիորեն պահենք պատվիրանները»: Այն մարդը, որն այդպես է խոսում արդեն սահմանագծի դևի կողմում է և դուք չեք կամենա լսել նրան, որովհետև եթե դա անեք, դուք կմոլորեցվեք: Ոչ ոք այդպես չի խոսում, ով ունի Տիրոջ Հոգին: Տերն ինքն է ասել, որ մենք պետք է պահենք իր պատվիրանները. «Կա օրենք, երկնքում անդարձորեն հրամանագրված, այս աշխարհի հիմնադրումից առաջ, որի վրա հիմնված են բոլոր օրհնությունները» (ՎևՈւ 130.20):

Տիրոջ հայտնություններն աշխարհի այս օրերում և դարում, մեր հանդեպ Իր ողորմածությամբ մեր Երկնային Հոր ձայնի քաղցր երաժշտությունն են:

Հիսուս Քրիստոսի ավետարանը մեզ ուսուցանելու համար է, թե ինչպես վաստակենք այդ օրհնությունները:[4]

Մեր սիրառատ Երկնային Հայրը տալիս է մեզ պատվիրաններ օգնելու մեզ գտնել երջանկություն:

Տերն Իր բարությամբ, տեսնելով Իր զավակների վերաբերմունքը, և գիտենալով, որ նրանք առաջնորդության կարիք կունենան, մեզ տվեց Տասը Պատվիրանները և այլ պատվիրաններ, որոնք տրվել են ժամանակ առ ժամանակ, օգնելու մեզ գտնել երջանկություն: Դուք նկատում եք մարդկանց ովքեր այս ու այն կողմ են վազում, երջանկություն որոնելով, բայց չգտնելով այն: Եթե նրանք միայն կանգ առնեն բավականաչափ երկար՝ ընդունելու Տիրոջ խորհուրդը երջանկությունը կհետևի, բայց նրանք ոչ մի այլ ուղով այն չեն գտնի:[5]

Երբ ես երեխա էի, ես հասկացա կամ մտածեցի թե հասկացա, որ Տիրոջ պատվիրանները Նրա օրենքներն էին և կանոնները իմ առաջնորդության համար: Ես կարծում եմ, որ հասկացա, որ անհնազանդությունն այդ կանոններին կբերի պատիժ և որպես երեխա ենթադրում եմ զգացի, որ Տերն այդպես է դասավորել գործերը և այդպես կարգավորել հարցերն այս կյանքում, որ ես հնազանդվեի որոշակի օրենքների, այլապես կհետևեր սրընթաց հատուցում: Բայց երբ ես մեծացա, յուրացրեցի այդ դասն այլ տեսանկյունից, և այժմ ինձ համար Տիրոջ օրենքները, այսպես կոչված խրատները, որոնք գտնվում են Սուրբ Գրքերում, մեզ տրված Տիրոջ հայտնություններն աշխարհի այս օրերում և դարում, մեր հանդեպ Իր ողորմածությամբ մեր Երկնային Հոր ձայնի քաղցր երաժշտությունն են: Դրանք սիրող ծնողի խորհուրդն են ու խրատը, որն ավելի է մտահոգված մեր բարօրությամբ, քան երկրային ծնողները կարող են լինել և, հետևաբար, այն, ինչ մի ժամանակ թվում էր կրում էր օրենքի խիստ անունն ինձ համար, այժմ ամենագետ Երկնային Հոր սիրառատ և քնքուշ խորհուրդն է: Եվ այսպիսով, ես ասում եմ դժվար չէ ինձ համար հավատալ, որ ինձ համար լավագույնն աստծո պատվիրանները պահելն է:[6]

Ողջ երջանկությունը, որ եկել է ինձ և իմն է եղել՝ Աստծո պատվիրանները պահել փորձելու հետևանքով է և այն օրհնություններին արժանի ապրելու, որոնք նա խոստացել է բոլոր նրանց համար, ովքեր հարգում են նրան և պահում նրա պատվիրանները:[7]

Եթե մենք հետևենք խորհրդին և խրատին, որոնք Տերը տվել է մեզ, մեր արահետը կլինի երջանկության արահետ: Այն կլինի մի արահետ, գուցե ոչ միշտ կլինի հեշտ և հարմարավետ, բայց վերջում այն կավարտվի մեր Երկնային Հոր ներկայության մեջ և փառքը, անմահությունն ու հավերժական կյանքերը կլինեն մեր բաժինը:[8] (Տես առաջարկ 3 էջ 226:)

Հակառակորդը փորձում է մեզ մոլորեցնել իր խաբեություններով և նենգություններով:

Աշխարհում կան երկու ազդեցություններ այսօր և դրանք եղել են սկզբից ի վեր: Մեկն ազդեցություն է, որը կառուցողական է, որը երջանկություն է ճառագում և այն բնավորություն է կառուցում: Մյուսն այնպիսի ազդեցություն է, որը կործանում

է, դարձնում է մարդկանց դիվային, տապալում է և հուսահատեցնում: Մենք բոլորս ընկալունակ ենք երկուսի հանդեպ էլ: Մեկը գալիս է մեր Երկնային Հորից, իսկ մյուսը գալիս է չարի աղբյուրից, որը եղել է աշխարհում ի սկզբանե, ձգտելով առաջ բերել մարդկային ընտանիքի կործանումը:[9]

Մենք բոլորս պետք է գայթակղության ենթարկվենք, ոչ մի մարդ զերծ չէ գայթակղությունից: Հակառակորդը կօգտագործի ամեն հնարավոր միջոցներ խաբելու մեզ, նա փորձեց անել դա աշխարհի Փրկչի հետ առանց հաջողության: Նա փորձել է դա շատ ուրիշ մարդկանց վրա, ովքեր ունեցել են աստվածային իշխանություն և, երբեմն, նա գտնում է մի թույլ կետ և անձնավորությունը կորցնում է այն, ինչ կարող էր լինել մեծ օրհնություն, եթե նա հավատարիմ լիներ:[10]

Մի մարդ ինձ մի անգամ հարցրեց կամ նշեց մի վայրում, որտեղ պատահմամբ էի գտնվում «Ինչո՞ւ այստեղ գտնվող մարդիկ թվում է մտածում են ես դևով եմ լցված, բայց դա այդպես չէ»: Եվ ես ասացի նրան «Եղբայրս, երբևիցե իմացե՞լ ես որևէ մեկին, որը լցված է եղել դևով և իմացել է այդ մասին»: Դա դևի խորամանկություններից մեկն է՝ տիրել ձեզ և գաղտնի պահել ձեզ այդ իմանալուց: Եվ դա է մեր դժվարություններից մեկը:[11]

Մարգարե Նեփիին հարյուրավոր տարիներ առաջ, տեսավ թե ինչ էր տեղի ունենալու, որ մարդիկ պետք է վիճեին մեկմեկու հետ և մերժեին Սուրբ Հոգու և Իսրայելի Սուրբի զորությունը և ուսուցանելու էին վարդապետության փոխարեն մարդկանց պատվիրանները: Այսօր աշխարհում կա մի ազդեցություն՝ փորձելով ստիպել մարդկանց հավատալ, որ իրենց իսկ բանականությամբ և իրենց իսկ ուժով իրենք կարող են ձեռք բերել հավերժական կյանք: Թույլ տվեք. . . կարդալ Նեփիի գրքից.

«Եվ կլինեն նաև շատերը, որոնք կասեն. կերեք, խմեք և զվարճացեք. այնուամենայնիվ, վախեցեք Աստծուց,- նա կարդարացնի մի փոքր մեղք գործելը»:

Ես ուզում եմ, որ դուք ուշադրություն դարձնեք. «Նա կարդարացնի մի փոքր մեղք գործելը»: Այդ խորամանկ հակառակորդն իմանալով, որ եթե միայն կարողանա ստիպել որևէ տղամարդու կամ կնոջ մի փոքրիկ սխալ գործել, այդքան հեռավորությամբ նրանք կմտնեն իր տերիտորիան, և այդքանով նրանք կլինեն նրա իշխանության տակ:

Այնուամենայնիվ, վախեցեք Աստծուց, – նա կարդարացնի մի փոքր մեղք գործելը. այո, ստեք մի քիչ, օգուտ քաղեք մեկից իր խոսքերի պատճառով, փոս փորեք ձեր հարևանի համար. սրանում ոչ մի վնաս չկա. և արեք այս բոլոր բաները, քանզի վաղը մեռնելու ենք. և եթե լինի այնպես, որ մենք մեղավոր լինենք, Աստված կծեծի մեզ մի քանի մտրակահարվածով, և ի վերջո, մենք կփրկվենք Աստծո արքայությունում» (2 Նեփի 28.8)։

Միթե՞ դա հենց այն չէ, ինչ դևն է ճշգրտորեն ասում մարդկանց զավակներին այսօր, այնպես պարզ ինչպես այն գրված է այստեղ։ Օ՜հ, մի փոքր մեղք գործիր, դա ոչ մի վնաս չի տա, մի քիչ ստիր, դա առանձնապես ոչ մի վնաս չի տա, Տերը կների դա և դուք միայն կծեծվեք մի քանի մտրակահարվածով և վերջում դուք կփրկվեք Աստծո արքայությունում։ Սա այն է, ինչ նա ասում է տղամարդուն կամ կնոջը, ով սովորել է Իմաստության Խոսքը, երբ նա ասում է՝ օ՜հ, մի քիչ թեյ խմիր, դա քեզ չի վնասի. մի քիչ ծխախոտ օգտագործիր դա ոչ մի տարբերություն չի մտցնի. մի փոքր ալկոհոլը որևէ վնաս չի տա։ Սրանք փոքր բաներ են, նա միշտ անում է մի քիչ ամեն անգամ, ոչ թե բոլորը միանգամից։ Դա այն է, ինչ ես կկամենայի, որ մենք հիշենք. . . Այս աննշան նենգ շշունջներն են, որ դավաճանում են մարդկությանը և դա դնում է մեզ դևի իշխանության տակ։ . . .

Եվ Նեփին հետո ասում է.

«Իսկ մյուսներին կխաղաղեցնի և կհանդարտեցնի՝ տանելով դեպի մարմնական ապահովություն, այնպես որ նրանք կասեն. Ամեն ինչ լավ է Սիոնում. այո, Սիոնը բարգավաճում է, ամեն ինչ լավ է, և այդպես դևը խաբում է նրանց հոգիները»։

Այժմ ես կամենում եմ, որ դուք ուշադրություն դարձնեք, որ «Եվ այդպես դևը խաբում է նրանց հոգիները և զգուշորեն հեռացնում նրանց՝ իջեցնելով դժոխք» (2 Նեփի 28.21)։ Դա է այն ուղին, որով նա անում է դա, դա հենց ճշտորեն այն ուղին է, որով նա անում է դա։ Նա չի գալիս և խլում ձեզ մարմնով և տանում ձեզ իր տերիտորիան, այլ նա շշնջում է. «Արա այս փոքրիկ չարիքը», իսկ երբ դա նրան հաջողվում է, ևս մեկ փոքր չարիք և մեկ ուրիշ և օգտագործելով մեջբերված արտահայտությունը.«Նա խաբում է նրանց հոգիները»։ Սա այն է, ինչ նա անում է։ Նա ստիպում է ձեզ հավատալ, որ դուք ձեռք եք բերում ինչ-որ բան, երբ դուք կորցնում եք։ Այդպես է դա ամեն

անգամ, երբ մենք ձախողվում ենք պահել Աստծո որևէ օրենք կամ պահել որևէ պատվիրան, մենք խաբվում ենք, որովհետև ոչ այս աշխարհում և ոչ էլ գալիք աշխարհում շահ չկա, բացի մեր Երկնային Հոր օրենքին հնազանդվելուց։

. . . Այդ առանձնահատուկ առաջարկը՝ «Եվ *զգուշորեն* հեռացնում նրանց՝ իջեցնելով դժոխք» նշանակալի է, դա նրա մեթոդն է։ Տղամարդիկ և կանայք աշխարհում այսօր ենթակա են այս ազդեցությանը և նրանք տարվում են այստեղ և այնտեղ և այդ շշնջոցը շարունակվում է և նրանք չեն հասկանում, թե ինչ է Տերը կամենում, որ իրենք անեն, այլ շարունակում են չարի տերիտորիայում, ենթակա նրա իշխանությանը, ուր Տիրոջ Հոգին չի գնա։

Հետո նա ասում է. . . .

«Եվ ահա, մյուսներին նա շողոքորթում է, հեռու տանելով, և ասում նրանց, որ դժոխք չկա և ասում է նրանց. Ես դև չեմ, քանզի այդպիսին չկա. և այսպես նա շշնջում է նրանց ականջին, մինչև նա հափշտակում է նրանց իր սարսափելի շղթաներով, որտեղից չկա ազատում» (2 Նեփի 28.22)։

Այսպիսով, եղբայրներ և քույրեր, սա է աշխարհի վիճակն այսօր։Նեփին չէր կարող ավելի հստակ ասել, եթե նա հենց այսօր այստեղ լիներ աշխարհում։ Իսկ հակառակորդը գործում է և քանի որ մեր Երկնային Հայրը ցանկանում էր պահպանել իր զավակներին այդ ուսմունքի չարիքից և այդ հավատքից, նա ուղարկեց պատանի մարգարեին՝ Ջոզեֆ Սմիթին աշխարհ, լիազորեց նրան աստվածային իշխանությամբ, կազմակերպեց Իր Եկեղեցին, և սկսեց կրկին ուսուցանել ճշմարտությունը մարդկանց զավակներին, որպեսզի նրանք կարողանային հեռանալ իրենց սխալ ուղիներից։[12]

Մենք պետք է սովորենք հաղթահարել մեր կրքերը, մեր չար հակումները։ Մենք պետք է սովորենք դիմադրել գայթակղություններին։ Այդ պատճառով ենք մենք այստեղ գտնվում, և որպեսզի մենք ավելի կատարելապես անենք դա, ավետարանը վերականգվեց երկրի վրա, և մենք դարձել ենք դրանից ճաշակողներ և մենք ունենք ուժ, որը գալիս է մեզ որպես Սուրբ Հոգու զորության արդյունք։ Մենք ոչ միայն սովորական մարդու դիմադրողականությունն ունենք, այն սահմանափակումներով, որոնք ունի այդ անձնավորությունը, որը չունի ճշմարտության

«Որքան զգույշ մենք պետք է լինենք որպես Վերջին Օրերի Սրբեր ապրելու մեր կյանքի ամեն օրը, որպեսզի ներգործվենք Տիրոջ զորությամբ»:

իմացությունը՝ մենք ունենք հավասար դիմադրողականություն նրա հետ, և բացի դրանից դիմադրողականություն, որը գալիս է ճշմարտությունն իմանալուց և մեր գոյության նպատակն իմանալուց:[13] (Տես առաջարկ 4 էջ 200:)

Մենք կարող ենք դիմադրել չարին ընտրելով ենթարկվել Տիրոջ ազդեցությանը:

Ես հիշում եմ մի քանի տարի առաջ մի լավ մարդու, որն այդ ժամանակ Ամերիկայի Ունիվերսալիստ Եկեղեցու վերահսկիչ վարչության նախագահն էր: Նա եկել էր այստեղ՝ [Սոլթ Լեյք Սիթի] և մասնակցեց մեր երկու կիրակնօրյա դասերին: [Երեխաների] դասերից մեկի ընթացքում նա շատ հետաքրքրվեց: Վերջում, երբ [դասը] մոտենում էր ավարտին, կառավարիչն ասաց» «Չէի՞ք կամենա մի քանի խոսք ասել [դասարանին]. . . Նա ասաց. «Ես կկամենայի մի քանի խոսք ասել»: Նա ասաց.

«Եթե ես միայն կարողանայի ապրել այն մթնոլորտում, որը ես գտա այդ. . . փոքրիկ դասարանում այս կիրակնօրյա դպրոցում այս առավոտ, ես չէի կարող լավ մարդ չլինել»: (Տես առաջարկ 5 էջ 227:)

Այդ մասին ես մի քանի անգամ լավ մտածել եմ: Մենք զգուշորեն ենք ընտրում այն մթնոլորտը, որում մենք շնչում ենք, որպեսզի առողջ ապրենք: Բայց, երբեմն, մեր անփութությամբ մենք մեզ ենթակա ենք դարձնում անբարոյական ազդեցությունների, որը կործանում է չարի հանդեպ մեր դիմադրողականությունը և մենք առաջնորդվում ենք անելու բաներ, որոնք մենք պարտավոր ենք չանել և չէինք անի, եթե Տիրոջ ազդեցության ներքո լինեինք: Եթե մենք միայն խոնարհ լինեինք, եթե մենք միայն աղոթքով լցված լինեինք, եթե միայն ապրեինք այնպես, որ մեր կյանքի յուրաքանչյուր ժամը կարողանայինք ճշմարտապես ասել. «Հայր Երկնային ես կամենում եմ և ձգտում անել այն, ինչ դու ես կամենում, որ ես անեմ», մեր կյանքն ամեն օր կհարստանա, երբ անցնում ենք այս երկրային փորձառությամբ:[14]

Մենք ենք ընտրում, թե որտեղ կլինենք: Աստված տվել է մեզ մեր ազատ կամքը: Նա չի վերցնի այն մեզանից, և եթե ես անում եմ այն, ինչը սխալ է և գնում դևի տերիտորիան, ես անում եմ դա, որովհետև ես ունեմ կամք և զորություն դա անելու: Ես չեմ կարող որևէ մեկին մեղադրել և եթե որոշել եմ պահել Աստծո պատվիրանները և ապրել ինչպես պարտավոր եմ ապրել և մնամ սահմանագծի Տիրոջ կողմում, ես անում եմ դա, որովհետև պարտավոր եմ դա անել և ես կստանամ իմ օրհնությունը դրա համար: Դա չի լինի նրա արդյունքում, ինչն ուրիշ որևէ մեկը կարող է անել:[15]

Որքան զգույշ մենք պետք է լինենք որպես Վերջին Օրերի Սրբեր ապրելու մեր կյանքի ամեն օրը, որպեսզի ներգործվենք Տիրոջ զորությամբ, և որպեսզի մենք կարողանանք մի կողմ շրջվել այն բաներից, որոնք միտում ունեն կոտրելու սելեստիալ արքայությունը վաստակելու մեր ուժը:[16]

Տեսեք, որ ձեր ոտքերը մնան վեմի վրա: Տեսեք, որ իմանաք Տիրոջ ցանկությունները ձեր հանդեպ և իմանալով այդ ցանկությունները, տեսեք, որ պահեք Նրա օրենքներն ու հրամանները: Տեսեք, որ ձեր կյանքերի մաքրությունն արժանացնեն ձեզ Սուրբ

Հոգու ընկերակցությանը, որովհետև, եթե դուք մաքուր լինեք և առաքինի ու շիտակ, չարն ուժ չի ունենա կործանելու ձեզ։[17]

Աղոթում եմ, որ մենք քննենք ինքներս մեզ և պարզենք, թե սահմանագծի որ կողմում ենք մենք, և եթե մենք Տիրոջ կողմում ենք, մնանք այնտեղ, որովհետև դա նշանակում է հավերժական երջանկություն լավագույն տղամարդկանց և կանաց ընկերակցությամբ, ովքեր ապրել են երկրի վրա։

Եթե ինչ-որ ձևով սայթակել ենք, եթե եղել ենք անփույթ, եթե լսել ենք փորձիչին և անցել ենք սահմանագիծը ճաշակելու այն բաներից, որոնք աշխարհն է կարծում այդքան ցանկալի է և Տերն ասել է մեզ համար լավ չեն, եկեք այնքան արագ, որքան հնարավոր է ետ դառնանք մյուս կողմը խնդրենք Տիրոջից ներել մեզ մեր հիմարությունը, իսկ հետո նրա օգնությամբ շարունակել ապրել կյանքը, որը նշանակում է հավերժական երջանկություն։[18]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր v–viii։

1. Կարդացեք «Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից» բաժինը (էջ 217) և Մորոնի 7.10–19 հատվածները։ Ինչպե՞ս եք իմանում, երբ եք դուք «սահմանագծի Տիրոջ կողմում»։ Ի՞նչ կարող ենք անել միմյանց օգնելու սահմանագծի Տիրոջ կողմում մնալու համար։
2. 218 էջի առաջին պարբերությունում, Նախագահ Սմիթը նշում է մի քանի պատվիրաններ, որոնց մենք պետք է հնազանդվենք սահմանագծի Տիրոջ կողմում մնալու համար։ Ուրիշ էլ ի՞նչ չափանիշներ է Տերը տվել մեզ՝ օգնելու սահմանագծի Իր կողմում մնալու համար։
3. Երբ կարդաք բաժինը, որը գտնվում է էջ 219-ում], մտածեք թե ինչպես կարող եք օգտագործել Նախագահ Սմիթի ուսմունքները՝ օգնելու որևէ մեկին, ով զգում է, որ պատվիրանները խիստ սահմանափակող են։

4. Երբ վերանայեք էջեր 220–224, որոնեք սատանայի գործելակերպը, որը Նախագահ Սմիթն է նկարագրում, և մտածեք դեպքերի մասին, երբ դուք տեսել եք ապացույց այդ գործելակերպի: Ինչպե՞ս կարող ենք օգնել երիտասարդներին ճանաչել և հաղթահարել դրանք: Ինչպե՞ս է օգնում «մեր գոյության նպատակն իմանալը» (էջ 224) դիմադրել գայթակղությանը:
5. Մտածեք այն մասին, թե ինչպես 224 էջի պատմությունը կարելի է վերագրել ձեզ: Որո՞նք են որոշակի վայրերը կամ հանգամանքները, որոնցում դուք ոչ մի ցանկություն չեք զգում չարիք գործելու: Ի՞նչ կարող ենք անել ստեղծելու այդպիսի մթնոլորտ մեր տներում, մեր աշխատատեղերում, մեր համայնքներում, մեր անձնական կյանքում:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Մատթեոս Դ.1–11 (ներառյալ տողատակի ծանոթություններում հատվածներ Ջոզեֆ Սմիթի թարգմանությունից), Հակոբոս Դ.7, Ա Հովհաննես Ե.3–4, Ալմա 13.27–28, Հելաման 5.12, Վարդապետություն և Ուխտեր 8.8–10

Օգնություն ուսուցչին. «Դասից առաջ գրատախտակին գրառված հարցերը կօգնեն սովորողներին սկսել մտածել այդ թեմաների շուրջ նույնիսկ մինչև դասը սկսելը» (*Teaching, No Greater Call* 93):

Հղումներ

1. "A Faith Founded upon Truth," *Deseret News,* June 17, 1944, Church section, 9.
2. In Conference Report, Oct. 1945, 118.
3. *Sharing the Gospel with Others,* sel. Preston Nibley (1948), 198; address given Nov. 4, 1945, in Washington, D.C.
4. "Seek Ye First the Kingdom of God," *Improvement Era,* Oct. 1947, 690.
5. In Conference Report, Apr. 1941, 25.
6. In Conference Report, Oct. 1911, 43–44.
7. In Conference Report, Apr. 1949, 87.
8. In Conference Report, Apr. 1937, 36.
9. "A Faith Founded upon Truth," 9.
10. In Conference Report, Oct. 1945, 117.
11. In Conference Report, Apr. 1948, 179.
12. In Conference Report, Apr. 1918, 39–41.
13. In Conference Report, Oct. 1926, 102.
14. In Conference Report, Oct. 1929, 23.
15. In Conference Report, Oct. 1932, 27.
16. In Conference Report, Oct. 1926, 103.
17. In Conference Report, Oct. 1906, 48.
18. "Seek Ye First the Kingdom of God," 691.

Նախապահ Սմիթն ուսուցանել է, որ Դանիելն իր օրերում Տիրոջ առողջության օրենքին հետևելու շնորհիվ արժանի դարձավ «Ամենազորի ոգեշնչմանը»:

Մարմնական և հոգևոր օրհնություններ Իմաստության Խոսքից

Մեր Երկնային Հայրը տվել է մեզ Իմաստության Խոսքը օրհնելու մեզ ֆիզիկական առողջությամբ և նախապատրաստելու մեզ հավերժական կյանքի համար:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Երբ Ջորջ Ալբերտ Սմիթը երեխա էր, նա հիվանդացավ տիֆով: Բժիշկը, որն ախտորոշեց նրան ասաց նրա մորը, որ նա պետք է մնար անկողնում երեք շաբաթ, կոշտ կերակուր չուտեր և մի քիչ սուրճ խմեր:Նախագահ Սմիթն ավելի ուշ հիշում էր.

«Երբ նա հեռացավ, ես ասացի մայրիկին, որ ես չէի ուզում ոչ մի սուրճ: Ինձ ուսուցանվել էր, որ Տիրոջ կողմից Ջոզեֆ Սմիթին տրված Իմաստության Խոսքը խորհուրդ էր տալիս մեզ սուրճ չօգտագործել:

Մայրիկը երեք երեխա էր աշխարհ բերել և երկուսը մահացել էին: Նա անսովոր ձևով էր մտահոգվում իմ մասին»:

Երիտասարդ Ջորջ Ալբերտ Սմիթը փոխարենը քահանայության օրհնություն խնդրեց, որը նա ստացավ իր ընտանեկան ուսուցչից:

«Երբ բժիշկը եկավ հաջորդ առավոտ, ես խաղում էի դրսում մյուս երեխաների հետ: Նա զարմացավ: Նա ստուգեց ինձ և հայտնաբերեց, որ ջերմն անցել էր և ես լավ էի երևում:

Ես երախտապարտ էի Տիրոջն իմ ապաքինման համար: Ես համոզված եմ, որ նա ինձ բժշկեց»:[1]

Նախագահ Սմիթը կամենում էր, որ Սրբերը հասկանային, որ հնազանդությունն իմաստության խոսքին բերում է ոչ միայն ֆիզիկական առողջություն այլ հոգևոր օրհնություններ նույնպես։Գերագույն Համաժողովի քահանայության մի նիստի ժամանակ, նա պատմեց Հին Կտակարանի մարգարե Դանիելի մասին, որը գերության էր տարվել Բաբելոն և ակնկալվում էր, որ նա պիտի ուտեր թագավորի մսեղենից և խմեր թագավորի գինուց.

«Դանիելն աստծո մարգարեն էր, և նա մարգարե էր, որովհետև նա պահում էր Աստծո պատվիրանները։ Ես ուզում եմ. . . որ դուք այս ուղերձը տանեք ձեզ հետ։ Դանիելն իր ընկերների հետ հետևում էր Աստծո ուսմունքներին ինչ վերաբերում էր թե ինչ պիտի ուտեին ու խմեին և հրաժարվեց ընդունել այն ուտելիքը, որը մատուցվում էր թագավորի սեղանից։ (Տես Դանիել Ա.3–16։)

Նախագահ Սմիթը շարունակեց բացատրել, որ իր օրերում Տիրոջ առողջության օրենքին նրա հնազանդության շնորհիվ, ոչ միայն պահպանվեց նրա կյանքը, այլ Դանիելը նաև ստացավ մեծ հոգևոր օրհնություն. «Ամենակարողի ոգեշնչումը»։[2] (Տես առաջարկ 1 էջ 238։)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Իմաստության Խոսքը մեր Հոր կողմից սիրառատ խորհուրդ է, ով գիտի բոլոր բաները։

Ես պատրաստվում եմ կարդալ մի մաս նրանից, ինչ Տերն ասաց Եկեղեցուն 1833 թվականի փետրվարի 27-ին։

«Իմաստության խոսք՝ Կիրթլենդում հավաքված քահանայապետերի խորհրդի և եկեղեցու և նաև Սիոնի սրբերի համար։

Ուղարկված ողջույնով. ոչ պատվիրանով կամ ստիպողաբար, այլ հայտնությունով և իմաստության խոսքով, ցույց տալով կարգը և կամքն Աստծո՝ վերջին օրերին բոլոր սրբերի ֆիզիկական փրկության վերաբերյալ,-

Այժմ ուղղակի մի պահ մտածեք այդ մասին. «վերջին օրերին բոլոր սրբերի ֆիզիկական փրկության վերաբերյալ»։

«Տրված՝ որպես խոստումով սկզբունք, թույլերի և ամենաթույլերի կարողությանը հարմարեցված, բոլոր սրբերի համար,

ովքեր կոչվում են և հնարավոր է կոչվեն սրբեր» (տես ՎևՈւ 89.5–17)։

Ապա Տերը շարունակում է պատմել մեզ այն բաները, որոնք լավ են մեզ համար, բացատրում է ուտելիքի այն տեսակը, որը ցանկալի է մեզ համար օգտագործել, իսկ հետո նախազգուշացնում է մեզ որոշ բաների դեմ, որոնք ամենակորստաբերն են ու վնասակարը (տես ՎևՈՒ 89.5–17)։

Ինձ թվում է, որպես ժողովուրդ մենք սքանչելիորեն օրհնվել ենք. . . Տերը ողորմած է եղել մեր հանդեպ, զգուշացնելով մեզ, խորհուրդ տալով մեզ և նախազգուշացնելով մեզ շատ բաների վերաբերյալ։[3]

Ես նայում եմ Իմաստության Խոսքին, որպես մեր Երկնային Հոր կողմից բարի խորհրդի վրա, որը կամենում է տեսնել Իր զավակներին ավելի շատ Իրեն նման. . . Ես ընդունում եմ այն որպես հայրական խորհուրդ մեկից, ով իմանալով թե ինչի կարիք ունեի, ասել է ինձ. «Որդիս այս բաները լավ չեն քեզ համար և եթե դու դրանցից խուսափես, ես կտամ քեզ իմ Սուրբ Հոգու ընկերակցությունը և ուրախություն, մինչ դու ապրում ես աշխարհում, իսկ վերում՝ հավերժական կյանք»։ Որքան, ուրեմն հիմար կլինեի ես ճաշակել այդ արգելված բաներից, ունենալով հավաստիացում, որ դա Տիրոջ խորհուրդն է, որ պիտի հեռու մնամ դրանցից։ Ես կզգայի դատապարտության տակ, եթե ես ճաշակեի դրանցից, երբ Նա, ով ավելի լավ գիտի, քան որևէ մեկ ուրիշն ասում է, որ դրանք վնասակար են և նախազգուշացրել է ինձ դրանց դեմ։ . . .

. . .Նա բավականին կարևոր է համարել տալ դա մեզ, և նախազգուշացրել մեզ և եթե Նա, ով գիտի բոլոր բաներն անհրաժեշտ համարեց խորհուրդ և խրատ տալ այս ֆիզիկական հարցերի վերաբերյալ, որքան զգուշորեն մենք, որ չգիտենք թե ինչ է վաղը պատրաստել մեզ համար, պետք է հետևենք այդ աստվածային խորհրդին։ Ես զգում եմ, որ Վերջին Օրերի Սրբերն իմաստության Խոսքում ունեն մի օրենք, որը նրանց կվեհացնի և կբարձրացնի նրանցից վեր, ովքեր ձախողվում են պահել այն։[4]

Հիսուս Քրիստոսի ավետարանը պետք է պահպանի հոգիներ, որի խորանը մարմինն է, հավերժական երջանկության համար։

Որքան հիմար ենք մենք, եթե տեղի ենք տալիս աշխարհի սովորույթներին ու ավանդույթներին. . . Մեր Երկնային Հայրն իր բարությամբ ու սիրով [նախազգուշացրել է]. «Չարիքների ու դավադրությունների հետևանքով, որոնք կան և վերջին օրերին կլինեն դավադիր մարդկանց սրտերում, ես զգուշացրել եմ ձեզ, և նախազգուշացնում եմ, տալով ձեզ այս իմաստության խոսքը հայտնությամբ» (ՎևՈ 89.4)։ Հիսուս Քրիստոսի ավետարանի նպատակն է պատրաստել մեզ հասկանալու կյանքի գեղեցկությունը, ինչպես Տերն է ցույց տվել, որ պետք է ապրել, ասելով մեզ, թե ինչպես խուսափել այն բաներից, որոնք կործանում են աշխարհը։[5]

Հավատո՞ւմ եք, որ Տերն է տվել մեզ Իմաստության Խոսքը։ Դուք իրականում կարծում եք, որ նա գիտի՞, թե ո՞րն է բարին մեզ համար։ Ի՞նչ եք կարծում նա գոհ կլինի մեզանից, եթե մենք հետևենք այդ օրենքին։ Նա ասում է, որ կլինի։ Դուք կարծում եք նա ի նկատի ուներ դա։[6]

Եղբայրներ և քույրեր, մենք չենք կարող անպատիժ թեթևամտորեն նայել Իմաստության Խոսքին։ Այն տրվել է որպես խորհուրդ և խրատ, ոչ պատվիրանով կամ ստիպողաբար, այլ որպես իմաստության խոսք մեր Հորից, մեր մարմինների ֆիզիկական փրկության և հավերժական կյանքին մեր հոգիների նախապատրաստության համար։[7] (Տես առաջարկ 2 էջ 238։)

Տերը խոստանում է մտավոր և ֆիզիկական առողջություն նրանց, ովքեր հնազանդվում են Իմաստության Խոսքին։

Ես երախտապարտ եմ այդ սքանչելի Իմաստության Խոսքի համար, որն այնքան պարզ է և ինչպես Տերն է ասել «թույլերի և ամենաթույլերի կարողությանը հարմարեցված, ովքեր կոչվում են և հնարավոր է կոչվեն Սրբեր»։Ես կանգ եմ առնում հարցնելու . . . ՝ մենք արժանի՞ ենք կոչվելու Սրբեր։ Բոլոր նրանք, ովքեր հույս ունեն կոչվելու Սրբեր, պետք է, անշուշտ, Իմաստության Խոսքին հետևողներ լինեն։ Իսկ ի՞նչ է դա նշանակում մեզ համար։ Այն տալիս է մեզ կյանքի քաղցրություն, այն վերացնում է մեզանից թունավոր քուլաները, որոնք շատ մարդիկ շնչում են ծխախոտ ծխելու հետևանքով։ Այն մեզանից հեռացնում է այն նողկալի վիճակը, որն առաջանում է ծխախոտ ծամելուց։ Այն պաշտպանում է մեզ, եթե մենք հետևում ենք դրան,

տկարություններից, որոնք մեր օրգանիզմներ թեյի և սուրճի մեջ պարունակվող [թմրադեղերի] հետևանքով են առաջանում և ոգելից խմիչքների աղետաբեր ազդեցություններից։ . . .

Մեր Երկնային Հայրը ոչ միայն ասում է մեզ, թե ինչից խուսափենք, այլ նաև ասում է թե ինչ պետք է մենք օգտագործենք ի օգուտ մեզ։ Նա ասել է մեզ, որ ամեն հատիկ, ամեն առողջարար բույսեր, որթի պտուղը և այլն, օգտակար են մարդու համար։ Կենդանիների և օդի թռչունների միսը մենք պետք է խնայողաբար օգտագործենք և գոհաբանությամբ և ես ուզում եմ շեշտել՝ գոհաբանությամբ։[8]

Մենք տեսնում ենք, որ առողջության օրենքների համաձայն ապրելն առաջացնում է մտավոր և ֆիզիկական ուժ և մենք հայտնաբերում ենք, որ դրանց անհնազանդությունը՝ բերում է մտավոր և ֆիզիկական քայքայման։ Մեր Արարիչն է, մեր հոգիների Հայրը, որ տվել է մեզ հնարավորություն ապրել այս երկրի վրա, ով ասել է, որ որոշ բաներ, որոնք նշվում են այդ հայտնության մեջ, օգտակար չեն մեզ համար։ Նա մեզ կարևոր խոստումներ է տվել, եթե մենք հնազանդվենք այս օրենքին՝ իմաստության, առողջության և ուժի խոստումներ, և որ կործանիչ հրեշտակը կանցնի մեր մոտով և չի վնասի մեզ, ինչպես նա արեց Իսրայելի զավակների հետ (տես ՎԵՈՒ 89.18–21)։[9] [Տեսառաջարկ 3 էջեր 238։)

Իմաստության խոսքին հնազանդվելը զորացնում է մեր հավատքը և հոգևորությունը։

Ես լիովին համոզված եմ, որ Տերն Իր ողորմածությամբ, երբ տվեց մեզ Իմաստության Խոսքը, տվեց մեզ ոչ միայն, որ մենք կարողանայինք առողջ լինել մինչ ապրում ենք աշխարհում, այլ որպեսզի մեր հավատքը զորացվի, որ մեր Տիրոջ և Տիրակալի առաքելության աստվածայնության մասին վկայությունն աճի, որպեսզի դրա միջոցով մենք ավելի լավ նախապատրաստվենք վերադառնալու նրա ներկայություն, երբ մեր աշխատանքն այստեղ ավարտվի։ Ես երկյուղ ունեմ, որպես Սիոնի որդիներ և դուստրեր մենք, երբեմն, ձախողվում ենք հասկանալ աշխարհի համար այս վիթխարի ուղերձի կարևորությունը։[10]

Ես ուզում եմ ասել ձեզ, իմ կարծիքով, ծխախոտի օգտագործումը, այնպիսի մի փոքրիկ բան ինչպիսին այն թվում է որոշ մարդկանց, իրենց հոգևոր կյանքի կործանման պատճառ է դառնում, պատճառ է դառնում մեր Հոր Հոգու ընկերակցությունն իրենցից հեռու վանելուն, օտարացնում իրենց լավ տղամարդկանց և կանանց հասարակությունից և իրենց վրա է բերում իրենց իսկ ծնած երեխաների արհամարհանքն ու նախատինքը, և դեռ դևն ասում է մարդուն, Օ՜հ, սա այնքան աննշան բան է։[11]

Մենք ապրում ենք մի օրում, երբ Տերը կրկին խոսել է Իր ժողովրդի հետ։ Մենք, ովքեր Եկեղեցու անդամներ ենք, ովքեր ենթարկվել ենք մեր Երկնային Հոր պահանջներին, կատարելապես հասկանում ենք, որ Աստված ապրում է, և որ Նա է պարգևատրողը նրանց, ովքեր ջանասիրաբար ծառայում են Իրեն։ Մենք հասկանում ենք, որ Նա տվել է որոշակի կանոններ և հրահանգներ մեզ այս կյանքում կառավարելու համար, և Նրա պահանջներին հնազանդվելն ապահովում է մեզ Նրա գոհությունը և խոստացված օրհնությունները կհետևեն մեր հնազանդությանը, բայց եթե մենք ձախողվենք հնազանդվել Նրա ուսմունքներին, եթե մենք անտեսենք Նրա իմաստուն խորհուրդները, ապա մենք խոստում չունենք Նրանից և մենք վատնում ենք հնարավորությունները, որոնք էլ չեն գա մեզ կրկին։ Ես զգում եմ Վերջին Օրերի Սրբերի համար այս որոշակի կանոնին [Իմաստության Խոսքին] հետևելու կարևորությունը։ Մենք կարդում ենք Մորմոնի ուսմունքներում, որ եթե հրաշքներ չէին գործվում մարդկանց մեջ, այդ այն պատճառով էր, որ նրանց մեջ հավատք չկար, և նա հետո ասում է, որ առանց հավատքի «սոսկալի է մարդու վիճակը» (տես Մորոնի 7.37–38։) Եթե մենք խախտում ենք Տիրոջ հայտնի դարձված կամքը, բնական է, որ մեր հավատքը կթոշնի, քանզի Հոգին միշտ չի ճիգ թափի մեզ հետ։ . . .

. . . Ես հաստատապես հավատում եմ, որ այս պարզ պահանջի անտեսման պատճառով հավատքը նվազել է մեր մարդկանցից ոմանց սրտերում, որ Իմաստության Խոսքի ավելի ընդհանուր պահպանման միջոցով հավատքը կաճի Վերջին Օրերի Սրբերի մեջ և ավելի մեծ գիտելիք կհորդի դեպի մեզ դրա հետևանքով, քանի որ դրան հնազանդվելու միջոցով, կգան մեր Հոր օրենքներին հնազանդվելու տրամադրվածություն և

յուրաքանչյուրին ենթարկվելը կապահովի օրհնություն։[12] (Տես առաջարկներ 3 և 4 էջ 238։)

Հնազանդվելով Իմաստության Խոսքին մենք պատրաստվում ենք հավերժական կյանքի համար։

Ես, երբեմն, մտածում եմ, թե Վերջին Օրերի Սրբերը հասկանո՞ւմ են, որ [Իմաստության Խոսքը] տրվել է մեզ մեր վեհացման համար, ոչ միայն մեր ֆիզիկական օրհնության համար, այլ մեզ հոգևոր կյանքի համար նախապատրաստելու նպատակով։ . . .

Մեզ ասվել է, որ Աստծո փառքը բանականությունն է (տես ՎևՈւ 93.36), և մենք բոլորս հիանում ենք տղամարդկանց և կանանց բանականությամբ, ուստի պետք է, որ մեր ցանկությունը լինի հիմք դնել մտավոր ուժի աճին և չանենք որևէ բան թուլացնելու այն։ Ակնհայտ է ոմանց կյանքում, որ իրենք զրկում են իրենց ուղեղի զորությունից, որը կարող էին վայելել՝ շարունակելով օգտագործել այն բաները, որոնք մեր Երկնային Հայրն ասել է լավ չեն, նրանք դառնում են ավելի քիչ բանական դրա արդյունքում և ձախողվում հավերժական կյանքի համար նախապատրաստվելուց, որը պետք է լինի նրանց ձգտումը։[13]

Եթե մենք հավատում ենք, ինչպես որ պնդում ենք, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ մենք մեր Երկնային Հոր զավակներն ենք, ապա որքան մենք զգույշ պետք է լինենք վարվելու այնպես, որ արժանի լինենք այն տաճարներին, որոնք մենք զբաղեցնում ենք, որոնք ստեղծվել են Աստծո պատկերով։ Մեզանից քանիսն են հասկանում, որ մեր օրգանիզմ ընդունելով այն բաները, որոնք մեր Հայրն արգելել է, մենք պղծում ենք հոգու տաճարը։ Մեզանից քանի՞սն են կանգ առնում մտածելու, որ երբ մենք տեղի ենք տալիս մարմնի թուլությանը, մենք զրկում ենք մեզ հնարավորություններից, որոնք սպասում են մեզ ապագայում և կտրում մեզ այն օրհնություններից, որ Տերն է պատրաստել հավատարիմների համար։[14]

Եթե այս օրենքին հնազանդվեն, որը հարմարեցվել է մեզանից ամենաթույլերի կարողությանը, այն կլինի մի հիմք, որի վրա կարող է ավելացվել շատ մեծ օրհնություններ, որը մեր Հայրը գոհ կլինի շնորհել, որին այլապես մենք արժանի չեինք լինի և չեինք կարող ստանալ։ Ինչպե՞ս մեզանից որևէ մեկը կարող է

«Մեր Երկնային Հայրը ոչ միայն ասում է մեզ, թե ինչից պիտի խուսափենք, այլ ասում է մեզ թե մենք ինչ կարող ենք օգտագործել ի օգուտ մեզ»:

զգալ արդարացված Աստծո որևէ պարզ օրենքի խախտման համար, որին, Նա Իր իսկ ձայնով է ասել, որ մեզանից ամեն մեկը կարող է հնազանդվել: Կարո՞ղ ենք արդյոք ակնկալել ի վիճակի լինել պահելու ավելի բարձր օրենք, և ի վիճակի լինել հասնելու ավելի մեծ վեհացման, եթե մենք ձախողվում ենք պահել այս հասարակ պահանջը:[15] (Տես առաջարկ 3 էջ 238:)

Մեր ընտանիքներին Իմաստության Խոսքին հնազանդվել սովորեցնելու լավագույն ձևն ինքներս դրան հնազանդվելն է:

Հայրերը և մայրերը, եթե պահեն Իմաստության Խոսքը, կարող են փոխանցել իրենց ժառանգներին արժանիքներ և ուժ, որոնք նրանք այլ ձևով չէին կարողանա տալ նրանց:Ես հավատում եմ, որ մեր Հոր Հոգու ընկերակցությունը կլինի նրանց սրտերում և տներում, ովքեր պահում են այս օրենքը և իրենց ցանկությունը հնազանդ լինելու կփոխանցվի իրենց

երեխաներին. . . Լավ հայտնի փաստ է, որ ծխախոտի ազդեցությունը երեխաների ուղեղի վրա խիստ վնասակար է, քայքայելով հիշողությունը և բթացնելով նուրբ զգացումները, նմանապես խիստ վտանգավոր է ոգելից խմիչքների ազդեցությունը մատղաշ ուղեղի վրա, այն ոչնչացնում է պատվավոր և շիտակ լինելու ցանկությունը և տանում դեպի մեղք և հանցագործություն. . . Տերը տվել է մեզ այս օրենքը բարությամբ և սիրով, խոստանալով որոշակի օրհնություններ, եթե մենք կամենանք հնազանդվել Նրա խորհրդին: Ես հորդորում եմ ձեզ իմ եղբայրներ և քույրեր, ուսուցանել այս ձեր տներում: Հրավիրեք ձեր մեծացող երեխաների ուշադրությունը սրա վրա և այն պարգևի վրա, որն առաջանում է այն պահելուց:

Թույլ տվեք ասել ձեզ, որ մեր հավատքի լավագույն ապացույցն այդ օրենքի հանդեպ, որ մենք հավատում ենք, որ այն եկել է Աստծուց, դրան հետևողականորեն հետևելն է մեր կյանքում: Մենք կարող ենք քարոզել այն ողջ օրը, բայց եթե մենք պրակտիկայում օրինազանցում ենք, մեր օրինակը կարող է աղետալի լինել նրանց համար, ում մենք մեր կյանքից առավել ենք սիրում, քանի որ նրանք կզգան, որ կարող են հետևել ապահով, ուր մենք ենք նրանց առաջնորդում:[16]

Թույլ տվեք աղերսել ձեզ, հետազոտեք Իմաստության Խոսքն աղոթքով: Ուղղակի մի կարդացեք այն, աղոթքով ուսումնասիրեք: Բացահայտեք, թե ինչու համար է մեր Երկնային Հայրը տվել մեզ այն: Նա տվել է մեզ այն ավելի երկար կյանքի և երջանկության խոստմամբ, ոչ թե եթե ձախողվենք պահել այն, այլ եթե մենք պահենք այն: Կարդացեք Իմաստության Խոսքը ձեր ընտանիքների ներկայությամբ օրինակ հանդիսացեք: Եթե մենք դա անենք Սիոնը կշարունակի աճել: Եթե մենք դա անենք, Աստծո Գառի Եկեղեցին կշարունակի դառնալ զորություն բարու համար աշխարհում:[17] (Տես առաջարկ 5 էջ 238:)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր v–viii:

1. Էջ 230-ում, Նախագահ Սմիթը մեջբերում է Դանիելի պատմությունն այն մասին, թե ինչպես է հրաժարվում ճաշակել թագավորի համար պատրաստված մսից և գինուց: Կարդացեք գլուխ 1-ը, և մտածեք մի փորձառության մասին, որ գուցե ունեցել եք, երբ ձեզանից ակնկալվել է, որ ճաշակեք ինչ-որ բան, որն արգելված է Իմաստության Խոսքով: Որոնք են այն պատշաճ ուղիները, ըստ որոնց մենք կարող ենք այդպիսի հանգամանքներում հնազանդվել Իմաստության Խոսքին, միաժամանակ հարգալից լինելով ուրիշների հանդեպ:
2. Վերանայեք ուսմունքների առաջին բաժինը (էջեր 230–232) Ինչպե՞ս կարող եք օգտագործել այս ուսմունքները օգնելու ինչ-որ մեկին, որն ունի դժվարություն Իմաստության Խոսքին հնազանդվելիս:
3. Համառոտ վերանայեք էջեր 233–236, որում Նախագահ Սմիթը քննարկում է որոշ խոստացված օրհնություններից մի քանիսը նրանց, ովքեր հնազանդվում են Իմաստության Խոսքին (տես նաև ՎևՈ 89.18–21): Ինչպե՞ս են այս խոստումները կատարվել ձեր կյանքում: Ի՞նչ այլ օրհնություններ եք ստացել, երբ ապրել եք այս օրենքով:
4. Էջ 235, Նախագահ Սմիթը խոստանում է, որ Իմաստության Խոսքին հնազանդվելը բերում է «հնազանդվելու տրամադրվածություն»: Ի՞նչ է նշանակում այս արտահայտությունը ձեզ համար:
5. Ձեր կարծիքով, ինչպե՞ս է մեր հնազանդությունն իմաստության Խոսքին օգնում Եկեղեցուն «դառնալ ուժ բարու համար աշխարհում» (էջ 237): Աղոթքով ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտերի բաժին 89-ը, ինչպես Նախագահ Սմիթն է առաջարկում և խորհեք թե ինչ կարող եք անել ավելի լիովին հնազանդվելու Իմաստության Խոսքին:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Ա Կորնթացիս Զ.19–20, Ալմա 34.36, Վարդապետություն և Ուխտեր 29.34, 130.20–21

Օգնություն ուսուցչին. «Դուք կարողեք սեր արտահայտել նրանց հանդեպ, ում ուսուցանում եք, նրանց ուշադիր լսելով և

անկեղծորեն հետաքրքրվելով նրանց կյանքով: Քրիստոսանման սերն ուժ ունի փափկացնելու սրտերը և օգնելու մարդկանց ընկալունակ լինել Հոգու հուշումներին» (*Teaching, No Greater Call,* 46):

Հղումներ

1. "Boyhood Experiences," *Instructor,* Feb. 1943, 73.
2. In Conference Report, Oct. 1943, 44.
3. "Saints Blessed," *Deseret News,* Nov. 12, 1932, Church section, 5.
4. In Conference Report, Apr. 1907, 19–21.
5. "Seek Ye First the Kingdom of God," *Improvement Era,* Oct. 1947, 688.
6. In Conference Report, Oct. 1935, 121.
7. In Conference Report, Apr. 1907, 21.
8. In Conference Report, Oct. 1923, 72–73.
9. In Conference Report, Apr. 1907, 19.
10. In Conference Report, Apr. 1907, 19.
11. In Conference Report, Apr. 1918, 40.
12. In Conference Report, Oct. 1908, 83–84.
13. In Conference Report, Apr. 1907, 19.
14. In Conference Report, Apr. 1905, 62.
15. In Conference Report, Oct. 1908, 84.
16. In Conference Report, Apr. 1907, 21.
17. In Conference Report, Apr. 1949, 191.

Եկեղեցու մյուս ղեկավարների հետ Ջորջ Ալբերտ Սմիթի այցելությունը Եպիսկոպոսների շտեմարան։ Քանի որ Եկեղեցին ուսելիք էր սպահեստավորում, այն պատրաստ էր օգնել նրանց, ովքեր կարիքի մեջ էին II Հաճաշխարհային Պատերազմից հետո։

Ֆիզիկական փրկություն մեզ համար և ուրիշների համար

Եթե մենք հետևենք Տիրոջ խորհրդին, մենք ավելի լավ կկարողանանք բավարարել մեր ֆիզիկական կարիքները և օգնել նրանց, ովքեր կարիքի մեջ են մեր շրջապատում:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Ջորջ Ալբերտ Սմիթը Եկեղեցու Նախագահ դարձավ, երբ II Համաշխարհային Պատերազմը մոտենում էր իր ավարտին: Պատերազմը շատ ազգերի թողել էր ամայացած և հազարավոր մարդիկ մնացել էին առանց ուտելիքի և այլ կենսական միջոցների: Գերագույն մի համաժողովում Նախագահ Սմիթը նկարագրեց նրանց թշվառությունը և հորդորեց Սրբերին օգնել թեթևացնելու նրանց տառապանքները: «Նրանք բոլորը [Աստծո] զավակներն են: Նրանք մեր կարիքն ունեն, նրանք ոչ միայն մեր բարոյական աջակցության և մեր կրոնական ուսուցման կարիքն ունեն, այլ նրանք կարիք ունեն ուտելիքի և հագուստի և ամեն տեսակի օգնության, որովհետև շատ դեպքերում, նրանց ոչինչ չի թողնվել: Եթե դուք տեսնեք նամակներից մի քանիսը, որոնք գալիս են մեր գրասենյակ այնտեղի որոշ աղքատ մարդկանցից, դրանք կճմլեն ձեր սիրտը: Մարդիկ ովքեր դուրս են տարվել իրենց տներից այն մտքով, որ պատրաստվում էին թույլատրել այլ վայրում բնակվելու և հանկարծակի լքվել, իսկ երբ վերադարձել էին իրենց տները և գտել դրանք թալանված և կողոպտված այն ամենից, ինչ ունեցել էին և անօգնական թողնվել՝ գնալու տեղ չունենալով]»:[1]

Քանի որ Եկեղեցին շատ տարիների ընթացքում ուտելիքի պաշարներ ստեղծելու գործընթաց էր կիրառել, այն պատրաստ էր օգնելու այս հանգամանքներում: Այսպիսի օգնություն

ապահովելու ջանքերը սկսվեցին 1945 թվականի ավարտի մոտ, երբ Նախագահ Սմիթը գնաց Վաշինգտոն՝ Միացյալ Նահանգների նախագահ Հարրի Ս. Տրումենի հետ պատրաստություններ տեսնելու՝ ուտելիք և հագուստ ուղարկելու Եվրոպա: Իրենց հանդիպման ժամանակ Նախագահ Տրումենն ասաց. «Մենք ուրախ կլինենք օգնել ձեզ ինչով կարող ենք. . . Որքա՞ն ժամանակ կպահանջվի ձեզանից այս բոլորը պատրաստելու համար»:

Նախագահ Սմիթը զարմացրեց նրան պատասխանելով. «Այդ ամենը պատրաստ է. . . Մենք էլեվատորներ ենք կառուցել և լցրել ենք դրանք ցորենով և թռչուններ և նախիրներ ենք աճեցրել և այժմ մեքենաներն ու նավերն այն են, ինչի կարիքն ունենք, որպեսզի ուղարկենք բավականաչափ ուտելիք, հագուստեղեն և անկողնային պարագաներ Եվրոպայի ժողովրդին, ովքեր թշվառության մեջ են: Մենք Եկեղեցում ունենք մի կազմակերպություն [Սփոփող Միությունը], ովքեր երկու հազարից ավելի տանը պատրաստի կարված վերմակներ ունեն»

Նախագահ Սմիթը հաղորդեց Սրբերին, որ այդ առաքումների շնորհիվ «շատ մարդիկ ստացան տաք հագուստներ և անկողնային պարագաներ և ուտելիք առանց որևէ հապաղման: Այնքան արագ, որքան կարող էինք, հենց որ ստացանք մեքենաներն ու նավերը, այն ամենը, ինչ անհրաժեշտ էր, Եվրոպա ուղարկեցինք»:[2]

Գրեթե 15 տարի առաջ Երեց Սմիթը՝ այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, դիմեց Սփոփող Միությանը մեկ այլ դեպքի առթիվ սարսափելի կարիքի՝ Մեծ Դեպրեսիայի ժամանակ: Նա ուսուցանեց, որ կարիքավորներին օգնելը նյութական օժանդակություն ցույց տալուց ավելին է, այն նաև պահանջում է ճշմարիտ բարություն և գթություն:

«Երբեք չի եղել ժամանակ, իմ կարծիքով, երբ բարություն ավելի շատ պահանջվեր, քան այժմ: Սրանք օրեր են, երբ մարդկանց հոգիներն են փորձվում և նրանց սրտերն են ճմլվում: Սրանք օրեր են, երբ շատերն են դիմակայում սովի և թշվառության, նույնիսկ, Վերջին Օրերի Սրբերի մեջ»: . . .

«. . . Հավատում եմ, որ մեր Երկնային Հայրը տալիս է մեզ հնարավորություն զարգացման համար. . . Մենք այժմ

կբացահայտենք, թե արդյոք Փրկչի ասած սերը, որը պետք է լինի մեր սրտերում կա մեր մեջ թե ոչ»:[3] (Տես առաջարկ 1 էջ 252:)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Եթե մենք իմաստուն լինենք մեր միջոցների հարցում, մենք պատրաստված կլինենք դժվար ժամանակների համար:

Դա վաղ օրերի ռահվիրաների խորհուրդն էր Նախագահ Բրիգամ Յանգի ժամանակ՝ պահել մեկ տարվա մթերքներ ձեռքի տակ, որպեսզի եթե որևէ մեկն իր բերքը կորցներ, նա կարողանար ծայրը ծայրին հասցնել մինչև հաջորդ բերքահավաքը: . . .

Մենք գուցե ունենանք դժվարին ժամանակներ եղբայրներ և քույրեր, բայց մենք կարող ենք նախապատրաստվել դրանց համար, եթե մտածենք առատության յոթ տարիների և սովի յոթ տարիների մասին Փարավոնի օրերում և ծրագրենք ինչպես նրանք արեցին (տես Ծննդոց ԽԱ): Այդպիսի պայմաններ կարող են կրկին ի հայտ գալ: Մենք չգիտենք, բայց մենք իսկապես գիտենք, որ վաղ օրերին Եկեղեցու Նախագահությունը և Եկեղեցու ղեկավարությունը խորհուրդ տվեց մարդկանց պահեստավորել բավականաչափ ուտելիք արտակարգ իրավիճակների դեպքում ունենալու համար: Արդյունքում եղավ այնպես, քանի որ մարդիկ ամուր հիմնավորվեցին այստեղ և ագարակները սկսեցին արդյունաբերել, նախիրներն ու թռչունների երամները շատանալ, որևէ մեկի համար իրականում անհրաժեշտություն չեղավ ուտելիքի համար կարիքի մեջ լինել:[4]

Մենք ապրում ենք վտանգավոր ժամանակներում: Սուրբ գրություններն իրականանում են և ինչպես ինձ է թվում սա հենց այն որոշակի ժամանակն է, եթե հնարավոր լիներ ամենաընտրյալներն էլ կխաբվեին: Ուշագրավ է, թե որքան հեշտ է նրանց համար, ովքեր կամենում են առաջադիմել իրենց ֆինանսական շահերում աշխարհում պատճառ գտնելու մի կողմ դնելու Տիրոջ պարզ ուսմունքները, որոնք վերաբերում են մեր կյանքին: Եվ ինձ համար տարօրինակ է, թե որքան շատ մարդիկ են ընկնում նրանց լսելու սովորության մեջ, ովքեր ասում են բաներ, որոնք հակադիր են մեր Երկնային Հոր հայտնի դարձված կամքին: . . .

. . . Այս մարդկանց խորհուրդ էր տրվել պահպանել իրենց էներգիան և իրենց միջոցները: Մեզ ուսուցանվել է նրանց կողմից, որոնց Տերը բարձրացրել է մեզ հրահանգելու համար, որ մենք պետք է ապրենք մեր եկամտի սահմաններում, որ մենք չպետք է հետևենք աշխարհի նորաձևություններին և ծախսենք այնպես շռայլորեն և նույնիսկ ավելի շռայլորեն, քան մենք կարող ենք վաստակել փողը, որը գալիս է մեր ձեռքը, հոգ տանելու մեզ և մեր ընտանիքներին:

Ես երկյուղում եմ, որ Վերջին օրերի Սրբերը շատ դեպքերում, կուրանում են իրենց իսկ սնապարծությունից, իրենց ցանկությունից՝ լինելու այն, ինչ աշխարհն է, և մեզ ասվել է այնպիսի պարզ լեզվով մեր Երկնային Հոր կողմից, որ մենք չենք կարող ապրել ինչպես աշխարհն է ապրում և վայելել նրա Հոգին:[5]

Որոշ անձինք. . . վերացնում են իրենց արժեթղթերը և ծախսում իրենց փողը ոչ անհրաժեշտ բաների վրա և երբ գալիս են դժվարին ժամանակներ, նրանք իրենց հավանական է գտնեն անկարող կատարելու իրենց պարտավորությունները:

Մենք կարող ենք դաս վերցնել մրջյունից: Նա հավաքում է իր պաշարները, երբ դրանք հասանելի են և պահեստավորում դրանք այն օրվա համար, երբ հնարավոր չի լինի դրանք ձեռք բերել: Արդյունքում նրա մառանը սովորաբար լավ մատակարարված է: Մորեխը, որը շատ ավելի մեծ միջատ է, չի գործում այդ ձևով: Նա որևէ պահուստ չի պահեստավորում դժվար ժամանակների համար, այլ կախված է ճակատագրից ապահովելու իրեն ինչի կարիք ունի և արդյունքն այն է, որ մորեխների մեծ մասը սովից սատկում են:

Ես վախենում եմ, որ որոշ մարդկային էակներ նման են մորեխին և չեն օգտվում հնարավորություններից, որոնք նրանցն են խելամիտ ձևով: Եթե նրանք դաս վերցնեն մրջյունից, նրանք կպահեստավորեն ուտելիքը, որի կարիքը նրանք ունեն և միշտ կունենան ձեռքի տակ:[6] (Տես առաջարկ 2 էջ 252:)

Տերը մեզ կարգադրել է աշխատել՝ մեր սեփական ապրուստը վաստակելու համար

Հենց այն փաստը, որ այդքան շատ փող է հասանելի շատ մարդկանց, տալիս է երիտասարդներին որոշ դեպքերում այն

«Մենք հարմանական է դժվարին ժամանակներ ունենանք եղբայրներ և քույրեր, բայց մենք կարող ենք դրանց նախապատրաստվել»:

զգացումը, թե քանի որ փողը համեմատաբար հեշտ է գալիս, ազնիվ աշխատանքն անհրաժեշտ չէ կամ ցանկալի: Եվ, այնուամենայնիվ, ես բավարարված եմ, որ ոչ մի ժողովուրդ, որը երբևէ ապրել է երկրի վրա, ով ձախողվել է վաստակել իր ապրուստն ազնվորեն և աշխատանքով, չի դարձել փչացած:

Եթե մեր երեխաները մեծանում են անգործ, դա տհաճ է Տիրոջ համար:[7]

Որքան շատ ավելի լավ ենք զգում մեզ, երբ զբաղված ենք լինում ինչ-որ խելամիտ գործով:[8]

Մեր Երկնային Հայրը. . . շատ-շատ վաղուց ասել է, որ Սիոնում ծույլեր կան. . . և ասել է, «Նա, ով ծույլ է չպետք է ուտի աշխատողի հացը, ոչ էլ հագնի նրա հանդերձները» (ՎԵՐՈՒ 42.42): Ես կարծում եմ, որ նա ի նկատի չուներ նրանց, ովքեր չեն կարողանում գտնել աշխատանք և ովքեր օրինականորեն փորձում են հոգ տանել իրենց մասին: Ես կարծում եմ նա ի նկատի ուներ

որոշ մարդկանց մոտ իրենց մերձավորի վրա հույս դնելու սովորույթը. . . Կարծում եմ, որ արդարացում չկա որևէ մարդու այս աշխարհում զգալ, որ ինքը կարող է կախված լինել որևէ մեկ ուրիշից իր ապրուստն ապահովելու համար: Երբ ես երեխա էի, ես չէի զգում, որ ինչ-որ մեկը ստիպված պետք է լինի ինձ համար ապրուստի միջոց ապահովել: Աստված տվել է ինձ բանականություն: Նա կարգադրել է, որ ես աշխատեմ և ես սկսեցի աշխատել, երբ ես տասներկու տարեկան էի և ես ուրախություն գտա դրանում և վաստակել եմ իմ ապրուստը և օգնել եմ ուրիշներին ավելի քան հիսուն տարվա ընթացքում:

Ես շնորհակալ եմ Աստծուց աշխատանքի համար, այն ուրախության համար, որը գալիս է աշխարհում ինչ-որ բաներ անելուց:Ես ի նկատի չունեմ որևէ առանձնահատուկ տեսակի աշխատանք, բացի դա պատվավոր լինելուց: Բայց Տերը նշել է, որ մենք պետք է աշխատասեր լինենք: Հնադարյան ժամանակներում նա ասել է, որ մենք պետք է վաստակենք մեր ապրուստը մեր երեսի քրտինքով (տես Ծննդոց Գ.19):[9] (Տես առաջարկ 3 էջ 252:)

Ո՛չ հարուստը, ո՛չ էլ աղքատը չպետք է դնեն իրենց սրտերը հարստությունների վրա:

«Վայ ձեզ, հարուստներ, որ չեք կամենում ձեր ստացվածքը տալ աղքատներին, քանզի ձեր հարստությունները կապականեն ձեր հոգիները. և դա կլինի ձեր ողբն այցելության, դատաստանի և զայրույթի օրը. Հունձքն անցավ, ամառն ավարտվեց, և իմ հոգին փրկված չէ»: (ՎևՈ 56.16):

Այդպես է ասում Տերը հարուստ մարդկանց, ովքեր հրաժարվում են բաժին հանել իրենց ունեցվածքից նրանց, ովքեր աղքատ են: Բայց նա ասում է մի բան, որը նույնքան լուրջ է աղքատ մարդկանց, ով չի անում իրենից կախված լավագույնը: Նա ասում է.

«Վայ ձեզ, աղքատներ, որոնց սրտերը կոտրված չեն, որոնց հոգիները փշրված չեն, և որոնց փորը չի կշտանում, և որոնք ձեռքերը ետ չեն պահում ուրիշի ունեցվածքի վրա դնելուց, որոնց աչքերը լի են ագահությամբ, և որ չեք կամենում աշխատել սեփական ձեռքերով»: (ՎևՈ 56.17) . . .

. . . Ապա նա շարունակեց. «Բայց օրհնված են աղքատները, որոնք սրտով մաքուր են»: Մեծ տարբերություն կա այստեղ . «օրհնված են աղքատները, որոնք սրտով մաքուր են, որոնց սիրտը կոտրված է, և որոնց հոգին փշրված է, քանզի նրանք կտեսնեն Աստծո արքայության գալը, զորությամբ ու մեծ փառքով՝ ի ազատումն իրենց. քանզի երկրի պարարտությունը նրանցը կլինի»: ՎԵՈՒ 56.18

Սրանք այն մարդիկ են, ովքեր չունեն աշխարհի հարստությունը, բայց դեռ կյանք ունեն և զոյություն և բանականություն, և ովքեր ձգտում են անել այն բաները, որոնք Տերը կկամենար, որ իրենք անեն: . . .

Այժմ, իմ եղբայրներ և քույրեր, մենք ունենք ինչպես հարուստներ, այնպես էլ աղքատներ մեր կազմակերպություններում: Եթե մենք աղքատ ենք, մենք կարող ենք լինել արժանի ճիշտ ինչպես Տերն է նշել այստեղ: Մենք կարող ենք լինել սրտով մաքուր և անել մեր լավագույնը, և նա չի թույլ տա նրանց, ովքեր անում են իրենցից կախված լավագույնը տառապել կյանքի կենսական միջոցների համար այն ժողովրդի մեջ, ովքեր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում են: . . .

Հուսով եմ մենք չենք պատրաստվում դառնանալ, որովհետև որոշ տղամարդիկ և կանայք ունևոր են: Եթե մենք ունևոր ենք, ես հուսով եմ եսակենտրոն չենք լինի և անխիղճ մեր Հոր մյուս զավակների կարիքների հանդեպ: Եթե մենք ավելի լավ վիճակում ենք, քան նրանք, մենք պարտավոր ենք լինել իսկական եղբայրներ և քույրեր, ոչ թե ստիպված հավատացյալներ: Մեր ցանկությունը պիտի լինի զարգացնել այս աշխարհում այնպիսի կազմակերպություն, որ ուրիշները տեսնելով մեր բարի գործերը հարկադրված լինեն փառաբանել մեր Երկնային Հոր անունը . . .

Մենք չպետք է այլ մարդկանց վատ սովորույթների մեջ ընկնենք: Մենք չպետք է ձեռք բերենք այդ մտածելակերպը, որ մենք կամենանք վերցնել այն, ինչ ուրիշ մարդիկ ունեն: Ետ դարձեք տասը պատվիրաններին, և դուք կգտնեք մեկ կարճ պարբերություն, «Մի ցանկանար» (Ելից Ի.17): . . .

Մենք չպետք է ձեռք բերենք այդ մտածելակերպը: Ուրիշները գուցե անեն դա, բայց եթե մենք ունենք Հիսուս Քրիստոսի

ավետարանի ոգին մեր սրտերում, մենք չենք խաբվի այդ հարցում:

Մեզ ասվել է, որ մենք չենք կարող ծառայել Աստծուն և մեկ ուրիշ տիրոջ (տես Մատթեոս Զ.24): Մենք պետք է կատարենք մեր ընտրությունը և եթե մենք կամենում ենք լինել Աստծո ծառաները և մեր Երկնային Հոր զավակները և վաստակել նրա օրհնությունները, մենք պետք է անենք դա հարգելով նրան և պահելով նրա պատվիրանները: Մեր զգացումներն ու մեր սերը, եթե կարող եմ օգտագործել այդ արտահայտությունը, պետք է դուրս գնա ողջ աշխարհին այնքանով որքանով նրանք կկամենան ստանալ այն:[10] (Տես առաջարկ 4 էջ 252:)

Տասանորդով և այլ նվիրատվություններով, մենք մասնակցում ենք Եկեղեցու աշխատանքին և օրհնում կարիքավորներին:

Տերը մեզ արտոնություն է տվել աշխարհում Իր աշխատանքի առաջընթացի համար զոհաբերել մեր եկամտի մեկ տասներորդ մասը Իր Եկեղեցու համար: Նրանք ովքեր վճարում են իրենց տասանորդը ստանում են իրենց օրհնությունները. . . Մենք չենք կարող ակնկալել օրհնություններ վաստակել առանց լուրջ ջանքերի: Մեզանից կպահանջվի, ինչպես թվում է ոմանց, կատարել զոհաբերություններ: Կարծում եմ մարդիկ մտածում են, երբ իրենց տասանորդն են վճարում, զոհաբերություն են անում, բայց դա այդպես չէ, նրանք իսկական ներդրում են կատարում, որը կվերադարձվի հավերժական շահութաբաժնով: Մեր Երկնային Հայրը տալիս է մեզ այն ամենն ինչ մենք ունենք: Նա ամենը դնում է մեր ձեռքում, լիազորելով մեզ պահել մեր սեփական օգտագործման համար դրա իննսուն տոկոսը, իսկ հետո նա խնդրում է, որ մենք դնենք Իր տասանորդը, որտեղ Ինքն է կարգադրում, որտեղ Նա գիտի, որ այն կիրականացնի ամենամեծ բարիքը Իր Եկեղեցու առաջընթացի համար:

Երբ մենք այս առավոտ լսեցինք այս մեծ Եկեղեցու զեկուցումները [գերագույն համաժողովի նիստի ընթացքում], ֆինանսական զեկուցումը մեծ տպավորություն թողեց ինձ վրա՝ իմանալով, որ այնպիսի մեծ կազմակերպություն, ինչպիսի սա է, մարդկանց իր բազմություններով, որը գործում է այնքան շատ ուղիներով աշխարհի խառնաշփոթի և թշվառության մեջ,

«Տերը մեզ արտոնություն է տվել նվիրաբերել մեր եկամտի մեկ տասներորդ մասը Իր Եկեղեցու համար, Իր աշխատանքի առաջընթացի համար»:

այնպիսի վիճակում է, որ Եկեղեցու նախագահությունից մեկը կարողացավ կանգնել այստեղ և ճշմարտացիորեն ասել մեզ, որ այս Եկեղեցին պարտք չունի: Ազգերը և ժողովրդի մեծ մասը լինելով պարտքի մեջ, այնուամենայնիվ, Եկեղեցին այնպես է կառավարվում, որ այն պարտք չունի: Եկեք մտածենք այդ մասին: Եկեք հաստատենք Եկեղեցին: Եկեք հետևենք Եկեղեցու ակտիվ ղեկավարմանը: Եկեք այնպես ապրենք, որ Տերը կարողանա օրհնել մեզ, ինչպես Եկեղեցուն է օրհնում:[11]

Եթե դուք վճարել եք ազնիվ տասանորդ, ես կարող եմ առանց տատանվելու ասել, որ մյուս իննսուն տոկոսն ավելի մեծ օրհնություն է եղել նրանց համար, ովքեր վճարել են, քան այն հարյուր տոկոսն է եղել նրանց համար, ովքեր չեն վճարել: Սա Տիրոջ աշխատանքն է. . . Մարդիկ չէին կարողանա անել

դա։ Ձեր ողջ առատաձեռնությամբ և ձեր ողջ տալով և ողջ միսիոներական աշխատանքով, աղքատներին ձեր հոգ տանելով. . . այն ամենով, որ դուք տալիս եք որպես սովորական մարդիկ, ես վկայում եմ, որ այն ինչ դուք թողել եք, բերում է ձեզ ավելի շատ երջանկություն, ավելի շատ խաղաղություն, ավելի շատ հարմարավետություն և ավելի շատ համոզվածություն հավերժական կյանքի համար, քան որևէ այլ ժողովուրդ վայելում են այսօր աշխարհում։[12]

Ես համոզված եմ Տերը սիրում է այդ խոնարհ, հավատարիմ հոգիներին, ովքեր հոժարակամորեն ցանկանում են օգնության հասնել և շփվել նրանց հետ, ովքեր կարիքի մեջ են, լինի դա ուտելիքով, թե հագուստով, թե անկողնային պարագաներով, թե բարությամբ, որովհետև դա Հիսուս Քրիստոսի ավետարանի մի մասն է։[13] (Տես առաջարկ 5 էջ 253։)

Եթե մենք առատաձեռն ենք մեր միջոցներով, չպետք է որևէ մեկը զուրկ մնա։

Որևէ տղամարդու, կնոջ կամ երեխայի համար Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում չկան անհրաժեշտ միջոցներից զրկվածներ, քանի որ Եկեղեցին կազմակերպված է օգնելու նրանց, ովքեր զուրկ են կյանքի կենսական միջոցներից։ Կա առատորեն բոլորի համար և հատկացնելու համար. . . Աստված թույլ է տվել մարդկանց ստանալ հարստություն, և եթե նրանք ձեռք բերեն այն պատշաճորեն, դա նրանցն է, և նա կօրհնի նրանց օգտագործելու այն, եթե նրանք դա պատշաճորեն օգտագործեն։[14]

Մենք այնքան խորասուզած ենք դառնում աշխարհում, որ մոռանում ենք մարդկանց, ովքեր տառապում են, որ մենք կարող ենք օգնել շատ դեպքերում։[15]

Մտածեք այն մարդկանց մասին, ովքեր առանց աշխատանքի են և կանանց նույնպես. . . Մտածեք մեր Հոր զավակների թվի մասին, որոնց նա սիրում է ճիշտ նույնքան, որքան մեզ է սիրում, ովքեր թշվառության մեջ են։ Մտածեք այն մասին, թե ինչպիսին կլինի տառապանքը, եթե մենք, ովքեր ավելի բախտավոր ենք առատաձեռն չենք այն նյութական բարիքների հետ, որոնք Աստված է դրել մեր ձեռքում, ոչ միայն նյութականով, այլ

եթե մենք ետ ենք պահում նրա զավակներից քաջալերանքի խոսքը և օգնությունը և չենք այցելում նրանց տներում, որտեղ այնքան շատ կարիքավորներ կան և տալիս այն, ինչ մեզանից յուրաքանչյուրի համար հնարավոր է տալ: Եղբայրներ և քույրեր, բոլոր այս հնարավորությունները մեզ են տրված՝ մեզ հարստացնելու համար և մեր բնավորությունները զարգացնելու համար, և որպեսզի մենք կարողանանք մեզ համար գանձեր դիզել երկնքում, որտեղ ցեցը և ժանգը չեն ապականում և որտեղ գողերը չեն ներխուժում և գողանում (տես Մատթեոս Զ.20): Այս հնարավորություններն առաջարկվում են մեզ ամենագետ Հոր կողմից, ով իմանալով վերջը սկզբից ի վեր, ասել է. «Սա է ուղին քայլեք սրանով»:

Եկեք. . . նայենք մեր շուրջը մեր շրջակայքում, չթողնենք դա Եպիսկոպոսին և Սփոփող Միությանը, այլ եկեք մեզանից յուրաքանչյուրը լինի սիրառատ բարությամբ ծառայողներ նրանց համար, ովքեր մեր օգնության կարիքն այնքան շատ ունեն: Եվ ինչ էլ որ անենք, եկեք այնպես չանենք, որ նրանք, ովքեր աջակցության կարիք ունեն իրենց զգան ինչպես մուրացկան: Եկեք տանք նրանց ինչ որ տալու ենք, կարծես այն նրանց էր պատկանում: Աստված դա մեզ վարկով է տվել: Երբեմն, մենք, որ կուտակել ենք միջոցներ [գործում ենք] այնպես, կարծես թե մտածում ենք, թե այն մեզ է պատկանում: Այն ամենը, ինչ ունենք՝ մեր ուտելիքը, մեր հագուստը, մեր տանիքը, մեր տները, և մեր հնարավորությունները տրվել են մեզ որպես տնտեսներ Եկեղեցում և մեր Երկնային Հոր արքայությունում և եթե մենք կամենանք. . . բաժին հանել մեր ունեցվածքից, չնայած այն կարող է լինել որբևայրու լումայի չափ, մենք ձեռք կբերենք նրանից, ով ապրում է վերում այն օրհնությունները, որոնց կարիքը մենք ունենք մեր օրերում այստեղ՝ երկրի վրա և երբ ժամանակը գա մեր այստեղից գնալու, մենք կգտնենք սիրառատ Հոր կողմից մեզ սպասվող օրհնությունը, ով գնահատում է մեր գործադրած ջանքերը:[16]

Եթե մենք ցանկանում ենք համարվել մեր Տիրոջ արքայությունում՝ սելեստիալ արքայությունում, մեր հնարավորությունն է նախապատրաստվել, անկեղծ սիրով, աշխատասիրությամբ, խնայողությամբ, հետևողականությամբ, ցանկությամբ անել այն ամենն, ինչ մեր ուժի սահմաններում է օրհնելու ուրիշներին,

տալու՝ ոչ թե միշտ զգալու, որ պիտի ստանանք, այլ տալու ցանկությամբ, քանի որ ես ասում եմ ձեզ» «Աւելի երանելի է տալը քան թէ առնելը»: (Գործք Ի.35) Հիսուս Քրիստոսի Ավետարանը տալու ավետարան է, ոչ միայն մեր ունեցվածքից այլ ինքներս մեզ, և ես շնորհակալ եմ իմ Երկնային Հորը, որ ես պատկանում եմ այսպիսի կազմակերպության, որն այսպես է հրահանգավորվել:[17] (Տես առաջարկ 6 էջ 253:)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր v–viii:

1. Ջորջ Ալբերտ Սմիթն ասաց Սրբերին Մեծ Դեպրեսիայի ժամանակ. «Հավատում եմ, որ մեր Երկնային Հայրը մեզ հնարավորություն է տալիս զարգացման համար» (էջ 243): Ի՞նչ է սա նշանակում մեզ համար: Ինչպե՞ս ենք մենք «զարգանում», երբ ծառայում ենք նրանց, ովքեր կարիքի մեջ են:
2. Երբ դուք կարդաք ուսմունքների առաջին բաժինը՝ (էջեր 243–246), մտածեք այն բաների մասին, որոնք կարող եք անել սկսելու կամ բարելավելու ձեր մթերքի պահեստը և միջոցները: Որո՞նք են արտակարգ իրավիճակների կամ պայմանների մի քանի օրինակներ, որոնց համար դուք պետք է պատրաստվեք: Ի՞նչ կարող են անել քահանայության քվորումներն ու Սփոփող Միությունը՝ օգնելու անդամներին պատրաստվել այդ արտակարգ իրավիճակների համար:
3. Վերանայեք 244 էջում սկսվող բաժինը և կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 68.31: Ինչո՞ւ եք կարծում, որ Տերը պահանջում է մեզանից աշխատել մեր ապրուստի համար: Թվեք երեխաներին աշխատանքի կարևորության մասին ուսուցանելու մի քանի արդյունավետ ուղիներ:
4. Կարդացեք Նախագահ Սմիթի նախազգուշացումները հարուստներին և աղքատներին էջեր 246–248: Որո՞նք են

մեր սրտերը հարստությունների վրա դնելու հետևանքները: Ի՞նչ կարող ենք անել դրանից խուսափելու համար:

5. Կարդացեք 248 էջում սկսվող բաժինը, որում Նախագահ Սմիթը քննարկում է տասանորդ վճարելու օրհնությունները: Որո՞նք են երիտասարդներին կամ նոր անդամներին այս օրհնությունների մասին ուսուցանելու համար մի քանի արդյունավետ ուղիները:
6. Երբ ուսումնասիրեք ուսմունքների վերջին բաժինը (էջեր 250–252), մտածեք որևէ առանձնահատուկ մի բանի մասին, որ կարող եք անել՝ օգնելու եպիսկոպոսին և ծխի մյուս ղեկավարներին մարդկանց կարիքները բավարարելու համար: Ի՞նչ է նշանակում ձեզ համար «ոչ միայն մեր ունեցվածքից, այլ ինքներս մեզ»:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Եփեսացիս Դ.28, Հակոբոս Ա.27, 2 Նեփի 5.17, Հակոբ 2.17-19,Մոսիա 4.22-25, Վարդապետություն և Ուխտեր 104.13–18

Օգնություն ուսուցչին. «Եթե նույնիսկ դուք ուսուցանում եք շատ մարդկանց միանգամից, դուք կարող եք ազդեցություն գործել անհատների վրա: Օրինակ դուք ազդեցություն եք գործում անձանց վրա, երբ դուք դասի սկզբում յուրաքանչյուր անձի ջերմորեն ողջունում եք. . . Դուք նաև ազդեցություն եք գործում, երբ մասնակցությունը դարձնում եք հրավիրող և ապահով» (*Teaching, No Greater Call,* 35):

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1948, 181.
2. In Conference Report, Oct. 1947, 6.
3. "To the Relief Society," *Relief Society Magazine,* Dec. 1932, 706.
4. In Conference Report, Apr. 1947, 162, 165.
5. In Conference Report, Apr. 1929, 30.
6. In *Improvement Era,* Aug. 1946, 521.
7. "Some Warning Signs," *Improvement Era,* July 1948, 425.
8. In Conference Report, Oct. 1949, 171.
9. In Conference Report, Oct. 1934, 49–50.
10. In Conference Report, Oct. 1949, 170–72.
11. In Conference Report, Apr. 1941, 25, 28.
12. In Conference Report, Apr. 1948, 16–17.
13. In Conference Report, Apr. 1947, 162.
14. In Conference Report, Oct. 1949, 169, 171.
15. In Conference Report, Apr. 1948, 181.
16. "Saints Blessed," *Deseret News,* Nov. 12, 1932, Church section, 8.
17. In Conference Report, Oct. 1934, 52.

«Պապիկը հանդարտորեն լիմոնադ պատրաստեց և դնելով բաժակները և կոժը մատուցարանի վրա դուրս տարավ այն՝ դեպի մաքառող տղաներիկանց կողմը»:

Բարության ուժը

Լինելով բարի և համբերատար, մենք կարող ենք փափկացնել սրտեր և քաջալերել ուրիշներին արդար ապրել:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Ջորջ Ալբերտ Սմիթի ընտանիքն անսասան հավատում էր սրտեր փափկացնելու բարության ուժին: Նա ուսուցանում էր, որ մենք պետք է «դիմակայենք մեր խնդիրները սիրո և բարության ոգով բոլորի հանդեպ»[1] Նրա թոռնուհին պատմեց թե ինչպես նրա բարությունը և հոգատարությունն ուրիշների հանդեպ խաղաղություն բերեց մի լարված իրավիճակում:

«Մի անգամ ամռան մի շոգ օր ինչ-որ վթար էր պատահել փողոցի ներքևում՝ պապիկի տան մոտ՝ Սոլթ Լեյք Սիթիում, և մի քանի բանվորներ քաղաքից եկել էին սարքելու այն: Դրսում շոգ էր, արևը փայլում էր ուժեղ և աշխատանքը, որ նրանք անում էին թիակով մաքրելու և հավաքելու աշխատանք էր, որը ստիպում էր, որ քրտինքը ծորա տղամարդկանց դեմքով և մեջքով, երբ նրանք փորում էին խճուղին: Բանվորներն ուշադիր չէին իրենց խոսքերում կամ, միգուցե նրանց մայրերը չէին սովորեցրել նրանց ավելի լավ բան, բայց նրանք հայհոյում էին և օգտագործում սոսկալի խոսելաձև: Նրանց խոսքերը շուտով վիրավորական դարձան հարևաններից շատերի համար, որոնց պատուհանները բաց էին, որպեսզի մի քիչ քամի գար, որը կարող էր օգնել նրանց հովանալ:

«Ինչ-որ մեկը դուրս եկավ և խնդրեց տղամարդկանց դադարեցնել իրենց գարշելի խոսքերը և այդ ընթացքում նշեց, որ Եղբայր Սմիթն ապրում էր հենց այդտեղ, խնդրեցին, որ հարգանք ցուցաբերեին և լուռ մնային: Այս լսելով այդ մարդիկ

արձակեցին վատ խոսքերի մի նոր շարան: Պապիկը հանդարտորեն լիմոնադ պատրաստեց և դնելով բաժակները և կուժը մատուցարանի վրա դուրս տարավ այն դեպի մաքառող տղամարդկանց կողմը, ասելով. «Ընկերներ, դուք այնքան եք շոգել և հոգնել: Չեի՞ք կամենա գալ և նստել այստեղ՝ իմ ծառերի հովում և խմել այս սառը ըմպելիքը»: Նրանց բարկությունն անցավ, տղամարդիկ բարությանն արձագանքեցին հեզությամբ և շնորհակալությամբ: Նրանց հաճելի կարճ ընդմիջումից հետո, նրանք վերադարձան իրենց գործին և իրենց աշխատանքը խնամքով և լուռ ավարտեցին»:[2] (Տես առաջարկ 1 էջ 262:)

Պատճառներից մեկը, որ Նախագահ Սմիթը մարդկանց այդպիսի բարությամբ էր վերաբերվում նրա համոզվածությունն էր, որ ամենքի մեջ էլ ներքին ինչ-որ արժեքավոր հատկանիշ կար: Նախագահ Սմիթի կյանքից հեռանալուց հենց մի քանի շաբաթ առաջ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներից մեկը՝ Երեց Մեթյու Քոուլին այցելեց նրան հիվանդանոցում: «Ես քայլեցի դեպի նրա մահճակալը, – ասաց նա, – և նա մեկնեց ձեռքը և բռնեց իմ ձեռքը և ամուր սեղմելով ձեռքս նա ասաց. «Երիտասարդ, հիշիր քո կյանքի բոլոր օրերում, որ դու կարող ես գտնել արժանիք ամենքի մեջ, եթե միայն փնտրես այն»»:

Երեց Քոուլին այդ ժամանակ ասաց Նախագահ Սմիթի մասին.

«Նա սիրում էր բոլորին, որովհետև կարողանում էր տեսնել բարին նրանց մեջ: Նա չէր նայում մեղքի վրա նվազագույն իսկ թույլտվությամբ, բայց նա սիրում էր մեղավորին, որովհետև նա գիտեր, որ Աստված սեր էր [տես 1 Հովհաննես Դ.16], և Աստծո սերն է, որ վերածնում է մարդկային հոգիները և կարող է այդ ընթացքում մեղավորին դարձնելով սուրբ:

Երևի կային մեղավորներ, ովքեր նրա սերը սխալմամբ հարգանք էին համարում: Նա չէր հարգում մեղավորին, այլ նա սիրում էր նրան: Ես համոզված եմ այդ սերն արձագանք էր գտնում նրանց սրտում և կյանքում, ում նա սիրում էր»:[3]

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Տիրոջ Հոգին բարության, ոչ թե խստության և քննադատության հոգի է:

Ես, երբեմն, տխուր եմ զգում, երբ լսում եմ ոչ բարի բաներ, որոնք խոսվում են ոչ միայն մեր Եկեղեցու ժողովրդի մասին, այլ աշխարհի մարդկանց մասին: Ոչ բարի բաները սովորաբար չեն ասվում Տիրոջ ոգեշնչման ներքո: Տիրոջ Հոգին բարության հոգի է, այն համբերության հոգի է, այն գթության հոգի է և սիրո ու համբերատարության և երկայնամտության, և մեզանից չկա մեկը, որն այդ արժանիքների կարիքը չունենա, որոնք մեր Երկնային Հոր Հոգին ունենալու արդյունքն են:[4]

Խաղաղության համար ամեն ազդեցություն պետք է գործադրվի: Լյուցիֆերը գործադրում է ամեն միջոց կործանելու մարդկային ընտանիքի հոգիները: Նա ավելի ակտիվ է, քան երբևիցե եղել է և նա աշխատում է այնպիսի նենգ ձևով: Ես ժամանակ չեմ ծախսի թվելու այն բազմաթիվ ուղիները, որ նա օգտագործում է, բայց կա մի ուղի, որով նա ներգործում է և ներգործել է աշխարհի սկզբից ի վեր և դա մեկ անձնավորության բարի համբավի կործանումն է մյուսի կողմից՝ նրանց մասին չար բաներ ասելու միջոցով:[5]

Այնքան հեշտ է քննադատել ուրիշին, այնքան հեշտ է հանցանք գտնել և, երբեմն, մենք խիստ ենք խոսում մեր հարևանների և ընկերների մասին: Այժմ, ահա թե ինչ է մեզ տվել մեր Երկնային Հայրը . . . .

«Մի դատէք, որ չդատուիք:

Որովհետեւ ինչ դատաստանով որ դատում էք, նորանով պիտի դատուիք» եւ ինչ չափով որ չափում էք, նորանով կչափուի ձեզ:

Եւ ի՞նչու քո եղբօր աչքի միջի շիւղը տեսնում ես, եւ քո աչքի միջի գերանը չես նշմարում:

Կամ ի՞նչպէս կասես քո եղբորը.Թող շիւղն աչքիցդ հանեմ, եւ ահա քո աչքի մէջ գերան կայ» (Մատթեոս Է.1–4):

Որպես ժողովուրդ՝ մեզ խորհուրդ է տրվել քննադատական չլինել, չլինել անգութ, խստորեն չխոսել նրանց մասին, ում հետ

մենք հաղորդակցվում ենք: Մենք պարտավոր ենք մեծագույն օրինակ լինել ողջ աշխարհում այդ առումով: Հաշվի առեք քննադատությունն այսօր: Վերցրեք ձեր լրագրերը և տեսեք չարակամ բաները, որոնք ասվում են անձանց կողմից ուրիշների մասին, և այնուամենայնիվ, շատ անգամ անձնավորությունը, որը քննադատում է գերան ունի իր սեփական աչքում և ընդհանրապես հստակ չի տեսնում, բայց նա մտածում է իր եղբայրը շյուղ ունի իր աչքում:[6] (Տես առաջարկ 2 էջ 263:)

Արդյոք մենք ավելի միտված չենք տեսնել մեր հարևանների թերությունները և թուլությունները: Սակայն այդ հակառակ է Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսմունքներին: Կա մարդկանց մի դաս, որը միշտ հանցանք է գտնում և քննադատում կործանարար ձևով:Քննադատության մեջ կա տարբերություն: Եթե մենք կարողանանք կառուցողական ձևով քննադատել Տիրոջ Հոգու ազդեցության ներքո, մենք կարող ենք փոխել արվող բաներից մի քանիսը օգտակար և պատշաճ ձևով: Բայց եթե մենք ունենք սխալ գտնելու և մատնացույց անելու թուլություններն ու ձախողումները կործանարար ձևով, այն երբեք չի գալիս որպես արդյունք մեր Երկնային Հոր Հոգու ընկերակցության և միշտ վնասակար է:[7]

Մենք պետք է որոնենք արժանիքներ ուրիշների մեջ և հղենք անկեղծ աղոթք:

Այսօր ես կանգնած եմ այստեղ խոսելու մի մարդու մասին, որը մի քանի տարի առաջ տուն է գնացել. . . Ես ի նկատի ունեմ Ֆրենսիս Մ. Լայմանին (Տասներկու Առաքյալների Քվորումից) և ես ուզում եմ ասել ձեզ, որ այդ մեծ մարդն այնքան քնքուշ էր ինչպես մանկիկը, հենց փոքրիկ երեխայի պես քնքուշ և նրա օգնելու, քաջալերելու ցանկությունը հրաշալի էր: Ես լսել եմ թե ինչպես է նա հաճոյախոսություններ արել շատ անգամներ իր եղբայրներին, երբ նրանք գովելի ինչ-որ բան են արել, մեկը լավ ելույթ է ունեցել, մեկ ուրիշը բերել է համոզիչ վկայություն, մյուսն արել գովասանքի արժանի մի բան: Ես տեսել եմ նրան իր ձեռքը նրանց ուսին դնելիս և ասելիս. «Ես հպարտանում եմ քեզանով և այն լավ բանի համար, որ դու արեցիր»: Դա միթե՞ ընդօրինակելի ձև չէ ապրելու: Դա այն ուղին է, որով մենք կարող ենք երջանիկ դառնալ: Եթե նախանձ լինելու փոխարեն

մենք տեսնենք և գնահատենք ու ընդօրինակենք մեր մերձավորների արժանիներն ու կարողությունները, եթե մենք տեսնենք բարու ուժը [մյուսների] մեջ, որքան շատ ավելի լավ կլինի:

Մեզանից շատերն ապրում են այնպիսի մթնոլորտում, որ մենք գրեթե համր ենք դառնում, երբ որևէ մեկ ուրիշին գովելուն է վերաբերում: Մենք թվում է անկարող ենք դառնում ասելու այն բաները, որոնք մենք կարող էինք ասել. . . ի օրհնություն ուրիշների: Եկեք որոնենք արժանիքներ մեր ընկերակիցների մեջ և դրանք նկատելով երջանիկ դարձնել նրանց գովելով:[8]

Ես աղաչում եմ ձեզ եղբայրներ և քույրեր, եկեք առատաձեռն լինենք միմյանց հանդեպ:Եկեք համբերատար լինենք, միմյանց հանդեպ ինչպես որ կկամենայինք ուրիշները լինեին մեր հանդեպ: Եկեք տեսնենք մեր հարևանների և մեր ընկերների արժանիքները և խոսենք այդ արժանիքների մասին և ոչ թե գանգատվենք և քննադատենք: Եթե մենք անենք դա, մենք արևի շողեր կճառագայթենք, և նրանք, ովքեր մեզ լավ են ճանաչում կսիրեն մեզ:[9] (Տես առաջարկ 3 էջ 263:)

Բարությունը զորություն ունի հեռու տանելու մարդկանց իրենց սխալներից:

Կան այնպիսիք, որ սխալներ կգործեն: Կան այնպիսիք մեր մեջ, ովքեր մոլորվել են, բայց նրանք մեր Տիրոջ զավակներն են և նա սիրում է նրանց: Նա տվել է ինձ և ձեզ իրավունք գնալու նրանց մոտ բարությամբ ու սիրով և համբերությամբ և օրհնելու ցանկությամբ, ձգտելով ետ դարձնել նրանց այն սխալներից, որոնք նրանք գործում են: Իմ արտոնությունը չէ նրանց դատել դրանցից մի քանիսի համար, որ կատարել են և դեռ կատարում են սխալներ, եթե ինձ տրված լիազորության պատճառով կանչված չլինեմ այդ անելու: Բայց իմ արտոնությունն է, եթե ես տեսնում եմ նրանց սխալ բան անելիս, ինչ-որ ձևով, եթե հնարավոր է ետ դարձնեմ նրանց այն ուղին, որը տանում է դեպի հավերժական կյանք սելեստիալ արքայությունում:[10]

Եկեք չբողոքենք մեր ընկերներից և հարևաններից, որովհետև նրանք չեն անում այն, ինչ մենք ցանկանում ենք, որ նրանք անեն: Ավելի շուտ եկեք սիրենք նրանց անելով նրանց համար այն բաները, որ Երկնային Հայրը կկամենար որ նրանք

անեին։ Մենք կարող ենք անել դա և մենք չենք կարող շահել նրանց վստահությունը կամ նրանց սերը որևէ այլ ուղով։[11]

Ինչպիսի ուրախություն, ինչպիսի բավականություն կարող է ավելացվել մեր հարևանների և ընկերների կյանքում բարության միջոցով։ Ինչպես կուզեի գրել այդ բառը մեծատառերով և գովաբանել այն օդում։ Բարությունն այն ուժն է, որ Աստված է տվել մեզ բացելու խստացած սրտեր և ենթարկելու համառ հոգիներ և բերելու նրանց Իր նպատակների ըմբռնմանը։[12] (Տես առաջարկ 4 էջ 263։)

Սերն ու բարությունը մեր տներում կարող է տանել մեր երեխաներին մեր խորհուրդը լսելուն։

Մեր պարտականությունն է, ես կասեի մեր արտոնությունն է, ինչպես նաև մեր պարտականությունը, բավականաչափ ժամանակ տրամադրել շրջապատելով մեր երեխաներին թիկնապահներով և նրանց այնպես սիրել և վաստակել նրանց սերը, որ նրանք ուրախ լինեն լսել մեր խորհուրդը և խրատը։[13]

Ապրեք այն ձևով, սիրով և բարությամբ, որ խաղաղությունն ու աղոթքը և գոհաբանությունը լինի ձեր տներում միասին։ Մի թույլ տվեք, որ ձեր տներն ուղղակի մի տեղ լինեն ձեր գլխարկները գիշերը կախելու և ճաշ ստանալու համար, իսկ հետո վազելու որևէ այլ տեղ, այլ թող ձեր տները լինեն Տիրոջ Հոգու համար բնակվելու վայր։[14]

Ես աղոթում եմ, որ մենք լցված լինենք այն հոգով, որ գալիս է [Տիրոջից], իսկ դա սիրո հոգին է, բարության և օգնության, համբերության ու ինքնազսպման հոգին։ Այն ժամանկ, երբ մենք պահենք այդ հոգին մեզ հետ մեր տներում, մեր տղաներն ու աղջիկները կմեծանան լինելով այն, ինչ մենք կուզեինք, որ նրանք լինեն։[15]

Ես հիշում եմ մի քանի տարի առաջ գնացքով գնում էի հյուսիս։ Այդ գնացքի ցերեկային վագոնում ես տեսա մի կնոջ, որին ես գիտեի. . . Նա ճանաչեց ինձ, երբ ես միջանցքով անցնում էի։ Նա խոսեց ինձ հետ և ես հարցրեցի. «Ո՞ւր եք գնում»։ Նա ասաց. «Ես գնում եմ Փորթլանդ, [Օրեգոն]»։ Ես գիտեի, որ ընտանիքն ունևոր չէր։ Ես գիտեի, որ այդ կինը տղաներ ունեցող մի մեծ ընտանիքի

Ապրեք այն ձևով, սիրով և բարությամբ, որ խաղաղությունն ու աղոթքը և զոհաբանությունը լինի ձեր տներում:

մայր էր, այսպիսով՝ ես հարցրեցի. «Ի՞նչ գործով եք գնում Փորթլանդ»: Նա ասաց. «Որդիս այնտեղ հիվանդանոցում է»:

Ես չգիտեի, որ նրա երեխաներից որևէ մեկը տեղափոխվել էր, ուստի շարունակեցի հարցեր տալ և նա իր սիրտը բացեց ինձ: Նա ասաց. «Իմ ամենափոքր տղան մի քանի շաբաթ առաջ տնից գնաց և չասաց մեզ, թե ուր է գնում: Մենք նրանից ոչ մի լուր չունեինք, բայց նա կարծում էր, անկասկած, դուրս կգա աշխարհ և իր մասին կհոգա և առաջին տեղեկությունը, որ մենք ստացանք նրա ուր լինելու մասին մի հեռագիր եկավ Փորթլանդի Գթության հիվանդանոցից, նշելով որ մեր որդին հիվանդ էր այնտեղ հիվանդանոցում»: Նա ասաց. «Իհարկե լուրը մեզ խիստ ցնցեց: Միայն մեկ բան կարելի էր անել և դա միջոցներ գտնելն էր անմիջապես այդ տղայի մոտ գնալու համար»:

. . .Նա պատրաստ էր նստել այդ երկար ճանապարհորդության ընթացքում օր ու գիշեր, առանց բարկանալու իր որդու անբարյացակամության և անմտության վրա, այլ միայն

մտածելով, որ նա իրեն էր պատկանում, որ Աստված էր նրան տվել իրեն, և որ մեր Երկնային Հայրն ակնկալում էր նրանից օգտագործել ամեն հնարավոր միջոց հարստացնելու նրա կյանքը և նախապատրաստել նրան այն հնարավորությունների համար, որոնք սպասում էին նրան: Այսպիսով՝ գիշերվա երկար ժամերի ընթացքում, երբ գնացքը սլանում էր ռելսերի վրայով, այդ հիանալի կինը նստած այնտեղ, մտածում էր իր տղայի մասին, յուրաքնչյուր մղոն տանելով նրան մի փոքր ավելի մոտիկ այդ ծանր քարին որ կախված էր նրա սրտից: Ի վերջո, երբ նա տեղ հասավ, որքան հնարավոր է արագ, նա վազեց հիվանդանոց: Այնպես պատահեց, որ այն տեղը, որտեղ ես պիտի մնայի հեռու չէր հիվանդանոցից, այնպես որ ես այցելեցի տեսնելու, թե ինչ էր տեղի ունեցել:

Այդ քնքուշ մայրը նստած էր Իր որդու մահճակալի կողքին, որը հիվանդացել էր լուրջ թոքաբորբով և նա պառկած էր այնտեղ ցավի մեջ: Նա չէր կշտամբում նրան, որ նա անհոգի էր եղել իր հետ, նա չէր բարկանում նրա անմտության համար և նրա անփութության համար, նա ուղղակի շնորհակալ էր լինել իր տղայի հետ, ում Աստված տվել էր իրեն: Այժմ նա փորձում էր խնամել երեխային, որի համար նա ընկերակցության մեջ էր մտել իր Երկնային Հոր հետ, նրան բերելու այս աշխարհ: Նա ի դեպ 16 տարեկան էր, բայց նա նրա փոքրիկն էր: Նա փորձում էր քաջալերել նրան ասելով այն բաները, որոնք նրան կերջանկացնեին, կբավարարեին, ցույց տալով նրան այն հնարավորությունները, որոնք կլինեին նրանը, երբ նա կլավանար: Վշտի, տառապանքի փոխարեն, որով լցված էր եղել այդ սենյակը, նախքան նրա այնտեղ մտնելը, այդ տղայի դեմքի արտահայտության վրա տարածված էր մի կատարյալ լուսապսակ և խաղաղություն ու երջանկություն, երբ նա նայում էր նրա դեմքին, ով առաջարկել էր իր կյանքը, որպեսզի նա լիներ և ով այդ պահին եկել էր այդ երկար տարածությունը՝ նստելու նրա կողքին և դեպի կյանք ետ բերելու նրան խնամելով:

Ինձ երբեմն հետաքրքրում է, թե այդ մայրերն արդյոք գիտակցում են, թե իրենք որքան սքանչելի են իրենց երեխաների աչքում այդպիսի մի հանգամանքում ինչպիսին սա էր: Այդ տղան վճռել էր իր մոր այնտեղ լինելուց շատ ռոպեներ առաջ, որ էլ երբեք անհավատարիմ չէր լինի նրա հանդեպ, էլ երբեք

չէր լինի անփույթ այն ամենի հանդեպ, ինչ նա տվել էր իրեն, այլ որոշել էր, որ այն անունը, որը նրան էր տրվել պատվի համար, պահվելու էր իր կողմից պատվով այնքան երկար, որքան պետք է տևեր կյանքը:[16] (Տես առաջարկ 5 էջ 264:)

Ես աղոթում եմ, որ մեր Տիրոջ ավետարանի սերը վառվի մեր հոգում և հարստացնի մեր կյանքը, որ այն ստիպի ավելի բարի լինել ամուսիններին իրենց կանանց հանդեպ, և կանանց ավելի բարի լինել իրենց ամուսինների հանդեպ, ծնողներին երեխաների հանդեպ և երեխաներին իրենց ծնողների հանդեպ, Հիսուս Քրիստոսի ավետարանի շնորհիվ, որը սիրո և բարության ավետարան է:[17]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր v–viii:

1. Կարդացեք հոգնած բանվորների համար Ջորջ Ալբերտ Սմիթի լիմոնադ պատրաստելու պատմությունը (էջ 255): Ե՞րբ եք տեսել, որ բարության քայլը փափկացրել է ինչ-որ մեկի սիրտը: Որո՞նք են այն խնդիրները, որոնք դուք կարծում եք կարող են լուծվել «բոլորի հանդեպ սիրո և բարության ոգով»:
2. Նախագահ Սմիթն ուսուցանել է, որ մենք պետք է լինենք մեծագույն օրինակները ողջ աշխարհում» կոպիտ քննադատությունից խուսափելում (էջ 257): Ինչպիսի՞ իրավիճակներ կարող են լինել, որոնցում մենք կարող ենք այդպիսի օրինակ ծառայել: Ձեր կարծիքով ինչո՞ւ է կոպիտ քննադատությունը և բողոքելն այդքան վնասակար:
3. 258–259 էջերում Նախագահ Սմիթը պատմում է Երեց Ֆրենսիս Մ. Լայմանի մասին, որ նա հաճոյախոսում էր իր եղբայրներին: Ինչպե՞ս եք ներգործվել ինչ-որ մեկի կողմից, ով ձեզ անկեղծ գովասանք է հայտնել:
4. Նախագահ Սմիթն ուսուցանել է, որ «բարությունն այն ուժն է, որն Աստված տվել է մեզ կարծր սրտերը բացելու

համար: (էջ 260): Ի՞նչ պատմվածքներ կարող եք մտածել սուրբ գրություններից, որոնք լուսաբանում են այս սկզբունքը: (Մի քանի օրինակների համար տես, Մատթեոս Թ.10-13, Ալմա 20.1-27):

5. Վերանայեք իր որդուն հիվանդանոցում այցելող մոր պատմությունը (էջեր 260–262): Երբ որևէ երեխա մոլորվում է, ինչո՞ւ է երբեմն դժվար այն ձևով արձագանքել, ինչպես այդ մայրն արեց տվյալ պատմության մեջ: Աղոթքով խորհեք, թե ինչպես բարության և համբերության հոգին կարող է բարելավել ձեր ընտանիքի անդամների հետ ձեր հարաբերությունները:

Թեմային առնչվող սուրբ գրություններ՝ Առակաց ԺԵ.1, Մատթեոս ԺԸ.15, Հովհաննես Ը.2–11, Եփեսացիս Դ.29–32, 3 Նեփի 12.22-24, Վարդապետություն և Ուխտեր 121.41-46:

Օգնություն ուսուցչին. Փոքր խմբերում քննարկումները «մեծ թվով մարդկանց հնարավորություն է տալիս մասնակցել դասին: Այն անձինք, որոնք սովորաբար տատանվում են մասնակցել, կարող են կիսվել գաղափարներով փոքր խմբերում, որոնք նրանք չէին արտահայտի ամբողջ խմբի առջև» (*Teaching, No Greater Call,* 161):

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1941, 28.
2. Martha Stewart Hatch, in Susan Arrington Madsen, *The Lord Needed a Prophet* (1990), 130–31.
3. Matthew Cowley, in Conference Report, Apr. 1951, 166–67.
4. In Conference Report, Apr. 1937, 34.
5. "To the Relief Society," *Relief Society Magazine,* Dec. 1932, 704.
6. In Conference Report, Oct. 1949, 168–69.
7. In Conference Report, Oct. 1934, 50.
8. "To the Relief Society," 707.
9. In Conference Report, Oct. 1934, 50.
10. In Conference Report, Apr. 1937, 34.
11. In Conference Report, Oct. 1945, 174.
12. "To the Relief Society," 709.
13. In Conference Report, Apr. 1929, 33.
14. In Conference Report, Apr. 1948, 183.
15. In Conference Report, Oct. 1950, 9.
16. In *Deseret News,* May 15, 1926, section four, 6.
17. In Conference Report, Oct. 1948, 167.

Երեխաներին մեծացնել լույսի և ճշմարտության մեջ

Տերը ծնողներին պատասխանատվություն է տվել ուսուցանելու ավետարանն իրենց երեխաներին խոսքով և օրինակով:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Իր կյանքի ավարտի մոտ Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթը մտածում էր իր դաստիարակության և իր ծնողների ուսմունքների մասին.

«Ես ծնվել եմ մի համեստ տան մեջ. . . Ծնողներս ապրում էին շատ համեստ պայմաններում, բայց ես գոհանում եմ իմ Արարչից և շնորհակալ եմ նրան ողջ իմ սրտով ինձ նրանց տուն ուղարկելու համար:

Ես մեծացել եմ Սոլթ Լեյք Սիթիում: Երբ ութ տարեկան էի, ես մկրտվեցի Քրիք քաղաքում: Ես հաստատվեցի Եկեղեցու անդամ ծոմի ժողովի ժամանակ Տասնյոթերորդ ծխում, և ես հասկացա, երբ դեռ տղա էի, որ սա Տիրոջ աշխատանքն է: Ես իմացա, որ երկրի վրա կային ապրող մարգարեներ: Ես իմացա, որ Ամենազորի ոգեշնչումը կներգործեր նրանց վրա, ովքեր ապրում էին այն վայելելու համար: . . .

Ես ողջ աշխարհում չգիտեմ որևէ այլ մարդու, ով ավելի շատ պատճառ ունենար երախտապարտ լինելու համար, քան ես: Ես շնորհակալ եմ իմ անդրանիկության համար, շնորհակալ եմ ծնողներիս համար, ովքեր սովորեցրեցին Հիսուս Քրիստոսի ավետարանը և օրինակ ցույց տվեցին իրենց տանը: Եթե ես արել եմ որևէ բան, որը ես չպետք է արած լինեի իմ կյանքում, դա կլիներ մի բան, որը ես չէի կարողացել սովորել իմ մոր տանը: Երեխաներով մեծ ընտանիքում մորից պահանջվում էր բավականին շատ համբերություն, բայց նա մեզ հետ միշտ

Ջորջ Ալբերտ Սմիթի կինը՝ Լյուսին և նրանց դուստրերը Էդիթը (ձախից) և Էմիլին (աջից)։

համբերատար էր: Այնտեղ միշտ կար քաղցրություն և բարություն ու սեր»:[1]

Իր սեփական տանը Ջորջ Ալբերտ Սմիթը փորձեց հետևել իր ծնողների համբերությամբ և սիրով ուսուցանելու օրինակին: Նրա դուստր Էդիթը հիշում էր մի փորձառություն իր երիտասարդությունից.

«Նա անընդհատ խորհուրդ էր տալիս մեզ մեր վարքի վերաբերյալ, շեշտելով ազնվությունն ու արդարությունը: Ես հիշում եմ մի օր, երբ դաշնամուրի դասից տուն վերադառնալիս ավտոբուսի տոմսավաճառն աչքաթող արեց վերցնել իմ վճարը. . . Այնպես եղավ, որ նա անցավ իմ կողքով և ես հասա իմ նպատակատեղը ձեռքումս դեռ պահած ունենալով իմ մետաղադրամը և անկեղծորեն բավականին խանդավառված էի, որ ձրի էի երթևեկել:

. . . Ես ուրախացած վազեցի հայրիկի մոտ ասելու նրան իմ հիանալի բախտի մասին: Նա համբերությամբ լսեց իմ պատմությունը: Ես սկսում էի մտածել, որ շատ հաջողակ եմ. . . Ես համոզված էի, որ տոմսավաճառը չգիտեր, որ ես չէի վճարել երթևեկելու համար, ուստի ամեն ինչ լավ էր:

Երբ ես վերջացրեցի պատմելս, հայրս ասաց. «Բայց սիրելիս, եթե նույնիսկ տոմսավաճառը չգիտի այդ մասին, դու գիտես և ես գիտեմ և Երկնային Հայրը գիտի: Այսպիսով, կան առնվազն մենք երեքս, ովքեր պետք է բավարարված լինենք տեսնելով, որ դու լիովին վճարում ես ստացված արժեքի համար»:

Էդիթը ետ գնաց փողոցի անկյունը և վճարեց իր ուղեվարձը, երբ ավտոբուսը վերադարձավ: Հետագայում նա արտահայտեց իր երախտագիտությունն այն մոտեցման համար, որով իր հայրը կարգավորեց իրավիճակը. «Ես իսկապես շնորհակալ եմ այնպիսի հոր համար, որը բավականաչափ իմաստուն էր բարությամբ մատնացույց անելու ինձ սխալը, որովհետև եթե դա աչքաթող արվեր, ես գուցե մտածեի, որ նա հավանություն է տալիս, և ես գուցե փորձեի նմանատիպ մի բան մեկ այլ անգամ»:[2] (Տես առաջարկ 1 էջ 277:)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Ծնողներն են կրում հիմնական պատասխանատվությունն իրենց երեխաներին ավետարանն ուսուցանելու համար:

Ձեր բոլոր օրհնություններից ամենամեծ և ամենահարուստ օրհնություններից մեկը կլինի այն, որը գալիս է, երբ դուք ուսուցանում եք այնպես ինչպես պետք է և վարժեցնում ինչպես պետք է այն ընտրյալ հոգիներին, որոնց մեր Երկնային Հայրն է ուղարկում այս աշխարհ այս վերջին օրերում. . . Մի թողեք ձեր երեխաների ուսուցումը Երեխաների Միությանը, կիրակնօրյա դպրոցին, [Եկեղեցու երիտասարդական կազմակերպություններին]: Նրանք կօգնեն ձեզ և կկատարեն հիանալի ներդրում, բայց հիշեք, թե Աստված ինքն ինչ է ասել, որ ծնողները, ովքեր չեն ուսուցանում իրենց երեխաներին հավատք առ Աստված, ապաշխարություն և մկրտություն և ձեռնադրում, երբ ութ տարեկան են, մեղքը լինի ծնողների գլխին (տես ՎԵՈՒ 68.25-28): Սա սպառնալիք չէ իմ եղբայրներ և քույրեր, դա բարի և սիրառատ մեր Երկնային Հոր խորհուրդն է, ով գիտի բոլոր բաները և հասկանում է և իրականացնում այն, ինչ դա նշանակում է, երբ երեխաներին թույլատրվում է մեծանալ առանց այս ուսուցման:[3]

Այն ինչ պատրաստվում եմ ասել՝ հետևյալն է, որ ես չափազանց մտահոգված եմ, որ սա պետք է նստի Սիոնի յուրաքանչյուր ծնողի մտքում, այսինքն՝ չնայած Տերն ապահովել է բոլոր այս կրթական հրաշալի կազմակերպությունները, չնայած գիտությունն այնքան բան է տվել մեր հարմարավետության և օրհնության համար, չնայած Եկեղեցին պատրաստել է տեղեր, որտեղ մենք կարող ենք ուղարկել մեր երեխաներին ուսուցանվելու Քրիստոսի ավետարանը, դա չի ազատում ինձ և ձեզ մեր սեփական երեխաներին ուսուցանելու պատասխանատվությունից և պարտավորությունից, որը դրված է մեզ վրա մեր Երկնային Հոր կողմից. . . Բավարար չէ, որ մենք մեր երեխաներին սովորեցնենք հավատք, ապաշխարություն և մկրտություն և Սուրբ Հոգու պարգևի համար ձեռնադրում՝ օժանդակ կազմակերպություններում: Իմ Երկնային Հայրը պատվիրել է, որ ես դա ինքս պետք է անեմ:[4]

Ուրիշ ոչ ոք չի կարող կատարել այդ դերը, որն Աստված հանձնարարել է մեզ որպես ծնողներ: Մենք պարտավորություն

ենք վերցրել, երբ դարձել ենք միջոցներ երեխաներ բերելու այս աշխարհ: Մենք չենք կարող դնել այդ պատասխանատվությունը որևէ կազմակերպության վրա: Դա մերն է. . . Առաջին և ամենամեծ պարտականությունը ձեր և ինձ վրա է՝ ոչ միայն խորհուրդ ու խրատ տալու համար, այլ օրինակ ծառայելով ուսուցանելու, բավականաչափ ժամանակ անցկացնելով մեր սիրելի երեխաների՝ տղաների և աղջիկների հետ, որպեսզի նրանք չառաջնորդվեն դեպի. . . արգելված ուղիներ:[5]

Հավաքեք ձեր ընտանիքներին ձեր շուրջը, և եթե ձեզ չի հաջողվել անցյալում կյանքի նպատակների և Տիրոջ ավետարանի գիտելիքների մասին ըմբռնելու ունակություն տալ, ապա արեք դա այժմ, քանզի ես ասում եմ ձեզ որպես Տիրոջ ծառա, նրանք դրա կարիքն ունեն այժմ և նրանք դրա կարիքը կունենան այսուհետև:[6] (Տես առաջարկ 2 էջ 278:)

Այլ հետաքրքրությունները չպետք է պատճառ լինեն մեզ համար աչքաթող անելու մեր երեխաներին ուսուցանելու մեր պարտականությունը:

Մեզ ասվում է Ղուկասում, որ կլինի մի ժամանակ, երբ մարդիկ կխեղդվեն կյանքի հոգսերից և հարստություններից ու հաճույքներից (տես Ղուկաս Ը.14): Ես մտքումս ունեմ. . . նույնիսկ հիմա, տղամարդկանց և կանանց, որոնց ես սիրում եմ, ում հոգևորությունը հենց խեղդամահ է արվում ճիշտ այս բաներից, և հակառակորդն առաջնորդում է նրանց հաճույքի այդ հեշտ ճանապարհով և նրանք անտեսում են իրենց պարտականությունը որպես ծնողներ և որպես Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամներ:

. . . Այժմ, խառնաշփոթության, հուզմունքի և բոլոր կյանքի հաճույքների մեջ. . . եկեք աչքից բաց չթողնենք այն պարտականությունը, որ մենք ունենք այս տղաների և աղջիկների հանդեպ, ովքեր ստեղծվել են Աստծո պատկերով: Նա նրանց հոգիների Հայրն է և նա մեզ պատասխանատվության կենթարկի այն ուսուցման համար, որ նրանք կստանան: Ես հուսով եմ և աղոթում եմ, որ մենք նրանց այնպես ուսուցանենք, որ երբ վերջը գա, մենք կարողանանք ստանալ նրանից այդ օրհնությունը. «Լավ, բարի և հավատարիմ ծառա, մտիր քո Տիրոջ ուրախությունը», և որպեսզի մենք կարողանանք ունենալ մեր սիրելիներին մեզ հետ հավերժորեն:[7]

Կկամենայի պատմել ձեզ մի պատմություն: Մի քանի տարի առաջ Ինդիանայում ապրում էին երկու տղա, երիտասարդ տղամարդիկ, ովքեր աշխատում էին ֆերմաներում, որոնք հինգից յոթ մղոն հեռավորության վրա էին գտնվում միմյանցից: Նրանք աշխատում էին ջանասիրաբար՝ կատարելով իրենց ամենօրյա գործերը՝ կթելով կովերին և այլն: Առաջին տղան մի օր գնաց իր հոր մոտ, երբ 13 թե 14 տարեկան էր և ասաց. «Հայրիկ, ես ուզում եմ քաղաք գնալ: Ուզում եմ տեսնել պայծառ լույսերը: Միթե՞ չեմ կարող երեկոյան վաղ գնալ, եթե ես ջանասիրաբար աշխատեմ և վերջացնեմ իմ գործը»: Հայրն ասաց. «Դու չես կարող դա անել, որովհետև չես կարող անել աշխատանքդ»: Եթե վեր կենամ վաղ լուսաբացին և աշխատեմ ողջ օրը, կարո՞ղ եմ գնալ քաղաք: Դա այնքան էլ հեռու չէ և ես այնտեղ կմնամ մեկ կամ երկու ժամ, իսկ հետո շուտ տուն կգամ»: Հայրն ասաց. «Դե, իհարկե, եթե դու անես քո բոլոր գործերը, ապա կարող ես գնալ»: Հայրեր, հասկացեք այս: Արդյունքն այն էր, որ նա գնաց: Նա քաղաք հասավ, երբ գրեթե մութ էր: Խանութներն ու բանկերը փակ էին: Մեծ քանակությամբ հասարակական սրահներ և խաղատներ բաց էին: Բոլոր կարգին մարդիկ ներսում էին, մեծ մասն իրենց սեփական տներում: Ողջ տականքը փողոցներում էր և այդ վայրերում: Նրանք տեսան այս երիտասարդ տղային ներս գալիս և նրանք տարան նրան իրենց հետ: Շատ չանցած նրանք ցույց տվեցին նրան մի քանի բաներ, որոնք ոչ մի տղա չպետք է տեսնի: Սա նրա փորձառությունն էր: Նա առավ մի բանի համը, որը նրա համար լավ չէր:

Երկրորդ տղան գնաց իր հոր մոտ նույն ձևով: Նա ասաց. «Ես մի օր ուզում եմ քաղաք գնալ: Չե՞ս ուզում, որ ես գնամ տեսնեմ որոշ բաներ, որոնք երբեք չեմ տեսել»: Ես պետք է գնամ մինչև մութն ընկնելը որոշ բաներ տեսնելու համար»: «Տղաս», պատասխանեց հայրը.«կարծում եմ դու իրավունք ունես քաղաք գնալու և իմ կարծիքով դու իրավունք ունես գնալ քո հոր հետ: Դու ընտրիր օրը և ես կօգնեմ քեզ գործերն անել, որպեսզի մենք բավականաչափ վաղ գնանք, որ դու կարողանաս տեսնել իմ ընկերներից մի քանիսին»:

Սա նույն դեպքն է, որի մասին ես խոսում եմ՝ երկու ազարակները միմյանցից հեռու չէին գտնվում: Շաբաթվա ընթացքում նա ընտրեց օրը: Նրանք արեցին գործերը և գնացին քաղաք: Նրանք

տեղ հասան ժամը չորսից մի քիչ առաջ: Նրանք այնտեղ հասան բանկերը փակվելուց առաջ: Տղան հագել էր լավագույն հագուստները: Նրա հայրը տարավ նրան բանկ և ներկայացրեց նրան բանկի տիրոջը, որը սեղմեց նրա ձեռքն ու ասաց. «Երբ քաղաքում լինես, այցելիր մեզ և մենք ուրախ կլինենք հյուրընկալել քեզ»:

Նրա հայրը տարավ նրան գործարար վայրեր, որտեղ նա գործարարությամբ էր զբաղվում, որտեղ մարդիկ նրան սիրալիր ընդունեցին: Երբ նրանք տուն գնացին մի ներկայացում նայելուց հետո, այդ տղան ծանոթություն էր հաստատել համայնքի ամենակարգին մարդկանց հետ: Արդյունքն այն էր, որ երբ նա մեծացավ և գնաց քաղաք, նրա ընկերակցությունը կարգին մարդկանց հետ էր:[8] (Տես առաջարկ 3 էջ 278:)

Ես ուզում եմ առաջարկել ձեզ . . . , որ չկա ժամանակ, որ դուք կարողանաք անցկացնել, ուղի որով կարողանաք օգտագործել ձեր ժամանակը, որն ավելի օգտավետ կարող է լինել, քան ձեր տղաներին և աղջիկներին մեր Երկնային Հոր օրհնություններին արժանի լինելուն ուսուցանելը:[9]

Ծնողի օրինակը կարող է առաջնորդել երեխային դեպի ապահովություն, արդարակեցություն և երջանկություն:

Եկեք մեր երեխաների համար արդարակեցության օրինակներ լինենք, հղենք մեր ընտանեկան աղոթքները և խնդրենք օրհնություններ ուտելիքի վրա: Թող մեր երեխաները տեսնեն, որ որպես ամուսիններ և կանայք մենք միմյանց նկատմամբ սիրով ենք: Քանի դեռ ժամանակ կա օգտվեք հնարավորությունից որպես ամուսիններ և կանայք օրհնելու միմյանց սիրով, բարությամբ և ամեն բանում ձեր օգտակարությամբ: Օգտվեք հնարավորությունից, քանի դեռ ժամանակ կա, ուսուցանելու ձեր որդիներին և դուստրերին, թե ինչպես ապրեն երջանիկ լինելու համար. . . Թող մեր տները լինեն խաղաղության, հույսի և սիրո սրբարաններ:[10]

Ընդամենը մի քանի օր առաջ ես տեսա մի նամակ մի մարդուց, որը, հավանաբար, ապրել էր իր կյանքի կեսը: Գրելով իր հորը նա ասում էր. «Քո հոգատարությունը քո սիրելիների հանդեպ, քո ուսուցումն ինձ, օրինակները, որ դու ես ցույց տվել ինձ, եղել են ինձ համար ոգեշնչման աղբյուր՝ անելու այն, ինչ

«Չկա ժամանակ, որ դուք կարողանաք անցկացնել, ուղի որով կարողանաք օգտագործել ձեր ժամանակը, որն ավելի օգտավետ կարող է լինել, քան ձեր տղաներին և աղջիկներին մեր Երկնային Հոր օրհնություններին արժանի լինելուն ուսուցանելը»:

Տերը կկամենար, որ ես անեմ: Ես զգացել եմ, որ քայլելով քո հետքերով, ես ապահով կլինեմ»: Դա իմաստուն հայր էր, դա օրհնված հայր էր, ով կարողացել էր ցանել իր որդու մտքում այդպիսի վստահություն. . . Հոր վերաբերմունքի շնորհիվ նա առնվազն պատիվ էր ցույց տալիս իր հորը՝ այն օրինակի համար, որ նա էր հանդիսացել տանը, այժմ նա այս Եկեղեցու անսասան անդամներից է: Նա կարողանում է ապրել աշխարհում և պահել Տիրոջ պատվիրանները:Նրա բարիք անելու ձգտումը ոգեշնչվել էր տանը, որում նա ապրում էր: Նա տանը չէր տեսել եսասիրություն, այլ անեսասիրություն: Ծնողները չէին ձգտում վերցնել այն ամենն, ինչ իրենք կարող էին և այն եսասիրաբար պահում իրենց համար, այլ նրանք գնում էին՝ փնտրելով նրանց, ովքեր իրենց կարիքն ունեին՝ քաջալերելով և օրհնելով նրանց: Աշխարհի ողջ զրույցները չէին կարող դնել այդ մարդու սրտում այն, ինչ նա ունի այսօր, բայց դա այն օրինակն էր, որը

դրվել էր իր ծնողների կողմից, նրանց կողմից, ովքեր ապրում էին տանը, որում նա էր ապրում։

Ես կասկած չունեմ, որ կան հարյուրավոր տղամարդիկ և կանայք, նրանցից հազարավորներ, հավանաբար աշխարհում և համայնքներում, որոնցում մենք ապրում ենք, ովքեր կասեին նույն բանն իրենց հայրերի և իրենց մայրերի ուսուցումների մասին։ Բայց ես վախենում եմ, որ կան մեզանից ոմանք, ովքեր աշխարհի սովորույթների ազդեցության տակ են գտնվում և համակվում են այն գաղափարով, որ մենք պետք է հետևենք ամբոխին, անկախ նրանից, թե նրանք ինչի են հավատում կամ անում։ Այդ դեպքում մեր օրինակը չի լինի օրհնություն, այլ կարող է կործանել մեր երեխաների երջանկությունը։[11]

Եկեք վկայություն բերենք մեր ամենօրյա գործերով, ինչպես նաև մեր զրույցներով, որ մենք հավատում ենք, որ սա Հոր աշխատանքն է և աներևակայելի ուրախություն կգա մեզ և երեխաները, որոնք մեծանում են մեր տներում կաճեն հավատքի և խոնարհության մեջ։ Նրանց վրա կավելացվի և զորություն կտրվի մի կողմ շրջել հակառակորդի նետերը, որոնք ուղղված են նրանց դեմ և թշվառության փոխարեն, որը տանջում է մարդկանց որդիներին, մեղսավորության պատճառով, կլինի սփոփանք, խաղաղություն և երջանկություն, և. . . տղամարդիկ և կանայք կբնակեցնեն այս երկիրը, ովքեր կունենան բնավորության ուժ, մի կողմ դնելու կյանքի չարիքները։[12] (Տես առաջարկ 4 էջ 278։)

Սիրելով և ուսուցանելով մեր երիտասարդությանը, մենք կարող ենք օգնել նրանց պաշտպանվել չարից։

Վերջին Օրերի Սրբեր, ուսուցանեք ձեր երեխաներին հետևել բարոյականության օրենքին։ Շրջապատեք նրանց՝ կարծես թե ձեր սիրո բազուկներով, որպեսզի նրանք ոչ մի ցանկություն չզգան, ինչ էլ որ լինի, ճաշակելու չարի այն գայթակղություններից, որոնք շրջապատում են նրանց ամեն կողմից։ . . .

Ինչպիսի արտոնություն է ծնողների համար նստել իրենց սեփական տներում՝ շրջապատված մաքուր տղաների և աղջիկների ընտանիքով, որը նրանց է տրվել մեր Երկնային Հոր կողմից, նրանց հոգիները ծնված լինելով մեր Երկնային Հոր կողմից։ Ինչպիսի ուրախություն է նրանց փոխհարաբերվել

միմյանց հետ, ճաշակելով մեր Երկնային Հոր օրհնությունները և ուրախանալով Նրա Հոգու ընկերակցությամբ և նրանց այնպես ուսումնավարժեցնել իրենց մանկության օրերում, որպեսզի զարգանալով դեպի հասունություն, նրանք պահպանեն իրենց կյանքի մաքրությունը։

Իմ եղբայրներ և քույրեր, ես աղաչում եմ ձեզ, որ ավելի լրջորեն, ավելի խոհեմությամբ, ավելի համբերությամբ, քան երբևէ, պաշտպանեք աճող սերնդին այն ծուղակներից, որը հակառակորդը սարքել է նրանց ոտքերի համար։ Մեր [կինոնկարները], ռադիոհաղորդումները, ամսագրերը, գրքերը և այլն, անհամապատասխան են . . . և մինչև մենք չչեզոքացնենք այդ բաների ազդեցությունը օգտակար ուսուցմամբ և միջավայրով, բերելով երիտասարդությանն այն օգուտները, որոնք առաջանում են լավ տղամարդկանց և կանանց կյանքն իմանալուց, ուսուցանելով նրանց մարգարեների արժանիքները և Հիսուս Քրիստոսի ավետարանի իմաստը, նրանցից մի քանիսը, ում մենք սիրում ենք կարող են հեռանալ մեզանից։ . . .

Եկեք ուսուցանենք մեր երեխաներին մաքուր լինել իրենց կյանքում, լինել ուղղամիտ։ Ուսուցանեք ձեր տղաներին պաշտպանել իրենց քույրերի և իրենց ընկերուհիների առաքինությունը։ Ուսուցանեք ձեր դուստրերին պաշտպանել տղաների առաքինությունը, ում հետ նրանք շփվում են. . . Եկեք ուժեղացնենք, եթե կարելի է օգտագործել այդ տերմինը, դաստիարակելով մեր տղաներին ու աղջիկներին Աստծո Հոգու ներգործության ներքո, որպեսզի հակառակորդն ուժ չունենա նրանց մոլորեցնելու։[13] (Տես առաջարկներ 5 և 6 էջ 278։)

Որպես ընտանիք Ավետարանն ուսումնասիրելը կօգնի մեզ մոտիկ պահել մեր երեխաներին։

Մեր տներում եղբայրներ և քույրեր, մեր արտոնությունն է, մեր պարտականությունը, մեր շուրջը հավաքել մեր ընտանիքներին վայելելու և զորացնելու ու միմյանց աջակցելու, Սուրբ գրությունների ճշմարտություններով ուսուցանվելու համար։ Յուրաքանչյուր տանը երեխաներին պետք է քաջալերել կարդալ Տիրոջ խոսքը, ինչպես որ այն հայտնի է դարձվել բոլոր տնտեսություններում։ Մենք պետք է կարդանք Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը և Թանկագին

Մարգարիտը, ոչ միայն կարդալ այն մեր տներում, այլ նաև բացատրել այն մեր երեխաներին, որ նրանք հասկանան. . .Աստծո գործերը երկրի ժողովուրդների հետ։

Եկեք տեսնենք, թե չե՞նք կարող արդյոք անել ավելին ապագայում, քան այն ինչ արել ենք անցյալում։ Եկեք պարտավորվենք մեր տներում մեր ընտանիքները մեր շուրջը հավաքելու սկզբունքին և գործընթացին։ Թող մեզանից յուրաքանչյուրը հարցնի ինքն իրեն. «Ես արդյոք իմ տանը կատարե՞լ եմ իմ պարտականությունը՝ կարդալով և ուսուցանելով ավետարանը, ինչպես որ դա հայտնի է դարձվել Տիրոջ մարգարեների միջոցով։ Արդյոք երեխաներին ինձ մոտի՞կ եմ պահել և դարձրել տունը հաճելի վայր՝ ակնածանքի, սիրո, փոխըմբռնման և նվիրվածության վայր»։

Եթե չենք արել, եկեք ապաշխարենք մեր անտեսումից և քաշենք մեր ընտանիքներին մեր շուրջը և ուսուցանենք նրանց ճշմարտությունը։ . . .

«Ես իմ տունն արդյոք կարգի բերե՞լ եմ»։ Այս հարցադրումը պետք է լինի յուրաքանչյուրի սրտում։ Ոչ թե «իմ մերձավորն արդյոք դա արե՞լ է», այլ «արդյոք *ես* արե՞լ եմ այն, ինչ Տերը պահանջել է ինձանից»։[14]

Մեր երեխաներն ամենաթանկն են, որ մեր Հայրը շնորհում է մեզ։Եթե մենք կարողանանք առաջնորդել նրանց ոտքերը փրկության արահետով, մեզ և նրանց համար կլինի հավերժական ուրախություն։ . . .

Ուղիներից մեկը, որով մենք կարող ենք նրանց ավելի մոտիկ պահել մեզ՝ միմյանց հետ մեր տներում ավելի հաճախ հանդիպելն է։ Եկեղեցին խնդրել է, որ ամեն շաբաթ առնվազն մեկ օր ընտանեկան երեկոյի համար առանձնացվի ողջ ընտանիքին միմյանց հանդիպելու և վայելելու ընտանեկան հավաքի պարզ վայելքները, և քննարկելու միմյանց հետ այն բաները, որոնք մեծ և հարատև արժեք ունեն։

. . . 1915 թվականին Առաջին Նախագահությունը գրեց այդ մասին «ցցերի նախագահներին, եպիսկոպոսներին և Սիոնի ծնողներին», և ես մեջ կբերեմ այն, ինչ նրանք ասացին.

«Մենք խորհուրդ ենք տալիս և հորդորում «Ընտանեկան երեկոյի» սահմանումը ողջ Եկեղեցով մեկ, որի ժամանակ հայրերն

Եթե ընտանեկան երեկոն լիներ միայն փաստ Վերջին Օրերի Սրբերի մեջ, որքան շատ երջանիկ տներ կլինեին, որտեղ այսօր վիշտ կա և տարաձայնություն ու թշվառություն:

ու մայրերը կարող են տանը հավաքել իրենց տղաներին և աղջիկներին իրենց շուրջը և ուսուցանել նրանց Տիրոջ խոսքը. . . Այս «Ընտանեկան երեկոն» պետք է նվիրված լինի աղոթքին, օրհներգերի երգեցողությանը, երգերի, գործիքային երաժշտության, սուրբ գրությունների ընթերցանությանը, ընտանեկան թեմաների և ավետարանի սկզբունքների վերաբերյալ հատուկ հրահանգավորմանը և կյանքի բարոյական խնդիրներին, ինչպես նաև ծնողների, տան, Եկեղեցու, հասարակության և ազգի հանդեպ երեխաների պարտականություններին և պարտավորություններին»:

Եվ սա էր խոստացված օրհնությունը նրանց, ովքեր կանեին այն ինչ խնդրվել էր.

«Եթե Սրբերը հնազանդվեն այս խորհրդին, մենք խոստանում ենք, որ մեծ օրհնություններ կլինեն արդյունքում: Տանը սերն ու ծնողներին հնազանդությունը կմեծանա: Հավատքը կզարգանա Իսրայելի երիտասարդության սրտերում և նրանք ձեռք կբերեն զորություն ճակատամարտելու չարի ազդեցությունների ու գայթակղությունների դեմ, որոնք պարուրում են նրանց»:

Այս սկզբունքները և խոստումները դեռ մեր առջև են:[15]

Եթե ընտանեկան երեկոն լիներ միայն փաստ Վերջին Օրերի Սրբերի մեջ, եթե շաբաթվա մեկ երեկոն մենք կարողանայինք ապրել մենք մեզանով, Տիրոջ ոգու ազդեցության ներքո, մեր իսկ հավաքներում շրջապատված նրանց կողմից, որոնց Տերը տվել է մեզ և ասել մեզ, հատկապես, որ մենք պետք է հրահանգենք նրանց, որքան շատ երջանիկ տներ կլինեին, որտեղ այսօր վիշտ կա և տարաձայնություն ու թշվառություն: . . .

. . .Երբ մենք դուրս ենք թողնում աշխարհը և դրսի բաները և աղոթքի ազդեցության և գոհաբանության ներքո մենք տալիս ենք մեր տղաներին և աղջիկներին այն հարուստ ճշմարտությունները, որը Տերը պահել է մեզ հետ մեր բարօրության համար և նրանց համար, հավատքի մի իսկական զարգացում կհետևի: Ես հուսով եմ, որ հնարավոր կլինի մեզ համար վերադառնալ, եթե մենք հեռացել ենք այդ խորհրդից: Հավաքենք մեր երեխաներին մեր շուրջը և թող մեր տները լինի Տիրոջ Հոգու համար բնակվելու տեղ: Եթե մենք կատարենք մեր մասը, մենք կարող ենք իմանալ և համոզված լինել, որ մեր Երկնային Հայրը կանի իր մասը:[16] (Տես առաջարկ 7 էջ 279:)

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու: Լրացուցիչ օգնության համար տես էջեր v–viii:

1. Մտածեք 265–267 էջերում գտնվող պատմվածքի մասին: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Ջորջ Ալբերտ Սմիթը կարողացավ ուսուցանել իր դուստր Էդիթին այդպիսի հաջողությամբ: Մտածեք ձեր երիտասարդության մի դեպքի մասին, երբ

ծնողներից մեկն ուսուցանել է ձեզ որևէ բան, որն ազդեցություն է ունեցել ձեր կյանքում: Ինչո՞ւ էր այդ դասն այդքան արդյունավետ եղել:

2. Ուսումնասիրեք ուսմունքների առաջին բաժինը (էջեր 268–269) և Վարդապետություն և Ուխտեր 93.37-40: Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ է Տերը ծնողներին տվել, և ոչ թե այլ կազմակերպությունների, ավետարանն իրենց երեխաներին ուսուցանելու պատասխանատվությունը: Ինչպե՞ս կարող են օգնել ընտանիքի անդամները:Եթե դուք ձեր սեփական երեխաները չունեք, մտածեք ուղիներ, որոնցով կարող եք արդար ազդեցություն լինել Եկեղեցու երիտասարդության համար, ծնողներին աջակցելու միջոցով:

3. Վերանայեք պատմվածքը էջեր 269–271: Ինչպե՞ս են շահում երեխաները, երբ ծնողները ժամանակ են անցկացնում նրանց հետ: Որո՞նք են որոշ «կյանքի հոգսերն ու. . . հաճույքները»:

4. Կարդացեք 271 էջում սկսվող բաժինը: Մտածեք (աշխարհի սովորությունների) ձեր վերաբերմունքի մասին և թե ինչպես այդ վերաբերմունքը կարող է ազդել ձեր երեխաների վրա: Որոնք են այն մի քանի «ամենօրյա քայլերը», որոնք տալիս են առանձնահատուկ ուժեղ վկայություն մեր երեխաների հանդեպ մեր հավատալիքների մասին:

5. Որոնք են այն մի քանի գայթակղությունները, որոնք երեխաները և երիտասարդությունը դիմակայում են ձեր համայնքում: Ուսումնասիրեք 273 էջում սկսվող բաժինը, որոնելով բաներ, որոնք ծնողները, պապիկ տատիկները և մյուսները կարող են անել՝ օգնելու երիտասարդությանը դիմակայելու գայթակղությանը:

6. Նախագահ Սմիթը խորհուրդ է տվել, որ մենք պետք է «ուժեղացնենք» կամ առանձնահատուկ դարձնենք մեր երեխաների դաստիարակությունը Հոգու ազդեցության ներքո (տես էջ 274): Ի՞նչ է դա նշանակում ձեզ համար: Ինչպիսի՞ բաներ կարող են անել ծնողներն առանձնահատուկ դարձնելով իրենց երեխաների դաստիարակությունն արդարակեցությամբ:

7. Էջեր 274–276-ում Նախագահ Սմիթը վերանայում է խոստումներից մի քանիսը, որոնք արվել են ընտանիքներին, որոնք անցկացրել են կանոնավոր ընտանեկան երեկոներ: Ինչպե՞ս են այս խոստումներն իրականացել ձեր ընտանիքներում: Ինչպիսի՞ խորհուրդներ կտայիք որևէ ընտանիքի, որը երբեք ընտանեկան երեկո չի անցկացրել նախկինում, բայց ցանկանում է սկսել:

Թեմային առնչվող սուրբ գրություններ. Առակաց ԻԲ.6, Եսայիա ԾԴ.13, Ենովս 1.1–3, Մոսիա 4.14–15, Ալմա 56.45–48, Վարդապետություն և Ուխտեր 68.25–31, տես նաև «Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին», *Ensign,* Nov. 1995, 102

Օգնություն ուսուցչին. «Զգույշ եղեք չավարտել լավ քննարկումները փորձելով ներկայացնել ձեր պատրաստած ողջ նյութը»: Չնայած կարևոր է ընդգրկել նյութը, բայց ավելի կարևոր է օգնել սովորողներին զգալ Հոգու ազդեցությունը, լուծելու իրենց հարցերը, լայնացնելու ավետարանի իրենց հասկացողությունը և խորացնելու պատվիրանները պահելու իրենց պարտավորությունը» (*«Teaching, No Greater Call»,* 64):

Հղումներ

1. "After Eighty Years," *Improvement Era,* Apr. 1950, 263.
2. Edith Smith Elliott, "No Wonder We Love Him," *Relief Society Magazine,* June 1953, 367.
3. "To the Relief Society," *Relief Society Magazine,* Dec. 1932, 708–9.
4. In Conference Report, Apr. 1926, 145.
5. In Conference Report, Apr. 1933, 72.
6. In Conference Report, Apr. 1937, 36.
7. In Conference Report, Apr. 1926, 146–47.
8. "President Smith Gives Scouting Address," *Deseret News,* Feb. 22, 1947, Church section, 8.
9. In Conference Report, Oct. 1948, 181.
10. In Conference Report, Oct. 1941, 101.
11. In Conference Report, Apr. 1937, 35.
12. In Conference Report, Apr. 1913, 29.
13. In Conference Report, Oct. 1932, 24–25.
14. "The Family Hour," *Improvement Era,* Apr. 1948, 248.
15. "The Family Hour," 201.
16. In Conference Report, Apr. 1926, 145–46.

Հիշեք Տիրոջ օրինակը, որը, խաչի վրա, ասաց.
«Հայր, թողիր դրանց. Որովհետև չգիտեն թէ ինչ են անում»:

«Ձեզանից պահանջվում է ներել»

Ներելով ուրիշներին մենք ազատում ենք մեզ ատելության բեռից և մեզ նախապատրաստում հավերժական կյանքի համար:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

1897 թվականին, երբ Ջորջ Ալբերտ Սմիթը դեռ երիտասարդ տղամարդ էր, ցուցակագրվեց Յուտայի Ազգային Գվարդիայում: Իր մի քանի ընկերների խրախուսանքով, նա դրեց իր թեկնածությունը Գվարդիայում պաշտոն զբաղեցնելու համար, բայց դեպի ընտրություն տանող շաբաթների ընթացքում մի հակառակորդ գվարդիական սկսեց կեղծ լուրեր տարածել մեղադրելով Ջորջ Ալբերտ Սմիթին անբարոյական արարքներում: Դրա հետևանքով Սերժանտ Սմիթը կորցրեց ընտրությունը, որը նա զգում էր պիտի հաղթեր: Իրավիճակն ավելի էր վատթարանում նրանով, որ մարդը, որը կեղծ լուրեր էր տարածում, մի ժամանակ ընկեր էր:

Չնայած նա փորձում էր ուշադրություն չդարձնել, վիրավորանքը լցնում էր Ջորջ Ալբերտ Սմիթի սիրտը դառնությամբ: Նա հաջորդ կիրակի գնաց եկեղեցի, բայց նա զգում էր, որ հաղորդությունը վերցնելը ճիշտ չէր: Նա աղոթեց օգնության համար և հասկացավ, որ պետք է ապաշխարեր այն բարկության համար, որ ինքը զգում էր: Նա որոշեց գտնել իր ընկերոջը և հաշտվել նրա հետ:

Ջորջ Ալբերտ Սմիթն ուղղիղ գնաց այդ մարդու գրասենյակը և ասաց մեղմ ձայնով. «Եղբայրս, ես ուզում եմ, որ դու ներես ինձ քեզ այն ձևով ատելու համար, որ ես եմ ատել քեզ վերջին մի քանի շաբաթների ընթացքում»:

Նրա ընկերոջ սիրտն անմիջապես փափկեց: «Եղբայր Սմիթ, դուք կարիք չունեք ներման, –ասաց նա: – Այդ ես եմ, որ

ձեզանից ներման կարիք ունեմ»: Նրանք սեղմեցին միմյանց ձեռքը և այնուհետև մնացին լավ ընկերներ:[1] (Տես առաջարկ 1 էջ 288:)

Մի քանի տարի անց, Ջորջ Ալբերտ Սմիթը դարձրեց ուրիշներին ներելը իր կյանքի նպատակներից մեկը, երբ նա գրեց իր անձնական նշանաբանը. «Ես գիտակցաբար չեմ վիրավորի որևէ մեկի զգացմունքները, նույնիսկ նրան, որն ինձ գուցե անիրավություն է արել, այլ կձգտեմ նրան բարիք անել և դարձնել նրան իմ ընկերը»:[2]

Նախագահ Սմիթի մոտիկ ընկերներից մեկը նկատել է, որ ներելու ունակությունն իսկապես նրա բնորոշ հատկություններից մեկն էր. «Նա իսկապես ներում էր բոլոր մարդկանց: Իր ողջ կյանքում նա գիտակցում էր Աստծո պատվիրանը. Աստված կների ում նա կների: Ինչ վերաբերում է մեզ, մենք պետք է ներենք բոլոր մարդկանց: Նա կարողանում էր դա անել, իսկ հետո թողնել հարցն աստծուն: Երբ նա ներում էր, ես համոզված եմ, նա մոռանում էր: Երբ մեկը, ով ներում է, կարողանում է մոռանալ, ապա այդ մարդն իսկապես անսովոր մարդ է, իսկապես Աստծո մարդը»:[3]

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Եթե մենք հասկանում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանը, մենք ամենաշատը տրամադրված ենք լինում ներել ուրիշներին:

Կա մի բան, որը մենք կարող ենք ձգտել մշակել և դա միմյանց թերությունները ներելու տրամադրվածությունն է: Ներելու ոգին առաքինություն է, առանց որի մենք երբեք լիովին չենք իրականացնի այն օրհնությունները, որոնք մենք հույս ունենք ստանալ:[4]

Աշխարհիկ մարդիկ չեն հասկանում. . . թե ինչ էր զգում Փրկիչն իր հոգու հոգեվարքի մեջ, նա աղաղակեց առ իր Երկնային Հայրը, ոչ թե դատապարտելու և կործանելու նրանց, ովքեր վերցնում էին իր մահկանացու կյանքը, այլ նա ասաց.

«. . . Հայր, թողիր դորանց. Որովհետև չգիտեն թէ ինչ են անում» (Ղուկաս ԻԳ.34):

Այդ պետք է լինի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բոլոր անդամների վերաբերմունքը: Այդ պետք է լինի Աստծո բոլոր որդիների և դուստրերի վերաբերմունքը և կլինի ինձ թվում է, եթե նրանք լիովին հասկանան փրկության ծրագիրը. . . Մեր սրտերում եղող բարկությունն ու ատելությունը չի բերի մեզ խաղաղություն և երջանկություն:[5]

Տերը մեզ մեծ տեղեկություն է տվել, հայտնի է դարձրել Իր միտքը և կամքը մեզ, ուսուցանել է մեզ բաներ, որոնց մասին աշխարհը չգիտի և մեր ստացած տեղեկության համաձայն, Նա մեզ պատասխանատվության է ենթարկում և ակնկալում, որ մենք ապրենք ավելի բարձր կյանքով, ավելի կատարյալ կյանքով, քան նրանք, ովքեր այնքան լիովին չեն հասկանում Ավետարանը, որքան մենք: Ներման ոգին մի բան է, որը Վերջին Օրերի Սրբերը օգտավետ ձևով կարող են ավելի լիարժեքորեն ցույց տալ միմյանց հանդեպ:. . . Մենք պետք է գտնվենք մի վիճակում, երբ կարող ենք ներել մեր եղբայրներին:[6] (Տես առաջարկ 2 էջ 288:)

Երբ մենք ներում ենք միմյանց, մենք ցույց ենք տալիս մեր շնորհակալությունը Երկնային Հոր ներման համար, որ նա հասցնում է մեզ:

(Ուրիշներին ներելու) այս հարցի հետ կապված ես կկարդամ Սբ. Մատթեոսի տասնութերորդ գլխից մի քանի հատվածներ: Թվում է Առաքյալները Տիրոջ հետ էին այդ ժամանակ, երբ Պետրոսը եկավ Նրա մոտ և ասաց.

«Տէր, քանի՞ անգամ եթէ իմ եղբայրն ինձ դէմ մեղք անէ, ես ներեմ նորան. Մինչեւ եօ՞թն անգամ:

Յիսուսը նորան ասեց. Չեմ ասում քեզ, մինչև եօթն անգամ այլ մինչեւ եօթանասուն անգամ եօթը» (Մատթեոս ԺԸ.21–22):

Այդ ժամանակ Փրկիչը տվեց մի առակ. . . երկու մարդկանց մասին: Մարդկանցից մեկը պարտք էր իր Տիրոջը փողի մեծ գումար և նա եկավ նրա մոտ և ասաց նրան, որ չէր կարող վճարել իր պարտքը և խնդրեց, որ իր պարտքը ներվեր: Այդ ծառայի Տերը խղճաց նրան և ներեց պարտքը: Այս մարդը, որին ներվեց, ուղիղ գնաց և գտավ մի ընկեր ծառայի, ով նրան պարտք էր մի փոքրիկ գումար և նա պահանջեց նրան վճարել: Խեղճ մարդն ի

վիճակի չէր կատարել իր պարտականությունը և նա իր հերթին խնդրեց, որ նա ներեր իր պարտքը: Բայց նա չներվեց, ընդհակառակը նա վերցվեց և բանտ տարվեց, մեկի կողմից, որն արդեն ներվել էր իր տիրոջ կողմից: Երբ մյուս ընկեր ծառաները տեսան, թե ինչ արվեց, նրանք գնացին տիրոջ մոտ այդ մարդու և ասացին նրան և նա բարկացավ ու հանձնեց նրան, ում նա ներել էր տանջանքի, մինչև նա վճարեր այն ամենը, ինչ պարտական էր: Նրա հոգին բավականաչափ մեծ չէր գնահատելու իրեն ցույց տրված ողորմածությունը և այդ գթության պակասի համար նա կորցրեց ամեն ինչ: (Տես Մատթեոս ԺԸ.23–35:)

Երբեմն մենք գտնում ենք մեր միջև բարձրացող փոքրիկ դժվարություններ, և մոռանում այն համբերությունը, որը մեր Երկնային Հայրը գործադրում է մեր հանդեպ և մեծացնում մեր սրտերում որոշ չնչին բաներ, որոնք մեր եղբայրն ու քույրը կարող է արած կամ ասած լինեն մեր մասին: Մենք ոչ միշտ ենք ապրում այն օրենքով, որը Տերն է կամենում մեզանից, որ հետևենք այս հարցերի վերաբերյալ: Մենք մոռանում ենք պատվիրանը, որ Նա տվել է Առաքյալներին աղոթքի խոսքերով, որտեղ նրանց ասվել է աղոթել, որպեսզի կարողանան ներվել իրենց պարտքերը, ինչպես իրենք են ներում իրենց պարտք եղողներին (տես Մատթեոս Զ.12): Ես զգում եմ, որ մենք պետք է շատ բան սովորենք սրա վերաբերյալ: Մենք չենք ենթարկվում այնքան լիակատար ձևով, որքան պարտավոր ենք Երկնային Հոր այս պահանջներին:[7] (Տես առաջարկ 3 էջ 288:)

Ընտրելով չվիրավորվել մենք մեր սրտերից մաքրում ենք անբարյացակամության բոլոր զգացումները:

Մեզ ուսուցանվել է սիրել մեր թշնամիներին և աղոթել նրանց համար, ովքեր անգթորեն շահագործում են մեզ և չար խոսում մեր մասին (տես Մատթեոս Ե.44). . . Երբ դուք անարգվում եք, մի անագեք ի պատասխան: Երբ ուրիշները չար են խոսում ձեր մասին, խղճացեք նրանց և աղոթեք նրանց համար: Հիշեք Աստվածային Տիրոջ օրինակը, ով, երբ կախված էր դաժան ծառից, ասաց. «Հայր, թողիր դորանց. Որովհետեւ չգիտեն թէ ինչ են անում»:[8]

Երբեմն որևէ իշխանավոր եղբայր ինչ-որ ձևով վիրավորում է Եկեղեցու անդամներից մեկին, հավանաբար, ինքը չիմանալով

դրա մասին, և մեր Հոր այդ զավակը լռելյայն շարունակում է ցավ զգալ, փոխարենն անելու այն, ինչ Տերն է պատվիրել՝ գնալու վիրավորող մարդու մոտ և ասելու նրան բարությամբ իր սրտի զգացմունքները, տալով այդ եղբորը հնարավորություն ասելու իրեն. «Ցավում եմ, որ վիրավորել եմ քեզ և ես ցանկանում եմ, որ դու ներես ինձ»: Արդյունքն այն է, որ որոշ դեպքերում մենք հայտնաբերում ենք գոյություն ունեցող զայրացած զգացմունքներ, որոնք հրահրվել են սատանայի կողմից:[9] (Տես առաջարկ 4 էջ 288:)

Մենք անողորմ զգացմունքներ չունենք մեր մերձավորներից որևէ մեկի հանդեպ, մենք դրա առիթը չունենք: Եթե նրանք մեզ սխալ են հասկանում, սխալ են մեջբերում և հալածում են մեզ, մենք պետք է հիշենք, որ նրանք Տիրոջ ձեռքերում են. . . Այսպիսով՝ երբ մենք ճաշակում ենք Տիրոջ Ընթրիքի հաղորդությունից. . . եկեք մաքրենք մեր սրտերը միմյանց և մեր եղբայրների և քույրերի հանդեպ անբարյացակամության բոլոր զգացումներից, ովքեր մեր հավատքից չեն:[10]

Ներելով ուրիշներին մենք պատրաստվում ենք սելեստիալ արքայության համար:

Թող մեզանից յուրաքանչյուրն ապրի այն ձևով, որպեսզի հակառակորդն իշխանություն չունենա մեզ վրա: Եթե դուք ունեք միմյանցից տարբերություն, եթե ձեր մեջ եղել են տարաձայնություններ և ձեր մերձավորները կարգավորում են դրանք հենց որ հնարավորինս կարողանում են, Տիրոջ Հոգու ազդեցության ներքո, որպեսզի երբ որ ժամանակը գա ինչպես դուք այնպես էլ ձեր հետնորդները, ովքեր կարող է հետևում են ձեզ, պատրաստվեք ստանալ ժառանգություն սելեստիալ արքայությունում:[11]

Վարդապետություն և Ուխտեր գրքում մենք գտնում ենք հատված ներման այս հարցի հետ կապված, որտեղ Տերը տալիս է պատվիրան, այն պարունակվում է վաթսունչորս բաժնում և վերաբերում է մեզ այսօր: Այն ասում է հետևյալը.

«. . . Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ես՝ Տերս, ներում եմ մեղքերը նրանց, ովքեր խոստովանում են իրենց մեղքերն իմ առաջ և ներում են խնդրում, ովքեր չեն մեղանչել ի մահ:

«Եթե որևէ տարաձայնություն է եղել ձեր և ձեր մերձավորների միջև, կարգավորեք դրանք հնարավորինս այնքան շուտ, որքան կարող եք՝ Տիրոջ Հոգու ազդեցության ներքո»:

Իմ աշակերտները, հին օրերում, մեղադրանք էին փնտրում մեկմեկու դեմ և միմյանց չէին ներում իրենց սրտերում. և այս չարիքի համար նրանք չարչարվեցին և դառնորեն խրատվեցին:

Ուստի, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է ներեք միմյանց. Քանզի, ով իր եղբորը չի ներում նրա զանցանքները, դատապարտված կանգնած է Տիրոջ առաջ. Քանզի նրա մեջ ավելի մեծ մեղք է մնում:

Վերջին մեջբերվող հատվածն այն մեկն է, ինչը ես կշեշտադրեի.

«Ես, Տերս, կներեմ, ում որ կներեմ, բայց ձեզանից պահանջվում է ներել բոլոր մարդկանց,

Եվ դուք պետք է ասեք ձեր սրտերում. Թող Աստված դատի իմ և քո միջև, և հատուցի քեզ՝ քո գործերի համեմատ» (ՎԿՈ 64.7–11):

Եթե մեր կյանքն այնպիսին լիներ, երբ մենք տարբերվեինք մեր դրացուց, եթե մենք փոխարենը ինքներս մեզ որպես

դատավորներ կարգելու մյուսների դեմ կարողանայինք ազնվորեն և բարեխղճորեն դիմեինք մեր Երկնային Հորը և ասեինք. «Տեր, դատիր իմ և իմ եղբոր միջև, դու գիտես իմ սիրտը, Դու գիտես, որ ես բարկության զգացում չունեմ նրա դեմ, օգնիր որ մենք կարողանանք միանման տեսնել և տուր մեզ իմաստություն, որպեսզի մենք կարողանանք հաղորդակցվել արդարորեն միմյանց հետ», որքան քիչ տարաձայնություններ կլինեին մեր մեջ և ինչպիսի ուրախություն և օրհնություններ կգային մեզ: Բայց փոքր դժվարություններ բարձրանում են ժամանակ առ ժամանակ, որոնք խանգարում են մեր ամենօրյա կյանքի հավասարակշռությունը և մենք շարունակում ենք դժբախտ լինել, որովհետև մենք անպատշաճ ազդեցություն ենք փայփայում և չունենք գթություն: . . .

Այժմ ես խոսում եմ ձեզ հետ ձեր ընտանիքների վերաբերյալ,- եթե մարդիկ զարկեն ձեզ կամ ձեր ընտանիքներին, մեկ անգամ, և դուք համբերությամբ տանեք ու չանարգեք նրանց, ոչ էլ փնտրեք վրեժ լուծել, դուք պիտի վարձատրվեք.

Բայց եթե դուք համբերությամբ չտանեք, այն ձեզ կհամարվի որպես ձեզ համար չափված արդար չափ» [ՎԵՈՒ 98.23–24]:

Սա ևս Տիրոջ խոսքն է մեզ: Եթե մենք ապրենք այս օրենքի համաձայն, մենք կաճենք շնորհքով և ուժով օրեցօր և մեր Երկնային Հոր բարեհաճության մեջ: Հավատքը կմեծանա մեր երեխաների սրտերում: Նրանք կսիրեն մեզ մեր կյանքի շիտակության և ազնվության համար, և նրանք կուրախանան, որ նրանք ծնվել են այդպիսի ծնողներից: Ես ասում եմ ձեզ, որ այս պատվիրանը չի տրվել պարապ տեղը, քանզի Տերը հայտարարել է, որ Նա չի տալիս որևէ օրենք անտարբերորեն, այլ ամեն օրենք տրվում է, որպեսզի այն պահվի և մեր կողմից կիրառվի կյանքում:

Մենք այս կյանքում կլինենք միայն կարճ ժամանակով: Մեզանից ամենաերիտասարդներն ու ամենաուժեղներն ուղղակի պատրաստվում են մյուս կյանքի համար և նախքան մեր Հոր փառքը մտնելը և օրհնությունների վայելելը, որոնք մենք հույս ունենք ստանալ հավատարմության միջոցով, մենք պետք է ապրենք համբերության օրենքներով և գործադրենք ներում նրանց հանդեպ, ովքեր օրինազանցել են մեր դեմ և հեռացնենք մեր սրտերից նրանց հանդեպ ատելության բոլոր զգացումները:

«Եվ բացի այդ, եթե ձեր թշնամին զարկի ձեզ երկրորդ անգամ, և դուք չանարգեք ձեր թշնամուն և տանեք այն համբերությամբ, ձեր վարձքը կլինի հարյուրապատիկ։

Եվ բացի այդ, եթե նա զարկի ձեզ երրորդ անգամ, և դուք դա տանեք համբերությամբ, ձեր վարձքը քառապատիկ կավելացվի ձեզ» [ՎևՈւ 98.25–26]։

Թող որ մենք ունենանք Տիրոջ Հոգին մեր մեջ բնակված, որ մենք կարողանանք ներել բոլոր մարդկանց ինչպես Նա է պատվիրել, ներել ոչ միայն մեր շուրթերով, այլ մեր սրտի խորքերում, ամեն զանցանք, որ արվել է մեր դեմ։ Եթե մենք անենք դա կյանքի ընթացքում, Տիրոջ օրհնությունները կմնան մեր սրտերում և մեր տներում։[12] (Տես առաջարկ 5)։

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար տես էջեր v–viii։

1. Խորհեք էջ 281-ում գտնվող պատմվածքի մասին և կարդացեք 3 Նեփի 12.22–24։ Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Տերը պահանջում, որ մենք հաշտ լինենք մեր եղբայրների և քույրերի հետ, նախքան Իր մոտ գալը։
2. Էջեր 282–283 Նախագահ Սմիթը բացատրում է, որ փրկության ծրագրի մեր գիտելիքը պետք է օգնի մեզ ավելի ներողամիտ լինել։ Ինչո՞ւ եք կարծում, որ դա այդպես է։ Ինչպե՞ս ենք մենք «մտնում դրության մեջ» (էջ 283), որում մենք կարող ենք ներել ուրիշներին։
3. Երբ ուսումնասիրեք այն բաժինը, որը գտնվում է 283 էջում, մտածեք այն ժամանակի մասին, երբ Երկնային Հայրը ներեց ձեզ։ Ինչո՞ւ եք կարծում, որ երբ մենք ձախողվում ենք ներել ուրիշներին, դա դարձնում է մեզ անարժան այն ներմանը, որին մենք ենք ձգտում։
4. Կարդացեք երկրորդ լրիվ պարբերությունը էջ 284-ում։ Ի՞նչն է մեզ խանգարում հաշտության մեջ լինել Եկեղեցու

առաջնորդի կամ որևէ մեկ ուրիշի հետ, որը գիտակցաբար կամ անգիտակցաբար վիրավորել է մեզ: Ի՞նչ կարող ենք անել այս դժվարությունները հաղթահարելու համար:

5. Վերանայեք ուսմունքների վերջին բաժինը (էջեր 285–288): Ինչպե՞ս է ներելու մեր հոժարակամությունը նախապատրաստում մեզ սելեստիալ արքայության համար: Ի՞նչ ձևերով են մեր ընտանիքներն օրհնվում, երբ մենք ներում ենք ուրիշներին:

Թեմային առնչվող սուրբ գրություններ. Մատթեոս Ե.23–24, 38–48, Զ.12, 14–15, Է.1–5, ԺԸ.15, 1 Նեփի 7.16–21,Վարդապետություն և Ուխտեր 42.88

Օգնություն ուսուցչին. «Երբ մի անձնավորություն հարց է տալիս, մտածեք հրավիրել մյուսներին պատասխանել փոխարենը ինքներդ պատասխանելու: Օրինակ կարող եք ասել. «Սա հետաքրքիր հարց է: Ի՞նչ են կարծում ձեզանից մնացածները», կամ «Կարո՞ղ է որևէ մեկը օգնել այս հարցում» (*Teaching, No Greater Call,* 64):

Հղումներ

1. See Merlo J. Pusey, “The Inner Strength of a Leader,” *Instructor,* June 1965, 232.
2. “President George Albert Smith’s Creed,” *Improvement Era,* Apr. 1950, 262.
3. Matthew Cowley, in Conference Report, Apr. 1951, 167.
4. “The Spirit of Forgiveness,” *Improvement Era*, Aug. 1945, 443.
5. In Conference Report, Oct. 1945, 169.
6. In Conference Report, Oct. 1905, 27.
7. In Conference Report, Oct. 1905, 27.
8. In Conference Report, Oct. 1904, 65–66.
9. In Conference Report, Oct. 1905, 27.
10. In Conference Report, Oct. 1906, 50.
11. Address given at Mexican mission conference, May 26, 1946, George Albert Smith Family Papers, University of Utah, box 121, page 288.
12. In Conference Report, Oct. 1905, 27–28, 30.

«Խաղաղություն եմ թողում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. Ոչ թե ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. Ձեր սիրտը չխռովի և չվախենա» (Հովհաննես ԺԴ.27):

Արդար ապրելակերպ վտանգավոր ժամանակներում

Ավետարանին մեր հավատարմության միջոցով մենք կարող ենք ապահովություն գտնել մեր օրերի վտանգներից և լինել դրական ազդեցություն աշխարհում:

Ջորջ Ալբերտ Սմիթի կյանքից

Ջորջ Ալբերտ Սմիթի ծառայությունը՝ որպես Բարձրագույն Իշխանավոր, ընդգրկում է 20-րդ դարի առաջին մասի մեծ մասը: Այս ժամանակահատվածում աշխարհը տեսավ շատ ամայացնող և աղետալի իրադարձություններ, ներառյալ Մեծ Դեպրեսիան և երկու համաշխարհային պատերազմները: Այս աղետները, համատեղ նրա հետ ինչ նա համարում էր հասարակությունում համատարած բարոյական քայքայվածություն, ստիպել է Նախագահ Սմիթին ասել ավելի քան մեկ անգամ. «Այս աշխարհը կրիտիկական վիճակում է»:[1] Նա աշխարհիկ իրադարձություններում տեսնում էր վերջին օրերի վերաբերյալ մարգարեությունների իրականացումը և նա համոզված էր, որ միակ հույսը խաղաղության համար աշխարհում Աստծո օրենքներին հնազանդությունն էր: I Համաշխարհային պատերազմի բարձրակետին նա նախազգուշացրեց. «Պատերազմը չի դադարի և պայքարն այս աշխարհում չի վերջանա, մինչև մարդկանց զավակները չապաշխարեն իրենց մեղքերից և դառնան դեպի Աստված և ծառայեն նրան ու պահեն նրա պատվիրանները»:[2]

Այս դժվար ժամանակների ընթացքում Նախագահ Սմիթը պարզեց, որ շատ մարդիկ հուսահատ էին դարձել: Նա զեկուցեց.«Իմ արտոնությունն էր լինել [Միացյալ Նահանգների] տարբեր մասերում» և հազվադեպ է պատահում, որ մարդ գտնի ոմանց, ովքեր չափազանց վատատես չեն, այն պայմանների

պատճառով, որոնց վրա մենք թվում է վերահսկողություն չունենք»:[3] Չնայած նա ընդունում էր, որ պատերազմը, բնական աղետներն ու հոգևոր վտանգը վերջին օրերի ապրելակերպի մասն են կազմում, Նախագահ Սմիթն ուսուցանեց Սրբերին, որ նրանք կարող էին խուսափել այդ վտանգավոր ժամանակների թշվառությունից ապրելով ավետարանով և դիմակայելով գայթակղությանը:

Նա նաև լավատեսությամբ էր տոգորված իր հավատքով, որ Վերջին Օրերի Սրբերը կարող էին հզոր ազդեցություն ունենալ իրենց շրջապատող աշխարհի վրա: Նա ուսուցանեց, որ Սրբերը չպետք է պարզապես ընդունեն աշխարհի իրավիճակը, այլ պետք է ակտիվ մնան իրենց համայնքներում և ձգտեն իրենց ազդեցությունը զգալի դարձնել, չնայած ընդդիմությանը, որ նրանք կարող է դիմակայեն: «Մենք բոլորս այս աշխարհն ավելի լավ վայր դարձնելու պարտականության տակ ենք գտնվում այնտեղ մեր ապրած լինելու համար», - ասել է նա:[4]

Քույր Բելլ Ս. Սփաֆորդը՝ Սփոփող Միության գերագույն նախագահը կիսվեց մի փորձառությամբ, որի ժամանակ Նախագահ Սմիթն ուսուցանեց նրան այս սկզբունքը: Իր կոչմանը կանչվելուց ոչ շատ անց, Քույր Սփաֆորդը տեղեկացվեց մի ժողովի մասին, որը պետք է տեղի ունենար Նյու Յորք Սիթիում Կանանց Ազգային Խորհրդի կողմից: Սփոփող Միությունն այդ խորհրդի անդամ էր եղել շատ տարիների ընթացքում, բայց վերջերս մի քանի այլ անդամներ թշնամական էին եղել Եկեղեցու հանդեպ և նեղացրել էին Վերջին Օրերի Սրբերի պատգամավորներին իրենց ժողովներում: Այդ պատճառով Քույր Սփաֆորդը և նրա խորհրդականները զգում էին, որ Սփոփող Միությունը պետք է դադարեցներ իր անդամակցությունը խորհրդում, և նրանք մի երաշխավորագիր գրեցին, արտահայտելով իրենց տեսակետները: Հետագայում Քույր Սփաֆորդը հիշել է.

«Մի առավոտ մենակ գնացի տեսակցության՝ տեսնվելու Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթի հետ, վերցնելով երաշխավորագիրն ինձ հետ, պատճառաբանությունների մի ցուցակի հետ, թե ինչու էր գրվել այդ երաշխավորագիրը: Նախագահին ուշադիր կարդաց տպված նյութը: Ապա նա հարցրեց. «Սա արդյոք այն կազմակերպությունը չէ, որին քույրերը միացել են նախքան դարի սկիզբը»:

Ես ասացի. «Այո, պարոն»:

Նա ասաց. «Ուրեմն ես ճի՞շտ եմ հասկանամ, որ դուք այժմ ցանկանում եք դադարեցնել այդ անդամակցությունը»:

Ես ասացի. «Այո, պարոն»: Ապա ավելացրեցի. «Դուք գիտեք, Նախագահ Սմիթ, մենք ոչինչ չենք ստանում այդ Խորհրդից»:

Նախագահն ինձ նայեց զարմացած: Նա ասաց. «Քույր Սփաֆորդ, դուք միթե՞ միշտ մտածում եք այն տեսակետից, թե ինչ եք ստանում: Չե՞ք կարծում, որ երբեմն լավ է մտածել այն տեսակետից, թե ինչ պետք է տաք: Ես հավատում եմ, – շարունակեց նա, – որ մորմոնական կանայք տալու բան ունեն աշխարհի կանանց, և որ նրանք կարող են նաև սովորել նրանցից: Ձեր անդամակցությունը դադարեցնելու փոխարեն ես առաջարկում եմ, որ դուք վերցնեք ձեր կազմակերպության ամենաունակ անդամներից և մասնակցեք այդ ժողովին»:

Ապա նա ասաց շեշտելով. «Ձեր ազդեցությունը զգալի՛ դարձրեք»:[5]

Քույր Սփաֆորդը հնազանդվեց այս խորհրդին և հետագայում նշանակվեց Կանանց Ազգային Խորհրդի ղեկավար պաշտոններում, վերջում ընտրվելով դրա նախագահ: (Տես առաջարկ 1 էջ 300:)

Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները

Լուրջ դժվարություններ են կանխագուշակվել վերջին օրերի համար:

Մեզ ասվել է, որ վերջին օրերում լուրջ դժվարություններ կառաջանան. . . Մենք ոչ միայն նախազգուշացվել ենք սուրբ գրությունների միջոցով, որոնք տրվել են Փրկչի օրերում և այս ժամանակից առաջ և նրանք, որոնք տրվել են նրանից հետո, բայց մեր իսկ օրերում և դարում Տերը խոսել է և մեր Երկնային Հոր հայտնությունները գտնվում են Վարդապետություն և Ուխտերում: Եթե մենք կարդանք այս հայտնությունները մենք կիմանանք, որ այն փորձառությունները, որոնցով մենք անցնում ենք, կանխագուշակվել են: . . .

. . .Ամենօրյա մամուլը մեզ բերում է աղետի պատմություններ, որոնք ամենուր են՝ ծովը լինելով փոթորկահույզ և կյանքերի

կորուստ նրա վրա, երկրաշարժեր, մեծ պտտահողմեր, որոնց մասին մեզ ասվել է, որ տեղի կունենան վերջին օրերում և ինձ իսկապես թվում է, եղբայրներ և քույրեր, եթե մարդիկ լուրջ մտածեն, եթե նրանք կարդան սուրբ գրությունները, նրանք կիմանան, որ այն իրադարձությունները, որոնք Տերն ասել է պիտի տեղի ունենան վերջին օրերում, տեղի են ունենում: Թզենին, անշուշտ, առաջ է բերում իր տերևները (տես Ջոզեֆ Սմիթ— Մատթեոս 1.38–39), և նրանք ովքեր զգույշ են, պետք է իմանան, որ ամառը մոտիկ է, որ այն բաները, որոնք Տերը կանխագուշակել է, որպես իր երկրորդ գալստին նախորդող, այժմ տեղի են ունենում:[6]

Մենք դեռ վտանգի մեջ ենք: Այս աշխարհը պետք է զբաղվի տնային մաքրությամբ մինչև Երկնային Հոր որդիներն ու դուստրերն ապաշխարեն իրենց մեղքերից և դառնան դեպի նա: Եվ դա նշանակում է Վերջին Օրերի Սրբերը կամ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները բոլոր մնացածի հետ միասին, բայց մենք պարտավոր ենք ամենից առաջ օրինակ ծառայել:[7] (Տես առաջարկ 2 էջ 300:)

Դեպի խաղաղություն միակ ուղին Հիսուս Քրիստոսի ավետարանն է:

Կա միայն մեկ սպեղանի համաշխարհային թշվառության համար, բալասան աշխարհի հիվանդության համար: Դա Հիսուս Քրիստոսի ավետարանն է, կյանքի և ազատության կատարյալ օրենքը, որը վերականգնվել է կրկին՝ ի կատարումն Սուրբ գրությունների:[8]

«Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. Ոչ թե ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. Ձեր սիրտը չխռովի և չվախենա» (Հովհաննես ԺԴ.27):

Սրանք վերահաստատող խոսքեր են Խաղաղության Իշխանից իր հավատարիմ հետևորդներին: Անշուշտ, մարդիկ ոչնչի կարիք ավելի շատ չունեն, քան խաղաղության և երջանկության և երկյուղից զերծ սրտերի օրհնություններից: Եվ սրանք առաջարկվում են մեզանից բոլորին, եթե մենք միայն ճաշակողներ լինենք դրանցից:

Երբ ավետարանը վերականգվեց երկրի վրա այս տնտեսությունում, Տերը կրկնեց այն, ինչ նա ասել էր այնքան շատ

անգամներ Հին և Նոր Կտակարաններում, որ խաղաղության և երջանկության գինն արդարակեցությունն է: Չնայած այս գիտելիքին, կան շատերը, ովքեր երևում է մտածում են, որ մենք կարող ենք ձեռք բերել երջանկություն ինչ-որ այլ ուղով, բայց մենք բոլորս պետք է իմանանք մինչև այժմ, որ չկա այլ ուղի: Եվ, այնուամենայնիվ, իր խորամանկ նենգությամբ սատանան համոզել է մարդկության մեծամասնությանը հեռանալ ուղուց, որը կապահովի երջանկություն և նա դեռևս գործում է:Արդարության հակառակորդը երբեք չի քնում:

Բայց հետևելով Տիրոջ ուսմունքներին, դառնալով դեպի նա և բարիք գործելով,մենք կարող ենք ունենալ խաղաղություն և երջանկություն ու բարգավաճում: Եթե մարդկությունը սիրի միմյանց, ատելությունը և անբարյացակամությունը, որոնք այնքան շատ են գոյություն ունեցել աշխարհում, կվերանան:[9]

Այս անկայուն օրերում, երբ մարդիկ ետ ու առաջ են վազում ինչ-որ մի նոր ծրագրի համար, որի միջոցով կարող է աշխարհ բերվել խաղաղություն, իմացեք սա, որ միակ դեպի խաղաղություն տանող ուղին այս աշխարհի համար մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանի ուղին է: Չկա մեկ ուրիշը. . . Ճշմարտության իմացությանը տիրանալն արժե ողջ աշխարհի ոսկին, իմանալ, որ մենք ապահով մայրուղու վրա ենք, երբ մենք պարտականության մայրուղու վրա ենք ինչպես կանխորոշվել է մեր Երկնային Հոր կողմից և իմանալ, որ մենք կարող ենք շարունակել այնտեղ, եթե կամենանք, անկախ ազդեցություններից և դրդապատճառներից, որոնք կարող են առաջարկվել նրանց կողմից, ովքեր չեն նշանակվել լինել մեր առաջնորդները, օրհնություն է, որն անգին է:[10]

Մենք ապրում ենք այնպիսի օրերում, երբ սուրբ գրությունները իրականանում են ազգերի մեջ, որոնցում Տերն ասում է իր մարգարեներից մեկի միջոցով, որ վերջին օրերում «. . . պիտի փչանայ նորանց իմաստունների իմաստութիւնը, եւ հանճարեղների հանճարը պիտի խափանուի» (Եսայիա ԻԹ.14): Աշխարհի ողջ իմաստությամբ հանդերձ, ոչ մի խումբ խաղաղության համար մինչև այժմ չի կարողացել ցույց տալ ուղին համոզվածությամբ, որ դա է ուղին: Մենք. . . բախտավոր ենք իմանալ, որ կա ճանապարհ խաղաղության համար, որն ինքնին կարող է առաջացնել արդյունք և դա Աստծո պատվիրանները պահելն է, ինչպես որ այն հայտնի է դարձվել մարդկանց զավակներին

հին դարերում և մեր օրում: Եթե այդ ուղուն հետևեին, բոլոր խնդիրները, որոնք այնքան լուրջ են աշխարհում կարող են լուծվել և խաղաղություն կգա այս դժբախտ երկրին:[11]

Չնայած աշխարհը կարող է լցված լինել թշվառությամբ և երկինքները խավար հավաքեն և վառվռուն կայծակներ ճայթեն և երկիրը տատանվի կենտրոնից մինչև շրջագիծը, եթե մենք իմանանք, որ Աստված ապրում է և մեր կյանքերն արդար են, մենք երջանիկ կլինենք, անասելի խաղաղություն կլինի, որովհետև մենք գիտենք, որ մեր Հայրը հավանում է մեր կյանքը:[12] (Տես առաջարկ 3 էջ 300:)

Մենք կարիք չունենք վախենալու, եթե մենք անենք այն, ինչ Տերն է խնդրել մեզ անել:

Մենք կարիք չունենք վախենալու, եթե մենք անենք այն, ինչ Տերն է խնդրել մեզ անել: Սա Նրա աշխարհն է: Բոլոր տղամարդիկ և կանայք ենթակա են Նրան: Չարի բոլոր զորությունները կվերահսկվեն հանուն Նրա ժողովրդի, եթե նրանք պատվեն Նրան և պահեն Նրա պատվիրանները:[13]

Եթե մենք վստահություն ունենանք մեր Երկնային Հոր հանդեպ, եթե մենք ունենանք Նրա սերը, եթե մենք արժանի լինենք Նրա օրհնություններին, աշխարհի բոլոր բանակները չեն կարող կործանել մեզ, չեն կարող կոտրել մեր հավատքը և չեն կարող հաղթել Եկեղեցուն, որը կոչվում է Աստծո Որդու անունով:

Դ Թագավորաց տասնիններորդ գլխում կարդում ենք, թե ինչպես էր ասորական Սենեքերիմ թագավորը ձգտում տապալել Երուսաղեմը: Եզեկիա թագավորը, որը ներկայացնում էր Իսրայելը, աղաչեց Տիրոջն ազատման համար, մինչ Սենեքերիմը ծաղրեց նրան, ասելով. Մի կարծիր, որ քո Աստծուն ուղղված աղոթքներդ կարող են օգնել ձեզ: Յուրաքանչյուր վայր, որտեղ ես եղել եմ և գրավել արդեն, նրանք աղոթում էին: Դու անօգնական ես: Եվ հաջորդ առավոտ ասորական բանակի մեծ մասը մահացած գտնվեց գետնին ընկած, իսկ Երուսաղեմը պահպանվեց Տիրոջ կողմից (տես Դ Թագավորաց ԺԹ.10–20, 35): Նա է մեր ուժը. . . ձեր Հայրը և իմ, Հայրն ամենքի, եթե մենք միայն արժանի լինենք, Նա կպահպանի մեզ, ինչպես Նա արեց Հելամանի որդիներին (տես Ալմա 57.24–27) և ինչպես Նա պաշտպանեց

Դանիելին առյուծներից (տես Դանիել Զ), և երեք եբրայեցի պատանիներին շիկացած հնոցից (տես Դանիել Գ) և վեց հարյուր հազար Աբրահամի հետնորդներին, երբ նրանց դուրս բերեց Եգիպտոսից Մովսեսի ղեկավարության ներքո և խեղդեց Փարավոնի բանակը Կարմիր ծովում (տես Ելից ԺԴ.21–30)։ Նա այս տիեզերքի Աստվածն է։ Նա մեր բոլորի Հայրն է։ Նա ամենակարող է և Նա խոստանում է մեզ պաշտպանություն, եթե մենք արժանի ապրենք դրան։[14]

Անկախ նրանից, որ ամպեր են հավաքվում, անկախ նրանից թե ինչ պայմաններ են հայտնվում աշխարհում, այստեղ՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում, որտեղ էլ որ լինենք մենք, եթե պատվենք և պահենք Աստծո պատվիրանները, այնտեղ կլինի պաշտպանություն չարի ուժերից և տղամարդկանց և կանանց կթույլատրվի ապրել երկրի վրա, մինչև նրանց կյանքը վերջանա պատվով և փառքով, եթե նրանք պահեն մեր Երկնային Հոր պատվիրանները։[15] (Տես առաջարկ 4 էջ 300։)

Մեր տները կարող են լինել խաղաղ, սուրբ վայրեր նույնիսկ աղետների մեջ։

Կարծում եմ, որ ամենուր առկա թշվառությամբ հանդերձ, Վարդապետություն և Ուխտերի առաջին բաժնում Տիրոջ կատարած կանխագուշակմամբ, որ «խաղաղությունը պիտի վերցվի երկրի վրայից», (ՎևՈւ 1.35) մենք պետք է որ զգանք, որ այդ ժամանակը եկել է։ Անկասկած մենք պարտավոր ենք ուշադիր զննել ինքներս մեզ և մեր տները պետք է լինեն աղոթքի և գոհաբանության մնայուն վայրեր։ Ամուսինները պետք է բարի լինեն իրենց կանանց հանդեպ և կանայք հոգատար իրենց ամուսինների հանդեպ։ Ծնողները պետք է պահեն իրենց երեխաների սերն իրենց արդարակյաց ապրելակերպով։ Մեր տներն այդ ժամանակ ոչ միայն կլինեն աղոթքի և գոհաբանության մնայուն վայրեր, այլ կլինեն այն տեղը, որտեղ մեր Հայրը կարող է շնորհել իր ամենաընտիր օրհնությունները, մեր արժանավորության շնորհիվ։[16]

Ես աղոթում եմ, որ մեր տները կարողանան սրբագործված լինել մեր կյանքերի արդարությամբ, որ հակառակորդը չկարողանա իշխանություն ունենալ գալու այնտեղ և կործանելու մեր տան երեխաներին կամ նրանց, ովքեր ապրում են մեր

«Դարձրեք ձեր տները Տիրոջ հոգու համար մնայուն վայրեր, թող դրանք լինեն սուրբ վայրեր»:

տանիքների ներքո: Եթե մենք պատվենք Աստծուն և պահենք Նրա պատվիրանները, մեր տները սրբազան կլինեն, հակառակորդն ազդեցություն չի ունենա և մենք կապրենք երջանկությամբ և խաղաղությամբ մինչև մահկանացու կյանքի ավարտական տեսարանը և մենք կգնանք ստանալու մեր վարձքն անմահության մեջ:[17]

Համապատասխանեցրեք ձեր կյանքը Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսմունքներին, և երբ աղետները սպառնան ձեզ, դուք կզգաք նրա ամենակարող ձեռքի աջակցությունը: Դարձրեք ձեր տները Տիրոջ հոգու մնայուն վայրը, թող դրանք լինեն սուրբ վայրեր, ուր հակառակորդը չկարողանա գալ, լսեք մեղմ և հանդարտ ձայնին, որը կհուշի ձեզ արդարության գործեր: Իմ աղոթքն է մեկի և բոլորի համար, որ դուք չշեղվեք այն ուղուց, որը տանում է դեպի Աստծո գիտությունը և զորությունը՝ հավատարիմների ժառանգությունը, այսինքն՝ հավիտենական կյանք:[18]

Ես աղոթում եմ, որ մեր սրտերում և մեր տներում կարողանա բնակվել այդ սիրո, համբերության, բարության, գթության,

օգնելու հոգին, որը հարստացնում է մեր կյանքը, և որը դարձնում է աշխարհն ավելի պայծառ և ավելի լավը դրա շնորհիվ։[19] (Տես առաջարկ 5 էջ 301։)

Մենք կարող ենք դրական ազդեցություն լինել աշխարհում։

Ես ցանկանում եմ աղաչել ձեզ. . . եղեք ինչպես խարիսխներ այն համայնքում, որտեղ դուք ապրում եք, որպեսզի ուրիշները կարողանան ձգվել դեպի ձեզ և ապահով զգան։ Թող ձեր լույսն այնպես շողա, որ ուրիշները տեսնելով ձեր բարի գործերը ցանկություն զգան իրենց սրտերում ձեզ նման լինել։[20]

Մեր պարտականությունն է օրինակ լինել, մեր պարտականությունն է բարձր պահել ճշմարտության դրոշը։ Մեր պարտականությունն է քաջալերել մեր Հոր մյուս զավակներին լսելու նրա խորհուրդը և խրատը և այնպես հարմարեցնել գործերը, որ ուր էլ որ լինենք մենք գտնենք մեր հոգիներում բոցկլտացող Աստծո հոգին և մեր ազդեցությունը կլինի ի բարին։[21]

Տերը չի պահանջում այն, ինչն անհնարին է։ Ընդհակառակը նա տվել է մեզ պատվիրաններ և խորհուրդ ու խրատ, որին հնարավոր է մեզ համար հետևել այսօր և այս դարում, որում մենք ապրում ենք։ . . .

. . .Եղբայրներ և քույրեր, մենք պետք է հավատարիմ լինենք։ Երկիրը, որտեղ մենք ապրում ենք, պետք է սրբագործվի մեր կյանքերի արդարության միջոցով։ Այն ամենը, ինչ մենք պետք է անենք, մեր մեղքերից ապաշխարելն է, մեր ուղիների սխալներից շրջվելը, մեր կյանքն անմաքրությունից մաքրելը և ապա բարիք գործելով շրջելը։ Դա չի պահանջում, որ մենք պետք է առանձնացվենք այդ նպատակի համար։ Յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա Հիսուս Քրիստոսի Եկեղեցում կարող է բարիք գործելով շրջել և ստանալ օրհնությունը, որն առաջանում է դրանից (տես առաջարկ 6 էջ 301)։

. . . Եկեք մեր ձեռքերը դնենք այն աշխատանքի վրա, որը նա վստահել է մեր խնամքին, եկեք օրհնենք մեր հոր զավակներին, ուր էլ որ նրանք լինեն և մեր կյանքը կհարստանա և այս աշխարհն ավելի երջանիկ կդարձվի։ Սա է այն առաքելությունը, որ դրվել է մեր ուսերին։ Մեր Երկնային Հայրը մեզ

պատասխանատվության կենթարկի նրա համար, թե մենք ինչպես ենք դա կատարել։ Թող Աստված տա, որ մեր հոգիների խոնարհությամբ մենք առաջ գնանք մեր սրտերում բարիք անելու ցանկությամբ բոլոր մարդկանց, որտեղ էլ որ նրանք լինեն և բերենք նրանց այն ուրախությունը, որը կարող է գալ միայն նրա օրենքներին հետևելուց և նրա պատվիրանները պահելուց։ Ես խոնարհաբար աղոթում եմ, որ այդ խաղաղությունը կենա մեր սրտերում և մեր տներում, որպեսզի մենք ճառագենք արևի շողեր և ուրախացնենք ուր էլ որ գնանք, որպեսզի ապացուցենք աշխարհին, որ մենք իսկապես գիտենք, որ Աստված ապրում է, այն կյանքով, որով մենք ենք ապրում և դրա համար ստանում նրա օրհնությունները։[22]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Մտածեք այս գաղափարների շուրջ, երբ ուսումնասիրում եք այս գլուխը կամ երբ պատրաստվում եք ուսուցանելու։ Լրացուցիչ օգնության համար, տես v–viii էջերը։

1. Կարդացեք Բելլ Ս. Սփաֆորդի պատմությունը Նախագահ Սմիթից խորհուրդ ստանալու մասին (էջեր 292–293)։ Ինչպե՞ս կարող եք «զգալի դարձնել ձեր ազդեցությունը»։
2. Ուսմունքների առաջին բաժնում (էջ 293), Նախագահ Սմիթը պատմում է այն դժվարությունների մասին, որոնք կանխագուշակվել են, որ նախորդելու են Երկրորդ Գալստին (տես նաև Բ Տիմոթեոս Գ.1–7, ՎևՈՒ 45.26–35)։ Ինչո՞ւ եք կարծում, որ կարևոր է իմանալ, որ այս դժվարությունները կանխագուշակվել են սուրբ գրություններում։
3. Վերանայեք 294 էջ ում սկսվող բաժինը։ Ի՞նչ խնդիրներ կան աշխարհում, որոնք կկարողանային լուծվել Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանին հնազանդվելուց։ Ինչպե՞ս է ավետարանը խաղաղություն բերել ձեր անձնական կյանքում, ուրիշների հետ ձեր հարաբերություններում։
4. Էջեր 295–296-ում Նախագահ Սմիթն օրինակներ բերեց սուրբ գրություններից Իր ժողովրդին Տիրոջ պաշտպանության մասին։ Ինչպե՞ս է Նա պաշտպանել ձեզ և ձեր

ընտանիքին: Ինչպե՞ս է հնազանդությունն օգնում մեզ վախը հաղթահարելիս:

5. Որո՞նք են որոշ վտանգները, որոնք սպառնում են մեր տներին այսօր: Ի՞նչ կարող ենք անել մեր տները դարձնելու «սուրբ վայրեր, որտեղ հակառակորդը չի կարող գալ»: (Որոշ գաղափարների համար վերանայեք էջ 296 -ում սկսվող բաժինը:)
6. Կարդացեք առաջին և չորրորդ պարբերությունները էջ 299: Ինչպե՞ս են հավատարիմ Վերջին Օրերի Սրբերը նման «խարիսխների» իրենց համայնքներում: Ինչո՞ւ է «մեր կյանքն աղտոտվածությունից [մաքրելը]» դարձնում մեզ ավելի ունակ «բարիք անելով շրջելու համար»:

Թեմային առնչվող սուրբ գրություններ. Եսայիա ԾԴ.13–17, Մատթեոս Ե.13–16, Հովհաննես ԺԶ.33, 2 Նեփի 14.5–6,Վարդապետություն և Ուխտեր 87.6–8, 97.24–25, Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.22–23, 29–30

Ուսուցման ուղեցույց. Մտածեք դասարանի անդամներին հրավիրել կարդալ «Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքները» գրքի վերնագրերը և ընտրել մի բաժին, որն իմաստալի է իրենց կամ իրենց ընտանիքի համար: Հանձնարարեք նրանց ուսումնասիրել Նախագահ Սմիթի ուսմունքներն այդ բաժնում, ներառյալ որևէ համապատասխան հարց գլխի վերջում: Ապա խնդրեք դասարանի անդամներին կիսվել ինչ որ սովորեցին:

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1948, 162.
2. In Conference Report, Apr. 1918, 41.
3. In Conference Report, Apr. 1932, 41.
4. Some Thoughts on War, and Sorrow, and Peace," *Improvement Era,* Sept. 1945, 501.
5. Belle S. Spafford, *A Woman's Reach* (1974), 96–97.
6. In Conference Report, Apr. 1932, 42–44.
7. In Conference Report, Oct. 1946, 153.
8. "New Year's Greeting," *Millennial Star,* Jan. 1, 1920, 2.
9. "At This Season," *Improvement Era,* Dec. 1949, 801.
10. In Conference Report, Oct. 1937, 53.
11. In Conference Report, Apr. 1946, 4.
12. In Conference Report, Oct. 1915, 28.
13. In Conference Report, Apr. 1942, 15.
14. In Conference Report, Apr. 1943, 92.
15. In Conference Report, Apr. 1942, 15
16. In Conference Report, Apr. 1941, 27.
17. In Conference Report, Oct. 1946, 8.
18. "New Year's Greeting," *Millennial Star,* Jan. 6, 1921, 3.
19. In Conference Report, Oct. 1946, 7.
20. In Conference Report, Oct. 1945, 117–18.
21. In Conference Report, Oct. 1947, 166.
22. In Conference Report, Apr. 1932, 43–45.

Տեսանյութերի ցանկ

Կազմի վրա. *Ջորջ Ալբերտ Սմիթ,* Լի Գրին Ռիչարդս, © IRI:

Էջ 4. *Լեռան Քարոզը,* Կառլ Հեյնրիխ Բլոխ, օգտագործված է Ազգային Պատմության Թանգարանի թույլտվությամբ, Ֆրեդերիկսբորգ, Հիլրոդ, Դանիա:

Էջ 12. *Քրիստոսը բժշկում է կույրին,* Դեյ Փարսոն, © 1983 IRI:

Էջ 22. *Քրիստոսի նկարը,* Հենրիխ Հոֆման, տրամադրել է C. Harrison Conroy Co., Inc:

Էջ 27. *Տեսեք իմ ձեռքերն ու ոտքերը,* Հարի Անդերսոն, © IRI:

Էջ 29. *Նայեք ձեր փոքրիկներին,* Ռոբերտ Թ. Բարետ, © 1996 IRI:

Էջ 42. *Ջոզեֆ Սմիթի առաջին տեսիլքը,* © 1988 Գրեգ Կ. Օլսեն, չպատճենահանել:

Էջ 45. *Ջոզեֆ Սմիթ,* տրամադրվել է Քրիստոնեական Արխիվների Համայնքի կողմից, Ինդիփենդենս, Միսսուրի:

Էջ 54. *Մելքիսեդեկյան Քահանայության Վերականգնումը,* Ուոլթեր Ռեյն, © 2010 IRI:

Էջ 62. Լուսանկարը տրամադրվել է Եկեղեցու Պատմության Գրադարանի և Արխիվների կողմից:

Էջ 68. *Մեկ՝ Աստծո առջև,* Ջոզեֆ Բրիքի, © 2010 IRI:

Էջ 72. Լուսանկար © 2000 Steve Bunderson:

Էջ 76. Լուսանկար © Robert Casey:

Էջ 84. *Հիսուսն ասաց նրան. «Մարիամ»,* Վիլյամ Վիտակեր, © 1999 IRI:

Էջ 143. *Ուրեմն գնացեք և բոլոր ազգերը աշակերտեցեք,* Հարի Անդերսոն, © IRI:

Էջ 178. Լուսանկար © 2000 Steve Bunderson:

Էջ 204. *Եղիան վիճում է Բահաղի քահանաների հետ,* Ջերի Հարսթոն, © 1978 IRI:

Էջ 207. *Մովսեսը բաժանում է Կարմիր ծովի ջրերը,* Ռոբերտ Բարեթ, © 1983 IRI:

Էջ 209. *Բրիգամ Յանգի ժամանումը,* © 1986 Վալոյ Իթեն, տրամադրվել է Սիոնի բանկի կողմից, չպատճենահանել:

Էջ 216. *Քրիստոսը և հարուստ երիտասարդ կառավարիչը,* Հեյնրիխ Հոֆման, տրամադրվել է Ք. Հարիսոն Քոնրոյ Co., Inc:

Էջ 228. *Դանիելը հրաժարվում է թագավորի առաջարկած մսից և գինուց,* Դեյ Փարսոն, © 1983 IRI:

Էջ 254. *Լիմոնադ շոգ օրին,* Մայքլ Մալմ, © 2010 IRI:

Էջ 280. *Խաչելությունը,* Հարի Անդերսոն, © IRI:

Էջ 290. *Խաղաղություն եմ թողնում ձեզ,* © 2004 Ուլթեր Ռեյն, տրամադրվել է Եկեղեցու Պատմության Թանգարանի կողմից:

Ցուցիչ

Ա

Ահարոնյան Քահանայություն. *Տես* Քահանայություն

Աղոթք
- աղոթեք կառավարության առաջնորդների համար, 110
- զորություն, 109-110
- ընտանեկան աղոթք, 109-111
- մենք կարող ենք ոգեշնչվել իմանալու, թե ինչի մասին աղոթենք, 107-109
- տղան խնդրում է բժիշկներին աղոթել իր համար, 106-107

Աշխատանք, 244-246

Առաջին Տեսիլք
- դրեց հիմք հավատքի համար, 40
- ցույց տվեց, որ երկինքները կնքված չեն, 38-40
- ցույց տվեց Ջոզեֆ Սմիթի հավատքը, 39, 40, 209
- ևս մեկ վկայություն, որ Հիսուսը Քրիստոսն է, 27-28

Աստվածաշունչ
- Հիսուս Քրիստոսի վկայությունը, 26-27
- *Տես նաև* Սուրբ գրություններ

Արարողություններ
- անհրաժեշտ է փրկության համար, 57
- մահացածների համար, 91

Բ

Բարություն
- գալիս է Տիրոջ Հոգուց, 255-256
- կարող է փափկացնել սրտերը, 255, 258-260
- մենք պետք է լինենք օրինակներ, 256
- մեր տներում, 260-262
- *Տես նաև* Սեր

Գ

Գթություն. *Տես* Սեր

Դ

Դանիել
- հավատքի, 207-208
- հնազանդվեցին Տիրոջ առողջության օրենքին իրենց օրերում, 229-230

Դև. *Տես* Հակառակորդ

Ե

Եկեղեցու Նախագահ
- Տերն առաջնորդում է Իր ժողովրդին միջոցով, 130-132
- ուժեղանում է անդամների հաստատումով, 71-72
- ուժ և իմաստություն է ստանում Աստծուց, 68
- *Տես նաև* Եկեղեցու ղեկավարներ

Եկեղեցու առաջնորդներին հաստատելը, 63-73

Եկեղեցու ղեկավարներ
- Տերն առաջնորդում է Իր ժողովրդին միջոցով, 66-67, 129-131
- ապահովություն հետևելով, 67
- ընտրվում են Տիրոջ կողմից, 64-66

մենք չպետք է քննադատենք, 71-72
Տես նաև Եկեղեցու Նախագահ

Եղիա
հավատք, 208
վերականգնեց մահացածների համար աշխատանքի բանալիները, 89, 90

Երկնային Հայր. *Տես* Հայր Աստված

Ը

Ընդդիմություն
չի կանգնեցնի Եկեղեցու առաջընթացը, 184-187

Ընտանեկան երեկո, 275-276

Ընտանեկան պատմություն
օգնություն Տիրոջից հետազոտելիս, 98-101
Տես նաև Տաճարներ և տաճարային աշխատանք

Ընտանիք
աղոթքը բերում է միասնության, 111
ավելի արժեքավոր, քան աշխարհիկ բաները, 82
բարություն, 260-262
սուրբ գրությունների ուսումնասիրություն, 121-123, 274
Տես նաև Ծնողներ

Ի

Իմաստության Խոսք
մասին ուսուցանել մեր ընտանիքներին, 236-237
սիրառատ խորհուրդ է Երկնային Հորից, 230-233
օրհնություններ հնազանդվելուց, 233-236

Խ

Խաղաղություն
Հիսուս Քրիստոսի ավետարանի միջոցով, 294-296

Ծ

Ծառայություն
Եկեղեցում, 181-183
երջանկություն, 19-20
կարող է հանգստացնել տառապանքը, 250-252
նրանց, ովքեր տառապանքի մեջ էին II Համաշխարհային Պատերազմից հետո, 241

Ծնողներ
պատասխանատվություն, ավետարանը երեխաներին սովորեցնելու, 268-271
պետք է սիրալիր և բարի լինել երեխաների հանդեպ, 260-262, 274-276
օրինակ, 236-237, 271-273
Տես նաև Ընտանիք

Կ

Կիսվել ավետարանով
Սուրբ Հոգու կարևորությունը, 173-176
ավելացնում է ուրիշների երջանկությունն ու բարությունը, 166-169, 171-174
խանդավառություն և լրջություն, 142-145, 170-172
կարիք, 138-141
համար վարձք, 149-154
մասնակցելու ուղիներ, 160-164
մեր պարտականությունը, 32, 146, 147-149, 153-156
սիրով և բարությամբ, 169-170
օրինակի կարևորությունը, 156-160

Կիրակի օրը
հաճախել եկեղեցի, 194-195
հարգելը, բերում է երջանկություն, 191-194
Կյանք
հավերժական է, 77-78
նպատակ, 78-82
Կոչումներ
Անդամների պարտականությունն է՝ կատարել, 181-183
Կումորա բլուր, xxix

Հ

Հակառակորդ
մենք կարող ենք դիմադրել, 224-226
փորձում է խաբել մեզ, 220-224
Հաղորդություն
արժանիորեն ճաշակելը, վերականգնում է մեր հոգևոր ուժը, 199-200
զտեք անբարյացակամությունը ձեր սրտերից նախքան ճաշակելը, 285
հաստատվել է Փրկչի կողմից, 195-196
Հայտնություն
անհրաժեշտ այսօր, 128-130
անձնական, 128, 131-134
մարգարեին, 127, 128-131
Հայր Աստված
բոլոր տղամարդիկ և կանայք զավակներն են, 15-16
խոսում է մարդկանց հետ, 128-130
մենք կարող ենք դառնալ նման, 79
ունի մարմին, 42-43
տալիս է պատվիրաններ, որովհետև Նա սիրում է մեզ, 219-220
Հայրեր
պետք է պատրաստեն իրենց որդիներին քահանայություն ստանալուն, 51
Տես նաև Ծնողներ
Հավատք
արդարներին տրված Աստծո պարգև, 213
վաղ Սրբերից, 208-210
տարան դեպի Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքը, 38, 39, 208
օրինակներ, սուրբ գրություններում, 206-208
Հավերժական կյանք
մահկանացու կյանքի նպատակն է նախապատրաստվել, 78-80
Հարություն, 26-27, 83
Հարսանեկան խնջույքի առակը, 5–6
Հիսուս Քրիստոս
Աստծո Որդի, 24-26
Հարությունը, 26-27
ապրում է այսօր, 25
հայտնվել, Նեփիացիներին, 27-28
հայտնվել, Ջոզեֆ Սմիթին, 28-30
մասին մեր վկայությունը, 23-33
մկրտությունը, 26
ներեց Իրեն խաչողներին, 282
վկայություն վերաբերյալ, Աստվածաշնչում, 26-27
վկայություն վերաբերյալ, Մորմոնի Գրքում, 27-28
տվեց քահանայություն Իր Առաքյալներին, 53-55
Հիսուս Քրիստոսի Եկեղեցի
առաջընթաց, 47, 179-181, 184-487
ղեկավարվում է Հիսուս Քրիստոսի կողմից, 65, 129-131

ունի աստվածային իշխանություն, 56-57

Հիսուս Քրիստոսի ավետարանը
աշխարհը կարիք ունի, 138-140
բերում է երջանկություն, 32, 43-45, 84-87
խաղաղության միակ ուղին, 294-296
պետք է մեզ դարձնի ավելի լավ մարդիկ, 7-8
սովորեցնում է մեզ սիրել միմյանց, 16-17

Հնազանդություն. *Տես* Պատվիրաններ

Մ

Մահ
ավետարանն օգնում է մեզ հասկանալ, 75-78, 84-87

Մայրեր
բարություն և կարեկցանք, 262
Տես նաև Ծնողներ

Մելքիսեդեկյան Քահանայություն. *Տես* Քահանայություն

Մթերային պահեստ
թույլ է տալիս մեզ նախապատրաստված լինել դժվար ժամանակներին, 243-246
հնարավոր տվեց Եկեղեցուն օգնել կարիքավորներին, 241-243

Միսիոներական աշխատանք. *Տես* Կիսվել ավետարանով

Մկրտություն
Հիսուս Քրիստոսի, 26

Մովսես
հավատք, 207
ձեռքերը, Ահարոնը և Ովրը, 68

Մորմոնի Գիրք
Հիսուս Քրիստոսի վկայությունը, 27-28
Ջորջ Ալբերտ Սմիթը կիսվում է, ուրիշների հետ, xxii, xxxiv
Տես նաև Սուրբ գրություններ

Մտքեր
մենք արդյունքն ենք մեր, xiv

Ն

Նախաերկրային կյանք, 77, 78-80

Նախապատրաստություն
հավերժական կյանքի համար, 5–7, 78-80, 120-121, 285-288
միսիոներական ծառայության համար, 158-160, 161
վթարների համար, 243-246

Նոյ
հավատք, 207
քչերը ականջ դրեցին նախազգուշացումներին, 67

Ո

Ուրացություն
Երկնային Հայրը վերականգնեց ավետարանը ի պատասխան, 43
ընթացքում քահանայության իշխանությունը կորել էր, 54
ժամանակի գագաթնակետ, 53

Ուրիշներին ներելը
պետք է լինի Եկեղեցու անդամների վերաբերմունքը, 282
ցույց է տալիս մեր երախտագիտությունը Աստծո ներողամտության համար, 283-284
օգնում է մեզ պատրաստվել սելեստիալ արքայությանը, 284-288

Պ

Պատվիրաններ
Աստված տալիս է, որովհետև Նա սիրում է մեզ, 219-220
ապահովությունը գալիս է հնազանդվելուց, 296-298

պահիր մեզ գծի Տիրոջ կողմում, 218

Ռ

Ռահվիրաներ, xxix–xxxi, xxxiv–xxxvi

Ս

«Սա է այդ վայրը» հուշարձանը, xxxiv–xxxvi

Սատանա. *Տես* Հակառակորդ

Սեր
ավետարանով կիսվելիս, 168-170
բերում է ճշմարիտ երջանկություն, 19-20
գործադրել, օգնելով ուրիշներին, 18-20
կարող է ոգեշնչել մարդկանց անել այն, ինչ ճիշտ էր, 19, 170, 258-260
հնարավորություններ արտահայտելու համար, 18
պատվիրան, 16-17
Տես նաև բարություն

Սմիթ, Լյուսի Էմիլի Վուդրուֆ
մահը, xxvii
սիրատածումն ու ամուսնությունը, xv–xvi
օրհնություն է ստանում Վիլֆորդ Վուդրուֆի կողմից, xviii

Սմիթ, Ջոն Հենրի (հայրը), xi–xii, 107-109

Սմիթ, Ջորջ Ա. (պապը)
խորհուրդ էր տալիս իր ընտանիքին մնալ գծի Տիրոջ կողմում, 217
ծագումով, xi–xii
միսիոներական աշխատանքներ, 185
ոգեշնչվեց աղոթել իր ընտանիքի ապահովության համար, 107-109
տեսել էր Ջորջ Ալբերտ Սմիթին երազում, xxv–xxvi

Սմիթ, Ջորջ Ալբերտ
ամուսնություն, xvi
այցելում է Կիրթլենդի Տաճարը, 89
այցելում է Մեքսիկայի նախագահին, xxxiii–xxxiv
այցելում է Ջոզեֆ Սմիթի ծննդավայրը, 37
անձնական հավատամքը, 1–2, 166, 281-283
աշխատում է հագուստի ֆաբրիկայում 13 տարեկանում, xiv–xv
աչքի վնասվածք, xv, xxiii
առողջական խնդիրներ, xxv–xxvii
բարի գործեր, xi, xxxvii–xxxix, 2, 13-15, 255-257
երազում տեսնում է իր պապիկին, xxv–xxvi
զավակներ, xviii–xix
իմանում է, թե ինչպես են օդաչուները ղեկավարում ինքնաթիռը մառախուղի մեջ, 125-127
իր դստերն ազնվություն է սովորեցնում, 265-266
խորհուրդ է տալիս Բելլ Ս. Սփաֆորդին մնալ ազգային կազմակերպության անդամ, 292-293
խրախուսում է մի մարդու կարդալ սուրբ գրությունները, 116-117
կանչվեց որպես առաքյալ, xix–xxi
կինը, մահացել է, xxvii
կիսվում է ավետարանով, xxi–xxii, xxxiii–xxiv, 137-139, 166-169

համոզում է իր երեխաներին նվիրել իրենց Սուրբ Ծննդյան խաղալիքները, xix
հաշտվում է իրեն վիրավորած մի ընկերոջ հետ, 281
հաստատվում է Եկեղեցու Նախագահ, 63
հարձակման ենթարկվեցին ամբոխի կողմից, xviii
հետաքրքրություն Եկեղեցու պատմական վայրերի հանդեպ, xviii–xxxi, xxxiv–xxxvi
հրաժարվում է սուրճ խմել, 229
ձեռնադրեցին սարկավագ, 51
մահ, xxxvii, 24
մանկությունը, xi–xv, 265
միսիա, Միացյալ Նահանգների հարավում, xvi–xviii
միսիա, Յուտայի հարավում, xv
մոր կողմից ուսուցանվում է աղոթել, xii–xiii, 103-104
որպես Առաքյալ, xix–xxxi
որպես Եկեղեցու Նախագահ, xxxi–xxxvii
որպես Եվրոպական Միսիայի Նախագահ, xxvii–xxviii, 151-153, 203-206
որպես հայր, xviii–xix, 265-266
տալիս է Մորմոնի Գիրքը որպես Սուրբ Ծննդյան նվեր, xxii
տալիս է իր վերարկուն փողոցում աշխատողին, 14
փրկվում է խեղդվելուց աղոթքի միջոցով, 104-106
քաղաքացիական ծառայություն, xxii–xxiii
օգնություն է ուղարկում պատերազմից ծվատված Եվրոպային, xxxiii, 241-243

Սմիթ, Սառա Ֆար (մայրը), xii, 103-104

Սմիթ Ջոզեֆ
Առաջին Տեսիլքը, 28-29, 37, 38-43
Հիսուս Քրիստոսի վկայությունը, 28-30
կանչվեց Աստծո կողմից չնայած իր երիտասարդ և անփորձառ լինելուն, 40-43
հավատը, 40, 41, 209
վերականգնեց հավերժական ճշմարտություններ, 41-44
տվեց իր կյանքը իր վկայության համար, 46-47

Սմիթ Ջոն (նախապապը), xii

Սուրբ Հոգի
առաջնորդում է մեզ դեպի ապահովություն և վեհացում, 131-133
կարիք ուներ ավետարանով կիսվելիս, 173-175
վկայության աղբյուր, 30-31, 130-131, 174-175

Սուրբ գրություններ
ավելի արժեքավոր, քան մարդկանց փիլիսոփայությունները, 116-118
կարդալ, ընտանիքով, 121-123
օգնում են մեզ հաղթահարել փորձությունները, 118-120
օգնում են մեզ նախապատրաստվել սելեստիալ արքայության համար, 120-121

Վ

Վերականգնում
ավետարանի, 43
քահանայության, 51-56

Վերջին օրեր
լուրջ դժվարություններ են կանխագուշակվել, 293

Վկայություն

բոլորը կարող են ստանալ իրենց սեփականը, 30-31, 130-133

Տ

Տաճարներ և տաճարային աշխատանք
Այդահո Ֆոլզի Այդահո Տաճարի նվիրագործումը, 90-91
Կիրթլենդի Տաճարը կառուցելիս Սրբերի զոհաբերությունները, 89
նպատակ, մատչելի դարձնել արարողությունները, 91-97

Տասանորդ
միջոցով, մենք կարող ենք օգնել Եկեղեցու աշխատանքին, 248-250

Տեխնոլոգիա
կարող է օգտագործվել առաջ տանելու Տիրոջ գործը, 179-180

Տնային ուսուցիչներ
Ջորջ Ալբերտ Սմիթի հիշատակին, 51-53

Տուն
կարող է լինել ապահովության վայր, 296-297
Տես նաև Ընտանիք

Ց

Ցանկասիրություն
նախազգուշացում ընդդեմ, 247

Ք

Քահանայություն
արարողությունները, անհրաժեշտ են սելեստիալ արքայություն մտնելու համար, 57-58
գտնվում է միայն Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցում, 56-57
երիտասարդ տղամարդիկ պետք է նախապատրաստվեն ստանալու, 51
ծառայելու հնարավորություն, 51-53
կատակ մի արեք, 58
կրողներ, պետք է արժանի լինեն, 58-60
պետք է շնորհվեն Տիրոջ ձևով, 56
վերականգնում, 51-56

Քավություն. *Տես* Հարություն; Հիսուս Քրիստոս

Քննադատություն
Եկեղեցու առաջնորդների, 71-72
հակառակ Հիսուս Քրիստոսի ավետարանի, 257
որոնեք արժանիքներ ուրիշների մեջ՝ քննադատելու փոխարեն, 257-258

Օ

Օրինակ
ավետարանը կիսվելիս, 154-157
ծնողների, 236-237, 270-273
մեր միջոցով, մենք կարող ենք դրական ազդեցություն գործել, 299

Ֆ

Ֆար, Լորին (պապը), xii

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02367 86201 5
36786 201